Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

329.14
329.14(47.925)
Ս-20

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՍՕՑ. ԴԷՄ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Թիւ 21

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆ ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ

•

ԳՐԵՑ
ԲԵՐՈՒՋ ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

Տպագրութիւն
«ԷԼՄԱՍ - ՍԱԹԻՆ»ի
417 41ST STREET
UNION CITY, N. J.
1936

A 630 / 26626

ԳՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ ԱՂԱՂԱԿ ՄԸ

*Ընկեր Ս. Սապահ-Գիւլեան, «*Հնչակ*»ի՝ երբեմնի մեծատաղանդ և անզուգական խմբագիրը, որ հիմնած է ու խմբագրած նաև «*Ն. Հայաստան*»ն ու «*Ինքնավար Հայաստան*»ը տարիներով, որ եղած է Հեղինակը շարք մը ժողովրդապաշտպան և դաստիարակիչ գրքերու, և իր մարգարէաշունչ յայտնութիւններով ու հռետորական վեհ ձիրքերով, առաջնորդած է դժբախտ ու հալածուած Հայ աշխատաւոր ժողովուրդը, Ազգային, Քաղաքական և Ընկերային վերիվայրումներու ու կընճիռներու մէջէն, այսօ՛ր, իր բօթաբեր ու ողբալի մահէն մօտաւորապէս ինը տարիներ վերջ, այս գեղարուեստական ու թանկագին* հատորով *յարութիւն առած, անգամ մը եւս կը խօսի իր մագնիսացնող լեզուով մեր սրտին, մեր մտքին ու հոգիին։*

Շատե՛ր լսած են անոր անունը, կամ անձամբ ծանօթացած անոր, բայց, քիչեր ճանչցած են իսկական Ս. Սապահ-Գիւլեանը։

Անոր կեանքի արժանաւոր Ընկերն ու Ուղեկիցը՝ Ընկերուհի Բերուզ Ս. Սապահ-Գիւլեան, իր այս կենսագրականով, ո՛չ միայն նուիրական պարտականութիւն մը կը կատարէ, յաւէտ անմոռանալի իր ամուսինին մշտավառ յիշատակին հանդէպ, զայն մօտէն ճանչցնելով, մոռացումի գիրկը նետուած, անոր կեանքի սքանչելի դրուագները տալով ընթերցող հասարակութեան, այլ կը փաստէ, թէ ինք գրչի վարպետ մըն է, և ընտանեկան, կուսակցական և ժողովրդական խնդիրներու ու շարժումներու շուրջ, ունի խորունկ և նուրբ ըմբռնողութիւն:

Ընկերուհի Բերուզի ոճը՝ ուռուցիկ ձեւեր չունի, լեզուն՝ ուսուցչական է, ա՛ն, սահուն և կուռ Հայերէնով մը կը հասկցնէ շա՛տ բան, և կը հասկցնէ ա՛յն, ինչ որ իր մտքին ըմբռնողութիւնն է, բա՛ն մը, որ դժբախտաբար կը պակսի հրապարակի վրայ երեւցող՝ մեր շատ մը գրողներու մէջ, որոնց ոճը, լեզուն յաճախ անհամապատասխան է նիւթին:

Այս կենսագրականը, ինչպէս Ընկերուհի Բերուզ ըսած է սոյն տողերը գրողին, Ընկեր Ս. Սապահ-Գիւլեանի ամբողջական կենսագրականը չէ, և այդ արդէն ակնկալել՝ կատարեալ անարդարութիւն պիտի ըլլար, քանի որ, մեր մեծանուն Ընկերոջ կեանքը՝ այնքան սերտօրէն կապուած, նոյնացած էր Հնչակեան Կուսակցութեան հետ, որ աւելի հեռուն երթալ՝ պիտի նշանակէր, Հնչակեան Պատմութիւնը գրի առնել իր լայնատարած սահմաններով:

Ըսենք սակայն, որ Ընկերուհին, այս կենսագրականով տուած է ա՛յն, ինչ որ ուրիշի մը համար տալ անկարելի պիտի ըլլար:

Ա՛յդ տեսակէտով, Ընկեր Ս. Սապահ-Գիւլեանի ու իր Մօր, Քրոջ ու ընտանիքին միջեւ փոխանակուած

կարօտի սրտայոյզ նամակները իրենց բարձր արժէքը ունին, որոնց մէջէն յստակօրէն կը տեսնուի թէ Ընկեր Սապահ, ո՛րքան անբիծ և հաւատարիմ մարդ եղած է, թէ իր ընտանիքին ու զաւակներուն, թէ իր կուսակցութեան, և թէ իր իտէալներուն հանդէպ։

Նմանապէս, անոր՝ Ցունաստանէն գրած նամակները ցոյց կուտան թէ, հակառակ իր սոսկալի զրկանքներուն ու քայքայուած առողջութեան, իր հետապընդած նպատակներէն, մազի մը չափ չը շեղելու, հերոսական ճամբայէն քալած է։

Իսկ, այս կենսագրականին կից՝ հին և նոր Ընկերներու թանկագին վկայութիւնները, այս հրատարակութեան փայլը կ'աւելցնեն մեծապէս, իբրեւ մէյ մէկ վաւերագրեր, որոնց մէջէն, իբրեւ նմոյշ հոս մէջ կը բերենք Ընկեր Ռաֆայէլ Մովսէսեանի խօսքերը։

«Ս. Սապահ-Գիւլեան Ներսէսեան դպրոցի աշակերտ եղած ժամանակին, ուսուցիչներէն Բժիշկ Ծերենցը, խոստմնալից տղայ է կ'ըսէ, ու նրա հիւանդութիւնը անձամբ կը խնամէ»։

«Հայկաբան Պալեանը, կարծում եմ, ժամանակին մի լաւ Հայ Մարդ կունենանք կ'ըսէ անոր մասին»։

«Դպրոցի աւարտումէն վերջ, Ս. Սապահ-Գիւլեան իր ծննդավայր՝ Ջահուկ գիւղը կ'երթայ ու ձրի դըպրոց կը բանայ»։

«Ղազարոս Աղայեանը, որպէս Թեմական Տեսուչ, մի տարուան աշակերտական առաջադիմութեան արդիւնքէն շատ գոհ մնալով, Երեւանի Թեմականի համար, զինք Ուսուցիչ կը նշանակէ, ո՛ւր, Երեւանի նահանգի Հայ գիւղերում յիսուն դպրոց կ'աւելցնէ»։

Վերջացնելէ առաջ մեր խօսքերը, ըսենք, թէ այս կենսագրականը, փոթորկալից և մշտամռունչ կեանքի

մը նկարագրութիւնն է, զոր չէ կարելի կարդալ առանց յուզմունքի ու հոգեկան ըմբոստութեան։

Ահա ընտանեսէր Հայր մը, որ միշտ հեռի է իր ընտանիքէն, զաւակներէն, ահա Հայրենասէր մը, որ զրկուած է իր Հայրենիքէն, ահա մարդասէր Ընկերվարական մը, Ուսուցիչ մը, որ նուիրուած է իր ասպարէզին, բայց միշտ կը հալածուի, և կը քալէ մինչեւ գերեզման, պարտականութեան ճամբայէն առանց սրտի ու հոգեկան խաղաղութեան։

Գերեզմանէն ալ անդին ո՛չ անոր ոսկորները, ո՛չ ալ անոր աճիւնները խաղաղութիւն կը գտնեն, և նա օտարութեան մէկ անկիւնէն, հեռո՜ւն իր ծննդավայրէն ու երազած Սօցիալիստական Հայաստանէն, յանդիմանութիւն մը կ'ուղղէ ողջ Հայութեան, ըսելով, Հա՛յ աշխատաւոր ժողովուրդ, ես ապրեցայ ու մեռայ այդ Հայաստանին համար, հո՜ն, հո՛ն տար իմ մնացորդներս, և յանուն արդարութեան, իմ աճիւններուս, իմ ոսկորներուս վրայ, կամ աւան մը կանգնեցո՛ւր, կամ տա՛ր, ամփոփէ՛ զանոնք իմ պապենական գիւղին մէջ, որովհետեւ դա իմ արդար բաժինս է, իմ իրաւունքս։

ՎԱՀԱՆ ԶՈՒԳԱՍԶԵԱՆ

[illegible]
[illegible] ԳՐԱԴԱՐԱՆ
[illegible]

ՅՈՒՇԱՐՁԱՆ

ՈՂԲԱՑԵԱԼ ԱՄՈՒՍԻՆ

Անթառամ և մշտաշող յիշատակիդ նուիրուած այս *Սրտաձօն-Գրքոյկս*, իբրեւ *Յաւերժական Յուշարձան* կը դնեմ հողակոյտիդ վրայ, որուն բովանդակութիւնը, գիտե՛մ, շատ հակիրճ պիտի գտնեն ամէն անոնք, որոնք քու մեծութեան վկաներն ու ճշմարիտ հաւատացողներըն են եղած:

Սակայն, ի՞նչ կարող էի անել, երբ դու՝ ա՛յնքան ժլատ, ա՛յն աստիճան լուռ ու համեստ էիր, արտայայտուելու քեզ շրջապատողներին, չարչարանքի գնով անցեալի մէջ ունեցածդ յանդուգն քայլերիդ ու հրաշագործութեանցդ շուրջ:

Քո հին դրուագներէն՝ դժբախտաբար, փշրանքներ միայն ձեռքս ինկած են, քո ազնիւ Ընկերներէդ՝ Ռ. Մովսէսեանի թանկագին ջանքերով:

Ու իմ այս յուզմունքի ու անձկութեան պահուն, չը պիտի ուզէի մոռացութեան տալ՝ հրապարակաւ շընորհակալութիւն յայտնելու Ընկեր Մովսէսեանի կարգին, մասնաւորապէս Սոց. Դէմ. Հնչ. Կուսակցութեան կեդրոնական վարչութեան և այն բոլոր Ընկերներին, որոնք *ութ* տարի առաջ *կենսագրութեանդ* առթիւ բարձրացրած կոչիս արձագանգ տալով, թէ՛ իրենց մասնակցութիւնը բերին և թէ՛ դիւրացրին նրա հրատարակութիւնը:

Լիայոյս եմ, որ Հնչակեան Պատմութիւնը գրողները՝ մի օր, քո ամբողջական պատմութիւնը գրած կը լինին, որը՝ վստահ եմ, *իսկական, մեծարժէք կոթողը պիտի լինի քո բեղուն մտքիդ* ու *Համոզուած Կուսակցական – Հայ մարդուդ*:

Սրտաբեկ Կողակիցդ՝

ԲԵՐՈՒՁ

ՍՏԵՓԱՆ ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐԸ

ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ մկրտութեան անունն է Ստեփաննոս Տէր Դանիէլեան. ծնած է Հին Նախիջեւանի Ջահուկ գիւղաքաղաքին մէջ, 1861 *թուի՝ Տեառնընդառաջին, Փետրուար* 14*ին:*

Մօրը անունը Սապահգիւլ, բարեկեցիկ ընտանիքի զաւակ, որ՝ իրեն առաջարկուած հարուստ ամուսնութիւններէն կ'ընտրէ՝ Տէր Գրիգոր Խաչատրեանի որդւոյն առաջարկը և կ'ամուսնանայ նրա հետ. աշխարհական Տէր Գրիգորեանը հայր դառնալուց յետոյ, կը ձեռնադրուի քահանայ և կը կոչուի Տէր Դանիէլ Տէր Գրիգորեան:

Մայրը՝ թէեւ անգրագէտ, սակայն վերին աստիճանի խելօք (խելացի)*, համարձակախօս, առողջ և ազդեցիկ կին է եղած. իսկ Տէր Հայրը՝ զարգացումը, ուսումը պաշտող՝ կիրթ և մեղմ բնաւորութեան տէր մարդ:*

Իրենց անդրանիկ զաւակը կը ծնի մի տղայ, որ Ստեփաննոս անունով կը մկրտուի. բայց այդ երեխան երկար չ'ապրիր. յետոյ կը ծնի մի երկրորդ տղայ, որին կը տան մեռած զաւկին անունը, Ստեփաննոս, և

ըստ բարեպաշտական հնաւանդ հասկացողութեան, կ'ընծայեն նրան Սուրբ Ստեփաննոսին, որպէս զի այս տղան էլ չը մեռնի. և, իրաւ էլ, Ստեփաննոսը կը մեծնայ ողջ, առողջ, չորս տարի մօրը կաթը կը ծծէ, գուրգուրանք, հոգացողութիւն իր շուրջը չափազանցութեան կը հասնի՝ իր պապիկ ու մամիկների կողմանէ մանաւանդ, որով, մանուկ Ստեփաննոսը չափազանց երես ելած, չարաճճի մի տղայ կը դառնայ. այնպէս որ, յաճախ, իրա շրջապատողներին յուզումի, բարկութեան կը մատնէ:

Երբ Աստուածածնայ տօնէն առաջ, Ստեփանը իրենց սեպհական այգիներէն, հակառակ իրեն տրուած պատուէրներին, գաղտագողի խաղող կը քաղէ և «համտես» կ'ընէ, և ծերուկ պապիկին ճկրացնելու (բարկացնել) համար՝ հեռուէն ցոյց կը տայ ողկոյզները բերանին՝ «պապի՛, պապի՛, տե՛ս» պոռալով, խեղճ մարդը յետեւէն կ'ուզենայ վազել, բռնել ու մի լաւ ծեծ քաշել, բայց չի յաջողիր. ի՛նչքան կ'ուզեն իրեն հասկացնել, թէ «բալա՛, մեծ մեղք է, Աստծու կրակին կ'արժանանաս» ևն. ևն., նա խօսք չի լսեր և կը շարունակէ ամէն տարի կրկնել նոյն չարութիւնները. այնպէս որ՝ իր «յանցանքների» փոխարէն մամիկ ու պապիկները կ'աղօթեն Աստծուն, որ ների Ստեփանի յանցանքներին:

Մայրը աղջիկ մը եւս կ'ունենայ, որին Նանասի կը կոչեն: Սա շատ հեզահամբոյր, խելօք աղջիկ է եղած, բոլորովին հակոտնեայ Ստեփանին:

Երբ սրանք բաւական կը մեծնան, երգել կը սորվին, երկուսն էլ լաւ ձայն կ'ունենան, անուշ, Հայկական երգեր կ'երգէին, ցերեկը՝ իրենց սեպհական պարտէզի որթատունկի ստուերին տակ, կամ գիշերը՝ լուսնի լոյսով. և մեծ մխիթարութիւն, հոգեկան հրճուանք կը պատճառէին իրենց ազնիւ ծնողաց:

Տէր Դանիէլը ո՛չ միայն իրենց գիւղի՝ Ջահուկի եկեղեցւոյ քահանան էր, այլ և Ռուսական դպրոցների մէջ էլ՝ կրօնուսոյց՝ Հայ աշակերտների, իր բոլոր ունեցած-չունեցածը կը տրամադրէր իր զաւակաց ուսման և կրթութեանը:

Տեղւոյն մէջ, ամբողջ տարին Հայկական դպրոց չէր պահուեր, այլ միայն ձմեռները. այդ պատճառաւ էլ՝ Տէր Դանիէլը, ուսումնատենչ Հայրը՝ մասնաւոր Ուսուցիչ էլ կը վարձէր Ստեփաննոսի Հայկական զարգացումը չ'ընդհատելու համար:

Ջահուկ գիւղի Վարժապետը՝ Հայ ուսուցիչներէ ամէնից արժանաւորը ունեցած է յանձին Մահտեսի Աւետիսին. որի համար՝ Ստեփանը — ապագայ Սապահ-Գիւլեանը — յաճախ սա պէս է արտայայտուած, թէ «ամէն բան կը պարտիմ իրեն, Նա էր որ իմ հոգին կազմակերպեց, հասարակական կեանքին պատրաստեց» և այլն:

Եկած են ուրիշ «ուսուցիչ» կոչուածներ էլ, որոնք կը դնէին Ստեփանին առաջին շարքի վրայ, իր ընդունակութեան, համարձակութեան և աչքաբացութեան համար: Եկեղեցւոյ մէջ լաւ կարդացող, լաւ երգող՝ գիւղաքաղաքի Հայութեան «աչքի լոյս»ն էր դարձած:

Մի անգամ, երբ Մահտեսի Աւետիսը գիւղէն բացակայ էր և դպրոցը ունէր մի ուրիշ ուսուցիչ, տեղւոյն Թաղական աղաների մի այցելութեան պահուն, ուսուցիչը Ստեփանին կը հարցաքննէ Հայերէն դասի ժամանակ, թէ՝ հոլովի՛ր «պատասխան» բառը. Ստեփաննոսը համարձակ կ'սկսի հոլովել. «ուղղական՝ պատասխանի, սեռական՝ պատասխանւոյ» և այլն: Ուսուցիչը, գրաբարէ բոլորովին անտեղեակ «սխա՛լ է, այդպէս չէ» կը պոռայ. Ստեփանը կը կրկնէ նոյն բանը, «ուղղական՝ պատասխանի, և այլն. վարժապետը կը գո-

ռայ այս անգամ, թէ ուղղական՝ պատասխան է, սեռական՝ պատասխանի…:

Ստեփանը «ո՛չ, վարժապետ, այդպէս չէ՛, ուղղականը՝ պատասխանն է, սեռականը՝ պատասխանւոյ»: Վարժապետը, իր «գիտնականութեան» արժանապատուութիւնը վիրաւորուած զգալով, վեր կը կենայ և մի չառաչուն ապտակ կ'իջեցնէ Ստեփաննոսին՝ թաղական աղաների ներկայութեանը և կ'աւելցնէ թէ, «դու ո՞վ ես, որ վարժապետիդ սխալը պիտի բռնես»:

Ստեփաննոսը անմիջապէս դուրս կը գայ դպրոցէն և այլեւս այդ տգէտ վարժապետի մօտը չի յաճախեր, մինչեւ որ Մահտեսին կրկին կ'երեւնայ գիւղաքաղաքում: Դեռ Մահտեսին չեկած, մի ուրիշ խաչագող վարժապետ երեւան կը գայ գիւղին մէջ, որ Տէր Դանիէլին հետ այնպէս մը կը խօսի, որ ամենագէտի տըպաւորութիւնը կը թողու նրա վրայ· Տէր Դանիէլը կը հիանայ մանաւանդ այն ժամանակ, երբ վարժապետը կը խոստանայ — որոշ գումարի մը փոխարէն — բացառիկ բաներ սովրեցնել մանուկ Ստեփանին, օրինակ՝ Քրիստոսի խաչին վրայ գամուած բեւեռների անունը… և խեղճ Տէր Հայրը կը հաւատայ ու կը հրճուի, որ իր որդին մի օր գիտուն պիտի դուրս գայ, երբ այս վարժապետէն այդ բոլորը սովրի, և կ'ընդունի պայմանները, ու Ստեփաննոսը կը սովրի այդ վարժապետի գիտութիւնները, ի միջի այլոց Խաչի Գամերի անունները… «Աքոս, Թադոս, Մաքոս»:

Ստեփանը գիւղի գիտնականն էր դարձել… և սակայն, իր չարութիւննե՞րը — նշանաւոր անուն էր թողած և՛ իր այդ ձիրքերի համար: Ստեփանը «Դումաճ» անունով շուն մը ունէր, որի հետ միշտ կը խաղար, կը գզուըտէր տան մէջ, բակի մէջ, պարտէզի, թէ փողոցի մէջ· այգիներ, լեռները, վազվզել, կոխ տալ, թուրքի գլուխ ջարդել, երկսեռ մանուկները հալածել,

ծեծել, ծեծկուիլ... անվերջ։ Այնպէս որ՝ երեկոները, Տէր Դանիէլի բակի դրան առաջ պոչ կը կապեն եղեր՝ Ստեփաննոսի ձեռքից դանդատուողները...։ Տէր Հայրը յաճախ կը պատժէր Ստեփանին, բայց նա շուտով կը մոռանար իր պատիժը և նորից կը վերսկսէր իր քաջագործութիւնները։ Օրինակի համար՝ մի անգամ, Ստեփաննոսը, դպրոցէն վերադարձին, բակի դռնէն կ'ըսկսի բարձրաձայն հարց տալ իր մօրը՝ թէ «մամա՛, հացը պատրա՞ստ է»․ մայրը ասած կը գտնուի թէ՝ «ա՛յ բալա, մի ներս ե՛կ, յետոյ»․ վա՛յ, մայրը այդպիսի նկատողութի՞ւն անի, և ահա, կըսկսի այս մեր Ստեփաննոսը, «դիւահար»ի պէս, ամբողջ պարտէզի բուսականութիւնը կոխկռտել, փետտել, շորերը պատռտել են են․ խեղճ մայրը, հազար անգամ ափսոսած՝ իր զաւկի այդ դրութիւնը տեսնելով, կ'աղաչէ, կը պաղատի, որ հանդարտի, էլ չպիտի՛ ասի այդպիսի բան, և, վերջապէս, մութն ընկնելէ վերջ, կը յաջողի ներս առնել երես առած տղային և կերակրել ու քնացնել։ Տէր Հօրը հարցին՝ թէ ո՞վ է այդպէս պարտէզը քանդել, Տէր օրհնին (Երիցուհին) կը զգուշանայ ճշմարտութիւնը յայտնելէ և «դուման» զամփռին վրայ կը ձգէ այդ աւերը, և կ'ազատէ տղային՝ ծեծուելէ։

Երբ խեղճ ամուսինս այս բոլորը կը յիշէր և ինձ կը պատմէր, յուզումով կ'օրհնէր իր ծնողաց սուրբ անունը և «խեղճ մամաս, ի՞նչեր է քաշել իմ ձեռքէն» կ'ասէր և մեր զաւակաց արած մանկական չարութիւնները կը նսեմացնէր, «խեղճ տղաների արածները ոչինչ են, բաղդատմամբ իմ արածներին» կ'ասէր ու ինձ կը հանդարտեցնէր, երբ բարկացած կը լինէի։

Երբ Ուսուցիչ Մահտեսին կրկին, պաշտօնով, գիւղ կը գայ, Ստեփաննոսը կը վազէ դպրոց․ ա՛յնքան կը յառաջդիմէ, որ անգիր կը սովրի Զամչեան Քերականութիւն, Ադոնց Նարտասանութիւն, Եղիշէ, Խորենա-

ցի ևն ևն։ Մահտեսին, յաճախ, իր աշակերտներին կը տանէր շրջագայելու և Սիւնեաց աշխարհի մէն մի յիշատակարանները, լեռնակատարները ցոյց տալով՝ կը բացատրէր ու կը պատմէր յուզումով, Դաւիթ Բէկի քաջագործութիւնները ընդգրկող բոլոր վայրերը ջերմեռանդութեամբ կը համբուրէր ու համբուրել կը տար տղայոց. այդպիսով՝ «Քեռփիր Օսմանլի»ի զուլումները եւս պատմելով՝ աշակերտների մէջ Հայրենասիրութեան անշէջ կրակը վառ կը պահէր, հանդէպ Թուրքի՝ անմար ատելութիւն սերմանելով աշակերտների հոգւոյն մէջ։

Այս հոգւով, ահա, սնուած երեխայ Ստեփաննոսն էր, որ Մահտեսի Աւետիսի դպրոցին մէջ իր նշանաւոր «Վարդանանց Պատերազմը» սարքած է, Վարժապետի մէկ-երկու ժամ տեւող բացակայութեանը ժամանակ։ Ահա՛ Ստեփան Սապահ-Գիւլեանի, ի՛ր իսկ սեպհական բերնովը, գրչովը պատմուած այդ նկարագրութիւնը՝ «Փոքր Հայքի Յիշատակներ»ի մէջ։

«... Մի օր, Մահտեսին ոչխարները գայլի հսկողութեանը յանձնեց։ Երբ գլուխս պատուհանից դուրս հանեցի՝ տեսայ, որ Մահտեսին բաւականին հեռացել է և մեր ձայնը չի կարող լսել. բոլոր տղաներին ասացի, որ ամէնքն էլ իրեց գրքերը խփեն և պատրաստուին ասածս կատարելու։ Մի քանիսը քրթմնջացին. մանաւանդ մեծերը՝ 20–25 տարեկան եղողները, որոնք ուզում էին իրենց «գիր»ը շարունակել։ Սպառնացի՝ ինձ չի լսողների անունները քարետախտակիս վրայ գրեցի, որ Մահտեսուն ներկայացնեմ՝ որպէս «անպարտաճանաչներ»ի և «անհնազանդներ»ի։ Գիտէին որ դրա ծայրը պատիժ կայ. ուստի բոլորն էլ համակերպեցան։

«Ամէնքին կարգով իրենց տեղերը կանգնեցրի։

«Ասացի. հիմայ պէտք է Վարդանանց պատերազմը

խաղանք: Ամէն մարդ Թող իր տակի դօշակը, չորը, խսիրը ձեռքին առնի և պատրաստ կենայ: Այդպէս էլ արեցին:

«Պէտք է երկու մասի բաժնուել, աղաղակեցի, մէ-կը Հայ, միւսը՝ Պարսիկ: Հայերը Թող վերը կանգնեն, իսկ Պարսիկները վայր:

«Ամէնքն էլ վեր վազեցին. ոչ ոք չուզեց Պարսիկ լինել:

«Տեսնելով որ այլ կերպ անկարելի է, բոլոր յե-տադէմներին, բԹամիտներին, մեծ ու փոքր ծոյլերին հաւաքեցի, և Պարսիկների համար նշանակուած տեղը կանգնեցրի:

«Բոլոր յառաջադէմներին, աշխատասէրներին մէկ տեղ բերելով՝ տարայ վերեւ, Հայոց բանակը կազմեցի:

«Ցանկարծ երեւեցաւ, որ բոլոր 20–25 տարեկան-ները լցուել են Պարսիկների կողմը, իսկ վերի մասի մէջ կան միայն փոքրահասակներ: Դրա էլ ճարը գը-տայ. ընտրովի՝ մի քանի մեծերին վերեւ տեղափոխե-ցի, և երբ ամէն բան կարգի մտաւ, երկու մասի բա-ժանուեցանք: Դասարանի ուղիղ մէջտեղն էլ ածուխով սեւ գիծ քաշեցի: Դա էլ Տղմուտ գետն էր:

Ապա ես մէջ տեղ անցայ՝ «Վարդանայ Ճառը» ար-տասանեցի: Պարսից Մուշկան Նիւսալաւուրտն էլ մի կողմ կանգնած՝ իր զինուորներին խրախուսեց:

«Ո՛չ է մեզ արեւ, առանց Հայաստանեայց» պոռա-ցի և յարձակումը սկսեցինք...:

«Մեր զէնքերը՝ մեր դօշակները, փալասները, խը-սիրի կտորներն էին... կռուեցի՛նք, ու կռուեցի՛նք:

«Բայց մինակ չէինք կռւում. հապա աղաղա՛կը, գոռա՛լը, գոչե՛լը, ճչա՛լը...: Բարձրացել էր փոշու մի ամպ. ա՛յնքան Թանձր, որ ո՛չ Պարսիկն էր յայտ-

Թի, ո՛չ էլ Հայը: Իրարու տալիս ու տալիս էինք...:

«Թանաքաման, թուղթ, գրիչ, գիրք՝ ցիր ու ցան՝ յատակի վրայ...: Փշրուեցան պատուհանների ապակիները. վառարանը ընկաւ և ծուխը բարձրացաւ...:

«Բայց մենք մի անգամ տաքացել էինք, արիւնքրտինքի մէջ կորած՝ հարուածներ էր, որ իրարու իջեցնում էինք:

«Փոքր երեխաները յատակի վրայ թափուել, ընկել են, ո՞րի հոգը, մենք շարունակում ենք հոգւով սրտով. յաղթութի՛ւն պիտի տանել:

«Պատերազմը սկսելուց կէս ժամ անցել էր: Մօտենում էինք Տղմուտ գետին: Մուշկան Նիւսալաւուրտը յառաջ վազեց իմ վրայ... ինձ տապալելու մօտ էր, երբ «Համհարզ»ս՝ Խորէն Խուրխուունին վրայ հասաւ և Մուշկանին գետին փռեց:

«Անցանք Տղմուտ գետը. Պարսիկներին սրահից դուրս քշեցինք. իր թափի սաստկութեան մէջ՝ Խորէն Խուրխուունին ընկաւ դրան չէմքի վրայ՝ ոտի ճանը դուրս եկաւ. քիթն ու պռունգը արիւնոտեց...:

«Այդ ժամանակն էր, ահա՛, դրսի դրան չէմքին նշմարեցինք Մահտեսուն՝ կանգնած:

«Փախչող փախչողի եղաւ: Իմացանք մեր գլխին գալիքը: Ամէնքս էլ վերջին հաղորդութիւն առնողի նման՝ տեղերնիս նստեցինք, պատժին սպասելով:

«Երկար ժամանակ Մահտեսին ներս մտնել չը կարողացաւ՝ փոշու ամպից. բաւականին սպասելուց յետոյ՝ ներս եկաւ, աջ ու ձախ նայեց: Բոլորս մեր տեղերը նստած՝ Անտոն Ճգնաւորի նման, կարծես թէ ո՛չ մի բան չի պատահել, գլուխներս կախ՝ մեր գրքերի վրայ, առաջներս ենք նայում. իբրև թէ դաս ենք սեր-

տում: Բայց՝ աչքի տակից էլ նայում ենք՝ դողը սըրտերիս:

«Մահտեսին ինձ մօտեցաւ, մատը վրաս թափ տըւեց, ասաց· «Քեզ պիտի սպանեմ, կաշիդ քերթեմ· քեզ պիտի մորթեմ, կտոր-կտոր անեմ»:

«Ձայն ծպտուն չը հանեցի: Ոչինչ արդար, քան այդ զայրոյթը:

«Մահտեսին դուրս գնաց· փոշին մի քիչ թեթեւանալուց յետոյ՝ նորից ներս մտաւ, երկու խուրձ դալար ճիպոտ թեւի տակին, բերեց և խարխլած ամբիոն-մահճակալի վրայ դրեց:

«Ուժեղ տղաներից մէկին՝ Մայիլենց Խաչատուրին, 25 տարեկան, պատուիրեց դրանը առաջ կանգնել, հըսկել, որ ո՛չ ոք դուրս չը գնայ: Լալօենց Ստեփանին էլ հրամայեց թեւքերը ծալել՝ ծեծւողների ոտքերը բըռնել, վեր բարձրացնել:

«Բոլորս էլ՝ հրամանին համեմատ, մեր ոտնամանները հանեցինք: Կօշիկ, սօլ, տրեխ՝ դուլպաներ, մեր առաջն էինք շարել:

«Ծեծը սկսուեց ձախ կողմի վերեւի գլխից· իմ տեղըս աջ կողմի գլուխն էր:

«Այդ հաշուով՝ իմ հերթս ամէնքից վերջը պիտի գար:

«Զգում էի, որ ամէնից շատ ծեծ ուտողը ես պիտի լինէի· որովհետեւ միակ իրական պատասխանատուն ես էի· չէ՞ որ միւսներից շատերը դժկամակելով, սպառնալիքի տակ էին մասնակցել:

«Մահտեսին ձախից սկսեց, որ ինձ էլ լաւ ահաբեկէր: Ձախ ծայրի առաջին նստողը՝ Հըդիկ աչքերով մի տղայ էր, Թադէոս անունով՝ 25 տարեկան: Կայտառ, թիկնեղ, հուժկու մի տղայ էր, որ հազիւ 2-3

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

շարաթ էր որ եկել էր ուսումնարան, «գիր» սովորելու: Առաջին ծեծի բախտը սրան վիճակուեց: Թադէոսի մերկ ոտքերը բռնեցին՝ վերեւ բարձրացրին: Մահտեսին ուռի դալար ճիպոտի հարուածը իջեցրեց: Թադէոսը պոռաց. «Աստուա՛ծ»: Հարուածը երկրորդուեց. Թադէոսը կանչեց. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ»: Ճիպոտը սկսեց արագ իջնել, բարձրանալ... Թադէոսը՝ իր ահարկու ձայնով՝ անդադար, արագ արագ լեղապատառ կանչեց. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ, Աստուա՛ծ...»:

«Որքան որ՝ մահուան դուռը հասածի հոգեբանութեան մէջ, այնու ամենայնիւ, Թադէոսի այդ կերպ աղաղակելուն համար՝ անկարող եղանք մեր ծիծաղը զսպել. բոլորս էլ պոռթկացրինք. ծիծաղեցա՛նք, ծիծաղեցա՛նք բարձր հրհռոցով:

«Մահտեսին է՛լ աւելի բորբոքուեց:

«Տղաները բոլորը, կարգով, ծեծ կերան կո՛ւշտ կո՛ւշտ:

«Այդ բոլոր ժամանակ՝ մեզ հետաքրքրողը այլեւս մեր սեպհական կաշին չէր, այլ ծեծուողի լացի եղանակը, աղաչանքի ձեւը:

«Ծիծաղում էր՝ մի քիչ առաջ ծեծուողն էլ՝ իր վա՛յ վա՛յի մէջ, և դեռ ծեծը չը ճաշակողն էլ:

«Վա՛յ վա՛յի մէջ յաճախ լսում էր. «Մահտեսի, քեզ մատաղ, ձեռքդ համբուրեմ... Մահտեսի, Խորենացու, Եղիշէի, Սուրբ Մեսրոպի արեւը վկայ՝ նրանց գլխովն եմ երդւում, էլ չեմ անիլ. ների՛ր...»

«Հերթը եկաւ, հասաւ Տղմուտ գետի ափին վիրաւորուող Աւետիսին, իմ Համհարզին՝ Խորէն Խոռխոռունուն: Սա պարթեւ հասակով, թիկնեղ, հուժկու մի երիտասարդ էր՝ 25 – 26 տարեկան երկաթի մի կտոր, ամէնից ուժեղը...: Սա չուզեց իր արժանապատուութեանը կերցնել, խոստովանելով՝ որ ոտքը, սրունքը ո-

լորուել, նանը դուրս է եկել։ Երբ Մահտեսին հրամայեց՝ «Աւետի՛ս, պառկի՛ր»․ Նա առաջ գալով՝ ձեռքերը երկարած՝ ափերը բանալով՝ ասաց․ «Մահտեսի, Վարդանանց Սուրբ Պատերազմը վկայ լինի, երդւում եմ Եղիշէի անմահ գլխով, որ սուտ չեմ խօսում, այս երեկոյ նշանդրէք ունինք․ ես էլ պիտի գնամ․ խնդրում եմ, ոտքերիս տակին չը զարկես․ ահա՛ ձեռքերս, ի՛նչքան կուզես՝ զա՛րկիր»։

«Չէ՛, Մահտեսին չուզեց բացառութիւն կազմելով՝ Աւետիսին նպաստաւորել․ ուստի նորից կրկնեց․ «տըղա՛յ, պառկ՛ր»։

«Աւետիսը երբ իր երդում-աղաչանքները կրկնելու վրայ էր՝ հարուածները աջ ու ձախ թափուեցան, Աւետիսի ձեռքին, երեսին, գլխին, մէջքին... Աւետիսը տեսնելով, որ այդ է՛լ աւելի խիստ եղաւ, իր ահագին հասակովը՝ փախաւ Մահտեսու մահճակալ-ամբիոնի տակը մտաւ։ Մահտեսին կռանալով՝ հարուածները շարունակեց իջեցնել կողքերին, ոտքերին, երեսին, քըթին, բերնին՝ անխտիր, ուր հասնում, ուր որ կարողանում էր։ Ցաւը մի քիչ սաստկացաւ, երեւում էր։ Աւետիսը ահագին մահճակալը մէջքի վրայ առած՝ այս ու այն կողմ փախչելով աղաղակում էր․ «Մահտեսի, թող գամ՝ պառկիմ, էլ խօսքիցդ չեմ դուրս գալ... վա՛յ, վա՛յ...»։

«Ծեծուող, չը ծեծուող, իրենց ցաւերը մոռացած՝ Աւետիսի այդ արտաքոյ կարգի արարքից՝ խնդալով ճաթեցան, հռհռոցին չափ ու սահման չը կար։

«Մահտեսին բարկութիւնից է՛լ աւելի կարմրեց։ Ծեծը շարունակուեց․ հերթը հասաւ Մարգարենց Ստեփանին․ ինձնից անմիջապէս ցած նստողին․ նրանից յետոյ՝ ապուրը ես պիտի ուտէի, կարգը ինձ պիտի գար։

«Մարգարենց Ստեփանն էլ մի ճկուն տղայ էր․ ու-

քերը բռնեցին, բարձրացրին, երբ առաջին հարուածը իջեցնելու վրայ էր, յաջողեց ոտքի մէկը բռնողի ձեռքից հանել, այնպէս որ հարուածը իջաւ ոտքերը բռնողի մատներին:

«Խեղճ Լալօենց Ստեփանի աջ ձեռքի բթամատը կոտրուեց. սկսեց պոռալ, վա՜յել: Փախաւ մտաւ մի անկիւն. սկսեց մատը լիզել, բերանի մէջ պահել և կսկծալ...:

«Ես կօշիկներս, գուլպաներս հանած՝ օրհասիս էի սպասում: Բայց ո՞վ պիտի բռնէր իմ ոտներս. տղայ չը կար. մնացել էր միայն Մայիլենց Խաչատուրը. նա էլ դրան առաջն էր կանգնել. եթէ թողնէր, գար ոտքերս բռնելու, բոլոր տղաները դուրս պիտի փախէին:

«Մահտեսին ընկաւ մտածմունքի մէջ. հնարիմացութիւններ էր խորհում. մի-երկու անգամ վեր, վայր գնալ գալուց յետոյ՝ իր երկայն ծխափողը վառեց, քաշեց, ծծեց և նստաւ:

«Ընկերներ, բոլորն էլ մորմոքում էին, որը՝ ձեռքը, թեւքը բռնած, որը՝ ոտքը, որը՝ գլուխը...:

«Խղճահարութիւնս բռնեց. չէ՞ որ այդ բոլորի պատճառը ես էի. իսկ իմ ոտներս բռնող չը կար, որ ծեծը ուտէի: Սա ուղղակի իմ արժանապատուութեանս դիպաւ և խղճիս վրայ ծանրացաւ: Ուստի, ամենայն համակերպութեամբ, Ստոյիկեան հպարտութեամբ, բոպիկ ոտքերս պինդ պինդ, իրարու կպցրած՝ վերեւ պարզեցի, ասացի. «Մահտեսի, ես կը բռնեմ, զա՛րկ, մեղաւորը ե՛ս եմ»:

«Մահտեսին իմ այդ համակերպութիւնս տեսնելով՝ նայեց, խնդաց ու պատասխանեց. «Ես քեզի պիտի մորթէի, մորթէի՜...»:

«Ճիշդ այդ խօսքին՝ մեր եկեղեցու մեծ զանգակի ձայնը հնչեց: Վա՜յ օրհնեալ լինիս Ժամկոչ Աւօ:

«Տիրեց ընդհանուր ուրախութիւն. ազատուելու րոպէն մօտեցել էր, ուրեմն:

«Օրը շաբաթ էր, հետեւեալ օրը եկեղեցական մեծ տօն կար. պէտք էր եկեղեցին սրբել, մաքրել, զարդարել, վաղուան համար պատրաստ անել:

«Զանգակի առաջի ղօղանջիւնին, ժամի մօտ տուն ունեցող պառաւները, աղջիկները խումբերով թափուեցան եկեղեցու բակը. բարձրացաւ ահագին ժխոր, աղմուկ...: Դպրոցն էլ արդէն ժամաբակին էր. պատուհաններից ամէն բան երեւում էր:

«Քո ծնծղ՝ էլ յետոյ, երկուշաբթի...» ասաց Մահտեսին և հրամայեց, որ պատրաստուենք տուն երթալ՝ հաց ուտելու:

«Մօտիկ եղող տղաները իրենց տները պիտի երթային, հաց ուտէին և վերադառնային. իսկ հեռու գտնուողները ուսումնարանի մէջ էին ուտում, ամէն մէկը սուփրան իր առջեւը բացած, ինչ որ տնից բերել էին:

«Մեր տունը մօտիկ՝ ժամաթաղումն էր. դուրս ելայ, որ գնամ:

«Տղմուտ գետի ափին վիրաւորուող Սեւտոխն էլ ուզեց գալ, բայց տեսնելով՝ որ ոտքը շատ է ցաւում, քալել չի կարողանում, ասաց. «Ստեփան, մամիկիս ասա՛, որ մեր էշը ուղարկի, որ հեծնեմ, գամ»:

«Դուրս ելայ՝ բանտից փախածի նման: Եկեղեցու բակում, առաջին անգամ հանդիպեցայ՝ իմ Մարէն Մառոխուռունու մամին՝ Սանամին: Սա ուղղակի մի աժդահա կին էր. հասակը բարձր, վիթխարի՝ կաղնու մի բուն: Գիւղի մէջ շատ տղամարդիկ նրանից ծեծ էին կերել: Այնքան ազդեցութիւն էր ձեռք բերել, որ գիւղացիները՝ մի օր՝ Գաւառապետին թուղթ էին ներկա-

յացրել, խնդրելով՝ որ Սանամին Գիւղապետ, Տանուտէր կարդէր։

«Երբ Սանամ նանը ինձ տեսաւ, հարցրեց «բա մեր Աւետի՞սը, ու՞ր մնաց, ի՞նչու չեկաւ»։ «Ձեր Աւետիսը, Սանամ մամի, ասացի խնդալով, միամտաբար, ընկաւ Աւարայրի Դաշտի մէջ՝ Տղմուտ գետի ափին. Պարսիկները զարկեցին, ոտքը վիրաւորեցին, չը կարողացաւ գալ, ինձ ասաց՝ որ ձեզ ասեմ որ ձեր էշը ուղարկէք, որ հեծնի գայ»։

«Սանամը կարճամիտ, ջղային, նետուող կին էր. խօսքս հասկացած՝ չը հասկացած՝ սկսեց կատաղի կերպով պոռալ, կանչուըռտել և սոսկալի հայհոյանքներ թափել Պարսիկների գլխին. կնիկներ, աղջիկներ թափուեցան գլխին... այդ ժամանակ, ո՛ր տեղից ո՛ր տեղ սատանայի պէս, մոլլա Ալին՝ եկեղեցու բակի մօտով անցնում էր, մզկիթ երթալու, սովորական ճանապարհով։ Սանամը նրան տեսնելով՝ մռնչաց ու մի ահագին քար առնելը մոլլայի գլխին զարկելը, գետին պառկեցնելը մէկ եղաւ...։ Մոլլան աղաղակեց, ճչաց, օգնութիւն կանչեց։ Հարեւան Թուրք կիները հաւաքուեցան, մոլլային հրջապատեցին և սկսեցին քարեր տեղալ դէպի մեր եկեղեցու բակը, Հայ կնիկներին, աղջիկներին։ Սրանք էլ աւելի մեծ թափով պատասխանեցին՝ Սանամի առաջնորդութեամբ։

«Աշակերտները տեսնելով պատուհաններից, որ Թուրքերը Հայ կնիկներին քար են նետում, դուրս թափուեցան և քարի կռիւը իր սաստկութեան մէջ մտաւ։

«Ես էլ, ինձ՝ այս անգամ՝ իսկական Աւարայրի մէջ կարծեցի...։ Մի քանի վայրկեանից յետոյ՝ կռիւը կայծակի արագութեամբ ընդարձակուեց, տարածուեց բոլոր փողոցներում, ծաւալ առաւ նաեւ ամ-

բողջ գիւղում, նոյն իսկ դաշտերում: Գլուխ էր, որ ջարդւում էր, մէկ մէկու խնայել չը կար: Երկու ցեղից էլ զարկւում էին՝ իրարու հանդիպելիս: Բայց ի՞նչու — ոչ մէկը որոշ բան գիտէր:

«... Տանուտէրը ձիաւոր վազցրեց քաղաք՝ Նախիջեւան, Գաւառապետին իմաց տալու, որ հայերն ու Թուրքերը իրարու են կոտորում: ... Կօզակները գիւղ թափուեցան, կռիւի առաջն առան. եկաւ և՛ Գաւառապետը, յետոյ էլ՝ Հայոց Առաջնորդը:

«Սկսուեցաւ հարցաքննութիւնը:

«Մահտեսին եղելութիւնը հասկացնում է: Յաջորդը ծիծաղից թուլանում է, երբ իմանում է, որ այդ բոլորի պատճառը «Աւարայր»ի մեր կռիւն է եղել...:

«Գաւառապետը ինձ կանչեց, մի անկեղծ, հայրագորով, Թրքատեաց Հայ. հասակս դիտեց, վերից վայր նայեց, խնդաց և Առաջնորդին բացագանչեց. «Հայր Սուրբ, էս չը լինելիք բան է, աշխարհը իրար անցընողը այս տղեկը, այս խօխան է եղել... ես ի՞նչ բացատրութիւն տամ Նահանգապետին...» ու նորից ըսկըսեց ծիծաղել, ձեռքերը, գլուխը շփել: Մի քիչ անցնելուց յետոյ՝ ուզեց որ Աւարայրի պատմութիւնն անեմ իրեն: Ես արեցի, բառացի Եղիշէին հետեւելով:

«Յաջորդն էլ, Գաւառապետն էլ, Մահտեսին էլ յուզուեցան, փղձկացին, լացան:

«Արթնցաւ Ազգային, Ցեղային Ոգին: Ես ազատուած էի (*)»:

Մահտեսին տեսնելով Ստեփանի մէջ՝ ապագայ Սապահ-Գիւլեանը, մասնաւոր դասերով կը պատրաս-

(*) Մանրամասնութիւնը տեսնել «Փոքր Հայքի Յիշատակներից»ի Ա. Հատորի, 32–45 էջերի մէջ:

տէ զէնքը բարձրագոյն կրթութեան, բարձրագոյն վարժարանի դասընթացքի: Տէր Դանիէլն էլ, երբ շատ ուսումնասէր և պարտաճանաչ հայր, միշտ առիթ է ըստեղծած՝ իր որդուն, պատանի Ստեփանին չը խնայել ոչինչ՝ իր ապագային համար, և մանաւանդ՝ ապագայ մարդը պատրաստելու համար՝ լուրջ յորդորներ կարդալ, միշտ խրատել և զգուշացնել զինքը, կեանքի ընթացքում, ո՛և է մոլութենէ, մանաւանդ գինեմոլութենէ. ու նրա հասարակ հաւանութիւնը բաւարար չը համարելով՝ երդուել է տուած իր որդւոյն՝ որ ո՛և է առթիւ, երբ որ մեծնայ, օղի կամ գինի բերան չ'առնէ: Եւ իրաւամբ, Ստեփան պահած էր իր երդումը, իր ամբողջ կեանքին մէջ:

Ըստ Մահտեսիի թելադրանքին, Տէր Դանիէլ՝ իր որդւոյն կ'առաջնորդէ Թիֆլիզի Ներսիսեան Վարժարանը: Այդ առաւօտուն, հայր ու որդի կ'երթան եկեղեցի, ուր ջերմեռանդութեամբ կ'աղօթեն, որ Ստեփանը քննութիւնը յաջողութեամբ անցընէ...: Ստեփաննոսի թոյլ կողմը — քննութենէ վախնալու — Ռուսերէն լեզուն էր եղած. և երբ, քննութեան կարգը կը գայ Ռուսերէնին, Ստեփանի սիրտը կը թփրտայ. ուսուցիչը Հայ կը լինի թէեւ, բայց ամբողջ դասարանի աշակերտութեան կ'առաջարկէ լուծել քերականականօրէն մի նախադասութիւն, գրուած գրատախտակի վրայ. բառ մը կը մնայ, որ ո՛չ մէկը չի կրնար լուծել. ըՍտեփանը գիտէ թէ ի՛նչ մասունք բանի է այդ, բայց հայերէն լեզուով միայն կրնայ լուծել, մատը երկար ատեն բարձր կը պահէ. ուսուցիչը կը տեսնէ որ միւսները դեռ չեն կարողացած հասկնալ. կը հարցնէ Ստեփանին, որ Հայերէն «մակբա՛յ» կը պոռայ: Ուսուցիչը դոհ կը մնայ և այդպէսով քննութիւնը Ռուսերէնի մէջ էլ յաջող կը հռչակուի և կ'անցնի:

Ստեփանը ուրախութեամբ կը վազէ հօրը մօտ, որ

պարտիզում նստած՝ անձկանօք տղուն պատասխանին կ'ըսպասէր. Հայր ու որդի կը գիրկընդխառնուէին և հայրը իրեն կը թողու այնտեղ, Ներսիսեան Դպրոցի մէջ, գիշերօթիկ:

Ստեփան ամենաաչքառու աշակերտը կը դառնայ այդ վարժարանին մէջ. իր ամենաշատ սիրած ուսուցիչը Բժիշկ Ծերենցն է եղած (Շիշմանեան), որ դպրոցում, երբ կը հիւանդանայ տղան, ինքը անձամբ կը հսկէ հիւանդին, «խոստմնալից տղայ է» ըսելով և մեծ խնամք կը տանի իրեն:

Դպրոցի տեսուչն էր Սիմոն Սիմոնեանը՝ «Մեղու»ի խմբագիրը: Հայկաբանն էր՝ Տրապիզոնցի, յայտնի գրաբարագէտ՝ Պալեանը, որի գովաբանութեանն էր արժանացած Ստեփանը, որովհետեւ Պալեանը միշտ կ'ըսէր, «կարծում եմ, ժամանակին, մի լաւ Հայ մարդ կ'ունենանք»:

Ըստ դպրոցի օրէնքների, վեցերորդ և եօթներորդ դասարանի աշակերտները դասախօսութիւններ կը տային: «... Յիշում եմ (*) Ստեփանի դասախօսութիւնը, նա խօսեց Խորենացու մասին. Թէ չեմ սխալւում՝ տեւեց մօտ երկու ժամ: Դասախօսութեանց միշտ նախագահում էին Տեսուչ Սիմոնեանը և Պալեանը. դասախօսութիւնից յետոյ՝ լինում էին վիճաբանութիւններ. վիճելու, հարցեր տալու իրաւունք ունէին երրորդ դասարանից վեր բոլոր աշակերտները: Լաւ յիշում եմ, որ մեր դպրոցական սրահը ծայրէ ի ծայր լիքն էր. բացի Տեսչից և Պալեանից՝ կային ուսուցիչներից շատ-շատերը: Երբ դասախօսութիւնը վերջացաւ, ուսուցիչները Ստեփանի ձեռքերը սեղմելով՝ շատ մեծ գոհունակութիւն յայտնեցին՝ իր ա՛յնքան յաջող դասախօսութեան համար: Համարեա թէ՝ վիճողներ չեղան.

(*) Ռ. Մ.

ընդհակառակը՝ առաջարկողներ եղան, աշակերտներից, որ դպրոցը՝ Ստեփանի այդ ուսումնասիրութիւնը, որ մի յաջող աշխատանք էր, տպագրեն: Տեսուչը խոստացաւ, որ մանկավարժական ժողովին այդ հարցը մէջտեղ կը դնէ:

«Այսպէս, Ստեփանը երբ աւարտեց Ներսիսեան դպրոցը, ճանապարհուեց իր ծննդավայրը՝ Ջահուկ: Խօսւում էր, որ Ստեփանին ուսուցիչ պիտի վարձէին Ներսիսեան դպրոցի համար, սակայն Ստեփանը չէր համաձայնուի· և, իր գիւղում, բացել էր սեպհական դպրոց՝ գրեթէ բոլորովին ձրի: Երբ իրեն ասում էին՝ թէ ի՞նչպէս կարողանում ես ձրի պարապել, առանց տրտնջալու, Ստեփանը պատասխանում էր՝ թէ՝ չա՞տ է որ մի տարի նուիրուեմ իմ հայրենի գիւղին· մանաւանդ՝ որ ես հոգեպէս և բարոյապէս մխիթարանք եմ զգում· միաժամանակ՝ լաւ հանգստանում եմ, 8 տարի Ներսիսեան դպրոցի մէջ յոգնելուց յետոյ· ու պատրաստւում՝ լծուելու Նոր Աշխատանքի···:

«Այդ օրերին՝ Ղազարոս Աղայեանը, որ Թեմական Տեսուչ էր, այցելում է Ստեփանի հայրենի գիւղը· շատ գոհ է մնում Ստեփանի բացած դպրոցից և աշակերտների մի տարուայ յառաջդիմութիւնից: Ստեփանի տեղ՝ մի ուրիշին է ուսուցիչ նշանակում, իսկ ըՍտեփանին վարձում՝ Երեւանի Թեմականին համար ուսուցիչ: Թեմականի ուսուցիչները չեն կարողանում տանել Ստեփանի այն նկատողութիւնները, որոնք նա՝ հարց է դարձնում մանկավարժական ժողովներում և արտայայտւում հետեւեալ կերպով· «մենք Ռուսական չինովնիկներ չենք, մենք հայ ուսուցիչներ ենք· արթնացող հայ երեխաներին — որոնք մեր խնամքին են յանձնուած — այնպէս պիտի կրթենք, դաստիարակենք, որ հասարակութեան մէջ, իրենց պատուաւոր տեղը գրաւեն···»: Մի քանի ամսուայ պաշտօնավարութենէ

վերջ՝ Երեւանի ժանտարմերիան մի ժանտարմ է ուղարկում դպրոց և հէնց դասից դուրս է քաշում Ստեփանին ու տանում։ Դպրոցը իրար է անցնում, երեխաները սկսում են լացել, հոգաբարձուներից Աղամալեանը՝ որ Երեւանում ամենաազդեցիկ հայերից էր, անմիջապէս գնում է Գուբերնատորի (կառավարիչ) մօտ և պահանջում, որ անմիջապէս Ստեփանին արձակեն։ Ժամանակի Գուբերնատորը, որը մի Գերմանացի էր, Աղամալեանին շատ մօտիկ էր, անմիջապէս մարդ է ուղարկում ոստիկանատուն և խնդրում, որ Պոլկովնիկը (պաշտօնեան) Ստեփանին հետ գայ իր մօտ։ Պոլկովնիկը Գուբերնատորի անձնական բարեկամը լինելով՝ բարեբախտաբար, կը լսէ իրեն և Ստեփանին հետն առած՝ կը գայ իր կաբինետը (օֆիս) և փոքր տեղեկութիւններ կը տայ Ստեփանի մասին, թէ՝ «սա չի նմանում սովորական հայ ուսուցիչներին, սա բոլորովին նոր, վտանգաւոր մարդ է, նոր ուղղութիւն է մտցրել դըպրոցին մէջ, թեմական ուսումնարանը և ուսուցիչները, ինչպէս ինձ տեղեկացրին, նրան չեն սիրում, եւն. եւն.»։ Գուբերնատը երբ լսում է՝ որ «ուսուցիչները չեն սիրում», օգտուելով այդ յայտնութիւնից ասում է. «ինչպէս երեւում է, իր ընկերները, այդ ուսուցիչ-պաշտօնակիցները, հէնց իրենք, ուրեմն, սրան քո ձեռքն են մատնել... մինչդեռ իմ լսածներս բոլորովին հակառակը կը փաստեն։ Ինձ տեղեկացրուած է, թէ Ստեփանը շատ պատրաստուած ուսուցիչ է և տեղացի հայերին էլ օգտակար։ Շատ լաւ կը լինի, որ մի քիչ իրեն խօսեցնենք, տեսնենք»։ Ստեփանին ներս են տանում, որ՝ առանց վախի ու դողի, և շատ էլ քաղաքավարի՝ բարեւում է բոլորին և սպասում՝ թէ ի՞նչ կը հարցնեն իրենից։ Նստացնում են Ստեփանին և հարց ու փորձի ենթարկում։ Ստեփանը տեսնում է, որ առանց արձանագրութեան են հարցափորձում, աւելի է սրտապնդւում և շատ ազատ՝ սկսում է պատասխանել

Գուբերնատի այն հարցին՝ թէ ճի՞շդ է որ ինքը ասած էր իր ընկերներին, թէ «մենք Ռուսական չինովնիկներ չենք»: Ստեփանը հաստատում է և բացատրում այսպէս. «ա՛յո, ասել եմ և հաստատում եմ, որ մենք ժողովուրդի կոպէկները քանի որ ստանում ենք, մեր պաշտօնի մէջ պէտք է լինենք ջանասէր, խղճամիտ և ոչ թէ զանգով դասարան մտնող և զանգով դուրս եկող մի ուսուցիչ»․ բոլորը ծիծաղում են և Ստեփանին յանձնում Աղամալեանին, որ նրան կրկին առաջնորդում է դպրոց և Ստեփանը ուղիղ իր դասարանն է ըշտապում, որ Թեմականի հինգերորդ դասարանն էր, և այդ օրից ուխտում է Ծառայել Հայ Ազգին: 86ի Մայիս 15ին, այդ դասարանի մէջ նա խօսում է և դաս է աւանդում, ոչ թէ իբր սովորական մի ուսուցիչ, այլ՝ իբրեւ յեղափոխական մի ուսուցիչ: Իր դասը լինում է՝ Ընդհանուր Պատմութիւն՝ Յունական Կեանքից: Դասը տեւում է մօտ մէկ ու կէս ժամ. վերջին խօսքը Ստեփանը այսպէս է վերջացնում. «Հայերը խօսել գիտեն, բայց մեռնիլ չը գիտեն. մարդ առանց արեան ոչինչ չի կարելի առաջ տանել...»: Տեսուչը՝ Ս. Նահապետեան, հէնց այդ րոպէին ներս է մտնում, որ դասի ժամանակը անցել է կէս ժամ և երեխաներին պէտք է արձակել: Եւ աւելացնում է՝ որ «Աղամալեանը այս գիշեր ինձ և քեզ կանչել է ընթրիքի»: Աղամալեանի տանը պատահում են Գարեգին Վարդապետ Սրուանձտեանցին, որ երկարօրէն խօսում է Նաթանեանից և Փորթուգալեանից, որոնք 86 թուականներին ուսուցիչներ էին Վանում, երբեմնի Վարագում: Այդ տարիներն էր, որ Խրիմեան Հայրիկի անունը օրէցօր տարածւում էր՝ իբրեւ լաւ խօսող և կարող ագիտատօր. ստեղծուել է Տաճկաստանում Հայրիկեան ըշկօլա, (դպրոց) ևն. ևն.: Այդ գիշերուայ խօսակցութեան արդիւնքը այն է լինում, որ Ս. Նահապետեանը խոստանում է կուսակրօնութիւն ընդունիլ և Վան գը-

նալ՝ Վարագի տեսուչ լինիլ։ Ստեփանն էլ ցանկութիւն է յայտնել Վարագի ուսուցիչ դառնալու, Բայց Սըրուանձտեանցն ասում է թէ՝ «արդէն Ձեր Ներսիսեան դպրոցի աշակերտներից Տիգրան Փիրումեանը այնտեղ է, որին շատ ենք սիրում և հաւանում»։

«Բայց Նահապետեանը կուսակրօնութիւնը ընդունելով՝ նշանակւում է Ճեմարանի Տեսուչ և՝ մոռանալով իր խոստումը, յարում է Կովկասեան պահպանողական բանակին։ Այդ թուականներին Ռուսները սկսեցին Հայերից զինուոր տանել. Մակար Սրբազանին կաթողիկոս օծեցին, Հայ Աշուղները սկսեցին երգել եւ. եւ.։ Հէնց այդ ժամանակներում, Ստեփանը Երեւանի շըրջանի թեմական Տեսչի պատասխանատու պաշտօնը ըստանձնեց։ Կառավարութիւնը շատ խիստ հետեւում էր Ստեփանի ամէն մի քայլին ու գործունէութեան, մօտ երկու տարի. որով, Ստեփանը կարողանում է Երեւանի նահանգի հայ գիւղերում աւելացնել՝ մօտ 50 դըպրոց եւս, որով դպրոցների թիւը հասնում է 112ի, մօտ 9000 աշակերտ-աշակերտուհիներով։ Պէտք է գիտնալ, որ թէ՛ կառավարութիւնը իր ներկայացուցիչներով և թէ՛ հայ ժողովրդից շատերը դէմ էին հայ գիւղացիների կրթութեան, ասելով՝ թէ «գիւղացին եթէ կըրթուի, քաղաքացին է՛լ չի ունենալ հաւ, ձու, մածուն, իւղ, ցորեն, գարի» — ահա Կովկասեան բուրժուաների այս մտայնութեան դէմ էր, որ կռւում էր Ստեփանը և այդ արգելքների դէմ, յաճախ աղի արցունքներ թափելով՝ համոզում էր Հայ Մարդուն, որ «կրթըւած, դաստիարակուած սերունդ է պէտք, անձնապաշտպանութեան համար, օտարի ճանկերից դուրս գալու համար...»։

«Ստեփանը գրաւում է կառավարութեան ուշադըրութիւնը։ Մօտենում է Կովկասեան դպրոցների փակումը և կալուածների գրաւումը։ Փոխւում է Ստե-

փանի ծանօթ Գուբերնանտ Արալովը և ժանտարմ Բոլինսկին. մեռել է նաեւ Աղամալեանը, որով՝ ատամ էին կճրտացնում Ստեփանի հակառակորդները — հայ թէ ռուս — և ժամ առաջ Ստեփանին ուզում էին տապալել..., մինչդեռ Ստեփանը, բոլորովին միամիտ՝ շարունակում էր հրջել գիւղերը և աչքէ անցնել դըպրոցները՝ ոգեւորելով գիւղական ուսուցիչներին և վարժուհիներին. այնպէս որ՝ ամէն գիւղ, ամէն անկիւն՝ լսում էր «Ձայնը Հնչեց Էրզրումի Հայոց Լեռներէն» և «Անհոգ ես, չես գիտեր, ի՞նչ կայ քո մասին» — Աշուղ Ջիւանի երգերը: Հայ գիւղացին և քաղաքացին ապրում ու ոգեւորւում էին, Րաֆֆու և Գամառ-Գաթիպայի երկասիրութիւնները կարդալով և լսելով: Երբ Ստեփանը ո՛և է գիւղ էր հասնում, ուսուցչին հետ միասին, ամբողջ գիւղացիութիւնը հաւաքում էր իր չուրջը՝ նոր տեղեկութիւններ, նոր խօսքեր լսելու: Ամենաանտարբեր մարդն իսկ՝ երբ տեսնում է մի ժողովուրդ ա՛յդքան հետաքրքիր, անշուշտ կ'ուզենայ մի բան ասել, գոհացնել իրենց: Ստեփանը՝ իբր երդուած մարդ, բացարձակապէս կարող եմ հաստատել, առաջին գիւղական յեղափոխական քարոզիչն է եղել՝ Կովկասեան Հայութեան արթնացման այդ վտանգաւոր հրջանին, ամենաեռանդուն և յանդուգն իր խօսակցութիւնը մարդկանց զարմացնում էր: Իր հակառակորդներից շատ-շատերը, այս ու այն կողմ, անկիւնները, ասում ու խօսում էին սա պէս՝ թէ «ա՛խր մեզանից ո՞րը կարող է այդպէս նուիրուել ժողովրդի կրթութեան գործին. ա՛խր, ո՞վ կարող է այդպէս խաղալ իր կեանքի հետ. այժմ հօ՛ Աղամալեան չկա՛յ, որ ագատէ Ստեփանին... եղբա՛յր, արժանաւոր տղայ է, պէտք է սիրել իրեն և օգնել իրեն՝ գործի մէջ...»:

«Բայց կային և՛ սեւահոգիներ..., որ չէին կարողանում տանել Ստեփանի յաջողութիւնները, բարոյական ազդեցութիւնները և գրաւած համակրութիւնը և

չարունակ, ամէն տեղ, խօսում էին Ստեփանի վերայ, իրենց խօսակցութեան նիւթը դարձել էր Ստեփանը, այնպէս որ՝ կառավարութիւնը, որ արդէն կասկածանքով էր նայում նրա վերայ, վերջապէս յաջողեցաւ Ստեփանին ձերբակալել, 87ին, Երեւանում: Երեք անգամ քննութեան էր կանչուել. և դրսում, խօսակցութիւն կար՝ որ «անպատճառ Ստեփանը կ'աքսորուի...»:

Խեղճ ծնողքը շատ դէս ու դէն կ'ընկնեն, իրենց զաւկի փրկութեան համար շատ դրամ կը ծախսեն, սակայն չեն յաջողիր: Նախախնամական տնօրինութեա՞մբ թէ՝ բախտի բերմունքով, բանտին մէջ կը ծանօթանայ՝ բանտի վերահսկիչ Սամսոն Յարութիւնեանին (Րաֆֆու «Խենթ»ը). սա շատ մեծ ծառայութիւններ կը մատուցանէ Ստեփաննոսին և իր ծնողաց ու շատ անգամներ գաղտնի, գիշերանց՝ կը յաջողի նա՝ իր ձիուն վրայ հեծցնելով Ստեփաննոսին, թռցնել զինքը դէպի ծընողական տուն, զիրենք տեսնելու, մխիթարելու ու կըրկին յետ՝ բանտ առաջնորդելու:

Այնու ամենայնիւ, Ստեփաննոս բանտի անախորժ հոտերէն, ապականուած օդէն, փոշիէն ազդուած ու իր հոտառութիւնը կորսնցուցած էր, և մինչեւ վերջ էլ անբուժելի համարեցին մասնագէտները:

Երբ Ստեփանի դատավարութեան օրը կը գայ ներկայ կը լինին իր ազգականներն ու բարեկամները, ինչպէս և ինքը՝ իր ականջովն իսկ կը լսէ իր «8 տարուան բանտարկութեան» վճիռը (բայց առանց գիտցընելու թէ ինքը հոն է եղած) և առանց մէկ րոպէ իսկ կորսնցնելու, իր ազգականները իրենց մէջ պզտիկ հանգանակութիւն մը ընելով՝ և առանց իսկ ծնողացը վերջին անգամ տեսնել տալու, զինքը կը փախցնեն սահմանը և հոն երկու վալատներու յանձնելով՝ հրաժեշտ կը տան իրեն ու Ստեփաննոս կ'ըստիպուի պանդուխտի ցուպն ձեռք առնել ու իր սիրելի Հայրենիք–Ծննդա-

վայրէն ընդ միշտ հեռանալ...:

Ստեփան պատմած ատեն իր փախուստին պատահած անցքերէն, համոզուած կերպով կ'ըսէր թէ՝ միշտ իր հետ, իր վրայ նախախնամական մի ձեռք գտնուած է և իրեն օգնութեան է հասած...: Նա ինձ կը պատմէր թէ ի՛նչպէս Թրքական սահմանը հասած ատեն, երբ պիտի անցնէր, Թուրք պահակը քնաթաթախ՝ ըՍտեփանին կարծելով իր ընկեր-պահակը, ձեռքի հրացանը անոր կ'երկարէ «Ալի՛, ա՛ռ, քունս շատ է գալիս» ըսելով. ու Ստեփանը կ'առնէ հրացանը և առանց նըշմարուելու, առանց ո՛և է դժուարութեան, սահմանը կ'անցնի, ու իր Պարսկական կեղծ անցագրով կ'անցնի Սալմաստ:

«Այդ տեղ կը պատահի յայտնի չարվատար Յակովբին, Փայաջուկ գիւղում. կ'ըսպասէ մինչեւ չարժուի Սալմաստի կարաւանը՝ դէպի Վան: Յակովբը՝ որ Խրիմեան Հայրիկի սաներից էր, շատ է ուրախանում, երբ իմանում է որ Ստեփանը գնում է յատկապէս Վարագ՝ Խրիմեան Հայրիկի մօտ, ուսուցչութեան նուիրուելու: Հէնց այդ օրերին, 87ի Յունիս 17ին է, որ տեղի ունենում է Ագրիպասեանի փոքր խմբի և Շարաֆ Աղայի մարդկերանց միջեւ բաղխումի դէպքը և Ագրիպասեանի սպանութիւնը: Վտանգւում է Վանի քարաւանի ճանապարհը և քարաւանը յետաձգում է իր ճանապարհ ընկնելը. իսկ Ստեփանը միշտ անհանգըստացնում է Յակովբին, թէ «ա՛խր, բա՛, ե՞րբ պիտի ճանապարհուենք...»: Երբ Ստեփանը այդքան անհամբերութիւն է ցոյց տալիս Յակովբին, սա ասում է, Յուլիս 15ին՝ թէ «այս գիշեր ինքը հինգ հոգւով ճանապարհւում է դէպի Վան, բայց ո՛չ սովորական ճանապարհով»: Ստեփանը անմիջապէս կը համաձայնէ իրենց միանալու, որով Յակովբ Ստեփանին էլ զինում է, իրեն նման, այնպէս որ Ստեփանը, մեծ հրճուան-

քով, ստանում է մի գեղեցիկ բերդան, մի բրաունինգ ատրճանակ, 150 գնդակ, 100 պատրոն և մի գեղեցիկ խանջար և մի զոյգ գեղեցիկ Արտաբիլի տրեխներ: Գիշերուայ ժամի 1ին Յակոբը՝ իր խմբով, ճանապարհւում է. շատ դժուար և անանցանելի ճանապարհներ չորս օր կտրելուց յետոյ, հասնում է խումբը Վարագայ Վանքի դուռը և անմիջապէս ներս մտնում: Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց, հէնց այդպէս կերպարանափոխուած Ստեփանին անմիջապէս ճանաչում է և գրկելով՝ համբուրում ու իր խուցն է տանում նրան: Հայրիկը Պոլսումն էր այդ ժամանակ. խօսք կար որ Պոլսից աքսորէին նրան: Ստեփանն էլ իր գլխից անցածը պատմում է Եպիսկոպոսին, որ իրեն խորհուրդ է տալիս՝ անցնելու Մուշ և այնտեղ հաստատուելու. աւելացնելով՝ որ Վանայ ոստիկանութիւնը խիստ ուշադրութիւն է դարձնում նորեկների վրայ և կարող է զէնքը ձերբակալել, և եթէ Ռուսաց Հիւպատոսն էլ իմանայ իր ռուսահպատակ լինելը, իրաւունք ունի իրեն յանձնել Ռուս կառավարութեանը...:

«Ստեփան հինգ օր Վարագում հանգստանալուց յետոյ՝ ճանապարհւում է Վան քաղաքը, որտեղ երկու օր մնալուց յետոյ, շարունակ ոտով, ճանապարհւում է դէպի Բաղէշ, ուր՝ իր անպիտան ուղեցոյց-առաջնորդը յանկարծ անյայտանում է... բայց Ստեփանը իրեն չի կորցնում և պատահած հայերից հարցնելով, փընտռելով, վերջապէս գտնում է Եպիսկոպոսի յանձնարարած տունը, ուր լաւ ընդունելութիւն է արժանանում. այդ տեղ հանգստանալուց յետոյ՝ գնում է Բաղէշ, ուր հինգ օր էլ մնալով՝ վերջապէս ճանապարհւում է դէպի Մուշ:

«87ի Վարդավառի օրերին էր, որ Ստեփանը հասաւ Մշոյ Ս. Կարապետի Վանքը: Ես պտոյտից վերադառնալիս՝ նրան երբ տեսայ մուրացկանի վիճա-

կում, անմիջապէս ճանաչեցի և տարայ իրեն՝ իմ սենեակը: Ընկեր Ալէքսան Թոստոմեանը բնաւ չը ճանաչեց այդ «գիւղացի, մուրացկան» Ստեփանին: Իմ հագուստներից մէկը հագցնելով իրեն՝ երեքովս գնացինք Մուշի Առաջնորդ Ներսէս Ծայրագոյն Վարդապետ Խարախանեանի մօտ, ուր դէսից դէնից երկար խօսակցութիւն ունեցանք: Երբ մեր սենեակը վերադարձանք ու առանձնացանք, Ստեփանը պատմեց թէ՝ իր անցած ճանապարհներին, Տաճկա-Հայաստանում, և ընդհանրապէս հայ գիւղացուն ի՞նչ է հետաքրքրում. որովհետեւ, նա՝ քիչ ու շատ ըմբռնած էր, այդ վայրերից անցնելով՝ ուսումնասիրած էր Հայ ժողովրդին ու ծանօթացած էր նրա բազմաթիւ կարիքներին, ինչպէս նաեւ քաղաքական ու տնտեսական նրա կեանքին. ու կը փափաքէր, ժամ առաջ, յարմարագոյն եղանակով օգնել ժողովրդին և նրա դարաւոր ցաւերն ամոքել...:

«Ստեփանը բռնեց իմ եախաս՝ թէ իրեն համար գտնեմ մի պարսկական անցագիր — իրը կորցրել էր — որ իրեն շատ պէտք պիտի գայ... ասաց:

«Ներսէս Վարդապետ Խարախանեանը Ստեփանին նշանակեց Մշոյ Վանքի ժառանգաւորաց դպրոցի Տեսուչ. սրա ձեռքի տակ գործում էին Զիարէթցի Մովսէս Նորատունկեանը, Յովհաննէսը, Յակոբը: Աշակերտների թիւն էր 150:

«Կիրակի օրը, Վարդավառին, պատարագի ժամանակ, Ստեփանը երգում էր մեղեդին. Ներսէս Վարդապետը պատարագիչն էր. վանքում ասեղ ձգելու տեղ չկար. բոլոր ունկնդիրները իրար հետ խօսում էին այսպէս, թէ՝ «այս նոտաչուն (ձայնագրութիւն կամ նօթա գիտցող) Ներսէս Վարդապետը, ինչպէս երեւում է, հրաւիրել է Կովկասից...» իսկ ես և Ալէքսանը նոյնպէս շապիկ հագած՝ ձայն էինք պահում այդ օրուայ Ստեփանի երգած մեղեդիներին:

«Այդ տարին, Կովկասից կային շատ և շատ ուխտաւորներ Արմաւիրից, Աստրախանից, Ալէքսանդրապոլից, Ախալքալաքից, Ղարսից ևն. ևն. բոլորն էլ իրենց սեպհական ձիերով և շատ լաւ հագնուած: Ուխտաւորները մեզ ճաշի հրաւիրեցին մօտ չորս օր ու գիշեր, իրենց խնդրանքով՝ միշտ երգում էինք Աշուղ Ջիւանի նոր երգերից, որոնք շատ էր սիրում ժողովուրդը:

«Հէնց այդ Վարդավառի օրն էր, որ մենք առաջին անգամ տեսանք «ալխուշտա» խաղը — հայերն ու քըրտերը միմեանց հետ մրցում էին: Տեսնել կ'արժէր թէ ի՛նչպէս մեր քաջ Սասունցի Հայերը քիւրտ բէկերի կամ նրանց որդւոց դէմ ի՛նչպիսի ոգեւորութեամբ էին կռւում և յաճախ յաղթում: Խաղը հետեւեալ կերպով կը կատարուէր: Զուռնան, ղաւալը կը նուագէ. երկու կողմից ջոկ խմբեր, իրենց տեղերում շարքով կեցած՝ նուագի հետ կը պարեն, երբեմն մէկ կամ երկու քայլ յետ ու առաջ գալով. ղաւալի նշանով՝ առաջուց որոշուած մի խումբը կանգնում է իր տեղում՝ աջ ձեռքը բարձրացրած. միւս խումբը պարելով գալիս է և խըփում կանգնածների ձեռքի թաթին. առաջին հարուածները լինում են թեթեւ. քանի գնում է, տաքանում են խմբերը և իրար այնպէս են հարուածում, որ շատերի թաթերից արիւն է հոսում. Թոյլերին փոխարինում են նորերը, և խաղը տեւում է առնուազն մի ժամ. շատ անգամ խաղը վերջանում է կռւով. երկու կողմից մերկացնում են սուրերը՝ իրարու կոտորելու տրամադրութեամբ. բայց Վանքի Զանգլի Աղասին առաջ է անցնում և իր պոռոցներով հանդստացնում է կողմերը: Այդ օրը քիւրտերը բացարձակապէս պարտուեցին և կորագլուխ թողին, վերադարձան իրենց գիւղերը: Հարկաւոր էր տեսնել այդ օրը, խաղի ժամանակ, ըՍտեփանին՝ թէ ի՛նչպէս նա ոգեւորուած, շարունակ Հայերին պոռում էր, հա՛ պոռում... «հա՛ ղուրբան, հա՛ մատաղ...» և երեխայի նման ուրախութեամբ ա-

ղաղակում էր թէ՝ «Հայը լաւ խփե՛ց, հա՛...»: Ուխտաւորների ցրուելուց յետոյ՝ ես ճանապարհուեցի դէպի Ս. Յովհաննու Վանքը, ուսուցչութեան. իսկ իմ Ընկեր Ալէքսանը գնաց Առաքելոց Վանքը՝ ուսուցչութեան. իսկ Ստեփանը մնաց Ս. Կարապետ Վանքում: Ստեփանը՝ կարճ ժամանակում, կարգի գրեց անկազմակերպ դպրոցը, կազմելով ծրագիր, դասացուցակ ևն. ևն.: Աշակերտները (*) իրեն շատ էին սիրում. իսկ այդ բանը դիւր չէր գալիս Նորատունկեանին և երբ, անտեղի կերպով, երեխաներին պատժում էր, ըՍտեփանը հարց էր տալիս նրան՝ թէ ի՞նչու էր ի զուր պատժում խեղճ երեխաներին. Նորատունկեանը, առանց ամաչելու, պատասխանում էր թէ՝ «որովհետեւ նրանք քեզ շատ են սիրում...»:

Միջանկեալ:

Տաճկահայաստանի այդ կողմերը — ինձ պատմած է Ստեփաննոսը — գիւղացիների հետ երբ կը խօսէր, կը գործէր, մի անգամ, փողոցը, կը պատահի թուրք հեծեալ ոստիկանի մը: Ստեփաննոսը ոտքին տրեխներ, գիւղացու կերպարանքով ծպտուած, երբ կը քայլէր, ոստիկանը իրեն հարց կը տայ թէ՝ «արդեօք, այդ ճանապարհով, հանդիպա՞ծ, տեսա՞ծ է նորեկ օտարականի, կառավարութեան թշնամի հայ Ֆէտայիի մը, որ եկած է եղեր այդ կողմերը, հայերի մէջ պրօպականտ անելու...»: Ստեփաննոսը որ այդ րոպէին գնում էր այդ ճանապարհով, Ընկերների (Ռափայէլի և Ալէքսանի) մօտ հասնելու, «այո՛» կ'ասի, «սա կողմերովը գը-

(*) Այդ աշակերտներից երկուսը՝ Արմենակ Շահ-Մուրատեան (երգիչ) և Տիգրան Դիմաքսեանն էին, որոնց հանդիպեցանք Պարիզում, երբ մին երգի, միւսը երկրաչափութեան կը հետեւէին: Բ. Ս.

նաց այդպիսի մէկը․ կ՚ուզե՞ս քեզի ցոյց տամ, ես էլ այդ կողմերը կը գամ քեզի օգնելու»․ և ինքը հետիոտըն, ոստիկանին կ՚ընկերանայ, միաժամանակ տգէտ ու պարզամիտ ոստիկանի հարցերին ծուռ ու մուռ պատասխանելով: Թուրքի այն հարցին թէ՝ «այդ Փէտայի, յեղափոխական կոչուած հայերը ի՞նչ տեսակի մարդիկ կը լինեն, դու գիտե՞ս» — «այո՛», կ՚ասի Ստեփանը «նրանք հսկայ, աժտահա մարդիկ կը լինեն․ գլխէն մինչև ոտքերը զինուած․ նրանց գնդակը բնաւ չի վրիպէր․ հէնց որ Թուրքի հանդիպեն, կը կոտրեն, չեն խնայի…»: Այսպիսի չափազանցութիւններէն կ՚ահաբեկուի ոստիկանը, որ զղջացած էր միսախայէն (օտարական յեղափոխականը հետապնդել) կը խղճայ ըՍտեփանի պատառոտած տրեխներով ոտքերին և կ՚առաջարկէ իր ձիուն քամակը հեծնել, և «դեռ շատ հեռո՞ւն է այդ օտարականի գացած ճամբան» կը հարցնէ ոստիկանը ու կ՚աւելցնէ՝ թէ՝ «ճանըմ, իմ ի՞նչ գործս էր մարդ հետապնդել․ ընտանիքի, զաւակների տէր մարդ եմ, գլուխս փորձանքի՞ պիտի հանդիպցնեմ, ևն․ ևն․»: Այդ միջոցին Ռափայէլի և Ալէքսանի ներկայութիւնը կը տեսնուի ու զէնքերու պայթումը կը լսուի․ ոստիկանը, դողահար, կը չուարի․ ա՛յդ ժամանակ միայն Ստեփանը կը ներկայացնէ իր անձը ասելով թէ՝ իր փնտռած մարդը հէնց ինքն էր — եթէ կ՚ուզէ, որ իր անձին խնայուի, ուրեմն, պէտք է խոստանայ իրենց, թէ կառավարութեանը պիտի խաբէ, ըսելով՝ թէ ինքը շատ փնտռեց, բայց այդ տեսակ մարդու չը հանդիպեցաւ…: Ստեփան կ՚ըսպառնայ իրեն՝ որ՝ եթէ համարձակի մատնել, կենդանի չի պիտի մնայ…: Ոստիկանը, շատ ուրախ լինելով իր կեանքին խնայուելուն, կ՚երդնու, որ ինքը՝ ի սէր իր ընտանիքին ու զաւակաց, բերանը չը պիտի բանայ և պիտի չը պատմի ո՛չ ոքին, իր տեսած-լսածների մասին, ու անշշուկ, իր գործին պէտի երթայ…: Խօսքը տանք Ռ․ Մ-ին:

«Դեկտեմբեր ամսումն էր, որ Ստեփանը Ս. Յովհաննու Վանքը եկաւ ինձ այցելութեան, Լեւոն վարժապետն էլ իմ հիւրն էր. մարդ ուղարկեցի Առաքելոց Վանքը, եկաւ նաեւ Ալէքսանը, լուր ուղարկեցինք նաեւ Գեղամին, որ չը կրցաւ գալ — մեր նպատակն էր Մշոյ գիւղական դպրոցների համար մի ընդհանուր ծրագիր մշակել, որպէս զի, երբ գիւղական դպրոցից աւարտելով՝ աշակերտները քաղաք գան՝ ուզելով մտնել Մշոյ Ներսիսեան վարժարանը, չը դժուարանան. սոյն վարժարանը՝ որ պահում էր Պոլսոյ «Մարդասիրականը» Մշում, կարելի էր անուանել միջնակարգ դպրոց։

«Երբ այդ խորհուրդներով էինք զբաղուած, այդ օրերին եկան Սասունցի Արաբօն՝ Մշեցի Տիգրանի հետ. սրանք բերել էին իրենց հետ՝ Խարախանեան Վարդապետի մի նամակը, որը կարդալով՝ ես և Ալէքսանը համակուեցինք միանալու Արաբոյի խմբին. այդ թուին էր, որ Մուսա Բէկին քարշ տուին Պոլիս՝ դատելու — Մարգար վարժապետն էր, որ իր մի կարգ ընկերների հետ վարում էր այդ դատը։ Մարգար՝ մինչեւ Պոլիս անցնիլը՝ այցելեց նաեւ Թիֆլիզ՝ օգնութիւն ստանալու համար այս դատի առթիւ. հոն, Մշեցի բանւորները անմիջապէս օգնութեան էին հասել թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս. Մակար Կաթողիկոսն էլ տուել էր իրեն՝ Աշըգեան (Պոլսոյ) Պատրիարքի վրայ մի յանձնարարական, որ իրեն ամէն կերպ օգնէր։

«Մենք մոռցանք այլեւս դպրոցական ծրագիր ենպատրաստելը, և Արաբոյի հետ միացած Մշոյ դաշտում, ձիւն ու բուքի մէջ երեք օր թափառելուց յետոյ՝ եօթ հոգւով գեշերով յարձակուեցինք Մուսա Բէկի եղբօր վրայ, որ երկու հայ աղջիկ էր փախցրել։ Մեր կռիւը տեւեց երեք ժամ. կռուի տաք ժամանակը տեսանք որ Արաբօն և Տիգրանը չկան. մենք հինգ հոգւով շարունակեցինք կռիւը, մէկ էլ տեսանք որ մեր

կորած ընկերները իրենց հետ առած երկու հայ աղջիկները՝ մեր շարքերում երեւցան... սա հրաշք էր ուղղակի, որովհետեւ ի՞նչպէս կարելի էր կուռվ ղրաղուած քիւրտ գիւղի միջով անվնաս անցնիլ... այդ հրաշք էր որ գործուեց: Քրտերը այս մեր յարձակումը ծածկեցին կառավարութիւնից, իրենց շահի տեսակէտից: Մենք այդ երկու օրիորդների հետ եկանք Ս. Յովհաննու Վանքը, ուր դեռ՝ սպասում էր մեզ Ստեփանը. երբ մեզ կենդանի տեսաւ, ուրախութեամբ համբուրեց երկուսիս էլ և միամտացած՝ մտաւ իր անկողինը: Կէս գիշերից անց էր՝ մօտ երեք ժամ, Վանքը աղմուկ ինկաւ... արթննալով տեսանք որ, Արաբօն իր ընկերների և երկու օրիորդների հետ արդէն չկային: Չորս օր անցաւ, Մշից, Խարախանեան Վարդապետից ստացանք մի նամակ, որով թէ՛ շնորհակալութիւն էր յայտնում և թէ՛ մեզ հրաւիրում էր Մուշ: Ստեփանը արդէն դարձել էր Ս. Կարապետ. ես և Ալէքսանը գնացինք քաղաք, Վարդապետը մեզ ընդունեց շատ սիրալիր: Մենք մի շաբաթ շարունակ հրաւիրուած էինք զանազան ընտանիքների ճաշերին. որովհետեւ ամէնքն էլ ցանկանում էին մեր կռուի պատմութիւնը լսել. Ալէքսանն էլ այնպէս ձիրք ունէր պատմելու և աղդեցիկ կերպով նկարագրելու, որ շատերը ուրախութիւնից լաց էին լինում: Եկաւ նաեւ Ստեփանը, ճաշերը նորից վերսկսուեցին: Ստեփանը և Ալէքսանը անդադար, ճաշի ժամանակ կը խօսէին և կը համոզէին մարդկանց, իրենց մեղրանուշ լեզուով, կըսթափեցնէին իրենց խոր քնից: Եւ այդ պրոպականտան առաջին յեղափոխական պրոպականտն էր եղած Հնչակեանների կողմից՝ ո՛չ պաշտօնապէս:

«*Մի ուրիշ անգամ,* 88*ի Փետրուար* 15*ին էր, որ ես կրկին Ս. Կարապետ գնացի Ստեփանին այցելութեան, տեսայ որ Ստեփանը չկայ...: Նա ունէր իր*

մօտ՝ եղբօրս, Պետրոս Կիւրեղեանի անցագիրը...: Այդ տեղ Յակոբ ինձ պատմեց, որ Նորատունկեանը ուզեցել է թունաւորել Ստեփանին...:

«Ս. Կարապետի քրիստոնեայ Միաբանութիւնը, իր գործակից Տեսուչի հետ միասին, իրաւացիօրէն ըմբռնելով, որ Ստեփան Սապահ-Գիւլեանի երեւումով ու երկարատեւ պաշտօնավարութիւնով՝ ինքնաբերաբար երեւան պիտի գար «ի ծագիլն արեգական կորնչին աստեղք»ի տրամաբանական իմաստութիւնը, կ'ըսկսին այդ կրթուած «Նորելուկ»էն ազատուելու միջոցներ փնտռել. ու ահա՛, մի օր, Սապահը, յանկարծ, սաստիկ ջերմով ու ջղաձգումի ցաւերով կ'ընկնի իր՝ երկու սնտուկի վրայ պարզուած՝ յարդէ անկողնին վրայ ու կը պառկի հոն. բայց, բարեբախտաբար, Վանքի հօտաղները օգնութեան փութալով ճիշդ ժամանակին՝ միասին կ'առնեն զինքն ու իր պաշարը (թէյ, շաքար ևն.) և կը դնեն սայլի մը վրայ ու, երեք օր Ճանապարհորդելէ վերջ, Պեթլիս քաղաքը կը հասցնեն և հոն, խինգ խորան Վանքի սենեակի մը մէջ պառկեցնելէ յետոյ, կը կանչեն տեղւոյն զինուորական բժիշկը, որ քննութեան ենթարկելով հիւանդն ու իր կերակրեղէնի փշուրները — շաքարն ու թէյը — կը գտնէ որ վտանգաւոր նիւթեր են խառնուած այդ բոլորի մէջ...: ըՍտեփան Սապահ-Գիւլեանը ամիս մը հոն մնալով՝ կ'առողջանայ և կը շարունակէ իր քննական Ճանապարհորդութիւնը և պրօպականդան, մինչեւ կը հասնի Սուրիա»:

Ստեփան Սապահ-Գիւլեան Սիւրիայում էլ բաւական կը մնայ և յետոյ կ'անցնի Երուսաղէմ՝ ցնցոտիներով, ծպտուած՝ որպէս Բասենցի Պետրոս Կիւրեղեան:

Ըստ սովորութեան, Երուսաղէմայ Վանքը եկող, հասնող բոլոր նորեկները պէտք է ներկայանան Մեծա-

ւորններին: Երբ Պետրոս Կիւրեղեանը կը մտնէ Մեծաւորների սենեակը, հոն կը լինին երկու Եպիսկոպոսներ, որոնք կը հարցաքննեն իրեն և տեղեկութիւններ կը հարցնեն Բասենի քաղաքական դրութեան մասին, Հայ ժողովրդեան վիճակին վրայ. Ստեփան, մի կերպ, սխալ կամ ճիշդ տեղեկութիւններ մը թէեւ կը յարմարցնէ, սակայն իր լեզուն և մանաւանդ քաղաքական հարցերի մէջ իր ունեցած հմտութիւնները երբէք չէին յարմարուիր Բասենցի գիւղացիի մը լեզուին և հըմտութեան, որով, ինչքան էլ ուզեց կեղծել մեր Պետրոս Կիւրեղեանը, սակայն ուշիմ դիտողներու աչքէն չը վըրիպեցաւ այդ կացութիւնը, մանաւանդ երբ նա սկսաւ եւս աւելի մխրճուիլ նիւթին մէջ և դատողութիւններ ու եզրակացութիւններ իսկ հանել...: Երկու Եպիսկոպոսները՝ զարմացած, իրար երես կը նային և Մամբրէ Եպիսկոպոսը Ստեփանին կը դառնայ չեշտակի և այսպէս կ՚արտայայտուի...: «Տղա՛ս, դու Բասենցի գիւղացի չես, այդ անկարելի է. համարձակ ըսէ՛ մեզի դու ո՞վ ես, մի վախնար. այստեղ հոգեւոր տուն է, ճիշդը խօսէ՛». այդ րոպէին Խապայեան Եպիսկոպոսը, որ անդադար Ստեփանին կը դիտէր, յանկարծ յիշողութեանը կը գայ ու կը բացագանչէ... «գիտցա՛յ, ճանչցա՛յ. դու Տէր Դանիէլի որդին չե՞ս. կը յիշե՞ս գիս, երբ երկու շաբաթով Ջահուկ, ձեր տան մէջ եմ մնացած» — Ստեփանը, որ Սրբազանի բերնից իր կարօտած ու պաշտելի Հօրը անունը կը լսէ, կը փղձկի ու կ՚ըսկսի խոստովանիլ ու պատմել ամէն ինչ, ամէն անցուդարձ ու փորձանք:

Երկու Եպիսկոպոսներն էլ, անմիջապէս, մեծ հոգատարութիւն ու գուրգուրանք ցոյց կը տան իրեն՝ պատուիրելով որ՝ «Բասենցի Պետրոս Կիւրեղեան» անունը պահէ և երբէ՛ք, ո՛չ ոքին չը յայտնէ իր ռուսսահայ փախստական մը լինելը, և արեղայի հագուստ

հագցնելով իրեն՝ Վանքի վարժարաններու մէջ պաշտօն, պատասխանատու վերատեսչի գործը իրեն կը յանձնեն, որու մասին կը վկայէ Թորոս քահանայ Զուղայեցի, որ այդ օրերին նա էլ գտնուած էր Երուսաղէմի մէջ և բաւական մտերմացած Պետրոս Կիւրեղեանի հետ։ Սոյն քահանան, յետագային, մեր ամուսնութիւնը կնքած է և մեր զաւակները մկրտած։

Ահա՛ Զուղայեցի քահանայի վկայութիւնները՝ Սապահի այն ատենուայ գործունէութեան։

«Պետրոս Կիւրեղեանը՝ իր մանկավարժական ու գիտական հմտութեամբը Վանքի վարժարաններու վերատեսուչն էր. և ամենակարեւոր դասերը իրեն էին յանձնուած։ Պետրոս Կիւրեղեան աշակերտաց մէջ մեծ եռանդ ու սէր էր ներշնչած՝ դէպի ուսումն ու զարգացում։ Միեւնոյն վարժարաններուն մէջ կը դասախօսէին Խապայեան և Մամբրէ Եպիսկոպոսներ, Մարկոս Նաթանեան և ես։ Պետրոս Կիւրեղեանի օրով միայն՝ վարժարաններու կրթական մակարդակը բարձրացաւ՝ որը անկարելի էր չը տեսնել»։

Պետրոս Կիւրեղեան սիրուեցաւ նոյնպէս Խրիմեան Հայրիկէն, որ Պոլսէն նոր էր աքսորուել Երուսաղէմ։ Խրիմեան այնքա՜ն լաւ ճանչցաւ Կիւրեղեանի հոգին, որ՝ եթէ ո՛եւէ գիտակից ու զարգացած անձ մը Երուսաղէմ այցելէր, Հայրիկը կը յանձնարարէր իրեն տեսնուիլ «միակ վստահելի և գիտակից անձնաւորութեան՝ Պետրոս Կիւրեղեանի հետ»։ Իսկ այն ժամանակուայ Յարութիւն Պատրիարքը, Ստեփանին ա՜յնքան սիրած էր, որ՝ ի յիշատակ՝ անոր նուիրեց իր ոսկի ժամացոյցը։

Վերջապէս, երկու տարին կը լրանայ. և բոլոր զինքը սիրող «մեծաւորներ» իրեն կը թելադրեն թողնել այդ Վանքը, ուր «իր տեղը չէր» և կը թելադրեն



ECOLE LIBRE DES SCIENCES POLITIQUES

DIPLÔME

LE CONSEIL D'ADMINISTRATION DE L'ÉCOLE

Vu le rapport du Directeur attestant que M. Kureghian Pierre

né à Césarée (Kaisarieh) Turquie d'Asie le 15 Février 1865 réunit les conditions exigées des Candidats au diplôme

Vu le Certificat d'aptitude délivré par le Jury à la suite d'un examen portant sur les matières suivantes: Législation civile comparée. Droit constitutionnel comparé. Histoire diplomatique de 1789 à nos jours. Tableau de l'Europe contemporaine. Affaires d'Orient. Histoire des idées politiques et de l'esprit public pendant les deux derniers siècles. Droit des Gens. Economie politique. Géographie et Ethnographie. Russe.

DÉCERNE À M. Kureghian LE DIPLÔME DE LA SECTION Générale

Le 29 Juin 1894.

DEUX MEMBRES DU JURY — LE DIRECTEUR DE L'ÉCOLE — LE PRÉSIDENT DU CONSEIL D'ADMINISTRATION

Charles Benoist

Albert Sorel

E. Boutmy

FONDÉE EN 1872

Պետրոս Կիւրեղեանին—Ս. Սապահ-Գիւլեանին տրուած վկայականը «Քաղաքական Տնտեսագիտութեան» Համալսարանէն

անցնելով եւրոպա՝ շարունակել իր ուսումը ու կատարելագործել իր ձիրքերը։

Եւ Ստեփան Պադեստին, Սիւրիա-Պէյրութ պտտելով կ՚անցնի Պարիզ, ու կ՚ըսկսի աշխատակցիլ Թիֆլիզի «Նոր-Դար» Թերթին, Սապահ-Գիւլեան, Այգ Վարդեան և Ընդիժէն ստորագրութիւններով։ Իր յօդուածները ա՛յնքան հետաքրքիր և սիրալիր կը նկատուէին, որ կը խնդրէին Թերթի խմբագիր՝ Սպենդար Սպենդարեանին, որ անպայման դիմէ Ստեփանին ու մշտական Թղթակցի պաշտօնը ապահովէ, խոստանալով, ամսէ ամիս 60 րուպլի վճարել։ Այսպէս, ուրեմն կը համաձայնին և Պետրոս Կիւրեղեան՝ որոշ չափով իր նիւթականը ապահոված նկատելով՝ կ՚սկսի իր իտէալի գործնականացման — համալսարանական կրթութեան հետեւիլ։ Եւ կը յաջողի յաճախել Պարիզի Քաղաքային Գիտութեանց Գերագոյն Վարժարանը (Տֆին) "Ecole des Sciences Politiques", որը՝ ինրեւ այդպիսին, աշխարհի քաղաքագիտական ամենաբարձր հաստատութիւնն էր։ Ստեփան այդ վարժարանի մէջ՝ 4-5 տարի աշխատելով և լուրջ պարապելով՝ կ՚ըստանայ իր վկայականը։

Սապահը համալսարանէն աւարտած օրը ա՛յնքան լուրջ և հետաքրքրական ուսումնասիրութիւն մը կարդացած էր, «Արեւելեան խնդրի» մասին, որ իր սիրելի ուսուցիչները կը մօտենան և ճակատը կը համբուրեն։ Օտարներու մէջ ամենաաչքառու, խոստմնալից աշակերտը նկատուած էր ինքը և բոլորից սիրուած ու յարգուած։

Իր ուսանողական շրջանին, իր սիրելի ուսուցիչների բարոյական աջակցութեամբ, Ստեփան, Պարիզի մէջ, Հայկական Դատի Ճանաչման նպատակով, կ՚ըստեղծէ բարձրագոյն դասու շրջանակ մը ու Ֆրանսացի Գրագէտ-գրագիտուհիների, պրոֆէսէօրների հետ մըշ-

տական չփումներ ունենալով՝ հրապարակային դասախօսութիւններ կը սարքէ, հայերէն և Ֆրանսերէն լեզուներով ժողովուրդին կը ծանօթացնէ Հայու տառապանքը, Հայկական քաղաքական և տնտեսական չարչարանքները *և Թուրքի* խժդժութիւնները։ *Կը կազմէ* «Հայ Ուսանողական Միութիւն», *որի յայտնի և կարող դէմքը և ուժը կը դառնայ ինքը և՛ Հայ և՛ Ֆրանսացի հասարակութեան համար։ Սակայն, ըստ սովորութեան, ինչպէս այլուր, Պարիզի մէջ էլ նախանձն ու ատելութիւնը իր գլուխը կը ցցէ և անծանօթի մը ձեռքով՝ չ'ուշանար՝ իր գլխին գաւաղանի հարուածներ՝ Լիւքսէմպուրկի փառաւոր պարտէզին մէջ շրջագայելիս։*

Սապահ-Գիւլեան համալսարանի քննութեանց ծանըր աշխատանքէ հետեւանքով՝ բաւական տկարացած լինելով, Պարիզի Hotel Dieu*ի հիւանդանոցը կը խնամուի երկու ամիս, և լաւ մը կը կազդուրուի· զինքը քննող բժիշկները զարմացած են իր առողջ կազմին վըրայ — իր վարած ժուժկալ, մաքուր կեանքը անաղարտ էր պահած զինքը, այն ալ Պարիզի պէս ազատ քաղաքի մը մէջ — և երաշխաւորած էին իրեն՝* 80 – 90 *տարուայ կեանք մը, եթէ բացառիկ բան մը չը պատահէր։*

Պարիզի համալսարանը աւարտելէ վերջ՝ Սապահը Անգլիերէն լեզուին էլ տիրապետելու նպատակաւ՝ կը մեկնի Լոնտոն, Անգլիա· ուր երկու տարի անընդհատ կ'ուսանի Անգլիերէն, և ա՛յնքան յառաջ կը տանի, որ Ֆրանսերէնի հաւասար, Անգլիական բոլոր փիլիսոփաներու գրքերը անսխալ կը հասկնար ու կը մարսէր։ Այդ տեղ, Լոնտոնի մէջ է, որ կը ծանօթանայ Հնչակեան Կեդրոնին և իրմէ խնդրուած կուսակցական ներկայացուցչութիւնը՝ Եւրոպայի՝ չի մերժեր։ Շատ չանցած, Բուլղարիոյ Ռուսչուք քաղաքը կը հրաւիրուի Հայ դպրոցի տնօրէնութեան պաշտօնին ու հոն կը մեկնի։

96ի Պոլսոյ Բանքայի Ցոյցէն յետոյ էր, որ՝ Սամաթիոյ (Պոլսոյ) վարժարանը փակուելով, Սամաթիացի ընտանիքներս դատապարտուած էինք մաս մը ժողովրդի հետ միասին, գաղթել Բուլղարիոյ Վառնա քաղաքը: Հոն պաշտօն չը գտնելով՝ և տարի մը ձեռագործով ապրելէ վերջ՝ Ռուսջուկէն կանչուեցայ Հայ աղջկանց վարժարանի ուսուցչութեան պաշտօնին. ուր արդէն պատրաստ կը գտնուէր ուսուցչական կազմը — մի քանի վարժուհիներ, մին հայախօս բուլղարուհի — և կ՚սպասուէր Պարիզէն գալիք Տնօրէնին, Պրն. Պետրոս Կիւրեղեանին, որ վերջապէս եկաւ և գործի սկսեց: Իր մէջ կ՚երեւար հասուն, բարձր կրթութեան տէր մարդը. Նա մեր իւրաքանչիւրի կարողութեան համեմատ՝ դասարանի և դասերի բաժանում ըրաւ և շատ խիստ, աչալուրջ կերպով կառավարեց Հայ երկսեռ վարժարանը: Դասաւանդման կերպերը ինքը սովորեցըրեց մեզի, որ իսկապէս նորութիւններ էին մեզ համար: Պէտք է խոստովանիլ, որ թէեւ Պոլսոյ Սամաթիոյ վարժարանի աչքառու աշակերտուհին կը համարուէի — աշակերտած լինելով Յ. Ոսկանի, Յ. Գուրգէնի, Դ. խաչկոնցի, Յ. Բասքալի նման նշանաւոր ուսուցիչներին — սակայն ես ինքզինքս շատ պզտիկ զգացի — մանաւանդ մանկավարժութենէ ոչինչ սովորած չըլինելուս համար — երբ հետեւեցայ, ծանօթացայ Տընօրէնի մանկավարժական ու խոր հմտութեանց, իր սովորեցնելու մասնաւոր մեթոտներուն, և իր արդիւնաւոր ու օգտակար դասաւանդութեանց երբեմն ներկայ լինելով:

Այնպէս որ՝ մեր երկու տարուայ պաշտօնավարութիւնը Ռուսջուկի մէջ, հաւասար էր Պոլսոյ դպրոցներու մէջ մի քանի տարուայ մեր տարած աշխատանքին: Մեր ժամանակ, Ռուսջուգի աշակերտութիւնը պատրաստուած սերունդ մը դարձաւ Տնօրէնի բեղմնա-

ւոր աշխատանքի շնորհիւ։ Կիւրեղեան հոն ալ իր Թըշնամիները ունեցաւ, երբ ոչ-պարտաճանաչ մի, երկու ուսուցիչ, ուսուցչուհիներին դպրոցէն արտաքսեց, որը նորութիւն էր Ռուսջուկի նման աղայական, Թըրքախօս և յետամնաց ժողովուրդին համար։ Մանաւանդ երբ երեւան եկաւ իր Հնչակեան դիպակը (Հոգաբարձութիւնն էլ Հնչակեան էր) եւ՚ս աւելի խլրտումը սկսաւ և դաշնակցական ուսուցիչներ ու դաշնակցական ծընողքներ բոլորովին հակառակ դիրք բռնեցին իրեն դէմ և բաւական աղմուկ յառաջ եկաւ այդ շրջանին։ Չ՚ուշացան նաեւ գաւազանի հարուածներ՝ (դարանակալ դաշնակցականի մը կողմէ) իր գլխին հասցուած, որի համար երկու շաբաթ անկողին մնաց և խնամուեցաւ Տօք. Փաշայեանի մը կողմէ։

Տնօրէնի անձնական կեանքն էլ՝ խծբծանքի ենթարկուեցաւ տգէտ ու նախապաշարեալ հայերի կողմից, ատելութեան ու նախանձի արտայայտութիւններ, զրպարտութիւն ու բամբասանքներ յանգեցան վերջապէս մեր փառաւոր նշանդրէքին, ուր ներկայ եղան երեք քահանաներ, ամբողջ ուսուցչական երկսեռ կազմը, Հոգաբարձութիւն, Թաղական խորհուրդ, որոնք մի լաւ խնջոյք սարքեցին ու շնորհաւորեցին մեզ...։ Վերջապէս, այդ դպրոցներու, այդ ժողովուրդին մէջ՝ երկու խռովայոյզ տարիներ անցկացնելէ վերջ՝ հեռացանք և ամուսնանալով՝ ազատ ու խաղաղ կեանք մը ապրեցանք Լոնտոնում, ուր կանչուած էր ամուսինս Հնչակեան Կուսակցական Օրգանի, ժամանակ մը դադարած «Հնչակ»ի որպէս խմբագիր։ Պալեան, Խուշպուլեան, Հրաչեայ Մարալ եւս անդամ էին այդ Կեդրոնին, բայց անոնք չը դիմացան զրկանքի կամ այլ և այլ անհամաձայնութիւններու պատճառաւ քաշուեցան, ասպարէզը Թողլով Հրաչեային և ամուսնոյս։

Ժամանակ մը Հրաչեան էլ մեկնեցաւ Կովկաս՝ ղա–

նաշան խնդիրների կարգադրութեան, նիւթականի ապահովութեան եայլնի համար, ու կուսակցական այդ ծանր աշխատանքն ու պատասխանատուութիւնը և մանաւանդ կեանքի ու գոյքի անապահովութեան ծանրութիւնը ու մտատանջութիւնը ծանրացաւ խեղճ ամուսնոյս վրայ, որը կտրիճի պէս տարաւ, առանց դժգոհելու մի օր իսկ...: Մեր տան առաջէն անցնող-դարձող Թուրք լրտեսներին կը ճանաչէր և ինձ ցոյց կը տար ամուսինս, որը բաւական ծանր կացութիւն մը ստեղծած էր դէ՛թ ինձ համար: Բայց իր բարոյական և հոգեկան դրութիւնը ա՛յնքան բարձր էր, որ ի տես Դանիէլիս ծննդեան, մեծ ոգեւորութեամբ ու երջանիկ տրամադրութեամբ հետեւեալ գեղեցիկ ձօնը գրեց:

«... Վարդս! (*) դեռ պատանի, ձմեռուայ մեջ մտայ, և ամբողջ 15 տարի, սուգի մեջ եր՝ ինձ հետ միասին՝ մի ամբողջ, 200 հոգուց բաղկացած մի ընտանիք: (**)

«Ի՞նչ եր կեանքի գարունը, ես այդ չը գիտեի. չը ճաշակած՝ թառամել եի:

«Հիմայ, այդ տխուր օրերն անցան. կեանքըս գարուն է և այդ գարունը վայելում եմ լի ու լի: Ո՞վ այս փոփոխումը առաջ բերեց — դո՛ւ, զաւակս. դու՝ իմ գոյութեան ննցուկը, ինձ ոգի, շունչ տուողը. ինձ՝ կեանքի պայքարի մեջ՝ անընկճելի դարձնողը: Սիրտս հան-

(*) Դանիէլս դեռ չը մկրտուած՝ Վարդ կը կոչուէր ամուսնոյս կողմէ:

(**) Իր աքսորեալ կեանքին կ'ակնարկէ, որմէ տառապեցաւ իր ամբողջ գերդաստանը:

գի՛ստ; խաղա՛ղ, ներքին գոհունակութիւնս անպակաս· հաշտ–աչք դէպի օտարները, քաղց-րութի՛ւն դէպի արտաքինը· և այս բոլորը մի-այն քե՛զանով և քե՛զ համար, զաւա՛կս:

«Որովհետեւ այժմ կեանքի գարուն տե-սայ և վայելում եմ, և որովհետեւ գ ա ր ն ա ն արքան է վարդը, քե՛զ, անուշ բալա՛ս, քեզ՝ անուանում եմ Վարդ· և դու կը լ ի ն ե ս իմ Վարդս· մայրիկդ կը լինի քո սոխակդ· հայ-րիկդ՝ պարտիզպանդ· ո՛հ, հեռու աշխարհում, արտասուք թափող մամդ կը լինի քո հովանա-ւորող կաղնին. իսկ պապդ՝ Աստուծոյ աթոռին մօտը քեզ արեւշատութիւն խնդրող, բարեխօ-սողը: Դէ՛հ, մեծացի՛ր Վարդս, մեծացի՛ր ան-նման, մեծացի՛ր, որ քեզանով էլ մեր գարու-նը յաւէրժ լինի ի՛մ Վարդս»:

Սակայն, յանկարծ փոխուեցաւ ամուսնոյս խաղաղ, երջանիկ կեանքը, երբ դաւաճան հայ մը Անգլիական կառավարութեան մօտ մատնութիւն էր արած ամուս-նոյս խմբագրած «Հնչակ»ի մասին, թէ՝ թերթը անար-խիստական է, խմբագիրը՝ անարխիստ ևն. ևն.: Հրաչ-եան Կովկաս մեկնած էր, որով ամուսինս մէն-մինակ գնաց և պահանջուած բացատրութիւնները տալով և իր գրած խմբագրականները բառ առ բառ անգլերէն թարգ-մանելով՝ հաստատեց թէ՝ այդ գրուածքները ո՛չ մի անարխիստութիւն չեն պարունակեր տեղական կառա-վարութեան դէմ, այլ Հնչակեան Կուսակցութեան ըս-կզբունքներու և Հայկական Դատը շօշափող հարցերի մասին գրուած են. թէ՝ մեր ցաւը, գանգատը միմի-այն թուրք և ռուս կառավարութեանց դէմ է ևն. ևն.:

Եւ, Անգլիական կառավարութիւնը համոզուելով որ՝ սինլքոր հայ արարածի մը գործ էր եղած այդ մատնութիւնը, լի ու լի կը բաւարարուի և մեծ յարգանքով ու գնահատանքով իրեն կը թելադրուի թէ՝ առանց ուշադրութիւն դարձնելու ո՛չոքի, կրնայ անսայթաք և անվախ կերպով շարունակել իր խմբագրապետի պաշտօնը:

Պատուելի Յարութիւն Թումայեան, Լոնտոնում, որբանոց կը պահէր՝ հայ և օտար, մասնաւորաբար՝ Անգլիացի ժողովուրդին նպաստներով: Բայց որբերէն մի քանին դժգոհ էին իրմէն, թէև նրա կնոջը շատ կը գովէին: Այնպէս որ որբերէն ոմանք Հնչակեան Կեդրոնը վազելով՝ իրենց գանգատները կը տեղացնէին ամուսնոյս և ճար մը կը խնդրէին իրմէ: Որբերից երկուսը՝ Աւետիս Գույումճեան և Յովակիմ Մարուքեան՝ ամէնից դժգոհները՝ Հնչակեան Կեդրոն ապաստանեցան և գրաշարութիւն սովորեցին Ռուբէն Կարապետեանից (Քսան Հերոսներէն մին): Աւետիսը ի վերջոյ մեկնեցաւ, բայց Յովակիմը մնայուն գրաշարը մնաց «Հնչակ»ի: Ազնիւ, հաւատարիմ տղայ դուրս եկաւ Յովակիմը և իր գործերէն դուրս, իր շատ արագաշարժ լինելուն համար, ժամանակ էլ կը գտնէր Դանիէլս պըտըտցնելու և տան գործերուն էլ օգնելու: Մեր կերակուրները ինքը կ՚եփէր — առաւօտուն օթմիլ, ցերեկը մսով խաշուած կաղամբ, երեկոյին էլ մի կերպ թեթեւ, պանիր հաց ու թէյով կ՚անցնէինք...: Այն օրը՝ որ մի քիչ դրամ Կեդրոն հասած կը լինէր, այդ օրը մեր նախաճաշը էքս էնտ պէյքըն կը կլինէր անպատճառ, որը ամուսնոյս կողմէ մեր «բուրժուական կերակուր»ը կը համարուէր: Նեղ օրեր շատ ենք ապրել. մանաւանդ Լոնտոնի մէջ շաբաթէ մը աւելի չէր կարելի ապառիկ ապրիլ, և որով՝ օր մը, երբ Մշեցի Տիգրանը (Ծահ-Մուրատի ընկերը) Պարիզէն եկաւ իր «դաստիարակ՝ Պետրոս Կիւրեղեանը» տեսնելու, հետը շաքարեղէն բե-

րած էր Դանիէլին համար. սակայն, այդ շաքարը գոր-
ծածուեցաւ որպէս շայի շաքար, քանի որ տանը մէջ
շաքարը կը պակսէր այդ օրը: Թէյը մեր խմելիք ջրի
տեղը պէտք էր գործածէինք, քանի որ՝ խմելիք ջուր
չկար Լոնտոնի մէջ, այլ միայն գործածութեան հա-
մար էր:

Մեր նիւթական դրութիւնը հեռու էր գոհացուցիչ
ըլլալէ. ինչու որ Կովկասի մեր «Բանուոր» Մասնա-
ճիւղը, որ 300 անդամ կը պարունակէր և գլխաւոր
նիւթական նպաստողն էր՝ Հրահատի (Գրիգոր Վար-
դանեան, այժմ բոլշեւիկ) քարտուղարութեամբ, հազիւ
կրնային ա՛յդքան մը դրամ հասցնել, որ բաւէր «Հընչ-
չակ»ը հրատարակելու. ուստի մենք խորհեցանք մի
ուրիշ ճար ևս գտնել՝ մեր ապրուստը հայթայթելու
համար: Մտածեցի ունեցած ձեռագործներս ծախել:
Այդ գաղափարիս օգնութեան հասաւ և իր օգնութիւ-
նը խոստացաւ Մուշի անունով մի Աստրահայ՝ խմբա-
գիր «Դէյլի-Մէյլ»ի, ըստ իր ասութեան. նա, որպէս
թէ, յարաբերութեան մէջ էր Լոնտոնի բարձր դասու
կանանց հետ և անոնք շատ կը գնահատէին Արեւելեան
ձեռագործները, ուստի ամուսինս հաւատաց իրեն և
մենք մեր ձեռագործները յանձնեցինք Մուշին, որ
տանի ցոյց տայ այդ կանանց, որոնց մօտ ինքը ել ու-
մուտ ունի. որպէս զի, եթէ տիկինները այդ նմոյշնե-
րը սիրէին, պատուիրէին որ ուրիշներ ևս պատրաս-
տէի: Մեծ խանդավառութեամբ և մեծ մեծ խոստում-
ներով Մուշին տարաւ զանոնք... բայց ամիսներով
չերեւցաւ Մուշին. չեկա՛ւ ու չեկա՛ւ: Երկար ժամա-
նակ անցնելէ վերջ, մի գիշեր, վրայ-գլուխ թափթփ-
ուած, խեղճ ու կրակ վիճակի մէջ, կուգայ Կեդրոն
Մուշին և լալով ամուսնոյս կը պատմէ իր նեղ ու ան-
ձուկ նիւթականի և իր գործած մեղքին մասին — այդ
ձեռագործները ծախած ու ապրած էր այդ խմբագի-
րը — և այժմ էլ նորէն անօթի վիճակի մը հասած էր.

երես չունի կ՚ըսէ Տիկին Սապահի երեւնալով անձամբ ներողութիւն խնդրելու...:

Այս բոլորը ամուսինս լսելով և տեսնելով, զինքը ո՛չ մի յանդիմանութեան չ՚արժանացնելէ վերջ՝ իր գրպանը գտնուած միակ հարստութիւնը — երկու շիլինգ — (50 սէնթ) կը շնորհէ նրան և ունեցած ծըխախոտն էլ նրա ձեռքը դնելով՝ սրտապնդիչ խօսքերով էլ մխիթարելով, զինքը ճանապարհ կը դնէ:

Ահա՛ այսպէս էր մեր Ստեփան Սապահ-Գիւլեանի բնաւորութիւնը, և իր սիրտը ա՛յնքան փխրուն էր, որ անկարող էր մինչեւ իսկ խտրութիւն դնել «բարեկամ»ի կամ «թշնամու» մէջ. գէթ խաչագող-խաբեբային պէտք չէ՞ր որ յանդիմանէր. սակայն ինքը վերին աստիճանի ներողամիտ ու պարզ հոգի մը ունէր որը, մինչեւ իր վերջին շունչը պահեց. իր ոխերիմ թշնամիին իսկ ներեց նա իր կեանքի վերջին օրերուն...:

Հնչակեան կեդրոնը միշտ լրտեսուած էր Թուրք լրտեսներէն. երկու անգամ, կէս գիշերին քարիւղաթաթախ չորեր նետեցին Կեդրոնի գետնայարկը, ուր տպարանը կար, որու պատուհանները փողոցի վրայ կը բացուէին:

Հետեւեալ տողերը, այս դէպքի (հրդեհի) առթիւ, խեղճ ամուսինս՝ իր մահուան անկողնոյն մէջ, մահէն երկու-երեք օր առաջ, մեր հիւանդանոց վերջին այցելութեան օրը, թելադրեց Ջրվէժին — ահա՛ դրանք բառ առ բառ:

«Լոնտոնի մեր տունը կը գտնուէր Փեքհամ Րայ (Peckham Rye). երեք յարկանի էր. մեծ վերի յարկը կը բնակէինք. միջին յարկը ընդունարանն էր. վարի յարկն էլ՝ «Հնչակ»ի տպարանը: Սովորաբար, ամեն օր, գիշերուայ

մինչեւ ժամի երկուքը ընդունարանի մէջ կ'աշխատէի: Ցանկարծ, սաստիկ կերպով զանգակը կը զարնուի. դուռը կը բանամ և մի անգլիացի ծերունի կ'ըսէ, որ «ձեր տան վ ա ր ի յարկը կ'այրուի». անմիջապէս կ'իջնեմ վար, կը տեսնեմ, որ փողոցի կողմի պատուհանը կէս-բաց է, կը վազեմ «Հնչակ»ի հաւաքածոների և այլ հրատարակութիւնների մօտ, որոնք պատուհանի մօտ էին զետեղուած. մի կողմ կ'առնեմ՝ Ցովակիմի հետ միասին և յետոյ, վեր կը վազեմ Բերուզին, զգուշութեամբ կ'զգացնեմ դըրութիւնը՝ որ երեխային հագցնի՝ դուրս գալու համար. սակայն, մինչ այդ՝ վարը գտնուողները շուտով կը մարեն: Եթէ հինգ վարյկեան ուշ շարժուած լինէի, տպարանը պիտի բռնկէր: Սա երկրորդ փորձն էր, որ Թուրք լրտեսները արել էին՝ «Հնչակ»ի խմբագրատունը վառել, ոչնչացնելու համար»:

Լաւագոյն, ուրախ օրեր ունեցաւ ամուսինս, երբ, «ճակատագրական զուգադիպութեամբ» երեւան եկած, իր հայրենակից՝ Արշակ Եղիզարեանցը մեզ այցելեց. սա Գերմանիայում ուսանող էր և ուսումը լրացնելով՝ 1901 – 2 *պիտի վերադառնար Նախիջեւան իր ծննդավայրը. Նա ծանօթ էր ամուսնոյս անցեալին և իր բոլոր պարագաներին: Ամուսինս Արշակի միջոցաւ կրցաւ յարաբերութեան մտնել իր Թանկագին մօրը ու սիրահատոր քրոջը հետ, որոնք երկա՛ր տարիներ զրկուած էին մնացել իրենց մէկ հատիկ սիրասուն զաւկից և եղբօրից, քաղաքական պատճառներով: Մայրն ու քոյրը, ու բոլոր պարագաները երբ կը լսեն Ստեփանի ողջ մը-*

նացած լինելը, ամէն ցաւ կը մոռնան և կ՚ըսկսին իրենց պաշտելի Ստեփանի հետ նամակով յարաբերուիլ: Մայրը, անգրագէտ, Նանասին (Ստեփանի քրոջ) կը թելադրէ իր հոգին, սիրատոչոր սրտին բղխած հետեւեալ տողերը, նամակի մէջ ներփակելով նաեւ ըՍտեփանին շատ սիրելի այգիի թփերն ու ծաղիկները: Ահա՛ մօրից ստացուած նամակի մի քանի տողերը անփոփոխ կերպով:

«... Իմ սիրելի քաղցր, իմ սիրելի աչքիս լոյս բալան. իմ սրտի ուրախութիւն, իմ հոգիս բալա. ա՛խր աչքս քո ճանապարհին ի կաց է. եարաբ բալա ջան, մէկ՝ երեսդ կը տեսնե՞մ, թէ՝ Տէրտէրիդ պէս հասրաթով կը մեռնեմ (*): Ա՛խ, բալա ջան, կարիդ, ջանիդ մաման կուրպան. քաղցր բալա, երանի կըլի այն օրն, որ Աստուած էնքան հոգիս չի առնէր, մինչեւ որ քո ձեռքերովդ հողն լցես երեսիս, քո հասրաթըն ջանիցս դուս գայ: Աստուած քեզ, էտ կարիպ տեղն ջանիդ սաղութին տայ. Աստուծու օրհնութիւն քեզ վրայ և քո սիրածի վրան լինի: Որդի ջան, քոյրէդ և փեսայէդ շատ շնորհակալ եմ. ոչինչ կարօտութիւն չունիմ. բայց իմ կարօտութիւնս, իմ դարդը, քաղցր բալա, դու ես. մէկ քեզ էլ տեսնեմ, էլ աշխարհքի երեսն դարդ չունիմ. մէկ՝ երեսս դնեմ երեսիդ վրէն, յետոյ կամքն Աստուծուն, թող հոգիս առնի: Խնդրում եմ հարսի ջան, բալայիս լաւ

(*) Տէր Դանիէլը վախճանուել էր՝ Ստեփանի Պարիզ ուսանողութեան շրջանին: Բ. Ս.

պահես, պահպանես. իմ աչքիս լոյս բալան, իմ պէբախտ բալան ամանաթ քեզ. ա՛յ իմ անտես, անճանաչ հարսի ջան»:

Իսկ քրոջից՝ Նանասից...:

«... Քո անբախտ քոյրիցդ բարեւ ունիմ իմ սիրելի կարմիր աղբօրն, ախպէր ջան, աշխարհքի երեսն ի՞նչպես ապրեմ, որ մէկ քո երեսն տեսնեմ, ախպէր ջան. եարապ ո՞ր օրն ի լինելու էն օրն. ի՞նչ քաղցր, երջանիկ օր ի լինելու ախպէր ջան, միակ միթէ՞ դու ես կարիպ. ես քեզանից կարիպ եմ, իմ պէբախտ կարիպ ջանս քո անմէր, անքոյր կարիպ ջանիդ, հոգիս հոգուդ կուրպան, ջանս ջանիդ մատաղ, քաղցր անունիդ կուրպան. եարապ օր կըլի՞ մէկզմէկու մօտ երջանիկ օրերի մէջ տեսնըվենք, թէ՝ էսպես թամաշայի կը մնամ ախպէր ջան: Խնդիրքս սա է քեզանից, որ գաս մաման տեսնի. մեղք ի. Թող քեզանից հասրաթով չի մըռնայ, դու լաւ գիտես մամայի խայաթն, ի՛նչ տեսակ քեզ կը սիրի»:

«Եղբայր ջան, ամէն դարդ կու քաշեմ, բայց քո դարդն մտել է ջիկարիս մէջն, դուս չի գալի. մուխն թափայից դուս ի գալի: Էնպես ջիկարս էրվում է, հենց ուզում եմ երեխաներիս, մամայիս քըցեմ տունն, գլուխս վերցնեմ, գամ դէպի քեզ. ա՛խ, ախպէր ջան. տըրորված սիրտս, անբախտ ջանս քո անտէր, կարիպ ջանիդ կուրպան ախպէր ջան: Մամայի

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՇԱԿ ԵԴԻԿԵԱՐԵԱՆՑ

մասին Փիքր չանես, միամիտ մնա»:

«Ինծի թողիր ո՞ւր գնացիր սիրելի ախպէր ջան,
Տարուց տարի շատանում է կրակս ախպէր ջան.
Միմիայն քեզ ունիմ քաղցր ու սիրելի ախպէր ջան,
Զար թշնամին իր ուզածն կատարեց ախպէր ջան»:

«Ա՜խ, սիրելի հոգի ջան, բաժին կուրպան կարիպ ջանիդ: Շատ սիրով, կարօտով բարեւ ունիմ իմ սիրելի քաղցր, աչքի լոյս քոյր հարսիս. դարձեալ, սիրելի հարսի ջան, ամանաթ իմ սրտիս ուրախութիւն, իմ աչքիս լոյս ախպէրն քեզ. շատ և շատ խնդրում եմ քեզ, հարսի ջան»:

Ի՞նչպէս չարտասուել սոյն զգայացունց նամակները ստանալէ վերջ...:

Եւ քանի որ Արշակը պիտի վերադառնար հայրենիք, ամուսինս պէտք եղած կարգադրութիւնները անելուց յետոյ, խնդրեց որ իր մօրը, Լոնտոն բերելու համար իր ընկերական, բարեկամական օգնութիւնը չի խնայի: Արշակն էլ խոստացաւ և մի քանի օր մեզ մօտ մնալէ վերջ, իրեն ճանապարհ դրեցինք նաւահանգիստ՝ բեռնաւորելով իրեն, զանազան նուէրներով՝ ամուսնոյս մօրն ու քրոջը յանձնելի:

Ամուսնոյս տրամադրութիւնը շատ էր բարձրացել. երջանիկ էր, բառին բուն նշանակութեամբ. ընտանիք, զաւակ և ծերունի մայր՝ իր երջանկութեան սիւներն էին դարձել: Թէեւ իր գրական աշխատութիւնը շա՜տ էր, սակայն, երբ Վարդ-Դանիէլս ուսերին վրան կը բարձրանար, չարութիւն կ'անէր, նա բնաւ չէր սըրտնեղուի կամ զայրանայ երեխային վրայ, այլ կը շա-

րունակէր իր խմբագրականն կամ բանասիրականն և կամ կիսատ կը թողէր՝ մի պահ, զաւկին հետ քա՛ղցր քա՛ղցր խօսելու և խաղալու։ Այսպէս, թէև նիւթապէս նեղ, սակայն բարոյապէս լաւագոյն օրեր ապրեցանք այդ օրերին, մօրը՝ մօտ օրէն մեզ մօտ ունենալու քաղցր հեռանկարով...։

Սակայն Արշակէն նամակ չէր գար — մի քանի ամիս անցաւ, վերջապէս Արշակէն մի նամակ եկաւ, որը կարդալիս՝ ամուսինս կիսատ թողուց և փղձկեց — խեղճ մայրը վախճանուել էր՝ մուրազը սրտին...։ Խե՛ղճ ամուսինս էլ, որ այդ գոյժն առաւ, չա՛տ լացեց ու սգաց։ Իմ վրայ էլ շատ վատ ազդեց այդ անիրաւ իրողութիւնը։

Շատ չանցաւ, Հրաչեայի վերադառնալուց յետոյ՝ կայացաւ Պատգամաւորական Ժողով։

Տեղի ունեցաւ Կեդրոնի անդամների փոփոխութիւն — ընտրուեցան Սագունի (Կովկասցի), Արգումանեան՝ (Պարսկահայ՝ Ամերիկայէն), Սիմոն Հովուեան (Տաչիրեան) (Կովկասցի՝ Գերմանիա կրթուած)։ Ամուսինս դուրս էր։ Մենք Կեդրոնի տնից դուրս եկանք և փոխադրուեցինք մի այլ տուն. և սակայն Ցովակիմը մեզ չէր մոռանայ և յաճախ կը գար Դանիէլիս խաղցնելու։

Կեդրոնի նոր անդամները պէտքն զգացին Ամերիկա գործիչ ուղարկելու ամուսնոյս, որով՝ մեզ թողլով մէն մինակ, ամուսինս մեկնեցաւ դէպի Ամերիկա, Գըլասկօյից հետեւեալ տողերը ինձ հասցնելով։

«Սիրասուն Բերուզս, մխիթարիչ հրեշտակս, երէկ մեկնեցայ մօտիցդ, քեզ թողլով լացի, արտասուքի մէջ։ Միշտ ասել եմ քեզ. «Աստծու գառը գայլը չի ուտիլ»։ Այս բաժանումը դառն չպիտի լինի քեզ համար, բալաս. դու գիտես, որ կա՛յ, ունի՛մ Սրբազան Պարտականութիւն՝ դէպի Սբ. Գործը, դէպի Իտէալս,

որ ինձ դուլ ու դադար չի տալիս։ Պարտականութիւնս կատարելուց յետոյ՝ քաղցր օրեր կ'ունենանք և մեր Սուրբ Օջախի *անդորրութիւնը հանգիստ սրտով կը վայելենք մի օր։*

«... Դանիէ՛լ, անունիդ հայրիկը մատաղ․ լաց չը լինես, հայրիկը շուտով քեզ բանան, չօքօլատ *կ'ուղարկի․ մայրիկին լսի՛ր, քաղցր բալաս․ նամակ գրիր տեսնեմ, ի՞նչ կ'ուզես ուղարկեմ․ սրտիս սփոփիչ հրեշտակըս։ Մնա՛ք բարի, Աստուծու օրհնութիւնը, հովանաւորութիւնը անպակաս լինի ձեր վրայից։ Ձեզ եմ տալիս հոգիս, սիրտս, կեանքս․ գոյութիւնս ձեզի մատա՛ղ»։*

Իմ տխրութիւնը, մենակութիւնը հերիք չէր, Պոլսէն մօրս մահը դուժուեցաւ ինձ․ սպասում էի Ստեփանիս մխիթարական խօսքերին, որոնք շուտով հասան Ամերիկայից։

«... Եթէ Աստուծոյ կամքն է, մայրիկիդ երանի պէտի տայի, մօրս տեսնելուն համար։ Անո՛ւշս, երկու ծաղիկ ունիս, ուռճացրո՛ւ, խնամի՛ր, մեծացրո՛ւ, մի օր էլ մենք ենք, որ անդին կը դրկենք մեր այդ սիրելիներին։ ... Աստուա՛ծ և բալաներդ — նրանք միայն քեզ պիտի մխիթարեն...»։

Երբեմն, երբեմն, Տիկին Արզումանեանը, Պարսկահայ, (Կեդրոնի անդամի կին) *կը գար, զաւակներով, ինձ մօտ և երբեմն ես էլ՝ կը գնայի Կեդրոն, իրենց մօտ, և այսպէս, օրերը կ'անցնէին անպատակ և տըխուր։ Միակ մխիթարանքս, սփոփանքս լինում էին ամուսնոյս նամակները, որոնցմէ մի քանի տող եւս։*

«... Ամերիկան լաւ երկիր է։ Ամերիկայի Հայ ժողովուրդը անյագ կերպով ուզում է ինձ լսել․ հարկաւոր է բաւականութիւն տալ։ Ողջ առողջ եմ։

«Իրաւ է որ Հայի դարեւոր ստրկութիւնը նրա մէջ շատ քիչ բարձր յատկութիւններ է թողել դժբախտաբար, բայց առ այժմ, Հայ ժողովուրդը, անխտիր, առաջս է վազում և ոգեւորութեամբ ընդունում: Հարկաւ ստրուկ նախանձորդներ անպակաս են. երեւակայի՛ր, Դ–երը աշխատել են լուր տարածել, իբրեւ թէ՝ ես հարբեցող, ուտող–խմող, քէյֆ անող մարդ եմ, որ հարիւրաւոր ոսկի մի գիշերուայ մէջ կը փճացնեմ եղել...: Տե՛ս թէ ի՛նչ ստորնութեան են իջել:

«Զինուոր Բերուզս, տեսա՞ր, ինչպէ՛ս վարժուեցար տղամարդի պէս ապրելու, դրա համար էլ սիրտս հանգարտ է, որովհետեւ քեզ նման պարտաճանաչ կին ունիմ, հրեշտակի նման էլ զաւակներ, մնացածը Աստուած կը հոգայ...»:

Լոնտոնում, բախտն ունեցանք ծանօթանալու այրի Տիկին Ռաֆֆիին. Տիկինը Հնչակեան Կեդրոնը այցելեց իր Արամ զաւկին հետ, ես էլ հոն կը գտնուէի: Մեզ հրաւիրեց փոխ–այցելութեան և ես ու Տիկին Արզումանեան, մեր պզտիկներով՝ մի օր, գնացինք իրեն այցելութեան: Լաւ հիւրասիրեցին մեզ՝ մայր ու տղայ, թէեւ Տիկինը ջերմ ունէր, բայց լաւ րոպէներին մեզ պատմեց իր և իր պատուական ամուսնու՝ Ռաֆֆիի կեանքէն ինչ ինչ դրուագներ: Ցանկութիւն ունէր իր ամուսնու նամակները հրատարակելու:

Իսկ մեր միակ Անգլիացի բարեկամուհիներն էին Ընկեր Սագունու կեցած տան անդամները — շատ հայասէր ընտանիք մը դարձաւ այդ ընտանիքը՝ Սագունու նման մաքրասէր, վայելչագէմ, ազնիւ ու պարկեշտ անձնաւորութենէ մը դատելով հայութիւնը:

Տեղի ունեցաւ Լոնտոնում Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը, որ շատ երկար տեւեց՝ որովհետեւ հին ու նոր Հնչակեանների միջեւ նոր կայացած մի–

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍԻՄՈՆ ՀՈՎՈՒԵԱՆ — ՏԱՃԻՐԵԱՆ
Նկարուած Երեւանում 1937ին

ութիւնը քանդուեցաւ Կովկասի Մասնաճիւղերի պահանջով։ Այդ օրերին, դեռ ժողովը չը վերջացած, Հընչակեան Կեդրոնը եկաւ Հրանդ անունով միջահասակ երիտասարդ մը, որ կը փախչէր, որպէս թէ, Եւրոպա անցնիլ ուսանելու համար — այդպէս էր ներկայացուցած իրան — ամիս մը պիտի մնար Լոնտոն, մի քիչ Անգլիերէն սովորէր! և Պատգամաւորներից էլ բարոյական օգնութիւն և գաղափար ստանար իրենցմէ, քանի որ Եւրոպայից էին եկած անոնք...։ Հրանդ ա՛յնքան ճարպիկ գտնուեցաւ, որ բոլորից էլ սիրուեցաւ, թէ՛ տան տիկնոջից և թէ՛ բոլոր Պատգամաւորներից...։ Մինչ այդ Կեդրոնը ստացած էր նաեւ սպառնական նամակներ՝ Միութեան վիժման համար։

Կեդրոնի գրաշարը՝ Յովակիմ Մարուքեան մեկնած էր Ամերիկա. և Մինաս անունով լուրջ, ուսումնասէր մի երիտասարդ գրաշար յաջորդած իրեն։ Հրանդ գրաշարին հետ էլ շատ մտերմացած էր, այնպէս որ, ամիսը լրանալէ վերջ՝ Հրանդ ողջերթի խնջոյք սարքեց, Տիկին Արղումանեանի օգնութեամբ ու հաւանութեամբ՝ իրա յարկաբաժնին մէջ։ Գինի և օշարակ էր բերել Հրանդ և Մինասին էլ պատուիրել, որ երեխայքը օշարակ թող խմեն գինիի փոխարէն...։

Ես էլ էի հրաւիրուել հոն...։ Բոլոր Պատգամաւորները ներկայ էին՝ բացի Սագունիից, որ գլխացաւի պատճառաւ եկած չէր։ Սեղանը պատրաստ էր — տապակած հաւեր, զանազան պտղեղէն, գինի, օշարակ ևն։ Բոլորս էլ մասնակցեցանք և Հրանդի կենացը գինի պարպեցինք. Հրանդ՝ մեզ ծառայելու պատրուակով, սեղանին չէր մասնակցում, այլ ոտքի կեցած, շնորհակալ կը լինէր իրեն ուղղուած մաղթանքներին։ Պատգամաւոր տղերքը տաքցան, երգեցին ուրախ-ուրախ և Հայկական պարեր, Կովկասեան «Հօ՛յ Նազանիմ»ը պարեցին. հոն էին Տաշիրը (Սիմոն Հովուեան)

կեդրոնի անդամ, Հրահատը (Գրիգոր Վարդանեան) Որսորդը, Համբը, Աhրիմանը (բոլորը Կովկասից) Եփրեմ Կաճառեանը, Աստուր Մելտոնեանը (Ամերիկայից) Պետրոս Գալֆաեանը (Բուլղարիայից) Ռուբէն Կարապետեանը և այլն։

Երբ երկրորդ անգամ, երրորդ անգամ «կենաց» կ՚ուզէին առաջարկել Հրանդին, Հրանդը չը կա՛ր..., վեր՝ վար, դուրսը, Սագոյենց տունը կը փնտռուէր — Հրանդը չը կա՛ր... — մենք ո՛չ մի եզրակացութիւն չի հանեցինք, բայց գտնուեցան սրամիտ և կասկածոտ Պատգամաւորներ, որ խմիչքը անմիջապէս դադրեցրին և խնջոյքը վերջ գտաւ, ու մենք մեր տները քաշուեցանք... բայց Պատգամաւոր Ընկերները անմիջապէս գինին կը տանին դեղարան և տարրալուծել կը տան. կը յայտնուի, որ ոչ բաւարար քանակութեամբ թոյն էր խառնուած գինիին հետ...։

Այդ գիշեր ես սոսկալի խիթեր ու անհանգիստ քուն մը ունեցայ, նոյնը և՛ պատահել էր — ինչպէս հետեւեալ օրը իմացայ — մի քանիսին։

Հրանդի պաշտօնն էր եղած ուրեմն, Վերակազմեալների դրդումով, մեզ թունաւորել, մեծ ու փոքր հաւասարապէս...։ Ի՞նչու — որովհետեւ այս վերջին Պատգամաւորական Ժողովը չուզեց պահել Միութիւնը՝ որ Վերակազմեալների կողմից, ինչպէս անցեալում, դաւադրական փորձ էր, կրկին, իրենց ձեռքն առնելու «Հնչակ»ն ու տպարանը՝ իր արխիւներով միասին...։ Եւ մանաւանդ՝ Վերակազմեալ Պատուելի Ջիթճեան, դժբախտաբար, սպանուել էր Կովկասում...։

Այդ խնջոյքից մի չարաթ հազիւ անց՝ գիշեր ժամանակ, Ընկեր Սագոյենի և Եփրեմ կաճարեան, թեւանցուկ, անձրեւի պատճառաւ հովանոցը իրենց գլխին, Սագոյենց տան փողոցը կը մտնեն, ասել-խօսելով։

Երբ տանը կը մօտենան, Ընկեր Եփրեմ կը բաժնուի և կը դառնայ իր տունը, իսկ Ընկեր Սագունին հովանոցովը կը բարձրանայ իր տան սանդուխներովը և՝ մէկ ձեռքը հովանոց, միւս ձեռքով դռան «չախ - չախ»ը բռնած՝ կը զարկէ, հէնց այդ րոպէին, Թիկունքէն կըստանայ, վրայէ վրայ, վեց դնդակի հարուածներ, առանց իրեն ժամանակ տալու իր ծոցին զէնքերը կարենալ գործածելու...: Տնեցիք, սարսափահար կը վազեն, կը փաթթեն իրեն բրդէ ծածկոցներով և հիւանդանոց կը փոխադրեն, ուր՝ կը վազեն և՛ մեր Ընկերները, կայծակի արագութեամբ։ Խեղճ Սագունին կէս ժամ միայն ապրելէ վերջ՝ «մրսում եմ» մրմնջելով, Ընկերների զուրգուրանքների տակ, հոգին կ'աւանդէ․ պատուակա՛ն Ընկեր Սագունին...:

Սագունու սպանութիւնը ամբողջ Լոնտոնը դղրդացուց։ Մեր բոլորի համակրանքին արժանացած, մաքուր հայրենասէր Ընկերը այլեւս չը կա՛ր, Վերակազմեալի դաւաճան դնդակին զոհ էր գնացել...:

Թաղումը եղաւ արքայավայել։ Սագունու տնեցի Անգլիացի ընտանիքը՝ մեզ հաւասար ողբաց Սագունու մահը և դաւադիրների, ոճրագործների հանդէպ զըզուանք ու զարշանք միայն զգաց՝ ամբողջ Անգլիացի ժողովրդի հետ միասին։ Թաղման արարողութիւնը կատարեց Մանչեստրի (Անգլիա) հոգեւոր հովիւ՝ Թէոդորոս քահանայ Իսահակեան․ դամբանական խօսեցան մի քանի Ընկերներ՝ որոնցմէ ամէնից շատ յուզուած, Թշնամի դնդակին հանդէպ ոխակալ հոգիով լցուածը կ'երեւէր Ընկեր Հրահատ Կամսարականը (Գրիգոր Վարդանեան)։

Անգլիական կառավարութիւնը շատ խիստ խուզարկութիւններ ու հետապնդումներ սկսաւ կատարել օտարականների տները․ մինչեւ իսկ, որպէս օտարականի՝ իմ տունն էլ խուզարկուեց, բայց յետոյ ներողու-

թիւն խնդրուեց, անշուշտ տեղեկանալով՝ թէ մեր տունը ո՞ւմ կը պատկանի: Ոճրագործը չը գտնուեց. բայց հաղիւ մի շաբաթ անց՝ Սագունու Թաղումից յետոյ՝ «Փէքհամ Րայ»ի պողոտային վրայ (կեդրոնի փողոց), քարկոփների յատկացուած մի բակից՝ Հնչակեան Պատգամաւորների պտոյտից վերադարձին, ոճրագործ հայ մը՝ երկու ատրճանակ ի ձեռին՝ խփել էր տղայոց վըրայ...: Պատահական խելագար հարուածներից ընկել էին խեղճ երիտասարդ, գեղանի Համբը (Կովկասում նշանուած) Որսորդը (ընտանիքի տէր, Պոլսեցի). երկուքն էլ եկել էին Բագուից՝ որպէս Հնչակեան Պատգամաւորներ: Քիչ էր մնացել Ռուբէն Կարապետեանն էլ ընկնէր, գնդակը ճիշդ ականջի մօտովն էր սուրացել. գուցէ դեռ շարունակէր ոճրագործը իր գնդակները անհաշիւ պարպել և հնձել անդէն և անմեղ Հընչակեաններին, եթէ ոստիկանութիւնը, րոպէապէս չը հասնէր: Գաղանը՝ իր ձերբակալութիւնը անխուսափելի տեսնելով, իր ստորաքարշ կեանքին վերջ տալու հերոսութիւնն էր ունեցած այդ րոպէին և ինկած էր գետին:

Մեր այս խեղճ Պատգամաւորների Թաղումն էլ նոյն շքով կատարուելէ վերջ՝ ոստիկանութիւնը, գաղտնի կամ յայտնի, բոլոր Պատգամաւորներն ու Հնչակեան Կեդրոնը իր հսկողութեան տակն առաւ, այնպէս որ երբ Ընկերներ Եփրեմ Կաճառեանն ու Մելտոնեանը (Ամերիկայի Պատգամաւորները) մեզ մօտ կը գային, մի քանի քայլ յետեւից գաղտնի ոստիկանը կ'ընկերանար իրենց: Բոլոր Պատգամաւորներին էլ թոյլատըրուած էր զէնք կրելու գրպանին մէջ և իրենց ձեռքն էլ զէնքի վրան պահած՝ փողոցում քալելու ժամանակ. մի փոքր կասկածելի հայու ի տես, անխնայ զէնքը քաշելու իրաւունք էր տրուած իրենց:

Ոստիկանական քննութիւններից երեւցել էր, որ

Հրանդ կոչուած հրէշը, մեզ Թունաւորելու համար՝ Վերակազմեալների կողմից ուղարկուած սպիտակ տէւօրը, ամէն երեկոյ կ՚երթայ, կը տեսնուէր ու կը խորհրդակցէր եղեր իր ընկեր միւս ոճրագործի տան մէջ. այդ ոճրագործ հայը ամէն օր սենեակը փոխելով, կարողացած է եղեր իր վրայ կասկած չը հրաւիրել և խնջոյքի գիշերը Հրանդ նրա մօտ է ապաստանած եղեր, պատմական խնջոյքին մէջ, մեր Ընկեր-Պատգամաւորների ողջ-երթի անկեղծ մաղթանքները պաղարիւնով մը ընդունելուց յետոյ...:

Լոնտոնում սպասող Պատգամաւորները ևս իրենց գործը վերջացնելուց յետոյ, ամէն մէկը իր երկիրը վերադարձաւ:

Ամուսինս իր բնակարանը հաստատած էր Պոսթօն քաղաքը. ու շրջանը պտոյտ կատարած ատեն, ամէն մի քաղաքէ ինձ կը գրէր Լոնտոն: Ահա՛ մի քանի տողեր, վերեւ յիշուած դէպքերէն վերջ:

«Բաժանումը տեղի ունեցաւ. պայքարը արդէն սկսուած է. ժողովրդի համակրանքը մեր կողմն է: Պէտք է ժայռոտ սիրտ, սիրելիս, այս բոլոր հոսանքներին ընդդիմադրելու համար: Եւ ես մենակ եմ, շըրջապատուած թշնամիներով...: Միտս ընկած ժամանակնիդ Թուլանալ եմ սկսում, մինչդեռ մի րոպէուայ Թուլութիւնը ամէն ինչ կորցնում է: Երբ նամակդ ըստանում եմ, պայքարից, կրքից սթափւում եմ և միայն այդ ժամանակ է, որ մտածում եմ թէ ես էլ իրական աշխարհի հետ կապուած եմ...:

«Վերջապէս մեր թերթը մկրտուեցաւ «Երիտասարդ Հայաստան» անունով: Երազս կատարուեց. ուզեցի որ Հայ Յեղափոխական կեանքի մէջ այդ անունը լսուի:

«Րաֆֆիի տղային և կնոջը անպատճառ տե՛ս, ասա՛ որ իրենք էլ աշխատակցին. և որ գլխաւորն է, հան-

դուցեալլի եթէ փոքրիկ, անտիպ գրուածքներն ունին, թող ուղարկեն, որ առաջին թուերի մէջն իսկ տպեմ։
«Երբ պայքար կայ, պիտի պայքարիլ և յաղթել· միջին ճանապարհ չը կայ···»։

Ուրիշ առթիւ։

«Զարերը տեղ չունին կեանքի մէջ· ո՛չ մի սրտնեղութիւն չունենաս· իմ գրիչս, աշխատանքս քանի կայ, նա է՝ որ ինձ վահան կը հանդիսանայ ամէն չար նախանձի···։

«Ահագին դաշտ կայ այստեղ, մանաւանդ Փրանսերէն լեզուի համար, այնպէս որ, բնաւ հոգս չէ՝ ի՛նչ էլ գալու լինի, ես իմ տեղս կ՚ունենամ· որովհետեւ «մշակը արժանի է իր վարձին» — չէ՞ որ դու քրիստոնեայ ես, դրա համար էլ քեզ քրիստոնէական օրինակ բերեցի, տեսա՞ր մի։ Դանիէլլիս պատկերը հետս եմ պտտցնում· ամէնքն էլ գիտեն, ճանաչում են «թափանցող միտք» ունեցող բալայիս· ա՛խր հօրը տղան է չէ՞···»։

Մի օր, երբ Արղումանեանենց էի այցի գնացել, որոնք Կեդրոնի վերնայարկը կը բնակէին, իմ նախկին բնակարանս — իրենք Ամերիկայից հեռագիր էին ստացել թէ՝ «Սապահին խփեցին», բայց երեք օր անց՝ «վտանգը անցած է»։ Այդ ժամանակ միայն պատմեցին եղելութիւնը, որին դեռ չուզելով վստահիլ, անմիջապէս ամուսնոյս գրեցի՝ խնդրելով որ իր ձեռագիրը միայն եթէ տեսնեմ, այն ժամանակ պիտի հաւատամ, թէ վտանգը անցած է։ Եւ ստացայ հետեւեալ քարտը։

«Այս քարտը գրում եմ հիւանդանոցում, անկողնիս մէջ նստած։ Բալանե՛րս, դաւադիրները՝ վատաբար, քամակէս երեք գնդակ պարպեցին, որոնցմէ միայն մէկը դիպաւ· դեռ գնդակը չեն հանած։ Հանդիստ կը լինէք բալաներս, գրածներս ճշմարտութիւն են»։

Հիւանդանոցից տուն փոխադրուելէ վերջ՝ թէեւ դեռ տկար, հետեւեալ նամակն ստացայ իրմէ:

«... Վիրաւորուած օրս, երբ սենեակի մէջ պառկեցրին, ցաւիս սաստկութիւնից ինքզինքս մոռացել էի...: Յանկարծ աչքիս դիպաւ պատուհանը ու կապուտակ երկինքը. Նոր յիշեցի որ մահուան տագնապի մէջ եմ...: Միտս ընկան կիսատ թողած գործերս. լացա՛յ... ու յետոյ միայն միտս ընկաք դուք և չա՛տ լացայ: Վազեցին եկան Ընկերները և Աստծու օրհնած տանտիրուհիս (Միսիս Ֆօս): Բժշկից խնդրեցի, որ եթէ կը կարծէն, որ գէթ ութը-տասը օր կարող եմ ապրել, թող ասեն որ հեռագիր տամ և կինս ու զաւակներս բերել տամ...: Բժիշկները խնդացին ու ապահովացրին, որ վտանգաւոր բան չը կայ: Այդ օրը՝ բոլոր մասնաճիւղերի տղերքը եկել էին և երդւում էին մօտս, որ երեսուն հոգի պիտի սպաննէին արիւնռուշտ կազմակերպութիւնից (Վերակազմեալներից): Բայց ես խնդրեցի, որ այդպիսի արիւնահեղութիւն չը պատահի, եթէ ինձ կը սիրեն...:

Ահա՛ այսպէս, բալաներս, այժմ լաւ եմ: Էլ ի՞նչ ասեմ, եթէ ոչ՝

ՍՏԵՓԱՆԴ

Իսկ մահափորձը կատարուած էր հետեւեալ կերպով: Ամուսինս, ըստ սովորականին, երբ առաւօտուն կը գնար «Երիտասարդ Հայաստան»ի տպարանը, ճանապարհին, անծանօթ պատանի մը յանկարծ երեք անգամ կը գնդակահարէ. գնդակներէն երկուսը կը վնասեն խանութներու ապակիներուն և մէկ գնդակը ամուսնոյս թիկունքէն: Բարի Ամերիկացիի մը օգնութեամբ կը տարուի մօտակայ դեղարան մը, ուր նախնական խնամքէ մը վերջ՝ կը փոխադրուի հիւանդանոց:

Երբ ամուսինս այդ տեռորիստ պատանիէն, որ վա-

խէն կը դողդղայ եղեր, հարց կը տայ թէ՝ «ա՛յ տըղայ, դու ինձ կը ճանաչե՞ս, ինչո՞ւ արեցիր այս բանը, ես քեզ ի՞նչ վնաս էի տուել» — տղան կ'ըսկսի լացել և խոստովանիլ՝ թէ «ես քեզ չեմ ճանչնար. մի ուրիշը ինձ ցոյց տուեց քեզ, ինծի այնպէս էին հաւատացուցեր, որ դու շատ գէշ մարդ մըն ես...»:

Տեռօրիստը տասներկու տարուան բանտարկութեան վճիռ ստացաւ: Ամուսնոյս գնդակը չի հանուեցաւ, որովհետեւ գնդակը խրուած է եղեր թիկունքի ոսկորին: Բժիշկները յոյս էին յայտնած՝ թէ եօթը տարի վերջ գնդակը ինքնաբերաբար պիտի յառաջանար դէպի մորթը և թարախոտելով գնդակի վէրքը, դիւրութեամբ, փոքր գործողութեամբ մը դուրս պիտի հանուէր: Բայց այդ բանը տեղի չ'ունեցաւ: Խեղճ ամուսինս այդ գընդակի պատճառաւ, երբեմն թիկունքի ցաւ կ'ըզգար, սակայն ուշադրութիւն չէր դարձներ:

Ու այդպէս էլ, մինչեւ կեանքին վերջը պահուած մնաց այդ անիծեալ գնդակը իր մարմնոյն մէջ...:

Վերակազմեալները՝ այդ գաղանային բնազդով լըցուած այդ մարդ-արարածները Լոնտոնի մէջ կատարած սպանութիւնները, Թունաւորման փորձը և ամուսնոյս վրայ կատարած մահափորձը դեռ բաւ չի համարելով՝ մի երկրորդ մահափորձի ձեռնարկեցին, որպէս զի «անպայման Սապահը մէջտեղէն վերնայ»:

Ամուսինս, ամիսներով տառապելէ և դարմանուելէ վերջ՝ երբ կրկին կը վերսկսի իր խմբագրապետի պաշտօնը և իր պանդուխտի խաղաղիկ կեանքը կը շարունակէ, իր բնակած պանդոկի տիրուհին Միսիս Ֆոսը գաղափար ունենալով ամուսնոյս կուսակցական թշնամիներ ունենալուն վրայ, երբ մի օր իլէվէյթըրի սեւամորթ ծառան ամուսնոյս ուղղեալ փոքր սնտուկ մը կը բերէ և տան տիրուհիին կը յանձնէ, սա կը հար-

ցափորձէ ծառային թէ ի՞նչպիսի մարդ էր այս սընտուկը բերողը, նա կը պատասխանէ թէ՝ «բերողը թուխ մարդ էր, բայց քէյփը այնքան աչքերին վրայ էր քաշած, որ լաւ չը տեսայ զինքը»: Տիկինը լաւ մը կը քննէ սնտուկին վրայի գրուած անունը, որ տարօրինակ և սխալ տառադարձութեամբ էր գրուած, տանտիկինը կը կասկածի և թէլէֆօնով ոստիկան կը կանչէ ու իրեն կը յանձնէ այդ սնտուկը — ամուսինս տանը չէր այդ պահուն — և իսկապէս, կը բացուի ու կը տեսնըւի որ «դժոխային մեքենայ» մ'էր այդ նուէր-սնտուկը... և այդ տիկնոջ սրամտութեան շնորհիւ ո՛չ միայն ամուսինս էր փրկուած, այլ այդ խոշոր շէնքին մէջ բնակող հարիւրաւոր անմեղ հոգիները, որոնք զոհ պիտի գնային Վերակազմեալ դաւաճաններու անգութ ու մահասփիւռ կիրքերուն:

Լոնտոնում Կեդրոնի անդամների նոր փոփոխութիւն տեղի ունեցած լինելով՝ Արզումանեան ընտանիքը Լոնտոնէն ետ վերադարձաւ Ամերիկա, և ես մնացի մէն-մինակ...: Բաւական չէր, կարծես, Լոնտոնի մառախլապատ և ապառողջ կլիմայի ազդեցութիւնը, վերջերս կատարուած այդ բոլոր տխուր անցքերը վրաս շատ դէշ ազդելով՝ տկարացայ և ամուսնէս նամակով խնդրեցի զիս հեռացնել Լոնտոնէն:

Եւ մի քանի ամիսներից յետոյ բարեբախտութիւնն ունեցայ հեռանալու և շնորհիւ Ընկերներ Ռուբէն Կարապետեանի և Վարազդատի (որոնք Լոնտոն կը բնակէին) ընկերական օգնութեան և ամուսնոյս նիւթական օգնութեան՝ ճանապարհ ընկայ դէպի Ամերիկա...: Ամբողջ մի շաբաթ ծովային հիւանդութեամբ տառապելէս վերջ՝ հասանք Ֆիլատէլֆիա: Մեզ դիմաւորելու եկել էին Նիւ Եօրքէն՝ ամուսնոյս ձեռագիր նամակը ձեռքին՝ Ընկեր Օհան Գասպարեան և Ֆիլատէլֆիայի Հնչակեան Մասնաճիւղի ընկերներէն մին, որ զիս

առաջնորդեցին Ընկերուհի Արամեանի տունը, ուր նախամեծար համարեցի հանգստանալը, քան թէ Նիւ Եորք մեկնիլ, ամուսնոյս մօտ. բայց իր գրաւոր խնդրանքով, Դանիէլս ուղարկեցի իրեն մօտ, Ընկեր Օհանի հետ միասին։ Նիւ Եորքի ընկերները ենթադրելով որ ես էլ անմիջապէս պիտի կարողանայի Նիւ Եորք մեկնիլ, բոլորը հաւաքուած Հնչակեան ակումբին մէջ՝ կ'ըսպասեն եղեր մեզ ընդունելու, սակայն միայն Դանիէլիս տեսնելով, կուզեն չուարեցնել երեխային, և անմիջապէս հօրը մօտ չեն առաջնորդեր, այլ կը հարցնեն իրեն թէ ո՞ւր է հայրիկդ, փնտռէ՛, գտի՛ր — տըղան չի լար, այլ համարձակ բոլորին դէմքերը լաւ մը կը դիտէ, կը զննէ և ճանչնալուն պէս հօրը գիրկը կը վազէ...։

Իմ ներկայութենէն օգտուելով՝ Ֆիլատէլֆիոյ Հընչակեան Մասնաճիւղը հրապարակային ժողով կը սարքէ և ամուսնոյս ալ կը հրաւիրէ խօսելու։

Ժողովը տեղի կ'ունենայ, բայց ես ներկայ չի գըտնուեցայ՝ անհանգստութեանս պատճառաւ։ Մի, երկու օր յետոյ, մեզ հիւրասիրող Ընկեր–Ընկերուհիներուն շնորհակալութիւն յայտնելով՝ ճանապարհուեցինք Պոսթօն, ուր կը գտնուէր «Երիտասարդ Հայաստան»ը, և ուր պէտք էր որ հաստատուէինք.

Սակայն, այդ ժամանակուայ Պոսթօնի և շրջակայ Հնչակեան երեք Մասնաճիւղները տարրական քաղաքավարութիւնը կամ կուսակցական յարգանքը չունենալով՝ տեղ մը, անկիւն մը իսկ չէին պատրաստած մեզ համար...։

Ուրեմն գնացինք Արզումանեաննեց մօտ, որոնց Լոնտոնէն կը ճանչնայինք և վարձեցինք մի սենեակ՝ իրենց յարկաբաժնի մէջ, ուր մնացինք մէկ ու կէս շաբաթ, մինչեւ գտանք, նոյն փողոցին մէջ, մի համեստ

ընակարան, ուր շաբաթներով, տախտակամածի վրայ մի սփռոց փռելով՝ կը ճաշէինք...: Վերջապէս օր մը, գործածուած, աղտոտ գորգեր և մի քանի աթոռներ լցրին տանը մէջ՝ և... կահաւորուեցաւ իրենց գործիչին տունը...:

Մեր շատ համեստ ապրուստը և շատ աժան տան վարձքն իսկ չէր հոգացուեր իր ժամանակին, ամուսնոյս ճղճիմ շաբաթականը կանոնաւորապէս չի վճարուելուն համար: Լինի Հնչակեան Մասնաճիւղը, կարծես, այդ օրերէն սկսեալ՝ ցոյց կուտար իր մէջ ծըրարուած Բարիջանեանների ապագայ դաւադիր դիմակը...:

Սակայն, ամուսինս, որին շատ չէր հետաքրքրեր մեր նիւթական, ընտանեկան աննախանձելի կացութիւնը, հոգւով-մարմնով նուիրուած էր իր՝ պաշտամունքի առարկայ «Երիտասարդ Հայաստան»ի ամենածանր խմբագրական գործին. շաբաթ ու կիրակի օրերն էլ տրամադրած էր շրջանի Մասնաճիւղերի հրապարակային և դասախօսական ժողովներին: Թերթերի ծալլումը, հազարաւոր հասցէների ձեռագրումը մեր տան մէջ կը կատարուէր. գրաշարը, երեխայք և մենք մեծ ու փոքր՝ գործի կը լծուէինք. հասցէները գրելը իմ գործս էր: Յովակիմն էլ չարաչար գործելէ վերջ՝ թերթը փոստին կը յանձնէր:

Թերթի յօդուածների սրբագրութիւնը, ոտանաւորների չափագրումը ու հայերէնացումը (որովհետեւ հայերէն չէին կարծես այդ գրութիւնները) իմ գործս էր, հակառակ՝ տանս բոլոր գործերը, երեխաների հոգատարութիւն և շուկայի առ ու տուրն էլ իմ վրայ ծանրացած լինելուն...:

Բացի այս բոլորէն, ամուսինս շատ հպարտ զգաց, երբ՝ իր խնդրանքով ու օգնութեամբը՝ իր հետ միա-

սին կը գնայի երբեմն, յեղափոխական ու քաջալերական ճառեր խօսելու Հնչակեան շրջանին...: Կեղծ անուն մըն էլ յատկացուց ինձ՝ իր քրոջը «Նանասի» անունը կպցնելով վրաս: Կարծես գուշակել էր, որ այդ տարուան մէջ, իր Նանասի քոյրը՝ չորս զաւակների մայր՝ պիտի վախճանուէր Ջահուկի մէջ:

Հնչակեան Կեդրոնը Լոնտոնէն Պարիզ փոխադրըուել էր· Կեդրոնի նոր անդամ ընտրուել էին — ամուսինս՝ «Հնչակ»ի խմբագիր, Արամ Աչըգպաշեան և Մուրատ Պօյաճեան՝ խորհրդատու անդամներ:

Ճիշդ այդ օրերին՝ Պոսթօնի մեր բնակարանին մէջ՝ աշխարհ եկաւ մեր երրորդ զաւակը՝ Գրիգոր — ամուսինս ժողովի էր գնացած, ուշ ատեն վերադարձաւ ու գտնելով՝ իր երրորդ զաւակը՝ շատ ուրախացաւ...:

Քանի որ որոշուած էր, որ Պարիզ մեկնէինք, մեր նորածին տղան ու Սապահգիւլս՝ որ դեռ մկրտուած չէր, մկրտել ուզեցինք մեր տաներէց քահանային՝ Տէր Թէոդորոս Քհնյ· Իսահակեանին ձեռամբ (Ջուղայեցի), քանի որ նա էլ Պոսթօն էր փոխադրուած Մանչեսթըրէն (Անգլիա) ընտանեօք: Նա էր մկրտած Դանիէլիս, երբ Լոնտոնում կը գտնուէինք:

Պոսթօնի շրջակայ Մասնաճիւղերէն՝ ամէնէն զօրաւոր և համակրելի Հնչակեան Մասնաճիւղն էր Զըլսիի Մասնաճիւղը, որուն անդամներէն տարէցը՝ Կիրակոս խալֆան՝ շատ կը սիրէր և կը յարգէր ամուսնոյս:

Մկրտութեան օրը հրաւիրուած էին իրենք, հոն էր մեզմէ անբաժան գրաշար Յովակիմը: Պատահաբար հոն գտնուեցան Լոնտոնէն նոր Ամերիկա հասած Ընկեր Եփրեմ Կաճարեանն ու իր Անգլուհի Տիկինը, Պիթին, որ մեր սիրելի Սադունու տանտիրուհու աղջիկն էր:

Քահանան ու իր երիցուհին եկան. Սապահգիւլխս կնքահայրն եղաւ Ընկեր Վ. Խանիկեան, նորածին Գըրիգորինս՝ Ընկեր Կաճարեանը: Կատարուեցաւ փառաւոր մկրտութիւնը, որին յաջորդեց համեստ սեղան մը, ուր երգեցինք, խօսեցինք և լաւ ժամանց ունեցանք: Ընկեր Կիրակոս Խալֆան շատ խնդրեց ամուսնոյս, որ իր ո՛ևէ մէկ սիրած երգը երգէ իրեն համար. նա էլ չը մերժեց և իր բարձր ու բարակ ձայնով երգեց. «Անհոգ ես, չես գիտեր, ի՞նչ կայ քո մասին» երգը: Խալֆան իր կողմէ ոսկի մատանի մը նուիրեց ամուսնոյս՝ ճակատը համբուրելով և մաղթանքներ ընելով՝ կուսակցական առողջ գործունէութեան շարունակման համար՝ ի Պարիզ: Որովհետեւ, այդ օրերին էր, որ Խան-Ազատի և Նազարբէկի խմբագրութեամբ «Նոր գործունէութիւն» մտցնելու ջանք էր սկսուած Հնչակեան Կուսակցութեան մէջ. և շարքերը վտիտցնելու ըս-պառնալիքի տակ էր Հնչակեան Կեդրոնը, սակայն, շընորհիւ Սապահի Հնչակեան օրգան «Հնչակ»ի խմբագրութեան կանչուելուն՝ աղէտը փարատեցաւ և նախկին թափով, նորէն հին սկզբունքներուն և գործունէութեան հիման վրայ դրուեցաւ գործը...:

Մենք մեր ունեցած-չունեցած «կահ-կարասիքը» թողեցինք Պոսթօն ու հաւաքուելով անցանք Նիւ Եօրք, սպասելու Ֆրանսական նաւին: Նիւ Եօրքի Մասնաճիւղը փափաքեցաւ, վերջին անգամ լինելով՝ օգտուիլ Սապահի ա՛յնքան շինիչ դասախօսութիւններէն, հրապարակային ժողովներէն և կուսակցական ինչ ինչ թելադրութիւններէն: Կարծեմ թէ շաբաթ մը մնացինք Նիւ Եօրք, տան մը մէջ — քնաւ չեմ մոռնար — որու տան տիրուհին շատ բարի և ազնիւ Ամերիկացի օրիորդ մըն էր, որ կ'ըզբաղուէր մի տասնեակ կատուների առեւտուրով:

Այդ կատուները բաւական հետաքրքիր տեսարան

մը կը ներկայացնէին երեխայոցս համար, բայց Դանիէլս հիւանդացաւ, տաքութեան մէջ ինկաւ ամբողջ օր մը, որուն հետեւեալ օրը պէտք էր ճամբորդէինք: Բարեբախտաբար թեթեւցաւ իր վիճակը, երբ նաւն առանք: Այդ ճամբորդութիւնը անմոռանալի կը մնայ ինձ համար... մէկ-երկու ամսական ծծկեր երեխաս Գրիգորը գրկիս, ծովը սոսկալի ալեկոծ — բարեբախտաբար ամուսինս դիմացող էր սովորական ալեկոծումի, թէեւ մի օր նա էլ անհանգիստ եղաւ, այնպէս որ երեխաների հոգը մնաց Ըրսերուն ձեռքին, քանի որ ես՝ նաւ մտած րոպէէս, արդէն ինկած, պառկած էի. այդ օրը որ շատ դէշ եղայ, խորհեցայ թէ պիտի մեռնիմ... Հարցրի ամուսնոյս, որ ե՞րբ կը մօտենանք ցամաքին, նա միշտ ինձ կը հանդարտեցնէր ըսելով որ՝ «արդէն շատ չի մնացել, շուտով պիտի հասնինք»: Ու ինքը երեխաներին հոգ կը տանէր ցերեկները, իսկ գիշերները մօտս կը բերէին նորածինս, որուն պէտք էր ես հոգ տանէի...:

Տասն օրից յետոյ, վերջապէս, Ֆրանսա հասանք, բոլորովին ցամքած վիճակի մէջ էի ես. ուղղակի գընացինք Հնչակեան Կեդրոն, Campagne Premiere, ուր հանդիպեցանք դեռ չը հեռացած մի քանի ընկերների. հոն էր Սիմոն Հովուեանը (Տաշիր), Մելիքը, Արամ Աչըգպաշը, եղբայրը ևն.: Տաշիրը լինելով նոյնպէս Թիֆլիզի Ներսիսեան դպրոցի աշակերտներէն, կը յիշէր ամուսնոյս բարձր դասարանները եղած ժամանակուան հպարտ կեցուածքը և խօսելու, դասախօսելու ձեւերը, «Նոյն Ստեփանն է», ըսաւ ինձ, «միայն գիրացած ու հերաթափ է եղած»: Հոն կը գտնուէր մի ուրիշ Ընկեր Արամ մը եւս, որ ամուսնոյս տեսնելուն պէս՝ խոշոր և մանրանկարուած թէյի գաւաթ մը իր պնակով, նուէր տուեց իրեն: Բոլորս էլ խնդացինք. ու ինքը բացատրեց թէ ինչո՞ւ այդքան խոշոր գաւաթ

ՊԵՏՐՈՍ ԿԻՒՐԵՂԵԱՆ — Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

Համալսարանի Աւարտումէն Վերջ Նկարուած՝ Պարիզ

է բերում — որովհետեւ ամուսնոյս թէյասիրութիւնը առասպելական է դարձած եղել... որով Արամն էլ այդ էր գտած յարմար նուէրը:

Նոյն բակին մէջ, մեզ յատկացուեցաւ այն տան յարկաբաժինը, ուր բնակել էր Խան-Ազատն ու իր ազնիւ տիկինը: Նրանք միշտ կը Թղթակցէին մեզ հետ, երբ Պոսթօն կը գտնուէինք: Խան-Ազատը շատ ջանք Թափեր էր, այն ժամանակ, որ փոխել կարողանար նա՛եւ Սապահի երկաթեայ համոզումները, սակայն նա չի փոխուեցաւ. մնաց այն՝ ինչ որ էր:

Պարիզի Հնչակեան Կեդրոնի նիւթական դրութիւնը, ինչպէս միշտ, աննախանձելի դրութեան մէջ լինելուն, մենք՝ որ ձմեռ ժամանակ էինք հասած Պարիզ, բաւական ժամանակ զուրկ մնացինք ո՛չ միայն հարկաւոր եղած կահ-կարասիներէն, այլ՝ վառելիքէ, տաքութենէ՝ մեր բնակարանին մէջ:

Պարիզի ցուրտը շատ խիստ էր, և չոր. դրեթէ բնաւ ձիւն չը կար ձմեռը: Տարքով հիւանդացանք երեխաներս ու ես: Ամուսինս ու ընկերները վերջապէս ճար արեցին, հոգացին, բժիշկ, դեղ և մենք լաւացանք:

Եկաւ գարունը, անձրեւ ամէն օր: Ամառը շատ աւելի գեղեցիկ և լաւ օրեր ունեցանք: Մեր զբօսավայրը և երեխայոց մաքուր օդ շնչելու վայրն էր Լիւքսէմպուրկի պարտէզը: Բոլոր մայրերը իրենց ձեռագործներով հոն կը գային, թէ՛ իրենց փոքրիկներուն հոգ կը տանէին և թէ՛ կը գործէին. իրենց դպրոցական երեխաների ժամադրավայրն էլ էր այդ պարտէզը: Երրորդ պարտէզին մէջ կը գտնուէր Սէնատը (Ծերակոյտի շէնքը)· գեղեցիկ և փոքրիկ պարտէզ մը եւս կար հոն, ուր առաջնակարգ պտղատու ծառեր տնկըւած էին, պտուղները թղթերով փաթաթուած՝ ամէն օր պարտիզպաններու խնամքի տակ, անվնաս կը մեծ-

նային ու կը բաժնուէին անշուշտ ընտրեալներու միայն...։ Այդ մասը Անգլիական պարտէզ կը կոչուէր. ուր, ընդհանրապէս աւելի ոչ-Ֆրանսացիները կը հաւաքուէին իրենց ընտանիքներով և ստուերոտ ծառերի տակ մաքուր օդը կը վայելէին։

Պարիզի մեր մօտիկ բարեկամներն եղան Արմենակ Շահ-Մուրատեանն ու Տիգրան Դիմաքսեանը, ամուսնոյս Մշեցի աշակերտները։ Շահ-Մուրատեանը՝ ըստ ամուսնոյս փափաքին, լաւ ուսուցիչ մը գտաւ — Թիֆլիզեցի Պարոն Ա. Դաւիթովը, որ շատ անկեղծ ու նուիրուած ջութակի ուսուցիչ մը եղաւ իսկապէս։

Մի օր էլ իր աքսորավայրէն — Հնչակեան կուսակցութեան շնորհիւ — ազատուած՝ Մեծ-Մուրատն եկաւ, հասաւ Կեդրոն։ Մեր տունը հիւրասիրութեան վերջ՝ Կեդրոնի մէջ իրեն սենեակ տրուեցաւ, մինչեւ որ քոյրը՝ Հայկանոյշն էլ Եգիպտոսէն եկաւ և իր պաշտելի ու կարօտած եղբօրը հետ ապրեցաւ խաղաղ ու երջանիկ, ինչքան որ կարելի էր...։ Մեր շրջանակը թէեւ շատ սեղմ, սակայն ընտանեկան հաճելի, սիրալիր բոյն մը դարձաւ՝ մեր այդ բարեկամների հետ միասին։ Մանաւանդ երբ Տիգրանս ծնաւ, աւելի հետաքրքիր և մխիթարական օրեր ապրեցանք. մեր Ընկերներ՝ Արամը, Մուրատն ու քոյրը, որոնք դժբախտաբար զուրկ էին մնացած ընտանեկան օճախի մը վայելքէն ու սփոփանքէն, և դրա համար՝ մեզմով կ'ուրախանային, մեզմով էլ կը տխրէին։ Երբ Տիգրանս ծնաւ, Ընկերներ Մուրատ և Աչըգպաշեան՝ տեղեակ լինելով, որ անդրանիկ զաւակներս անուանակոչուած էին ամուսնոյս ծնողաց և մեծ հօրն անունով — այս անգամ ամուսնոյս ստիպեցին, որ իմ հօր անունը՝ Տիգրան՝ տրուի նորածինին։ Ու իրենք էլ որպէս վկայ՝ ստորագրեցին Ֆրանսական պաշտօնավայրը։

Սուգը բոլորին էլ պատեց, երբ Պոսթոն ծնած Գը-

րիգորս՝ ռուս բժիշկի մը անհեռատեսութեան պատճառաւ, վախճանուեց: Յուղարկաւորութեան օրը, Մուրատն ու Աչըրգպաշը շատ խնդրեցին ինձ, որ կարողանամ ես ինձ զսպել, «եթէ չեմ ուզեր որ ամուսինս խելագարի իր զգացած կսկիծէն»:

Գրիգորիս մահը մինչեւ որոշ տարիներ՝ ամուսինս յաջողեցաւ գաղտնի պահել մեր զաւակներէն՝ որպէս զի նրան շատ սիրելնուն վիշտ չի պատճառէր իրենց, այլ՝ «հիւանդ Գրիգորիկը ուղարկուած է գիւղ՝ առողջանալու և մեծնալու համար...» կ'ըսէր: Ահա՛ թէ ո՛րքան կը դողար նա իր զաւակաց վրայ՝ և ի՛նչքան զգայուն հայր մ'էր նա...:

Ամուսնոյս մտային գործը շատ էր. ո՛չ միայն խմբագրական գործը, այլ կարեւոր նամակներն իսկ ինքը պէտք էր թելադրէր կամ ինքը գրէր, եթէ շատ պատասխանատու էին. և յաճախ ինքը կը թելադրէր երընկերներ Արամին և Մուրատին, միաժամանակ, երկու տարբեր մտքերով, տարբեր տեղեր ուղղեալ նամակները...: Ուղեղի և յիշողութեան ի՛նչքան զօրեղ ուժ պէտք էր ունենար մէկը, որ երկու հոգու, միեւնոյն րոպէին, տարբեր նամակներ թելադրէր: Եւ ամուսինս իր այդքան մեծ շնորհքը բան չի համարելով՝ բարի նախանձով կուզէր Նաբոլէոնին նմանիլ, քանի որ, կ'ըսէր «Նաբոլէոն երեք հոգու միաժամանակ կըրնար նամակներ թելադրել»:

Մեծն Մուրատ և Օրիորդ Հայկանոյշ, տարիներով իրարու կարօտով մաշած քոյր ու եղբայր, այժմ իրենց երջանիկ բոյնն էին կազմած. Հայկանոյշը մեծ հոգատարութիւն ցոյց կը տար իր աւագ եղբօրը հանդէպ, եղբայրն էլ իր քրոջը: Նրանք կը բնակէին կեդրոնի վերեւի յարկը, Միեւնոյն բակին մէջ էլ մենք կ'ապրէինք, սակայն միշտ, իրարմով կը մխիթարուէինք, օտարներով հրջապատուած երկրի մը մէջ:

Հայկանոյշը, Եգիպտոս գտնուած ժամանակին, խօսք տուած կը լինի, Մուրատի ազատուելէն վերջ, Սաֆրաստեան աղքատիկ ընտանիքի անդրանիկ զաւկին, Երուանդին բարձր կրթութիւն տալ Ֆրանսայում, և այդպէս էլ եղաւ. Երուանդը եկաւ իրենց մօտ և տուներնին աւելի շէնցաւ. Երեկոները, երբ տղամարդիկ զբաղուած կը լինէին Կեդրոնի մէջ, մենք էլ մեր փոքրիկ ժամանցը կ'ունենայինք խօսելով, երգելով. Երուանդը «Եարիս տարա՛ն, ջանիս տարա՛ն, հօնֆուր հօնֆուր կուլամ ես» երգը շատ կը սիրէր:

Ամերիկայի Հնչակեանները Կեդրոնին պահանջ էին դրել գործիչի: Որոշուած էր Ալէքսան Տէր-Վարդանեանը (Պարսկաստանից) — Քանի որ սահմանակից էր ամուսնոյս ծննդավայրին, ամուսինս խնդրել էր Ալէքսանին, որ հանդիպէր Զահուկ և տեղեկութիւններ բերէր իրեն՝ իր տանը, կենդանի մնացած՝ քեռորդիների մասին ևն.: Ալէքսանը եկաւ, կրակոտ, պայքարող երիտասարդ գործիչ մ'էր նա, տեսել էր ամուսնոյս քեռայրին, (Իսրայէլ) և քրոջ աղջիկներին. Հետը բերել էր ամուսնոյս սիրած ու յիշատակներով լի այգիի թըփերից ու պարտէզի ծաղիկներից մի մի նմոյշ... որոնք մասունքի պէս պահուեցին և մեծ ափսոսանք պատճառեցին խռովեալ ու կարօտակէզ իր հոգիին...: Ընկեր Ալէքսանը մեկնեցաւ Ամերիկա:

Պարիզի մէջ ընտանեօք կը բնակէր նաեւ, յայտնի Բագուցի նաւթատէր՝ Համբարձում Մելիքեան, որ մեզ շատ մօտիկ բարեկամութիւն ցոյց տուեց և ընտանեկան փոխադարձ այցելութիւններ ունեցանք իրենց հետ: Սա փափաքեցաւ, որ իր չի մկրտուած աղջկան կնքահայրութիւնը ընդունի Ընկեր Մուրատը. Մուրատ չի մերժեց և մեր յարաբերութիւնները աւելի մօտիկցան...: Համբարձման Տօնին, Պարոն Հ. Մելիքեան, իր տանը սեղան տուեց, և իր ու իր կնքահօր (Համ-

բարձում՝ Մուրատ Պօյաճեանին) անուանակոչութեան տարեդարձը տօնեց։ Սեղանին հրաւիրուած էին Կոմիտաս վարդապետ, որը արդէն իրենց ամենամտերիմ բարեկամն էր — Արշակ Չօպանեան, Շահ-Մուրատեան, մի Ռուսահայ Եպիսկոպոս և բարձր դասու Հայ տիկիններ, (իրենց ազգական) և մենք։ Կոմիտաս Վարդապետ երգեց «Ցօրօվէլ»ը, ամուսինս խօսեց Մեծն Մուրատի մասին, Շահ-Մուրատեանն էլ իր ուսուցչին (ամուսնոյս) գովաբանեց իր մի քանի խօսքով։ Մեծարուած կերակուրներէն Հայկական Թանապուրը կերակուրների մէջ ամէնից շատը սիրուեց՝ մի խումբ, օտար աստղերի տակ հաւաքուած հայերիցս. և, լաւ ժամանց մը ունենալէ վերջ՝ բաժնուեցանք։

Մի օր, երբ Դ-գործիչ Ակնունին Պարիզ էր եկած, Հ. Մելիքեանի միջնորդութեամբ ու խնդրանքով իր տան մէջ հաւաքուեցին Մեծ Մուրատն, ամուսինս և Ակնունին. կուսակցական իրարահասկացողութեան փորձեր կատարեցին. սակայն, փորձը ձախողեցաւ և ընդհակառակը, աւելի խոր վիհ բացուեց երկու կուսակցութեանց միջև, ի մեծ ցաւ Մելիքեան Համբարձումի։ Ակնունին էլ լինելով Թիֆլիզի Ներսիսեան դպրոցի աշակերտ, շատ լաւ էր ճանաչում իր դպրոցական, ընդդիմադիր, վիճաբանող դասընկերոջը՝ Ստեփանին և ինչպէս այն ատեն, նոյնը և՛ այժմ, պարտուած էր՝ իր վիճաբանութեանց մէջ...։

Եկաւ Թրքական Սահմանադրութիւնը։ Տամատեան՝ արդէն Պոլիս լինելով, Պարիզ հեռագրեց մեր Կեդրոնի անդամներին, որ աճապարեն Պոլիս գնալու. գործ կայ կատարելու և «հաւանականութիւն իր Ռամկավար կուսակցութեան և Հնչակեանների միջև միութեան...»։ Մերոնք գնացին, բայց միութիւնը չը կատարուեց, «Սօցիալիզմի» պատճառաւ կրկին...։

Շատ հետաքրքրական են Պոլսից, իր գրած շատ-

շատ նամակները, որոնցից մի քանի հատուածներ՝ Պոլսոյ եռ ու զեռի այդ օրերուն։

«... Այսօր նաւերով դիմաւորեցինք Իզմիրլեանին. շատ երկար կը լինի նկարագրել այն մեծ խանդավառութիւնը, որ արեց ժողովուրդը՝ իր ընդունելութեան համար։ Նախկին Պատրիարքին տարանք, վերջապէս, պատրիարքարան. ճանապարհին եղած գոռում-գոչումները աննկարագրելի էին։ Իզմիրլեան առանձնացաւ մի րոպէ շունչ առնելու. պատուիրել էր ո՛չ ոքի ընդունելու. բայց մի Վարդապետ՝ ա՛յնքան սպասողների մէջ՝ մեր ներկայութիւնը տեսնելով ու ճանաչելով՝ իմաց էր տուել Իզմիրլեանին։ Մինչ այդ՝ մեզնից ճարպիկները ներս վազել էին իրեն տեսնելու. ինչ և է, կարգը եկաւ մեզ...։ Երբ անձամբ տեսաւ ինձ, այդ ծերունին, այդ ծիւրուած նախկին Պատրիարքը պատանիի մը պէս վեր թռաւ և վզովս փաթթուեց ու ճակատս համբուրեց. «Զաւակս, ճի՞շդ է, դո՞ւ ես Սապահ-Գիւլեանը*...»։ Ես չեմ մոռանալ այդ մարդուն ցոյց տուած գորովը, որ և իմ տանջանքների վարձատրութիւնը կը լինի։ Կ'ուզէի, Բերուզս, որ այդ տեսարանին այնտեղ լինէիր...»։*

Ուրիշ առթիւ։

«... Առաջին դասախօսութիւնս արեցի Կէտիկ-Փաշայի եկեղեցումը. երկրորդը՝ Գում-Գափուի մէջ. ժողովրդի ցնծութիւնը, ծափերի որոտումը անկարելի է նկարագրել...։ Բերայի եկեղեցին էլ ժողով արեցի. բազմութիւնը աննախընթաց էր, ամէն ազգէ և ամէն դասէ. այդ օրը աչքերովս քեզ շատ փնտռեցի, որ դու էլ մխիթարուէիր, դու՝ որ իմ չարչարանքների մեծ բաժինը ուսերիդ վրայ ես տարել...։

«Մօտս եկաւ Հօրաքրոջդ տղան, Գրիգորը և իրենց տունը տարաւ. ինքն էլ Հնչակեան է եղել. մի քանի

ժամ, ընտանեկան յարկի տակ, քաղցր ժամեր անցկացըրի, երբ, մանաւանդ, քո մանկութեանդ դրուագները կը պատմէր հօրաքոյրդ: Շատ մեղադրեցին ինձ, որ հետս չեմ բերել քեզ:

«Մի օր էլ, Սամաթիացի տաք-գլուխ, դպրոցական շրջանաւարտներ՝ Կէտիկ-Փաշա մեր Կեդրոնը եկան, պահանջ դրին. կառքը բերին և ստիպեցին որ երթամ. ես էլ շատ էի յոգնած, ուզեցի մերժել, անկարելի եղաւ. «միայն կէս ժամ կը խօսիս, այդ ալ բաւական է» ասացին, ու գնացի Սամաթիա...: Տեսայ քո պտտած տեղերը, որ ինձ համար էլ շատ սիրելի էին. սիրտս փղձկեց, երբ քո մանկութեան վայրերը և քո ուսած ու պաշտօնավարած դպրոցը տեսայ ու պտըտեցի...: Ահագին բազմութիւն եկաւ, «կէս ժամը» դարձաւ ժամեր...: Ժողովուրդէն մի քանի կիներ եկան մօտս և ըսին թէ՝ «ահա՛ այդ քո կանգնած-խօսած տեղէն Բերուզն ալ իր ոտանաւորները, ճառերն է արտասաներ...: Խարախանեան Վարդապետն էլ եկաւ մօտս. Լաղօն էլ իր կնոջ հետ Պոլիս եկան: Ուսանող շատ ընկերներիս էլ եմ հանդիպում այստեղ»:

Հնչակեան Սապահ-Գիւլեանը, Պոլսոյ մէջ, ամէնից աչքի ընկած և յարգուած բանախօսը դարձաւ. Պոլսեցի ընտրանին մագնիսացաւ իր խօսքերից, ամէն դասակարգի Հայ հիացաւ իր բանախօսութեանց վըրայ...: Ներկայ գտնուած Թուրքերն իսկ, խօսուածի միտքը մէկու մը օգնութեամբ հասկնալէ յետոյ կը ծափահարէին, կ'երթային ձեռքը կը սեղմէին և «ամենալուսաւոր հայը» կը նկատէին իրեն...: Զարգացած Հայերն էլ՝ անսիֆլօփէտի կը կոչէին:

Պոլիս կը գտնուէին նաև աննման Ընկերներ Փարամազն ու Ասօն և ուրիշներ, որոնք շատ աշխատել էին դրամ մէջտեղ բերել, թերթ հրատարակել, Կուսակցական Կեդրոնը Պոլիս փոխադրել ևն. ևն. — բայց

չի յաջողեցան . . . :

Ամուսինս «Թրքական Սահմանադրութեան» չի հաւատաց առաջին մէկ օրէն իսկ. և կոչեց զայն «պոչատ»: Նա համոզուած էր թուրքի անհաւատարմութեան, հայաջինջ քաղաքականութեան սկզբունքին և երբեք չէր ուզիլ, որ Կեդրոնը փոխադրուէր Պոլիս:

Ես, Պարիզում, կը բնակէի Կեդրոնի վերնայարկը — Կեդրոնը Campagne Premiereից փոխադրուած էր Mont-Sourisի պողոտան: Ընկերներ Արամ և Մամիկոնեան կը վարէին կուսակցական թեթեւ գործերը: Դրամ չը կար՝ որ ինձ վճարէին. տունս մնացած էր անխնամ. ո՛չ վառելիք կար, ո՛չ ուտելիք. այդ պատճառաւ էլ՝ սաստիկ պաղառութեան հետեւանքով՝ Տիգրանս մահամերձ հիւանդ ընկաւ, բժշկի խորհուրդով՝ խնդրեցի Ընկեր Աչըրդպաշեանէն, որ ամուսնոյս հեռագրէ Պոլիս, որպէս զի հասնի իր զաւկի սնարին մօտ: Նա կմկմաց, չի համաձայնուեց. նոյնը և՛ Մուրատի քոյր Հայկանոյշը հակառակեցաւ, որ «անկարելի է Պոլսոյ գործերը թողած Սապահը Պարիզ վազէ». սակայն ես պնդեցի, իմ ծանր պատասխանատուութեանս հեռանկարով. և երեք օրէց, ամուսինս հասաւ տուն. բարեբախտաբար տղան դէպի լաւը դարձել էր և շուտով լաւացաւ. սակայն մեր տան աննախանձելի վիճակը ամուսնոյս սիրտը շատ կոտրեց. ու, «ա՞յսպէս պիտի հոգայիք ձեզ» ըսելով, չաճապարեց Պոլիս յետ դառնալ, այլ սպասեց, որ մի ուրիշ զաւկին Նանասիխս ծննդեանը գոնէ ներկայ լինի ու յետոյ դառնայ կրկին գործի գլուխ . . . : Այս զուտ ծնողական, ամուսնական պարտականութիւնները բացատրուեցան թշնամանօք և, «հակառակորդ քլիք»ի մը ստեղծման նպաստեցին:

Երբ ես ապաքինման ճամբուն մէջ էի, խեղճ ամուսինս, այն ցրտին ու ձմեռին (Յունվար) կրկին մեզ թողեց ու մեկնեցաւ Պոլիս՝ Իզմիրի ճանապարհով, որ-

Պարիզ — Աջէն ձախ՝ Դանիէլ, Սապահգիւլ և
Գրիգոր (վախճանած)

պէս զի մի քիչ դրամ հասցնէր մեզի...: Ահա իր մի քանի տողերը՝ Իզմիրից:

«... Ընդհանուր կուսակցական և տեղական գործերի տեսակէտից՝ արդիւնաւոր եղաւ այստեղ գալս. մի քանի օր ման եկայ Գասապա, Մանիսա և երկու օր հիւանդացայ: Քաղաքական կացութիւնը ծանր կերպարանք է ստացած. իրերը վերին աստիճանի խառնակ վիճակ ստացան: Տիկինները խնդրեցին իրենց համար յատուկ ժողովներ կազմել: Այստեղ ինքնապաշտպանութեան ենք պատրաստւում...:

«Պարոն Լորիս-Մելիքեանի նամակը ստացայ: Լաւ ընկերներով եմ շրջապատուած, հոգ չանես...: Այսօր առաւօտեան մեռաւ մեր նախկին ընկեր՝ Պօղոս Հալաճեանը. երէկ մօտն էի... խեղճը ա՜խ էր քաշում, թէ ե՞րբ պիտի առողջանայ և դասախօսութիւններիս գայ...: Կինը, խելայեղ վիճակի մէջ, եկեղեցին, պոռաց, երբ ինձ տեսաւ և իր չորս որբերը առաջս նետեց «տե՛ս, տե՛ս» աղաղակելով...: Եկեղեցին ամէնքն էլ, ամբողջ հասարակութիւնը լացեց... ես էլ չը դիմացայ. ամբողջ գիշերը ջիղերս ցնցուեցին...»:

Ուրիշ առթիւ:

«... Ստացայ քաղցրիկ նամակդ. որը մի քանի
անգամ կը կարդամ. այնքան գիտեմ, որ կեանքը՝ իր
անբաժան դառնութիւնները ունենալով հանդերձ՝ ունի
նաեւ իր քաղցր վայրկեանները. և այդ վայրկեաննե-
րը ես այժմ փնտռում եմ նամակներիդ մէջ: Գալէս ի
վեր, անդուլ անդադար աշխատել եմ: Կեդրոնի դրու-
թիւնը, գործերի վիճակը, քո տանջանքներդ — բոլորը
աչքիս առաջն են և աշխատում ու գերմարդկային ճի-
գեր եմ թափում ամոքելու այդ բոլորը. բայց՝ չի նա-
խատեսուած այնպիսի դժուարութիւններ են յառաջ
գալիս, որ դրանց յաղթելու համար՝ պէտք է գործել,

համբերել և դիմանալ: Դառնութեան անտանելի րոպէներ շատ ունեցայ, որոնց միայն ես կարող էի համբերել և գործ յառաջացնել...»:

Պոլիս անցնելէ վերջ՝ իր գրած նամակներից մի քանի նմուշ:

«Պոլիս գալէս վերջ՝ մի քանի օր հիւանդացայ. «Կէտիկ Փաշայ»ի տանն ենք. նոյն տանն են գտնւում Փարամազը, Սեբաստացի Մուրատը, Արծրունին:

«Սսոյ Կաթողիկոսի (խապայեան) տեղապահը՝ Ղեւոնդ Վարդապետ՝ մօտս եկաւ, իր հետ բերել էր, 1890ին, Պէյրութի մէջ քաշել տուած իմ պատկերս: Շատ պիտի հաւանես. մազերս դեռ նոր են սկսել թափուել. ունիմ թաւ մօրուք... սա ամենամեծ նուէրն է ինձ համար: Զուգարկեցի քեզ, քանի որ դալդ մօտեցաւ...:

Ուրիշ առթիւ:

«... Ես մոռացայ ինձ, մոռացայ կինս ու զաւակներս՝ հասարակական գործի համար, և Արամեանց քլիքը ա՛յնքան ստոր գտնուեց, որ գրիչս չի զօրում մի բառ անգամ գրել, ա՛յնքան որ զզուեցրին...: Այդ բարեմիտները աշխատում էին լեզուս փակել, գրիչս կաշկանդել, որ հրապարակի վրայ չերեւիմ. բայց երէկ ձայնս լսեցնել տուեցի ժողովրդին, որ վերին աստիճանի պոռ մնաց. քանի որ խօսածս նիւթը աւելի քան հետաքրքրական էր — «էմմանուէլ Կանտի» մասին էր:

«Ես մինչեւ վերջ հաւատարիմ կը մնամ իմ ընդգրկած դրօշիս. ո՛ւր, և ի՛նչ տեղ էլ որ լինեմ, իմ սիրելի գաղափարներիս պաշտպանը կը մնամ:

«Կա՞րող ես երեւակայել, որ Մ.ի քոյրը այստեղ, իմ մասին տանտիրուհուս ասել է թէ՝ «Սապահը կնոջը



Ս. ՍԱՊԱՀ–ԳԻՒԼԵԱՆ (ՊԵՏՐՈՍ ԿԻՒՐԵՂԵԱՆ)
Պէյրութ Նկարուած

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

շատ կը սիրի, նրա խօսքից դուրս չի գալ. ղուկին հիւանդութեանը համար՝ երբ կինը հեռագիր քաշեց, մարդը գործը թողեց, վազեց, գնաց...»: Նա էլ պատասխանել է «հա՞պա, մարդ իր կնոջը չը սիրի, չը լսի, քե՞զ պիտի լսի. ամօթ չէ՞ որ այդպէս կը խօսիս»: Իսկ Մ. էֆէնտին ուղղակի արշաւանք է կազմակերպել տուել իմ դէմ, իր ձեռքի տակն է առել Շւոտը (մատնիչ Արամեանց) և մի քանի պնակալէզներ, ու պրօպականտա է անել տալիս ընդհանրապէս Ռուսահայերի, մասնաւորապէս՝ իմ դէմ: Մի տեղ, ծածուկ, ուղարկուել է Շւոտը՝ իմ դէմ խօսելու համար: Ընկերները յարձակում են գործել իր վրայ. Ալֆարիստները նրան պաշտպանել են. իսկ ինքն էլ, միամտաբար խոստովանել է՝ որ «ընկեր Մ.նն ալ իմ կարծիքէն է, մեզ հետ է...: Ռուսահայերէն մի անգամ ընդ միշտ պէտք է ազատուինք, այսպէս չի բլլար...»: Սրանք ուզում են Կուսակցութիւնը դարձնել բարեգործական ընկերութիւն կամ իր սկզբունքներից շեղեցնել...»:

Երկրորդ անգամ, Տիգրանս Պարիզում ծանր հիւանդացաւ, երբ Պոլիս գնալու ճանապարհածախս ուղարկել էր ամուսինս — կրկին հեռագրեցի իրեն, երբ բժիշկը յուսահատել էր. բայց չի կրցաւ գալ, որովհետեւ նիւթական միջոց ձեռքին չունէր, և մանաւանդ որ՝ մենք պիտի գնայինք Պոլիս — հրաշքով, կրկին ազատուեց տղան. սակայն մի, երկու ամիս յետաձգուեց մեկնումս, բժշկի խորհրդով: Ահա թէ ի՞նչ կը գրէ ամուսինս, երբ նամակ-բացատրութիւններս կ'ըստանայ ինձնից:

«... Երեխայիս հիւանդութեանը երբ հեռագրովդ տեղեկացայ, ջիղերս թուլացած՝ ուրուականի նման, նամակիդ էի սպասում. ինձ համար ո՛չ արեւ կար, ո՛չ էլ կեանք. ամէն ինչ մեռած էր: Երբ խորհում եմ՝ թէ ընտանիքէս հե-ես ի՞նչու այսքան պէտք է տանջուեմ,

ռու չարչարուեմ, երբ իմ ընկերները դաւաճան, անըղձայ դիրքերի մէջ են մտնում, վայելում են կեանքը... մինչդեռ ինձ դրել են անտանելի դրութեան մէջ..., որոշում եմ, որ այլեւս չի պէտք բաժնուիմ բալաներիցս, երբ բախտն ունենամ մէկ էլ գրկելու իրանց...»:

Երբ բժիշկը Թողլատրեց ճանապարհորդութիւն, պատրաստութիւններս տեսայ և հեռացանք Պարիզից, սրընթաց շոգեկառքով՝ դէպի Պոլիս...: Մեզ ճամբու դրին ուսանող ընկերներ Տիգրան Դիմաքսեան և Արշաւիր (Ռուսահայ):

Պոլսոյ Սիրքէճիի կայարանը մեզ դիմաւորելու եկել էին ամուսինս և դեռ ինձ անծանօթ՝ իր ընկեր բարեկամները — իրարից անբաժան՝ Փարամազն ու Ասօն — որ մեզ առաջնորդեցին, ըստ նախօրօք կարգադրութեան, Բերա՝ հօրաքրոջս տունը: Երկու օր հոն հիւրասիրուելուց յետոյ՝ Տիֆլիում, Փարամազը մեզ համար 2, 3 սենեակով կահաւորուած մի յարկ վարձեց: Մօտիկից տեղեկանալով, տեսայ որ նիւթական շատ անմխիթար կացութեան մէջ են գտնւում...: Չկայ թերթ, չկայ գործ. երկուսի էր բաժնուած Հնչակեան Կուսակցութիւնը. Տաճկահայերը հեռացած և Շւոտի հետ միացած՝ տարբեր ուղղութեամբ կը գործէին...: Ամուսինս ճարահատ մի, երկու չէզոք ակումբների մէջ (Գատը-Գիւղ) դասախօսութիւններ կը սարքէր և Նսայեան վարժարանը կ'ուսուցանէր իր պատառ հացը կը ճարէր, միանգամայն բաժին հանելով իր անկեղծ ու հաւատարիմ երկու ընկերներին, Փարամազին ու Ասօին: Դա հերիք չէր և Տիֆլիի մէջ մեր երեխայոց հիւանդութիւնները անպակաս եղան. բայց գտնուեցին էլ Տօք. Գրիգոր Ճէլալի նման ազնիւ բժիշկ ընկերներ, որ չի զլացան իրենց խնամքները: Երեխաներիս առողջութիւնը տեղը եկաւ հեղհեաէ, երբ փոխադրուեցինք

ԸՆԿԵՐ ԱՋԱՐԻԿ ԳՈՒԼՈՅԵԱՆ

Գահիրէի մէջ (Եգիպտոս) ինը տարի առաջ նկարուած

Հալէպի (Իշխանաց կղզիներէն մին)։

Մի օր էլ՝ 1910ին Պոլսոյ մէջ կայացաւ Հնչակեան Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը։

Այս Պատգամաւորական Ժողովին ներկայ են եղած Տիգրանակերտի Պատգամաւոր կարող Ընկերներ Կարապետ Զրաճեան և Ազարիկ Գոլոյեան։ Ահա՛ Ընկեր Գոլոյեանի նկարագրութիւնը՝ այդ ժողովին մանրամասնութեանց, ուր կ'երեւին այն ժամանակուայ ընկեր կոչուածներու, հերոս նկատուածներու հոգեկան ու մտային դրութիւնը ու այն դժուարութիւնները, որոնց հանդիպած է խեղճ Սապահը ու պայքարած... ի սէր Սուրբ Գործին։

17 *Յուլիս*, 1929
Գահիրէ, Եգիպ.

Համեստափայլ

Այրի Տիկին Բ. Սապահ-Գիւլեան

Յարգելի Ընկերուհի,

Ձեր 29 *Մայիս* 1929 *թուականը կրող նամակը ժամանակին ստացած եմ։ Պատասխանը գրելու համար ստիպուած եղայ սպասել մինչեւ վարժարանական ըղբաղումներուս լրումը. այս օրեր ահա ի վիճակի կ'ըլլամ Ձեզի պատասխանելու։*

Կ'ուզէի օգտակար ըլլալ Ձեր ձեռնարկին՝ տալով Ձեր սպասած տեղեկութիւնները, մանաւանդ պարտականութիւն կը համարեմ զայն ընել. սակայն, այն իրողութիւնները, որոնք թաւալած են մեր Ընկերոջ, հանգուցեալ Սապահ-Գիւլեանի և ուրիշներու շուրջ, այսօր գրեթէ քսան տարիներու ետին կը գտնուին, և յիշողութիւնս այլեւս չօգներ ինծի, ճշմարտութիւնները տրամաբանող բոլոր մանրամասնութիւնները Ձեզի

հաղորդելու, երեւան հանելով Հմայեակ Արամեանցի բոլոր մեքենայութիւնները:

Եթէ չեմ սխալիր, 1910 Յուլիսին, ես և Կարապետ Զրաճեան, երբ, իբրեւ Տիգրանակերտի և շրջականերու Պատգամաւոր, Մէսաժըրիի «Նիկէր» շոգենաւով Պոլիս, Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Տաճկաստանի Առաջին Պատգամաւորական Ժողովին կ'երթայինք, մեր շոգենաւը վեց ժամու չափ ստիպուած էր Իզմիրի առջեւ սպասելու: Օգտուելով այս պատեհութենէն՝ քաղաք ելանք, և հոն Ընկեր Սապահ-Գիւլեանին հանդիպեցանք՝ ընկերոջ մը վաճառատան մէջ: Զը պահեցինք անկէ մեր շրջանին ծանր դժգոհութիւնները, որոնք առաջ եկած էին՝ հանդէպ Տաճկաստանի Կեդրոնական Վարիչ Մարմնոյ (Արամեանց վարչութեան)· այս դժգոհութեանց գլխաւոր շարժառիթն եղած էր «բաց ու գոց»ի խնդրոյն մէջ, նոյն Կեդրոնական Վարիչ Մարմնոյն՝ ուրիշ կուսակցութեան մը շատ մօտէն հետեւողական ըլլալը: Մեր շրջանը այն համոզումն ունեցած էր թէ Ս. Դ. Հնչակեան Կեդրոնական Վարիչ Մարմնոյն և ակնարկուած կուսակցութեան միջեւ կողմնակի մտերմութիւն մը կը մշակուէր, Հ. Արամեանցի և Ռ. Զարդարեանի մտերմական գաղտնի յարաբերութիւններուն միջոցաւ: Ուրեմն, մեր Կուսակցութեան մէջ անտեսանելի օտար մատ մը կը շարժէր՝ մեր Կուսակցական գործերուն ուղղութիւններ տալու յաւակնութիւններով:

Ընկեր Սապահ-Գիւլեան մեր դժգոհութիւններն իրաւացի գտաւ, բայց յայտնեց թէ ինք տրամադրութիւն չունէր Պատգամաւորական Ժողովին ներկայ գտնուելու, քանի որ Կեդրոնական Վարիչ Մարմինը՝ զինքը և իր Ընկերները (Փարամազ, Սիւնիք, Ասօ) չէզոքացուցեր էր Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան Տաճկաստանի գործերէն: Մենք թախանձեցինք որ ներկայ ըլ-

լայ հոն, ու մենք կարենանք լսել խորղութիւնները երկու կողմերէն ալ, և վիճաբանութիւնները չըլլան միակողմանի:

Նոյն օրը Պոլիս մեկնեցանք:

Պատգամաւորական Ժողովը իր նախապատրաստական աշխատութիւններուն սկսած էր, բայց դեռ Ընկեր Սապահ-Գիւլեան հոն չէր. Իրաւաբանութիւն ուսանող Ընկեր Ժիրայրին (Միրզայեան ըլլալու է մականունը) թելադրեցինք որ հեռագրուի Սապահին որ շուտով Պոլիս հասնի: Այդպէս ալ եղաւ:

Վկայականներու օրինական ճշդումները կատարուեցան: Մենք Ուրֆայէն ու Սեւերեկէն աւելի ձայներ ունէինք, և զանոնք Ընկեր Սապահի փոխանցեցինք: Կեդրոնական Վարիչ Մարմինի կողմէ Արամեանցի բերնով մերժեց անոր և ուրիշի մ'ալ պատգամաւորութիւնը — առարկելով որ անոնք ամբաստանութեան տակ են, հետեւաբար չեն կրնար պատգամաւորի իրաւունք վայելել:

Խնդիրը, ուրեմն, ինքնաբերաբար սեղանի վրայ ելած էր, ու վիճաբանութիւնները կ'ըսկսէին իսկոյն:

Մենք կը պնդէինք թէ ա՛յլ է ամբաստանութիւնը, ա՛յլ է իբրեւ յանցաւոր դատապարտութիւնը, մէկը կրնայ ամբաստանուիլ, սակայն չենք կրնար ընդունիլ թէ ան անպատճառ պիտի դատապարտուի, մէկը իր իրաւունքներէն կը զրկուի իր դատապարտութենէն յետոյ. արդ, Սապահ և Ընկերները, պէտք է վայելեն իրենց ընկերական բոլոր իրաւունքները, մինչեւ որ հաստատուի թէ անոնք յանցաւոր են կուսակցական Օրէնքբու համաձայն, և զրկուին ընկերական իրաւունքներէ:

Կեդրոնական Վարիչ Մարմինը կը պնդէր իր տեսակէտին վրայ, յենլով այն կանոնագրին վրայ, զոր

ինք պատրաստած էր, և որ Պատգամաւորական Ժողովի բովէն անցած չէր դեռ։ Վիճաբանութիւնները այս ուղղութեամբ շարունակուեցան, և պահանջուեցաւ որ Կեդրոնական Վարիչ Մարմինը իր ձեւակերպած ամբաստանութիւնները Պատգամաւորական Ժողովին ներկայացնէ։ Ասով, չէզոքացումներու հարցը կ՚ըլլար օրակարգի առաջին խնդիրը։

Արամեանց, ոտքի վրայ, երկարօրէն խօսեցաւ, ճառ մըն էր խօսածը, որուն մէջ որքան որ կը յիշեմ ո՛չ ինչ կար իբր դրական փաստ՝ որ դատաճանական ընթացքներ ապացուցանէր ընդդէմ ամբաստանեալներու։ Այս ճառէն յետոյ, Նախագահը, Գ. Օզանեան, ժողովը փակեց։

Յաջորդ առտու, ժամը 9ին ժողովը վերսկսաւ, բայց մանաւանդ իսկ չէր կրնար առաջ անցնիլ, հակառակ որ անմիջական քուէարկութեամբ մը Կ. Վարիչ Մարմինը փակելու կ՚աշխատէր, չէր կրնար, որովհետեւ չէզոքացուածներու պատգամաւորական ձայն տըրուած էր, և մենք կրթնած մեր շրջաններուն անդրդուելի կամքին, չէինք կրնար փոխել։ Կարգ մը վիճաբանութիւններէ յետոյ պահանջեցինք որ Ընկեր Սապահ-Գիւլեան իր պաշտպանողականն ընէ։

Ընդունուեցաւ։ Սապահ վեր կեցաւ, ու սկսաւ իր ճառը. խօսեցաւ խոր լռութեան մէջ, Արամեանց անհանդստութեան նշաններ ցոյց կուտար՝ մերթ տկար ընդմիջումներով. տեւեց այս ճառը առաւել քան մէկ ու կէս ժամ. տպաւորութիւնը նպաստաւոր եղած էր, և մենք աւելի զօրացանք մեզ հետ ունենալով ուրիշ պատգամաւորներու համաձայնութիւնը։ Այս երկրորդ ժողովն ալ վերջ գտաւ, կէսօր էր։ Կէսօրէ յետոյ որոշուեցաւ մասնաւոր խորհրդակցութիւն մը կատարել, այս խնդրոյն, անպաշտօն եղանակաւ, ելք մը գտնելու, որպէս զի Պատգամաւորական Ժողովը կա-

րենայ իր ընթացքը շարունակել։

Երբ կէսօրուան ճաշին կ՚երթայինք, Երրորդութեան եկեղեցիին արտաքին դռնէն հազիւ դուրս ելած էինք, աջ կողմս գտայ Արամեանցը։

— Հայրենակից, խօսի՛նք քիչ մը, դուք այս մարդիկը այսքան կը պաշտպանէք, սակայն գիտցէք որ ասոնք կուսակցութեան շատ վնասակար տարրեր են, թէ՛ իբրեւ մխող և թէ՛ տեսակէտներով անիշխանական, այսպիսի վտանգաւոր տարրեր պաշտպանելու տեղ ի՞նչու կուսակցութեան վնասներուն վրայ չէք մտածեր, *ըսաւ*։

— Ընկե՛ր Արամեանց, *պատասխանեցի*, այս մարդիկը ինձմէ և քեզմէ առաջ արդէն Ս․ Դ․ Հնչակեան եղած են, և որպէս Հնչակեան գործած են․ եթէ արդարեւ ձեր ըսածին պէս *անիշխանական* եղած ըլլային, ի՞նչ հարկ կար որ Ս․ Դ․ Հնչակեան անունը իրենց վրայ առնէին և լէկալ գետնի վրայ գործելու տրամադըրուէին։ Մենք կը պաշտպանենք զանոնք այն հաւատքով ու վստահութեամբ թէ՝ կուսակցութիւնն է՝ որ կը պաշտպանենք, և ոչ թէ անոնց անձը, եթէ ոչ, պէտք էր ձեզ պաշտպանէինք, որպէս հայրենակից…։ Գիտցէ՛ք, ընկեր Արամեանց, թէ՝ անոնք անհրաժեշտ են այս կուսակցութեան համար․ ասիկայ մեր վերջին համոզումն ու վերջին խօսքն է միանգամայն…։ *Բաժնուեցանք։*

Կէսօրէ յետոյ՝ տեղի ունեցաւ սահմանափակ Պատգամաւորներու միջեւ մասնաւոր խորհրդակցութիւնը, որուն մասին ըսինք վերը։ Հոդ ալ խնդիրը շատ ծեծուեցաւ, չեմ յիշեր անցած դարձածներէն ոչ մէկ խօսք, միայն գիտեմ թէ, պնդումը զոր մենք դրած էինք, պնդում կը մնար, և համաձայնութեան ո՛եւէ եզր գըտնել անհնար եղած էր։ Մէկ յոյս մնացած էր միայն՝

ան ալ Կեդրոնական Վարչութիւնն (Փարիզ) էր։

Հետեւեալ օրը տեղի կ'ունենար երրորդ նիստը, որ պիտի զբաղէր դարձեալ միեւնոյն խնդրով, վիճաբանութիւնները նոյն թափով առաջ տարուեցան. այդ միջոցին, Սիւնիք վեր կեցաւ, և ռուսերէն լեզուով ցնցող հայհոյութիւն մ'ուղղեց Արամեանցի, չմոռնամ յիշելու որ Արամեանցի կինն ալ ներկայ կ'ըլլար միշտ ժողովներուն, մենք ոչինչ հասկցանք, իսկ հասկցողները քրքիջներով լեցուցին սրահը. Արամեանցը ըսաւ «Ընկեր Նախագահ, կը բողոքեմ Սիւնիքին դէմ...»: Այն ատեն հասկցանք, որ անհամ զաւեշտ մը տեղի ունեցած էր...։

Այս վիճաբանութիւններուն ընթացքին Ընկեր Վարագդատ վեր կեցաւ և ըսաւ — «ես, որպէս Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Փարիզի Կեդր. Վարչութեան լիազօր ներկայացուցիչը, Տաճկաստանի Շրջ. Վարիչ Մարմնոյ այս չէզոքացումներու որոշման դէմ վէթօ կը դնեմ»: Ասիկայ վերջ տուաւ վիճաբանութիւններուն և մեր տաղնապալից դրութեան, որովհետեւ քայլ մը մնացած էր՝ որ ժողովէն դուրս գայինք։

Ժողովը մտաւ իր բնականոն ընթացքին մէջ, և աւելորդ է ըսել թէ՝ Տաճկաստանի մեր Կուսակցական գործերը Արամեանցի միահեծան ազդեցութենէն դուրս եկան, որով, Ընկեր Սապահ-Գիւլեան, կրկին գործի գլուխ կանչուեցաւ՝ Հնչակեան Շրջանի քուէներով։

Խորին Յարգանօք՝

ԱԶԱՐԻԿ ԳՈԼՈՅԵԱՆ

Պոլսոյ մէջ, Հնչակեան օրգանի մը կարիքը զգալի էր. որոշուեցաւ որ ամուսինս Շրջանն ելնէ և Թերթի հրատարակութիւնն ապահով հիմերու վրայ դնէ։ Թերթի անունը արդէն որոշուած էր, Հալքի կոչում, մեր

տանը — Սիւնիքը մկրտեց զայն «Նոր-Աշխարհ» անունով: Եւ ամուսինս մեկնեցաւ Փոքր-Հայք, Դանիէլիս Բերայի Գերմանական դպրոցը ուղարկելով և դիշերել տալով՝ Բերայի Հնչակեան Ընկեր Պալասանեանի տանը. որովհետեւ տղայի համար շատ դժուար պիտի լինէր մէն-մենակ Պոլսէն Կզզի երթեւեկել ամէն օր: Որով, մենք իսկապէս մնացինք որբ ու անտէր: Ամուսնոյս բացակայութիւնը շատ ճնշեց մեզ. երբ ինքը տանը կը լինէր, կեանք կ'ըստեղծէր, ոգեւորութիւն կը բերէր տան մէջ, ո'և է մի բան պատմելով, կամ զաւակներին երգել կամ նուագել տալով: Թէեւ երբեմն էլ, եթէ ո'և է պատճառով դուրսը նեղուած, բարկացած կը լինէր, չէր խօսեր, իսկ հացի ժամանակ, յոնքերը պռստած, գլուխը կախ, անխօս, միայն ուտելով կ'ըզբաղուէր. և չնչին պատրուակ մը գտնելով՝ երեխայոց վրայ կը պոռար, կը յանդիմանէր մէկն ու մէկին. և մթնոլորտը ծանր ու տխուր կը ճնշէր մեզ...:

Ամուսնոյս Փոքր-Հայքի նամակներից նմոյշներ:

Մարգուան.— «Ադամեանենց տանն եմ. պատուական Ընկեր և պատուական ընտանիք: Պատերազմի (թրքօ-պուլկար) պատճառով, այս կողմերս դրամական ճգնաժամ կայ: «Նոր-Աշխարհ»ի համար ջանք չեմ խնայում, որպէս զի Ցունուարին կարելի լինի դուրս բերել: Մեկնում եմ Սիմ-Հաջի գիւղ, ապա Ամասիա: Թէեւ այս կողմերը հանդարտութիւն կայ, բայց ամէն ինչ մակերեւութային է: Ժողովրդի պաշտպանութեան գործը յառաջ եմ տանում. ամէն բան բացատրելուս՝ այժմ բաւական սթափուած է ժողովուրդը և գալիքի վրայ խորհիլ սկսել է, ինչպէս նաեւ միջոցներ ձեռք է առնում:

«... Փոստի օր է. սպասում եմ նամակիդ: Ունեցայ մի քանի հրապարակային ժողովներ. երկսեռ հասարակութիւնը, հաղարներով, դահլիճ է թափւում՝

լսելու, լացելու, խրախուսուելու: Աշակերտ-աշակերտուհիներ հազարից աւելի, խնդրեցին որ իրենց առանձին դասախօսեմ, ինչ որ ուրախութեամբ արեցի և մանուկ սերունդը մղեցի դէպի մի ուղի, որ ժամանակին իր արդիւնքը պիտի տայ: Երկու-երեք հարիւր Հնչակեան անդամակցող կիներ և աղջիկներ էլ ունենք, որոնց համար էլ, երէկ խօսեցի:

«Դպրոցները այցելեցի, շատ հետաքրքրական էր Թուրք աշակերտների՝ հայերէն լեզուով՝ աշխարհագրութիւն, պատմութիւն պատմելը, սահուն, պայծառ առոգանութեամբ: Լաւ խմբուղիներ կան, շրջապատուած եմ լաւ, քաջ ընկերներով, երբ ճանապարհորդում եմ: Մարզուանը իսկապէս մի գեղածիծաղ տեղ է»:

Ամասիա.— «Անցայ հրաշագեղ դաշտավայրերով, շրջապատուած լեռնաշղթաներով. որոց իրարու կպչող բերանը երբ հասանք, բացուեց մեր առաջ՝ մի հովտաձեւ ձորակ այգեզարդ: Բնութեան այդ հրաշալիքներից անցնելով, մի ժամ վերջ, տնակի մը առջեւ հասանք, ուր մեր յառաջապահ ընկերներն էին, որ մեծ ուրախութեան աղաղակներ բարձրացրին, հնչեցրին սուր փողի ձայն, և կառքը յառաջ անցաւ դէպի մի ընդարձակ մարգագետին, ուր՝ շարէ շար՝ կանգնած էին ընկերները բազմաթիւ կառքերով: Գետինը գորգեր էին փռել, նստեցինք ու վայելեցինք Ամասիայի հռչակաւոր կեռասը: Ամէն ազգի և կուսակցութեան ներկայացուցիչներ ընդառաջել էին և ընդունելութեան մասնակցել: Յետոյ գնացինք մեր ակումբը, որ շատ ճոխ կերպով զարդարուած ու կահաւորուած էր. ներսը անհատին բազմութիւն ընկերների: Մի քանի խօսք արտասանելուցս յետոյ՝ ցրուեցին, երեկոյեան դասախօսութեան գալու պայմանաւ. նիւթս պիտի լինի «Փարլամէնտարիզմ և Սօցիալ Դէմօկրատիա»:

«Սիմ-Հաջի գիւղ երբ հանդիպեցի, որը Գայմա-

դամանիստ քաղաք է, ժողովրդական հոծ բազմութիւնը «Հեռաւոր Երկիր»ը թնդացրեց․ Եկեղեցիների զանգակները հնչեցրին․ դպրոցական աշակերտներ՝ իրենց ուսուցիչներով, այցելուներ՝ ամէն դասակարգէ և հոսանքէ։ Գիշեր-ցերեկ բանախօսութիւններ տուեցի, ուր՝ առաջին անգամն է եղել, որ երկսեռ եղաւ։

«Մի քանի օր թէեւ տկարացայ, բայց ժողովրդի այս խանդավառութիւնը ինձ 'ուղղակի դրել է ջղաձգութեան մէջ․ խե՛ղճ ժողովուրդը շատ մե՛ծ յոյսեր ունի դրած վրաս․․․, դրա համար է՝ որ իմ չարչարանքը, տառապանքը, յոգնութիւնը այս ժողովրդի համար՝ իմ քաղցր պարտականութիւնս կը լինի․ ամէն ցաւ մոռանում եմ․ հապա՛ մամիկների «բարո՛վ եկար, հազա՛ր բարի» անկեղծ, հարազատ սրտի արտայայտութիւննե՞րը․․․։ Սեբաստացի Ընկեր Մուրատը հետս է ամէն տեղ։ Ժողովուրդը տնտեսական լաւ դրութիւն ունի այս կողմերը»։

Թոքատ․— «Ամասիայից՝ անտանելի ճանապարհներով, բարձրացայ դէպի Զիլէ․ ճանապարհին կառքը շուռ եկաւ և բարեբախտաբար, միայն ձեռքիս մատերը խախտուեցին։ Զիլէից երկու ժամ հեռու, մեծ թըւով ընկերներ ձիով, կառքով, դաշնակցականներ և Թուրքեր իսկ եկել էին դիմաւորելու։ Երեկոյին ժողով արեցի․ հայերէնս թուրքերէնի թարգմանուեց․ Իտտիհատի դէմ չի խնայեցի, ազդեցութիւնը ահագին եղաւ։ Թուրքերի համար էլ՝ մտքերի և գաղափարների նոր աշխարհ բացուեց։ Մի քանի օրից Սեբաստիա կ'անցնիմ»։

Սեբաստիա․— «Ցայտնի հերոս՝ Մինաս Օղլուն հետըս է․ նա՝ որից 800 Թուրք ձիաւորներ յաղթուեցան․ նա՝ որի անունը բաւական եղաւ, որ այս շրջանի Թուրք խուժանը կոտորածի չի դիմեց։ Այստեղ գալս մեծ ղըրդիւն հանեց․ Թուրք գիւղերը «Հայ փաշա է եկել»

ասում են։ Սեբաստիայից կէս ժամ հեռու կայ՝ Արծրունեաց Թագաւորական տան ամարանոցը՝ Դաւթայ *անունով, որը ստացել է Արծրունի Թագաւորի որդի՝ Դաւթի անունը։ Այդ գիւղացիները բոլորն էլ առիւծ հայեր են. բոլորն էլ՝ Հնչակեաններ, որոնք Թափորով եկան, պահանջեցին, որ գիւղ երթամ ու գնացի։ Ճանապարհին, ժողովրդի մէկ մասը ուրախութիւնից լալիս էր, մէկ մասն էլ՝ օրհնում։ Իջայ մի դաշտի մէջ — գիւղական երաժշտութիւն, երգ լսեցի և արտասուքս չի կարողացայ զսպել...։ Այս ժողովուրդը* Հայաստան *է պահանջում, Բերուզ ջա՛ն, ուր որ գնացի...։*

«Տեսայ Արծրունեաց Տան մնացորդները։ Իրականութիւնը դաժան է. քանի կենդանի կը մնամ, չը պիտի մոռնամ Դաւթայ գիւղի պառաւ երէցկնոջ օրհնութիւնը, բարի գալուստը և «մեզ Հայաստա՛ն տուր» *ճիչը...։ Եւ հաւատացի՛ր, մոռցած ամէն տանջանք, նոր հոգի, նոր կորով զգեցած՝ ես իմ պարտականութիւնս պիտի կատարեմ. ահա՛ այդ կը լինի իմ վարձատրութիւնս...»։*

Կեսարիա.— *«Երեք-չորս օր կառքով ճամբորդելէ վերջ՝ մեծ դժուարութեամբ տեղս հասայ. բարեբախտաբար՝ դեռ հրաման չէր եկած* քարանթինայի (քօլէրայի) *պատճառաւ, թէ ոչ՝ Սեբաստիոյ կողմերը պիտի մնայի մի քանի ամիս։ Ժողովուրդը չի թողնում, ուր որ մտնում եմ, անկարելի է լինում շուտ դուրս գալ։ Այս պարտականութիւնը ա՛յնքան քաղցր է, որ ես ինքս էլ հիացած եմ ժողովրդի ցոյց տուած խանդավառութեան և ինձանից ակնկալիքների մասին։ Տիգրանակերտից և միւս շրջաններից էլ մեծ պահանջք են դրել, բայց գրեցի որ՝ առ այժմ չեմ կարող գնալ։* Թոմարզա, Էվէրէկ, Էրէյլի, *գուցէ և՛* Էսկի-Շէհիր՝ *պիտի հանդիպեմ։* Թալասի *հասարակութիւնը ինձ հրաւիրեց. այդ աւանը տուել է առաջին կարգի* յեղա-

փոխականներ և վաճառականներ: *Մեր նահատակ* Կիւլպէնկի *մօրը տեսայ, որ ինձ տեսնելով՝ լացաւ: Տեսայ նաեւ* մեր քաջ նահատակներից՝ Փանոսի, Միրինանեանի *ընտանիքներին: Այստեղ էլ Թրքախօս են.* 800 *տան մէջ՝* 2-300 *տղամարդ չկայ, բոլորը դուրս են գնացած:* Նոր սերնդի հայ աղջիկները հայերէն գիտեն. պատգամաւորութիւն էին ուղարկել ինձ, յայտնելով՝ թէ իրենք յեղափոխականներ են: *Կրակոտ աղջիկներ էին: Զանազան գիւղերից էլ ա՛նքան հրաւէր եմ ստանում, որ չպիտի կարողանամ բոլորին գոհացնել:*

«Շատ ուրախ եմ, որ գաւառը դուրս եկայ և մօտից իրենց ծանօթացայ: Ժողովուրդը ապրում է բոլորովին ոչ-իրական աշխարհի մէջ: Եթէ Պոլսոյ վրայ թափած ուժիս քառորդը գաւառների վրայ թափելու լինէի, աւելի մեծ արդիւնքի հասած կը լինէի: Այս չարչարանքի, այս տառապանքի տակ՝ որ ժողովուրդը ապրել է ու իր կենսունակութիւնը պահել, դա էլ մեծ բան է....:

«Կեսարիա գտնւում է Արգէոս լերան փէշերի տակ, որ միշտ ձիւնապատ է:

«Չորս կողմս, գիշեր-ցերեկ լցուած է ժողովրդի բոլոր խաւերով. Թուրք ժողովուրդն էլ մասնաւորաբար, մեծ ընդունելութիւն ցոյց տուեց. ժողովներիս ա՛յնքան Թուրք է ներկայ լինում, որ խօսածս Թուրքերէնի է թարգմանւում: Խեղճ ժողովուրդը մօտս միշտ գալիս է իր ամէ՛ն մի ցաւի համար: Իրենց մէջ պատահած կրօնական, բանուորական, նոյն իսկ ընտանեկան խնդիրների վճիռը ինձնից է սպասում»:

Սեբաստիա.— «Քօլէրան *բաւական խիստ հանգամանք է ստացել* Թօքատում. *դրա համար էլ՝ եկածս ճամբով չը պիտի կարողանամ վերադառնալ:*

«Հայաստանի արտադրութիւն՝ գեղեցիկ նախշե-

րով, ձիւնաթոյր, հրաշալի բրդէ գործուած գուլպաներ եմ բերում· պիտի տեսնես թէ Հայ Գեղջուկը՝ գուլպայ հիւսելու արուեստը մինչեւ ո՛ւր է հասցրել։ Այստեղ դեռ նամէհրամութիւն կայ· կիները եւ տղամարդիկ մէկ տեղ ժողովի գալու սովորութիւն չունեն։ Կիներից պատգամաւորութիւն եկաւ մօտս, որ մտածեմ իրենց ազատութեան մասին եւ իրենց էրիկներին խրատեմ, որ իրենց չը ծեծեն...։ Ի պատիւ ինձ՝ ներկայացում սարքեցին· ես էլ խօսեցի։ Իրաւ որ շատ յուզուեցայ — հողը, ջուրը, միջավայրը աւելի քան ազդում է ինձ...։ Սեբաստիան իր յատուկ կեանքն ունի։ Եթէ մեռնիլս էլ գիտնամ, պիտի տամ այս ժողովուրդին՝ ինչ որ կարող եմ, ի՛նչի որ ընդունակ եմ· որովհետեւ խեղճ ժողովուրդը ինձնից մեծամեծ սպասելիքներ ունի...։ Դասախօսութիւններիցս յետոյ մըրսեցի, տկարացայ ջերմով· մօտիկ Ս· Յակովբ անունով ուխտատեղի մը կայ, ուր վրանների տակ են ապրում· ստիպում են ինձ, որ հոն գնամ, մի քանի օր կազդուրուելու»։

Էվէրէկ-Ֆէնէսէ·— «Թոմարզա երեք օր մնացի, մէկ օր էլ Էֆքերա, յետոյ հասայ այստեղ· կարանտինա կայ չորս կողմս։ Երեք օրուայ ճանապարհ քեղաքից հեռու եմ· իսկական Թուրքիան այս կողմերն է· եթէ կառք եմ վարձում, կէս ճանապարհը ոտով եմ քայլում· որովհետեւ անկարելի է լինում կառքով անցնիլ այդ սոսկալի, խորդուբորդ տեղերից եւ վիհերից։ Երբեմն էլ ձի եմ նստում, բայց տօթը սաստիկ լինելուն՝ այդ էլ անտանելի է լինում։ Այս տեղի ապրուստի արժանութիւնը առասպելական է· հրաշալի պանիր կայ։

«Հայ հասարակութեան եւ բոլոր կուսակցութիւնների անվերապահ եւ անկեղծ համակրութիւնը ու խանդավառութիւնը իր ծայրագնութեան մէջն է»։

Եւդոկիա.— «Երկու օրուայ ցնցումներից յետոյ հանգիստ քնեցի այս գիշեր. հեռագրալուր առանք, որ Սամսոնի մէջ 14 ֆօլէրայի դէպք է պատահել. ընկերները և ժողովուրդը երկու ժամուայ ճանապարհ ընդառաջել էին մեզ: Գնացինք լսարանը, տեղական երիտասարդութիւնը՝ «Յառաջդիմասիրաց Ընկերութիւն», խմբով եկան: Նամէհիրամութիւնը այստեղ շատ խիստ է. կինը աւելի քան ոչինչ կը համարուի այստեղ, արհամարհանքի առարկայ է նա — թուրքերից առնուած սովորութիւն և հոգեբանութիւն — որ շատ ցաւալի է: Ընդհանուր բարեկեցիկ վիճակ ունի Հայ ժողովուրդը, ինչպէս նաեւ կենսունակութիւն: Տեսայ հայ և Թուրք դպրոցները, հայ դպրոցները անհամեմատ բարձր են Թուրք դպրոցներից: Բալաներս, այն քաղաքը, որ այս նամակը գրում եմ, կոչւում է Եւդոկիա կամ Թոքատ. 2000 տուն Հայ կայ, շատ լաւ այգիներ կան. քաղաքի միջից անցնում է մի գետ, որ կոչւում է Իրիս կամ Եշըլ-Ըրմագ, որ կը թարգմանուի Կանաչ-Գետ. որովհետեւ ջրի գոյնը կանաչաւուն է: Խելօք մնացէք, բալանե՛րս, որ ձեզի շատ լաւ բաներ պիտի բերեմ...»:

Մարզուան.— «Հինգ-վեց օր անկողնոյ ծառայեցի. գլխիս մէջ արեան խռնումն տեղի ունեցաւ. մէջքես արիւն առան, ամբողջութեամբ սեւ էր: Շատ խիստ պաղառութիւն ունէի:

«Ամէն կողմ կանանց կազմակերպութիւններ արել եմ: Իմ գալովս ժողովուրդը բաւականին օգտուեց: Եթէ Օրտու-Կիրասոն գնամ, երկար չեմ մնալու. կ'անցնիմ Սամսոն: Անուշ բալաներս, յաճախ կիսարթուն վիճակի մէջ, ձեզ եմ երազում: Նոյեմբերի սկիզբները տուն կը հասնիմ»:

Հալէբի կղզին, ուր ես, մէն մենակ իմ փոքրիկներովըս, առանց դրացիների, բարեկամ-ազգականների

հետ շփման՝ ապրել եմ, լեռնային է : Տունը շատ հիանալի տեսարան ունէր, Մարմարա ծովը առաջը, եղեւնի անտառներով շրջապատուած տներ· Թուրք պատուաւոր ընտանիքներ դրացի էին, սակայն՝ ո՛չ մի երկիւղի առիթ չըստեղծուեց ամբողջ չորս տարուայ շըրջանում : Միայն գիշերէ գիշեր էր, որ Թուրք պահակի ճոկանի հարուածները՝ ժամերը ցոյց տալու համար, երբեմն էլ՝ «եանկըն վա՛ր — հրդեհ կա՛յ» պահակի գոչումին պատճառաւ, երեխայք կը վախնային և վերմակին տակ կը պահուըտէին :

Ամուսինս Փոքր-Հայքէն վերադարձին՝ իր հետ բերեց բաւական բարիքներ, որք զուտ Հայկական էին և մաքուր պատրաստուած : Իր նամակների մէջ յիշած «իրաշալի պանիր»ը իրաւ որ սքանչելի էր : Ամէն մի այցելուի մասնակից կ'անէր մեր համեստ սեղանին, առանց նախապէս ինձմէ տեղեկանալու թէ՝ արդեօք յարմար կամ բաւարար կերակուր կա՞յ տանը — Ռուսահայի իր հիւրասիրութեանը դէմ չէր կրնար մեղանչէր, «համեցէ՛ք, խնդրեմ, համեցէ՛ք, սա յեղափոխականի տուն է» ասելով կը հրաւիրէր զիրենք ճաշի և մանաւանդ «իրաշալի պանիր»էն ճաշակել կուտար :

«Նոր Աշխարհ»ը խմբագրելու ժամանակ — Բերա-յի մէջ — յաճախ ամուսինս ուշ կը մնար կղզու նաւն առնելու և կը բացակայէր տնէն. Նոյն ատեն Դանիէլս էլ Պոլիս կը մնար, ինչպէս ասացի, Գերմանական դըպրոց յաճախելուն համար : Բայց շաբաթ երեկոները անպատճառ միասին տուն կը դառնային, երբեմն էլ՝ Հնչակեան հիւր մը իրենց հետ : Ամուսնոյս տրամադըրութիւնը աւելի լաւ կը լինէր, երբ երեխայոց ջութակ նուագել կը տար, հայերէն երգեր երգելով և մեզ էլ երգել տալով, հոգեկան մեծ հրճուանք կ'ըզգար··· : Մենք էլ շատ ուրախ կը լինէինք, քանի որ ամբողջ շաբաթը, գրեթէ, մէն մենակ մնացած էինք : Հէնց որ

երեկոյ կը լինէր, Կղզու ղառիվերէն մինչեւ վար մեծով-պղտիկով ակընդէտ կ՚ըսպասէինք իրեն գալուն։ Կղզին, ի մէջի այլոց, մեզ այցելած են Տօք. Տաղաւարեան, Տօք. Գր. Ճէլալ, Մեծն Մուրատ, Փարամազ, Սիւնիք, Կարապետ Զրաճեան, Ռուբէն Կարապետեան, Վարազդատ, Ռումանիայէն՝ Ընկ. Տօլապեան, «Կայծ»ի խմբագիր Վանիկ եւայլն — որոնց մեծամասնութիւնը այսօր անդարձ հեռացել են և կախաղանների կեր են դարձեր...։

Ամուսինս կրկին պատրաստուել էր Պարիզ մեկնիլ. դրա համար խնդրեցի իրեն, որ Տիգրանն ու Նանասին, որ դեռ մկրտուած չէին, մկրտել տայ ու յետոյ մեկնի։ Մեր մօտակայ կղզին (գնալը) Հայ եկեղեցի կար. հոն տարանք և տեղւոյն խոյեան քահանան մկրտեց երեխայոց՝ կնքահայրութեամբ երիտասարդ Ընկերներ Պէկեանի և Անդրանիկի։ Ամուսնոյս Ֆրանսա մեկնումը ա՛յնքան վատ չազդեց վրաս, որքան Դանիէլինս, որին հետը պիտի տանէր Գօլէճ դնելու, ենթադրելով, որ մի օր էլ մենք Ֆրանսա պիտի հաստատուէինք։ Ու... գնացին միասին։ Իր ու Դանիէլիս նամակները երբեմն ժամանակին կը հասնէին, բայց յաճախ էլ ուշանալով՝ հոգիս կը տրորէին։ Դանիէլիս առաջին նամակը Վիեննայէն՝ կը նկարագրէր իրենց՝ պանդոկի մէջ գիշերելը. գիշերանց քանիցս իրենց դուռը ծեծունելէն նեղուած՝ ամուսինս բարկացած «պա՛շօլ» (կորի՛ր) կը պոռայ, ու Դանիէլս էլ ծածուկ կը խնդայ։ Ամուսինս գրած էր թէ Դանիէլի գերմաներէնը բաւական օգնած էր իրեն՝ Վիեննայում։

Այցելած էին Մխիթարեաններուն, որոնք գրաբարէ աշխարհաբար բառարան մը նուիրած էին։

Իմ մենակութիւնս կը համեմէին երբեմն՝ իմ միակ ազգական հօրաքոյրս՝ իր զաւակներով, որոնք Բերա կը բնակէին։

Կղզու օդը սքանչելի լինելով՝ և անտառները բուժիչ յատկութիւն ունենալուն համար՝ ամէն ազգի ժողովուրդի բարեկեցիկ դասուն ամարանոցն էր դարձել: Այդ պատճառաւ հէնց, ես էլ բարեբախտութիւնն ունեցայ տեսնել ու վայելելու Սամաթիացի յայտնի ընտանիքից՝ իմ երկու ընկերուհիներին, Ագապիին և Սոֆիին (Զիլճեան), որոնք նոյնպէս՝ ամուսնացել և զաւակների տէր.էին դարձել: Այդ օրերը իմ կեանքի ամենաքաղցր ժամերը կը պարունակեն...:

Մի օր էլ Կղզին յանկարծ երեւցաւ անզուգական ընկեր Փարամազը, որ նոր էր վերադարձել Տիգրանակերտից և Կովկասով անցնելիս՝ գնացել տեսել էր իր անճանաչ աղջկանը, որ՝ «այժմ մեծացած, գեղանի, լաւ աղջիկ էր դառել...»: Պատմեց թէ ինչպէս իր աղջիկն իրեն չէր ճանաչել և չէր ուզել տնից ներս իսկ ընդունիլ զինքը, մինչեւ վրայ էր հասել տան ծերունի դայեակը, որ աղջկանը յայտնել էր թէ՝ հիւրը իր հայրըն էր...: Խեղճ Փարամազը մի, երկու ժամ իր զաւակին վայելելէ վերջ՝ առանց եղբայրներին իսկ տեսնելու, աղջկանը ու դայեակին հաւատացնելով թէ «պիտի գնայ կայարան իր պայուսակը բերելու» — անդա՛րձ հեռացել էր իր սեպհական տնից ու պաշտելի զաւկից:

Նո՛յն օրն իսկ, հրաժեշտ առնելով մեզնից՝ և Սապահի մասին ինչ ինչ տեղեկութիւններ քաղելուց յետոյ՝ Փարամազ մեկնեցաւ Եւրոպա: Ամուսնոյս Պարիզից ու յետոյ Ռումանիայից ինձ գրած նամակները այնքան էլ սրտապնդիչ չեղան, և սակայն, կ՚արժեն ընթերցողներիս հրամցնել՝ որպէս յիշատակ...:

Պարիզ.— «... Վերջապէս, աշխարհիս երեսին երկու շրջանակի մէջ եմ պարփակուել. մէկը՝ Ընդհանուր Գործը, միւսը ընտանիքս. դրանցից դուրս ինձ համար կեանք չի եղել և չի էլ լինելու: Կովկասի ընկերներից միայն Սիւնիքն է՝ որ գործում է. միւսները մեռել են

ՓԱՐԱՄԱԶ ԵՒ ԻՐ ԿԻՆԸ

ԳՐԱԴԱՐԱՆ

U.U O

կարծես...։ Ամերիկան բաւականին եռանդուն կերպով գործում է, արդէն «Երիտասարդ Հայաստան»ը վերհրատարակուիլ սկսել է. մէկ խմբագրական Ա-ն է գըրել. երկուսը իմս է։ Դանիէլիս տանում եմ Լիւքսէմպուրկ, տղան լքուած չէ, ուրախ է»։

«Պատերազմի ներկայ քաշքշուկը երեւութական է։ Յոյս ունենք, որ շուտով խաղաղութիւն կը լինի։ Ռուսաստանի ընդհանուր ներումը շատ բան չարժեց. ոչ ոք Պարիզից գնաց. որովհետեւ վախենում են՝ որ մի քանի օր անցնելուց յետոյ՝ մի ուրիշ պատրուակով պիտի բռնուին և բանտ դրուին։ Մինչեւ որ Ռուսական Յեղափոխութիւնը չը յաղթի, չը պիտի կարողանանք վերադառնալ հոն...»։

«... Նամակս շատ ուշացաւ, գիտեմ։ Նամակիդ գալը ինձ բոլորովին փոխում է, թարմանում եմ։ Մէն մենակ ես, կը զգամ հոգեկան անձկութիւններդ, մանաւանդ որ՝ Դանիէլն էլ այստեղ է, բայց եթէ նա չը լինէր, ես կը խենթանայի, որովհետեւ սրտնեղութիւններս շա՜տ շա՜տ են։ Կարեւոր տեղեր դիմումներ եմ արել. շատ տեսակցութիւններ ունեցել՝ Հայկական Դատի համար — բայց բոլորն էլ՝ առ այժմ թողնելու, յետաձգելու կողմնակից են։ Քաղաքական շրջանակները գլուխնին կորցրել են և միայն իրենց կաշուի վրայ են մտածում. իսկ հայ պաշտօնական մարմիններ՝ ձեռները ծալած նստել են ու երկնքից մանանայի են սպասում...։ Սիւնիքին ձերբակալել են. շա՜տ եմ մեղքանում։ Ռուսաստան շատ խիստ է. փախչող փախչողի է...»։

Ռուսջուք, Բուլղարիա.— «... Սիւնիքը դեռ չի ազատուել. բայց իր երկու ընկերները ազատուել են։ Երբ Ռուսջուք հասայ, տօնական կերպարանք ստացաւ — լաւ ընդունելութիւն, մտերմական և ուրախ տրամադրութիւն։ Բուլղարիա մտնելէս վերջ՝ աշխարհից

կորուեցի. ամէն կողմ խզուեցան յարաբերութիւնները, հաղորդակցութիւնները. տնտեսական կեանքը բոլորովին դադար է առել. հարիւրին իննսուն ինը պատերազմի դաշտն են իջել, ճանապարհորդութիւնս անտանելի եղաւ. վեց ժամուայ ուղին երեք օր տեւեց. որովհետեւ կառախումբերը, բացառապէս, զինուորական շարժումների են վերապահել:

«Դասախօսելէս յետոյ՝ կիներ և օրիորդներ շարքով մօտեցան և քեզ հարցրին: Երեւակայելով որ՝ թերեւս այս կողմ փոխադրուինք, խենթանում են աշակերտուհիներդ:

«... Եթէ դրութիւնս ներէր, դու ազատ ու հանգիստ կեանք ունենայիր, քո ձիրքերը կատարելագործէիր, գիտեմ թէ ի՛նչ կարող էիր լինել ու չ՛եղար...: Բայց այն զոհողութիւնը՝ որ արինք Գործին համար, դա էլ քո բաժինն է, բալաս...»:

Բուքրէշ, Ռումանիա.— «Ռումանական կառավարութիւնը աւելի քան բարեացակամ դիրք բռնեց դէպի իմ դասախօսութիւնները. որոնք տնտեսական և ընկերային բնաւորութիւն ունէին: Գործաւորական և գիւղացիական կեանքը՝ այստեղ, սարսափելի վիճակ ունի. հետեւաբար, իմ դասախօսութիւններս մեծ ազդակ են հանդիսանում, որ այդ շահագործուող դասակարգը ջանայ իր վիճակը փոխել: Այս երկրի մէջ գործուած անօրէնութիւնները՝ տնտեսական հողի վրայ՝ ո՛չ մի երկրի մէջ կան: Վերջապէս, տանջուող մարդկութեան համար՝ պարտականութիւնս կատարում եմ. որքան որ առողջութիւնս ներում է: Զանազան կողմերից եկան, ասացին, որ գաղտնի լրտեսներ մեր կաֆէին մէջ՝ իմ մասին հարցրել են, թէ ո՞ւր եմ, ո՞ւր կը մնամ...»:

«Փարամազից հեռագիր առայ. երեւում է՝ որ հեռագրածս դրամը ստացել է, և հիւանդ է եղել, որով-

հետեւ հետեւեալ կերպով էր հեռագրել, «կազդուր-
ուեմ, կը գամ»:

Վարդիս ծնունդը, որ հեռագրով իմաց տուի, զին-
քը շատ էր ուրախացրել և հետեւեալածականները
տուել նամակին մէջ, «նորածիլ, նորաբոյս, նորաշեղ,
նորախինդ բալայիս պաչիկներ իմ կողմից»:

Խոր-Բէօսաէնչէ.— «Պատգամաւորական ժողովը (Խոր-
Ներրուրդ) վերջացաւ: Սողունները երեւալ են սկսել,
օգտուելով բացակայութիւնից...: Ի՜նչքան կ'ուզեն՝
պտուան. յաղթողը անցա՜ւ գետը: Պիտի տեսնես, Բե-
րուզ, նրանք հետզհետէ մատնիչի դերի մէջ պիտի
մտնեն...»(*) :

Բուֆրէշ.— «Եգիպտոսից մի քանի անգամ հեռա-
գիր առայ, որով խնդրում են հօն գնալս արագացնել:
Իսկ Երուանդն էլ (Սաֆօ) գնաց Ամերիկա. տեսնենք
թէ ի՞նչ գործունէութիւն ցոյց պիտի տայ...: Եր-
ուանդը աղաչական մի նամակ էր գրել ինձ, որ բա-
րեբարութիւն անեմ, երբ Եգիպտոս գնամ, ու մօրն ու
եղբօրը Պարիզ ուղարկեմ...»:

«Գաբրիկ Օղանեանից էլ նամակ առայ, որով յայտ-
նում է թէ՝ իր հեղինակած «Հայոց Գրականութեան
Պատմութիւն» գրքին մէջ իմ կենսագրութիւնն էլ է
գրած»:

Բուֆրէշ.— «Խաղաղութեան դաշինքը կնքուեց, որ
չատ փխրուն է և անկայուն ապագայի տեսակէտով:
Դեռ իրերի ընթացքը որոշ չէ, ներկայ պայմաններում
բիսկ (վտանգ) պիտի լինի իմ Պոլիս գնալս...»:

«... Անուշիկ բալաներս Տիգրան և Նանասի, երբ

(*) Պոլսոյ (Արամեանց ֆլիֆի) ընդդիմադիր դեր-
ֆը կ'ակնարկէ:
Բ. Ս.

որ Թռչունները գան ինձ ասեն, որ խելօք և հնազանդ էք, չարութիւն չէք անում, մայրիկին լսում էք և առանց հրամանի դուրս չէք գնում, Տիգրանին մի լաւ հրացան պիտի ուղարկեմ և Նանասին էլ՝ մի գեղեցիկ խրձիկ»:

Սոյն նամակներից ամենավերջնոյն մէջ՝ ամուսինս յայտնել էր՝ թէ ինքն անցնելու է Եգիպտոս, այն տեղից նոր հասցէ կը տայ. ուստի սպասեմ և իրեն նամակ չի գրեմ: Այդ օրերին էր, որ չարաճճի Տիգրանս, իմ զբաղած ժամանակիս, դուրսը վերարկուով խաղացած ժամանակին, քրտնել ու վերարկուն նետել էր դըրան առաջ, ու ահա այդ եղաւ պատճառ, որ տղան խիստ պաղառութիւնով մը ծանրապէս հիւանդացաւ. այս անգամ էլ հայրը բացակայ լինելուն՝ ամբողջ հոգեկան և ֆիզիքական տառապանքը չալակեցի ու գիշեր ցերեկ անքուն մնալով՝ խնամեցի և շնորհիւ մի փորձառու Յոյն բժշկի՝ տղան փրկուեցաւ:

Ամուսնոյս Եգիպտոս մեկնելէն վերջ՝ իր տուած հասցէին կ'ուղղէի նամակներս, սակայն շատ ժամանակ չ'անցած, երբ իրմէն պատուէր ստացայ՝ այլեւս նո՛յն հասցէով չի գրել, մինչ ցնոր տնօրինութիւն. և երբ տարբեր հասցէ ստացայ, գրեցի Տիգրանի հիւանդանալուն և ապաքինման մասին, որի վրայ, երեւի, Եգիպտոսի Հնչակեան փաստաբան՝ Ընկեր Ասատուրեանի թելադրանքով և դրամական օգնութեամբը՝ ինձ գրեց, որ՝ Տիգրանիս առողջութեան համար հարկաւոր է տաք կլիմայ. որով, քանի ինքը Եգիպտոս կը գտնուի, լաւ կը լինի, որ տունը Եգիպտոս փոխադրենք: Եւ երբ «մեկնի՛ր» հեռագիրը ստացայ, պատրաստուեցայ. և ազգականների ու բարեկամների օգնութեամբ ճամբայ ընկայ դէպի Եգիպտոս:

Ամուսինս և Աղէքսանդրիոյ Հնչակեան Ընկերներ նաւահանգիստ եկան մեզ դիմաւորելու և առաջնորդե-

ցին մօտակայ օթեւան մը, ուր երկու օր հանգստացանք և ուր բարեբախտութիւնն ունեցայ Աղէքսանդրիոյ Հայկական վարժարանի ուսուցչուհի Վերգինէն տեսնելու, որը իմ դպրոցական առաջին տարիներու ընկերուհիս եղած էր, և մեր անցեալ հին ու նոր, տխուր և ուրախ օրերը վերյիշեցինք, ինքը Բուլղարիոյ դաշնակցական գործիչ Վարդօի կինն էր. այն մարդու, որին, ինչ ինչ ներքին պատճառներով, դաշնակցականները սպաննած էին Ռուսչուքի մէջ:

Երկու օր Աղէքսանդրիա մնալէ վերջ՝ ամբողջ ընտանիքով առաջնորդուեցանք Հէլիօբօլիս, Գահիրէէն կէս ժամ անդին, ելեքտրական թրամվէյով: Նոր քաղաք մըն էր սա և բնակութեան համար միակ մաքուր վայրը:

Տունը արտաքինով շատ փառաւոր էր և գեղեցիկ. կը պատկանէր՝ ինծ հայրենակից, Պոլսեցի Հայու մը:

Մեզ բամբասելու սովոր բերաններ յայտնած էին այս ու այն կողմ, թէ՝ «Սապահ-Գիւլեան ընտանիքը ա՛յնքան հարուստ է, որ պալատանման տան մէջ կ'ապրի»:

Ամուսինս, հետզհետէ՝ սկսեց ինծ պատմել՝ Պոլիս գտնուած ժամանակիս յանկարծական հասցէի փոփոխութեան մասին, Եասեան կոչուած, Գահիրէի Հնչակեան Մասնաճիւղի ամենակարող անձնաւորութեան բռնած դէրքի մասին, Քէօստէնճէի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովէն առաջ ու յետոյ, ևայլն:

Եասեան մատնիչը՝ որպէս Գահիրէի Մասնաճիւղի պատգամաւոր ուղարկուած էր Քէօստէնճէ: Երբ եօթներորդ Պատգամաւորական Ժողովը կ'որոշէ՝ ընդդէմ Թուրքիոյ՝ Իլլէկալ դէրք, Եասեան յարաբերութիւն կը պահէ կասկածելի անձնաւորութեանց հետ, որը չի խուսափիր իր Գահիրէի ընկերներու աչքերէն... և ըն-

կերները կ'ըսկսին իրմէ կասկածելով՝ այլեւս իր Եգիպտոսի հասցէն չի նկատել պաշտօնական, կուսակցական հասցէ. և որով՝ ամուսինս էլ ինձ ազդարարած էր այլեւս չը շարունակել նոյն հասցէն:

Եասեան ամուսնոյս հարց տուած էր թէ ի՞նչ ճամբով Եգիպտոս պիտի դառնար Ռումանիայէն. ու, ըստ այնմ էլ կարգադրած էր իր Թուրք բարեկամների հետ, որպէս զի, ամուսինս ձերբակալուէր Պոլսոյ քարափը նաւին խարսխած ատենը: Սակայն նախախնամական տնօրինութեամբ մը — որուն ամուսինս միշտ հաւատացած էր — տարբեր ճանապարհով մը ճամբորդած էր դէպի Եգիպտոս...: Նաւամատոյցը Եասեան լինելով դիմաւորող ընկերներէն մէկը, հարց կը տայ ամուսնոյս, որ ի՞նչու չի հեռագրեց ամուսինս իրեն, որպէս զի «արքայավայել ընդունելութիւն» տրուէր իրեն...: (Եւ, որպէս զի խոստացուած Յուդայի վարձատրութեան տիրանար):

Եասեան այլ պատրաստութիւններ սկսած է տեսնել — Թունաւորել Սապահն ու Ընկերները՝ խնջոյքի մը մէջ, սակայն իր ազնիւ նշանածը, տեղեկանալով նրա դիւային ծրագիրներին, և Հնչակեան ընկերների էլ իր հանդէպ ունեցած սիրալիր վերաբերմունքէն ըզգացուած, իրենց լուր կը տայ ամէն բան: Ընկերները մօտէն հսկելով ու ամէն բան քննելով, հաստատելով, Եգիպտոսի կառավարութեան ձերբակալել կը տան իրեն, իր խոստովանանք-նամակները իրմէ առնելէ վերջ...:

Ահա՛ անոնք:

Յարգելի Ընկե՛ր ՍԱՊԱՀ,

... Ձեմ համարձակիր ձեզ տեսնել, խղճի ահարկու խայթը մահու չափ կը ճնշէ հոգիս. մեռաւ և ա—

դարտուեցաւ կուսակցական մաճուր անուն և պատիւըս...: Չը գիտեմ թէ այս տեսակ բարոյական մահացումէ մը վերջ՝ ի՞նչ արժէք կրնայ ունենալ ստորաքարշ կեանքը ինձ համար: Երբ մարդ իր շուրջը թափուր կը գտնէ բարեկամ, ընկեր և ազգակիցների ուծացումովը, դաւաճանի խարանը ճակտին, կեանքը՝ այդ պարագային ամենաահռելի պատիժը կ'ըլլայ, հոգեմաշ ու ճողկալի բեռ մը...:

Եգիպտոսը իմ կեանքին մէջ անջնջելի եղերական ու սեւ յիշատակ մը կը թողու. անիկայ եղաւ այն անդնդախոր գերեզմանը, ուր թաղեցի իմ ամենաթանկագին պատիւը: Միթէ՞ ասկից վերջ ինձ համար պատույ վրայ խօսիլ վայե՞լ է...: Չեմ գիտեր թէ գերագոյն զոհողութիւններով կարելի կ'ըլլա՞յ ապագային վերաշինել կորսուած պատիւս...:

Ընկե՛ր, դուք որ անակնկալօրէն մեծ հարուած մը հասցուցիք այս տխուր դէպքին առթիւ, կը խնդրեմ ներկայիս, որ զիս սա անիծեալ երկրէն փրկէիք, ուր իմ ամէն ինչս կորսնցուցի, ուր քիչ մը եւս մնալը անտանելի և աներեւակայելի տանջանք մ'է ինձ համար...: Անհուլի է վիճակս, միջոց մը սահղծեցէք ինձ ասկէ հեռանալու, ի սէր ձեր զաւակներին... եթէ զիս կեանքին կապող թել մը միայն կայ, այն ալ ուրիշ բան չէ, այլ միայն այն յոյսը՝ թէ ո՞վ գիտէ օր մը գերագոյն նուիրում ու զոհողութիւնով մը կարելի կ'ըլլայ վերականգնել կորսուած պատիւը և ծառայել այն Ազգին, որուն համար կեանքս զոհելու պատրաստ էի...: Արդ միակ յոյսս դո՛ւք էք, ըրէք շուտով այն՝ ինչ որ կը թելադրէ Ձեր սիրտն ու խիղճը...:

Խորին Յարգանօք՝

Ա. ԵԱՍԵԱՆ

ՍՕՑ․ ԴԷՄ․ ՀՆՉ․ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Փարիզ

Յարգելի Ընկերնե՛ր,

Ընկ․ Ս․ Սապահ–Գիւլեանին մանրամասնութեամբ ծանօթ է խնդիրը, ես տեղւոյս Մ–նիւղի վարչութեան կողմէ կ՚ամբաստանուիմ իբր մատնիչ, երկու նամակներ ձեռք ձգուած են, որոնք թէեւ չէին կրեր իմ ստորագրութիւնը, բայց իմ ձեռագիրներս են, և գրպանս կը մնային, որ և է տեղ մը ղրկուած չեն։ Իսկ գալով իմ և տեղւոյս թուրք պաշտօնական անձանց հետ յարաբերութեան, պարզ դիպուածով մը ծանօթացած էինք․ և վերջերս, քաղաքական խնդիրների շուրջ խօսակցութեանց պահուն, յիմարութեան նոպայի մը մէջ, կարգ մը ընդհանուր բնոյթ ունեցող յայտնութիւններ ըրի, ինչ որ ընելու չէի։ Ոստիկանապետ Ազմին երբ Եգիպտոս եկաւ, տանիկ գօմիսէրիյի պաշտօնեաներէ միոյն միջոցաւ ուզեր է զիս տեսնել, ես զայն չէի ճանչնար, զիս ծանօթացուցին․ ուզեց օգտուիլ ինձմէ, բայց տակաւին ոչ մէկ կարեւոր բան յայտնած եմ․ այսու հանդերձ, իմ այս արարքը աններելի է եւ իմ այս թեթեւամտօրէն կատարած արարքին համար ոտնակոխ ըրի պատիւս եւ իմ պատիժս աւելի եղաւ անարգանքի սիւնին բեւեռուելով Եգիպտոսի մէջ։

Ընկերներ, կուսակցականի մը համար աններելի այս յանցանքս գլխիկոր խոստովանելով, կուգամ խնդրել կեդրոնական վարչութեան ներողամտութիւնը։ Այն խղճի խայթը, զոր կը զգամ, արդէն յուսահատական կացութեան մը կը մատնէ զիս։

Ներեցէք ինձ եւ գթացէք, ոչ թէ ապրելու փափաքէ

մղուած կը խնդրեմ, այլ միջոց ունենալու համար կեան-
քի գնով իմ կորսուած պատիւը ձեռք ձգելու եւ ուրիշ-
ներու իրաւանց անարգանքի ներքեւ չը մեռնելու»:

Մնամ խորին յարգանօք

ԱՐԹԻՒՐ ԵԱՍԵԱՆ

Եասեան Թէեւ ձերբակալուեցաւ Գահիրէի Հնչակ-
եան Մասնաճիւղի կողմից, սակայն, իթթիհատական
մութ ուժեր զէնքը փախցրել էին բանտէն, որով և՛ նա
ապրեցաւ՝ նոր-նոր նախճիրներ գործելու, նոր դաւա-
ճանական արարքների դիմելու, պատերազմի սկզբին:

Մեր Եգիպտոս տեղափոխուելուց վեց ամիս անց՝
ընդհանուր պատերազմն սկսեց, որին շուտով մասնակ-
ցեց և Թուրք կառավարութիւնը. և եթէ մենք, Մէթր
Ասատուրեանի շնորհիւ փոխադրուած չը լինէինք Ե-
գիպտոս, մենք էլ ոչնչացման էինք դատապարտուած,
ամուսնոյս յեղափոխական-հակառակորդի մը հանդա-
մանքով:

Մի օր ամուսնոյս հարցրի, թէ Ասատուրեանը ե-
թէ չօգնէր ու մենք Պոլիս մնացած լինէինք ու վտան-
գուած՝ ի՞նչ պիտի անէիր — առանց տատամսելու,
կարուկ կերպով, նա պատասխանեց՝ թէ «կը գայի
Պոլիս և անձնատուր կը լինէի կառավարութեան՝ ձեզ
փրկելու համար...» — հերո՛ս ամուսին, հերո՛ս հայր:

Փարամազը Եւրոպայից եկաւ Եգիպտոս, և մեզ
մօտ երեք շաբաթ մնալէն վերջ՝ ըստ նախօրօք կար-
գադրութեանց և կուսակցական որոշման, անցաւ Պո-
լիս՝ միւս ընկերների, տէրօրիստների հետ Գործը գլ-
լուխ հանելու, և սակայն Արամեանցի ու Եասեանի
մատնութիւնները ձախողութեան մատնեցին Ս. Գործը

և պատճառ դարձան Քսան Կախաղաններուն...:

Մեր ընտանիքին սուգը աննկարագրելի եղաւ, որովհետեւ յիշեցի այն զգուշացումս, որ ըրի Ընկեր Փարամազին, թէ՝ Ընկեր Փարամազ, զգուշացիր կըրցածիդ չափ. ժպիտով մը նա պատասխանեց, «ի՞նչպէս կարելի է զգուշանալ...»:

Եգիպտոս մնալով, ամուսինս իր ժամանակը տըւեց ա՛յնքան հմտալից իր երկու աշխատասիրութեանց, «Փոքր Հայքի Յիշատակները» և «Պատասխանատուները», որոնք յետոյ Ամերիկա հրատարակուեցան:

Այդ օրերին, ամուսնոյս ազգականները իմանալով մեր Եգիպտոս բնակուիլը, սկսան յարաբերութիւն պահել իրեն հետ, և հոգեկան մխիթարութիւն պատճառել իր ծնողազուրկ և քրոջազուրկ հոգիին:

Ահա՛ մի քանիսը դրանցից անփոփոխ:

Արմաւիր
Ռուսահայաստան

Ամենաազնիւ Ջան

ՍՏԵՓԱՆՆՈՍ,

Քո Թանկագին նամակդ երբոր բացի, ըսկըսեմ կարդալ, բոլորս էլ լացանք և փառք տըւեցինք ամենաբարձր Աստծուն, օրհնիք ձեր կեանքն, որդի ջան, ի՛նչ արած, որ մեկ մեկուց այդքան հեռու ենք: Սիմոն Ծերունին երբ լսաւ Քրիստոս պիտի ծնվի, աղօթեց Աստծուն և այնքան կենդանի մնաց, մինչ աչքով Քրիստոսին տեսաւ. հոգիս, Ստեփան ջան, պատկե-

ՂԵՒՈՆԴ ՔԵՌԻ ԵՒ ԻՒՐ ԿԻՆԸ

Կեդրոնի լաչակովը Սապահի քրոջ միակ կենդանի աղջիկը Սաթօն երեք երեխաներով և ամուսին Սերգէն իր ձախ կողմը. միւսները մօտիկ ազգականներ

րիդ տեսամ, սեւ աչերից համբուրեմ. խօսեց-րիմ, ոչ մեկից չի պատասխանեցիք, անմխի-թար կարօտ մնացիմ. աղօթում եմ ամենա-բարձր Տիրոջ, տայ մեզ կեանք կենդանի աչ-քով տեսնեմ ձեզ և սիրելի կնոջ և ծաղկեալ որ-դիներիդ: Ստեփան ջան, անբախտ եկամ այս աշխարհքս, անբախտ էլ պիտի գնամ. շուտ շուտ նամակ ուղարկէք, մեզ մխիթարէք: Հար-սըդ ձեռքից վեր չի դնում պատկերդ և ծոցին դրած, հարիւր անգամից աւելի համբուրում և օրհնում է քեզ ու քո սիրելի ընտանիքին և քո որդիներին:

Ձեզ կարօտ և ձեզ օրհնող քեռի

ՂԵՒՈՆԴ ԵԼԻԱԶԱՐՕՖ

Մի ուրիշ ազգական կը գրէ:

Պատուարժան

ՍՏԵՓԱՆՆՈՍ,

Հենց այսօր լսեցով ձեր մասին, շատ ու-րախացամ. կու ցանկամ ձեզ ու ձեր ընտանեաց երկար կեանք ու գործերիդ աջողութիւն: Ես ձեր փոքրն եմ և ձեր սովորեցրած աշակերտն եմ: Երանի եմ համարում այն օրերին, որ ես աշակերտ էի և դուք՝ իմ ուսուցիչը: Ձեր գը-րած երգերը, ձեր ձեռօք, որ ինձ համար գրել էիք, ես մինչի օրս, սուրբի տեղ եմ պաշտում

ու պահում. հաստատ իմացէք, որ մինչի մահս կու պահեմ. և ամէն ժամանակ կարդալու և երգելու, ձէզ կու մտաբերեմ:

Ձեր Թագուհի մօրքրոջ որդի՝

ԱԲԳԱՐ

Արմաւիր
Ռուսահայաստան

Սիրելի Ջան

ՍՏԵՓԱՆ

Քո թանկագին նամակն ստացայ, արտասուելով կարդացիմ. օտար, տխուր սրտիս նամակովդ ուրախացրիր, իմ ջան Ստեփան, ափսոս, շատ ուշ ուշ եմ քեզնից նամակ ստանում: Գրել էիր, կարելի է մեկ մեկու տեսնենք: Եարա՛բ, կենդանի կը լինե՞մ, Ստեփան ջան: Քեռիներիդ ես հարցրել. այժմս գիւղումն են, գաղթականի պես. ո՛չ ուտելիք կայ, ո՛չ հագնելիք, ո՛չ էլ կազմակերպութիւն է թողնում գիւղից հեռանան: Երջանիկ են այն մարդիկը, որոնց բարեկամները միջոց ունեն օգնել այդ խեղճերին: Մեր բարեկամներից սպանեցին Խաչանին, իր որդի Երանոսին, Կուրջու աղջկան, Զաքարիային և մեր Տիրոխնու տղայ Կարապետին: Մրվաթ Բաջին թաղանուած է և կենդանի է. Խաթուն Բաջին երեք տարի է մեռել,

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ



ԺԷՆԷՐԱԼ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

իսկ Իսրայէլն (*) Թիֆլիզ մշակութիւն է ա-նում: Մի նորութիւն—Պարսկաստանում, Փա-յաջուկ գիւղն, Հնչակեաններն և Դաշնակցու-թիւն հենց օր շարունակ կռւում են և երեք մարդ է սպանւում: Տէրութիւնն չի ուզում բռնել կռուողներին, որ հայ և Թուրքի մէջ ո-խութիւն չի լինի: Թիֆլիզու հայերն շատ մեծ կորուստ ունեցան:

Յիշում եմ այն ազատ օրերին, որ նստում էինք մեր օթաղին, քաղցր քաղցր երգում էիր: Ո՞ւր են անցեալ օրերը· էլ չեմ կարծում, որ մեր գիւղերում այսուհետեւ ազատ ապրել կա-րելի լինի...: Շա՜տ բարեւ իմ անծանօթ որ-դի և համեստ հարսին և որդիներին:

Ձեզ կարօտ և ձեզ օրհնող քեռի

ՂԵՒՈՆԴ ԵԼԻԱԶԱՐՈՎ

Հէլիօպոլսոյ տաքը թէեւ շատ կը նեղէր, սակայն Գահիրէցիներու համար կը համարուէր օդափոխութեան վայր մը. եւ այդ պատճառաւ բարեբախտութիւնն ու-նեցանք ծանօթանալու Ժէնէրալ Կամսարականին, որ հիւրն էր իր բանաստեղծ ազգական, Տէր Կամսարա-կանին, Աղեքսանտրիա։ Ժէնէրալը՝ իր տկարութիւնը խնամելու համար՝ սենեակ վարձեց մեր տան դրացի՝ Բարեգործականի երկրորդ գրագրի տան մէջ։ Որպէս

(*) Սապահի քրոջ ամուսինը:

դրացի, տեսնուեցանք իրար հետ. ամուսինս ու ինքը, որպէս հայրենակից (Ռուսահայ) շատ սիրեցին իրարու. մանաւանդ որ՝ նա ռուսերէն կը խօսէր ամուսնոյս հետ: Ամուսինս իր անցեալին ծանօթ էր: Ժէնէրալ Կոստանդին Կամսարականը, որպէս Կոնսուլ Ռուսական կառավարութեան կողմէ՝ յաջորդաբար պաշտօնավարած էր Էրզրում, Վան, Դամասկոս և Պէյրութ: Իր օրօք է եղած, որ Մարօ Նազարբէկը կարողացած է, իր թոյլտուութեամբ, բանտարկուած Հնչակեան Ընկերներին (Սուէտիոյ մէջ) այցելութիւններ տալու...: Ժէնէրալը զինուորական կցորդ էլ էր եղած Ռուսական Տիպլօմաթիք Մարմնին, զանազան քաղաքներում: Ռուսական Յեղափոխութեան ատեն նա էլ կորցրեց իր ամբողջ հարստութիւնը:

Վարդս դեռ մկրտուած չը լինելուն՝ ամուսնոյս հետ խորհեցանք, որ միակ արժանաւոր և յարմար անձնաւորութիւնն էր՝ Վարդիս կնքահայր դառնալու: Ամուսինս երբ իրեն առաջարկեց այդ, Ժէնէրալը սիրով ընդունեց և Տէր Շաղոյեանի (մեր տաներէցը) ձեռամբ մեր տան մէջ մկրտուեցաւ:

Ժէնէրալը իր կողմից էլ Վահէ անունը աւելացրեց տղայի Վարդ անուան վրայ և ոսկի խաչ մը վզէն կախեց: Ինքը փափաքեցաւ ինձմէ սորվել, հայերէն սանիկ, կնքահայր, կնքամայր եւայլն բառերը, որպէս զի մեզ նամակ գրած ժամանակին ճիշդ բառերը գործածէր: Ժէնէրալը ժամանակ մը եւս մնաց Եգիպտոս Աղէքսանդրիա, իր ազգականի մօտ և քիչ ատենէն մեկնեցաւ Պարիզ՝ իր տիկնոջ մօտ, որ Ռուսահայ յայտնի Աբգար Յովհաննէսեանի քոյրն էր: Երկար ատեն թղթակցեցաւ ինձ հետ, Ֆրանսերէն լեզուով, հազիւ մի քանի հայերէն բառեր դնելով:

Այդ օրերին էր, որ Սուէտիոյ քաջ մարտիկները իրենց ընտանիքներով Մուսա Տաղն էին բարձրացել՝



Սաղահի աջ կողմը Աղահ, Մլեհ. ձախը՝ Եսայի Եաղուպեան

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

անգութ Թուրքի հալածանքներին զէնքով պատասխա-նած քառասուն օր. ու յետոյ՝ ֆրանսական նաւով հա-գիւ ազատուելէ վերջ՝ Փօրթ-Սայիտի Քէմփը *առաջ-նորդուած: Հոն հաստատուեցաւ դպրոց, եկեղեցի, հի-ւանդանոց եայլն: Հոն, պահապան հրեշտակի մը պէս՝ հայ կամաւորների և ֆրանսական պաշտօնէութեան մի-ջեւ, և հիւանդանոցների մէջ Թարգմանի և բարերար հրեշտակի մը դերը կը կատարէր Օր. Ռօզ Գալֆայ-եան. նա հարազատ մօր մը տպաւորութիւնը թողած է նրանց վրայ:* Փօրթ-Սայիտ *այցելողը անպատճառ պի-տի հանդիպէր Օր. Ռօզի տունը և անոր հիւրասիրու-թիւնը պիտի վայելէր: Շատ-շատեր Եգիպտոսէն՝ դը-նացին այցելութեան ի* Փօրթ-Սայիտ *ու ուսումնասի-րութիւններ ըրին — ամուսինս էլ գնաց Ռամկ. Ընկեր Ապահի հետ և հոն ուրիշ ընկերների հետ ծանօթացաւ ու նկարուեցաւ. որը Օր. Ռօզ Գալֆայեան սիրայօժար ինձ նուիրեց:*

Ընդհանուր պատերազմը կը շարունակուէր:

Գահիրէի մէջ կազմուեցաւ «Հայ Ազգային Միու-թիւն», *որի մէջ բոլոր կուսակցութիւններն էլ իրենց ներկայացուցիչն ունեցան:* Սապահ-Գիւլեան, Տամատ-եան *և* Հանըմեան: *Միութիւնը մինչեւ իր կազմութիւ-նը՝ յաճախակի յուզումնալից և շատ պատասխանատու ժողովներ էր ունեցել, որին յաջող ու խաղաղ վախճա-նը կը պարտէին Սապահին...: Իրենց հետ յարաբե-րութեան մէջ մտած էր Ֆրանսայի ներկայացուցիչ* Գըն-դապետ Ռոմէօն, *որ բացառիկ յարգանքով կը խօսէր ամուսնոյս հետ և երբ մի օր — երբ ամուսինս տանը մէջ կը պատրաստուէր՝ Ֆրանսա մեկնելէ առաջ, աչ-քէ անցնել Հնչակեան Հերոսների, Նահատակների նը-կարները — յանկարծ* Ռոմէօ Գնդապետը *Հէլլիօբոլիս այցելեց մեր տունը, ու երբ այդ նկարները տեսաւ, ամուսինս հարցրեց թէ ո՞վքեր են այդ պատկերները,*

յուզուած պատասխանեց թէ «սրանք բոլորը Թուրքերի ձեռքով նահատակուած Հայ Քաջեր են»։ Ռոմէօն գոյն առաւ, գոյն տուաւ և Հայու մը չափ զգացուած՝ բռունցքը շարժեց սպառնագին ու ըսաւ... «մենք նրանց ցոյց պիտի տանք...»:

Ո՞վ կրնար ենթադրել թէ՝ այդ զգացումները չը պիտի յարատեւէին և իրենց խարդախ կառավարութեանց զոհ պիտի գնային Հայերը...։

Եկաւ օրը ամուսնոյս մեկնման։ Պատերազմի այն միջոցին էր, որ ամէնից աւելի գերմանական սուզանաւերի աւերների մասին կը կարդայինք։ 1916ի վերջերն էր, որ Սապահը, կրկին իր պարտականութեան գլուխն անցած՝ տուն, ընտանիք, զաւակ՝ երեսի վրայ թողլով՝ անորոշ ժամանակով հեռացաւ...։

Փոքրիկս Վարդ՝ սովորած լինելով Հայրիկի հետ միասին պտոյտի գնալու՝ հօրը տեսնելով գլխարկը գլխին, «պապա ապապա՞», Հայրիկը դո՞ւրս է գնում, հարցրեց ու լացեց, որ հայրը իրեն միասին չի տանում...։ Ու լացեցինք բոլորս էլ միասին։

Եգիպտական խռովութիւններն էլ վրայ հասան — արաբները Գահիրէի մէջ, սկսել էին հայերի տները մտնել, չարչարել ու սպաննել։ Գահիրէի հայ ժողովուրդը Անգլիացւոց միջոցաւ վազեց ապաստան գտնելու Հէլիօպօլսում։ Եւ Պրն. Համբարձում Երամեանը, Վանեցի աչքաղուրկ վէթէրան Ուսուցիչն էլ մեր դրացի տանը սենեակ վարձեց. Ծանօթացանք իրար հետ. և երբ դրացի տանը ազգականները, բարեկամները խճողեցին իրենց տունը, Պրն. Երամեան, մեր հրաւէրով, իր օգնականին հետ միասին, մեր տունը ապաստանեց, քանի որ դեռ եգիպտական խռովութիւնները կը շարունակուէին։ Իր ներկայութիւնը մեր տան մէջ թէ՛ ազդեցիկ էր և թէ՛ հաճելի։ Երեխայք, վերջապէս,

ակնածանօք կը շարժուէին և շատ շարութիւն չէին ա-
նի դէթ իր ներկայութեան. ընդհակառակը, մեծ հա-
ճոյքով և ուշադրութեամբ կը լսէին նրա ա՜յնքան հե-
տաքրքրաշարժ նկարագրութիւնները թէ՛ Վանայ ծովու
և քաղաքի, թէ՛ իր բարձրագոյն դպրոցի և թէ՛ իր ա-
շակերտների նկատմամբ: Սապանջիւլս, երբ Եւրոպա-
կան կտորներ կը նուագէր ջութակով, «ես բան չը
հասկցայ քու այդ տզտզոցէդ, վզվզոցէդ» կ'ասէր ու
կը խնդայինք. բայց երբ Հայերէն մի երգ նուագէր,
Պրն. Երամեան շատ գոհ կը մնար և «հիմայ բան հաս-
կըցայ» կ'ասէր: Վարդս միշտ իր ծնկների վրայ էր,
Նանասի աղջկանս անունը վերածեց «Արաքսի»ի: Տիգ-
րանիս կը կոչէր «Արքայից Արքայ, Մեծն Տիգրան», և
միշտ երգել կուտար անոնց՝ Հէլլիօպոլսի «Շաւարշան»
դպրոցէն սորված բոլոր իրենց Հայերէն երգերը: Վեր-
ջապէս ինքն էլ կը մխիթարուէր, մենք էլ: Մի օր էլ
Պրն. Արշակ Սաֆրաստեանին իր հետ էր բերել մեզ,
որ շատ գովեց Դանիէլիս ջութակահարութիւնը:

Մի անգամ, Վարդանանցի առթիւ, Հէլլիօպոլսի Շա-
ւարշան դպրոցը իր հանդէսը կատարեց Գահիրէի մէջ,
ուր ներկայ եղան Եգիպտոս այցելութեան եկած Կիլի-
կիոյ Սահակ Կաթողիկոսը՝ մի քանի Եպիսկոպոսներով:
Հոն արտասանութիւններ արեցին Տիգրանս ու Նանա-
սիս, որոնք արդէն այդ րոպէին իսկ կը ծանօթացուին
Գուշակեան Եպիսկոպոսի կողմից՝ Խապայեան Կաթո-
ղիկոսին. որ ծանօթ լինելով ամուսնոյս անցեալին,
մեր մօտ այցի էր ուղարկած իր եպիսկոպոսներէն մին՝
Գուշակեան Սրբազանի հետ: Եպիսկոպոսը պատմեց ինձ
թէ՝ ի՞նչպէս Կաթողիկոսը Երուսաղէմ գտնուած ժա-
մանակին — իր Եպիսկոպոսութեան ատեն — Սապահին
տեսած էր իր Թափառական պանդուխտ օրերի մէջ և
պաշտպանած...:

Պատերազմը կը շարունակուէր — Հնչակեան կա-

մաւորներ, երբ Եգիպտոս գային, անպայման Սապահի տան այցելութիւն մը կը տային, այդպիսիներից ամենէն խոստմնալից և համակրելի Հնչակեան Սուետիացի կամաւորը՝ Յաբէթ Իսկէնտէրեանն *էր, որ տարիներ վերջ՝ Դաշնակ գնդակի զոհ գնաց, ա՜յնքան վտանգաւոր ու խիզախ Արարայի հերոսամարտին կորիճի պէս դիմագրաւելէ վերջ...։*

Իր տասնեակ նամակներից՝ մի քանի փոքր հատուածներ աւելորդ չեմ համարեր ընթերցողիս ներկայացնել։

Սիրելի Մայրիկ,

... Հրամանով, անցեալ շաբաթ մինչեւ Պէյրութ գնացի, ազատուած եղբայրներս տեսնելու համար։ Ուրախ եմ ըսելու, որ եղբայրներէս զատ՝ ուրիշ շատեր ալ կան ազատուած. որոնց մէջ է նաեւ իմ շատ սիրելի ուսուցիչ կնքահայր՝ Գէորգ Նալպանտեանը։

Յուսամ թէ Հայրենիքի մէջ ազատ ըլլալու ժամանակը շատ հեռու չէ... միայն թէ մաղթենք, որ այս անգամուան ճիգն ալ պարապի չ'ըլլայ։

Հանեցէք, Մայրիկ ջան, եղբայրական համբոյրներս դրոշմել եղբայրիկներուս և քոյրիկներուս։

* * *

... Պարտականութեան դաշտէն է՝ որ կը գրեմ ձեզ այս նամակս։ Թնդանօթի ծուխերու գոլորշիներուն մէջէն կը կարծեմ տեսնել Ազատ Հայրենիքիս Ազատ Արշալոյսը։ Յուսամ թէ այդ օրը մօտալուտ է...։

* * *

... Ամսոյս 19ին (Սեպ. 22, 1918) շղթայազերծուեցաւ մեր յարձակողականը. մինչեւ հիմայ 5000է ա-

Ընկեր ՅԱՐԷԹ ԻՍԿԷՆՏԷՐԵԱՆ 1908ին

նելի գերի և 100ի մօտ թնդանօթներ ձեռք բերուեցան։ Զոհեր ունեցանք, որոնց մէջ նաեւ կային մեր ընկերներէն պաշտելի հոգիներ։ Ես ո՛չ վէրք ունիմ, ո՛չ բան. ողջ առողջ եմ, թէեւ հրաշքով ազատուած։ Առաջին իսկ օրը քսան մղոն յառաջխաղացում մը ունեցանք։ Մեր պարտականութիւնը լիովին պիտի կատարենք, ատոր վստահ եղէք։ Մեր բանակի բարոյականը հիանալի՜ է։

Կցկտուր գրելուս ներեցէք։ Ռումբերու տակէն գրուած նամակ մը հազիւ այսքան կրնայ ըլլայ։

Լէժիոն տ'Օրիան
4րդ Cie.

Բարեւներով
ՅԱԲԷԹ Մ. ԻՍԿԷՆՏԷՐԵԱՆ

Ամուսինս ողջ առողջ՝ Եգիպտոսէն Պարիզ հասած՝ ինձ կը գրէր հետեւեալ տողերը։

«... Տեսնուեցայ Պօղոս Փաշայի և Հայ Պատուիրակութեան միւս անդամների հետ. ժողովներ ենք անում հրատապ *խնդիրների մասին։ Մասեհեան Յանը եւս անդամ է պատուիրակութեան. կան և՛ Կովկասցիներ էլ։ Մեր գալը շատ լաւ տպաւորութիւն առաջացրեց։ Շրջանը մտերմական է. աշխատում ենք մեր ուժերի և կարողութեան սահմանների մէջ։ Ուրախ եմ, որ գալովս շատ խնդիրներ աւելի լաւ պարզաբանուեցին։ Պօղոս Փաշայի դէմ շատ խնդիրներ կային, այդ բոլորին վերջ տրուեցաւ և ջանք չենք խնայում, որ ամէն գործունէութիւն կեդրոնանայ Հայ Ազգային Պատուիրակութեան շուրջը։*

«Երեք–չորս օր առաջ այցելեցի Ժէնէրալ Կամսարականին և իր կնոջը. կինը շատ բարեմիտ է և զարմանալի կերպով նման՝ իր հանգուցեալ եղբօրը, Արգար Յովհաննիսեանին, որ մեր Ներսիսեան դպրոցի հոգաբարձու էր։ Անցեալ կեանքից, Կովկասից, շատ բաներ

վերյիշեցինք։ Ժէնէրալն ասաց՝ որ քեզ նամակ է գրել, հարկաւ պատասխանած կը լինիս։ Իրենք շատ լաւ շրջան ունեն Պարիզում։ Ժէնէրալը քեզ, Վարդիս, երեխայոց մասին միշտ խօսեց. ծիծաղով պատմեց մըկըրտութեան օրուան Վարդիս արածները»։

Ուրիշ առթիւ, կրկին Պարիզից։

«Քեզ միշտ ասել եմ, որ ճշմարտութիւնը, արդարութիւնը և աշխատանքը չեն կորչիլ անհետ...։ Վ.-ը մօտս եկաւ. ցոյց տուեց կառավարական մի պաշտօնաթուղթ, որ կ՚ըսպառնար դրաւի տակ առնել գոյքերը — պարտաւորուեցայ դրամ տալ, ի՞նչ անեմ։ Ես իմ ազգային, կուսակցական գործունէութիւնս առաջ կը տանիմ. ի՛նչ փոյթ՝ թէ բարբանջանքներ կը լինին ինձ դէմ — և ո՞րի դէմ չեն եղած — Քեզ՝ կեանքը ինձ ըլծակից արաւ, ուրախ եմ քեզ պէս կին ունենալուս համար, որ ուղղակի ընկեր ես. եթէ դու չը լինէիր, ես կը մեռնէի որպէս մի հասարակ ուսուցիչ. բայց դու տարար խաչդ և ինձ միջոց տուեցիր իմ պարտականութիւնս կատարելու դէպի իմ Ազգս, Կուսակցութիւնըս և Հայրենիքս...։ Շա՜տ ապրիս, բալա՛ս»։

1917, Փետրուար 5ին, Սպանիոյ Վիգօ քաղաքէն՝ հետեւեալ նամակն ստացայ ամուսնիցս։

«... Այսօր, երեկոյեան, ճանապարհ ենք ընկնում, երեքովս միասին, Տամատեան, Հանըմեան և ես, դէպի Նիւ Եօրք, ուր 16 օրէն կը հասնինք։ Ֆրանսական Հիւպատոսարանը ապահովացրեց, որ մեր նաւը ո՛չ մի յարձակում չը պիտի կրի։ Հայ Ազգային Պատուիրակութեան ծրագիրն է, որ Ամերիկայի մեր միսիան վերջացնելուց յետոյ՝ վերադառնանք Պարիզ և կեդրոնական մի օրգան հրատարակենք Հայերէն լեզուով, ուր գտնուենք մէկ մէկ հոգի ամէն կուսակցութենէ, որպէս պարագլուխ։ Պնդեցին, որ ես անպատճառ վերադառ-

նամ. դրամագլուխը իրենք պէտի պատրաստեն և լայն վարձատրութիւն անեն:

«Ի՞նչ գրեմ քեզ, էլ ի՞նչ ասեմ, սիրելիս. դու գի-տես թէ կեանքիս դառնութիւնը և քաղցրութիւնը քեզ հետ միասին եմ բաժնել. եթէ աւելի մեծ չափով՝ դա-ռըն օրեր ենք ունեցել, դա էլ այն Ազգային Սուրբ Գործի համար է, *որին զոհաբերել եմ իմ կեանքս, դեռ երիտասարդութեանս առաջին օրերից:*

«Դու ինձ միայն ամուսին չես եղած, այլ՝ ընկեր. դրա համար էլ՝ բեռս շատ թեթեւ է երեւացել: Հեռու եմ. ապրում եմ քաղցր յիշատակներով, ապագայի ա-նուրջներով: Մնա՛ս բարեւ, իմ ցաւերիս և ուրախու-թեան ընկեր՝ առաքինի ամուսինս...»

ՍՏԵՓԱՆԴ

Ողջ առողջ Ամերիկա հասնելէ վերջ՝ ամիսներ ան-ցան ու ամուսինէս հեռեւեալն ստացայ:

«... Զարմանալի մի բան քեզ պատմեմ — Եգիպ-
տոսի Ազգային Միութիւնը Տամատեանի անունով 1500
տոլար է ուղարկել մեր վերադարձի համար. բայց ես
ճանապարհածախս չը վերցրի, քանի որ հոս մնացի ըն-
կերների ստիպմամբ: Նրանք երկուսը՝ Հանըմեան *և*
Տամատեան՝ *ինձ յատկացուած բաժինն էլ իրենց մէջ*
են բաժնել, բացի այն՝ որ շաբաթական 25 *տոլար էլ*
իրենց ապրուստի դրամ կ'ըստանային: *Այստեղի Մի-*
ութիւնից էլ՝ 500*ական տոլար են վերցրել և լուր են*
տարածել, որ ես էլ 500 *տոլար եմ առել և չեմ վերա-*
դառնում... — սրանից աւելի լրբութիւն և ստորնու-
թիւն չէր կարող լինել այդ կեղծ գործիչների *կողմից:*
Ի՞նչ անելնին չեն իմանում, երբ տեսնում են մեր Կու-
սակցութեան յառաջդիմութիւնն ու բարգաւաճումը և՝
ամենակեղտոտ ճափառութքներ են արձակում Կուսակ-

ցութեանս և իմ հասցէին: Բայց դրանք ողորմելի շէնքեր են...:

«Սիրելի Բերուզս, ո՛չ միայն մայր ես, այլ և՝ հայր. ինչ որ պէտք է՝ արա՛. ես երեխաների կարօտով մաշւում եմ, բայց Գործը կայ, ընկերները կան: Ես էլ իմ վերջին ուժս թափում եմ օգտակար լինելու այն Գործին, որ իմ ու ընկերներիս կեանքի իտէալն է եղել:

«Պատերազմի պատճառով, հեռագրական գործակալութիւնները երաշխաւորութիւն ցոյց չեն տալիս և դրա համար է՝ որ անհագին ժամանակ է անցնում, մինչեւ քեզ դրամական օգնութիւն հասցնելս. որով՝ տառապանքդ, որ հոգիս կսկծացրեց, եղել է իմ կամքից անկախ...:

«Ընկերները որդիական խնամք են թափում վրաս և ամէն հոգատարութիւն տանում: Մեր ժողովներին հինգ-վեց ժամ հեռաւորութիւնից մարդ է գալիս լսելու. ասեղ ձգելու տեղ չի լինում. դրա համար էլ՝ լինում են ասիական նախանձ, ատելութիւն, չըկամութիւն, որոց արժէքը շատ լաւ գիտէ հասարակութիւնը և նշանակութիւն չի տալիս սեւ-հոգիների ասած-գրածներին: Ես գետն անցել եմ, ողորմելի գրչակների գրածները իմ քամակովս կ'անցնեն քամիի պէս, առանց ինձնից բան պակասեցնելու:

Պոսթօնից.— «Գանգատուելու իրաւունք ունիս, նամակս չափից աւելի ուշացաւ. միակ պատճառն այն է, որ շատ եմ զբաղուած. անդադար այս ու այն կողմ եմ ճանապարհորդում. շարունակ ընկերներով եմ շրջապատուած. ազատ ժամանակ բնաւ չունիմ. հազիւ թերթին եմ հասնում: Արեւելեան մասնաճիւղերին տըւած այցելութիւններս աւարտելու վրայ են շուտով. աստիճանաբար, դէպի վեր կը բարձրանամ Կանատա և

ապա Չիֆակը, ուր կը հաստատուիմ այս ձմեռ:

«Զարչարանքդ հոգւոյս բաժնում եմ. բայց բալաներիս մէկ համբոյրը ամէն բան մոռցնել կը տայ քեզ: Գիշեր-ցերեկ աչքիս առաջն էք. իմ երջանկութեան րոպէները այն րոպէներն են, երբ յոգնած, աթոռիս վրայ նստած՝ տունս աչքիս առաջ կը բերեմ, կը խընդամ ինձ ու ինձ, ու յետոյ՝ ակամայ՝ արտասուք կը թափեմ. բայց յետոյ, Ազգիս ցաւերը միտս ընկնելով՝ հոգի կ'առնեմ և գրիչին կը դիմեմ և կամ՝ պարտականութեանս կը գնամ: Կեանքի յորձանքը ինձ դրել է իր ալիքների մէջ, զարկւում եմ աջ, զարկւում եմ ձախ: «Պարտականութեան զինուոր» — այս է եղել իմ կեանքս. այս հասկացողութեամբ էլ յառաջ կը գնամ մինչեւ մահ»:

Ուրիշ առթիւ:

«Մեկնել էի Արեւելեան նահանգները և օրական 1-2 տեղ ժողովներ էի անում, խնդիրները բացատրելու համար. ուր որ գնում եմ, ներկայ են լինում 5-6,000 մարդ. մեր Կուսակցութիւնը իր բարձրութեան վրայ մնաց: Նիւ Եօրքի և ուրիշ քաղաքների մէջ՝ երբ հարցերը իրենց կը բացատրէի, ժողովուրդը, մանաւանդ չէզոք տարրը, կը պոռային որ ես երթամ Պարիզ, իբր պատգամաւոր. բայց չէինք կարող թոյլ տալ, որ ժողովրդական միահեծանութիւնը ջնջուէր և իր իրաւունքը մի քանի շառլատան խմբակցութիւնների ձեռքն անցնէր..., դրա համար յառաջ եկաւ բոյկոտը, որ զուտ սկզբունքային տեսակէտ էր: Ես իմ գործս կ'անեմ հասկացածիս և խղճիս համեմատ. ուրախ եմ, որ ժողովրդական լայն համակրութիւն ունիմ»:

Պոսթօնից.— «Այո՛, տարին անցաւ, որ ես «անփորձ տեղս եմ հասել». նամակդ կարդալով՝ շատ յուզուեցայ, մանաւանդ երբ յիշել էիր Վարդիս այն օրւայ

հարցը՝ «պապա ապա՞պա» — «Աստծու պահած գառը գայլը չի ուտիլ», բալաս...: Ասում ես, որ Վարդիս լեզուն բացուել է — ե՞րբ է որ փակուել էր, նա միշտ սոխակ է եղել. իմ հրեշտակ, քաղցրիկ Վարդս, գառնուկս, Թռչնիկս, առիւծս, աղաւնիս, արծիւս, քաջս: Հայկի պէս ուժեղ, Տիգրանի պէս հսկայ, Արտաշէսի պէս խելօք, Տրդատի պէս սէգ՝ «hայիկ»ի աննման հրեշտակը, նամակ «գըյի» տեսնեմ:

«Այսպէս, սիրելի Բերուզս, յոյս մեծ ունեմ, որ աշխատանքս չի կորչիլ և ինքնավար Հայաստանը կ’ունենանք: Գործը ամէն բանից վե՛ր և ա՛ռաջ. իմ հայրական զգացումներս տեղի պիտի տան Ազգային Փըրկութեան զգացումների առաջ — ես այդպէս եմ հասկացել իմ պարտականութիւններս՝ այս կեանքի մէջ»:

Չիքակոյից. — «Ուշացած նամակդ ստացայ, մի քիչ սիրտս հանդարտուեց: Ասեմ, կեանքի այս դառնութիւնների մէջ՝ ոչինչ չի կարող իմ հոգին վառ պահել, ինձ խթան հանդիսանալ, եթէ ոչ՝ քո նամակներըդ: Գէթ տան մասին սրտի անձկութիւն չը պիտի ունենամ, որպէս զի կարողանամ դիմանալ և պայքարի գործս շարունակեմ, պարտականութիւն կատարեմ: Օրական հարիւրաւոր նամակներ եմ ստանում արտասահմանից, Ամերիկայի հայերից — դրանք Հայ ժողովրդի հեծկլտանքները, իղձերը, իրաւունքները, պահանջներն են առաջադրուած. կարող ես երեւակայել՝ թէ դրանք սրտի ի՛նչ դառնութիւններ, ի՛նչ պարտականութիւններ են բացում առաջս. գլուխս, սիրտ պէտք է, որ դիմանայ և հաւասարակշռութիւնը չը կորցնի:

«Ընկերներիս շատերը բնաւ չեն ուզում, որ այս օրերում՝ ես բացակայեմ Ամերիկայից. Նապաստակներ կան, որոնք կ’ուզեն իմ հեռանալս, որպէս զի ասպարէզ մտնեն և թափած քրտինքներիս պտուղը առատօրէն վայելեն: Քսան տարի գործերից հեռացող,

*Կուսակցութեան ամենամեծ հարուածը տուող Ն.-ը ու-
զում է Ամերիկա գալ, պայմանով որ՝ նախապէս իրեն*
6000 *տոլար հեռագրե՛ն...: Տեսնո՞ւմ ես* շառլատա-
նութիւնը: *Բայց ես կ'ուզէի որ նա գար, որ այս տեղի
ժողովուրդը և ընկերները տեսնէին իր խելքն ու գոր-
ծը...:*

«*Վերջապէս, սիրելի Բերուզս*, «պտղաւէտ ծառին
շատ քար նետող կը լինի» — *ես իմ պարտականութիւ-
նըս կը կատարեմ, պայքարից էլ վախեցողը չեմ* — հոգ
չէ թէ սողուններ ոտքիս տակը հոր փորեն:

«Հայկական Դատը սխա՛լ ուղղութեամբ են տա-
նում, Պատուիրակութիւնը *սխալուել է* և օտար պե-
տութիւնների *հովանաւորութիւն* է ուզել, որի դէմ ես
հրապարակապէս բողոքեցի»:

Պատերազմը վերջացել էր. Ամերիկեան և այլ «ման-
տատ»*ների խնդիր — հարց էր դրուել հրապարակ՝ Հայ
Ազգային Պատուիրակութեան կողմից, ու սրա դէմ,
ամուսինս երկար յօդուածաշարքերով բողոքեց* «Երի-
տասարդ Հայաստան»*ի մէջ, որ՝ այն ժամանակ ձեռքէ
ձեռք կը խլուէր, մինչեւ իսկ Եգիպտոսում:*

*Տարիներ վերջ հոգատարութեան մասին Հայ Դի-
ւանագէտ* Նորատունկեան Գաբրիէլ Էֆէնտին *էլ նոյն
եզրակացութեան կը յանգէր:*

*Ամուսնոյս համակիր կամ հակակիր գիտակից անձ-
նաւորութիւնները իրենք անձամբ կը խոստովանէին
ինձ՝ ամուսնոյս* Քաղաքագիտական Բարձր Կարողու-
թիւնը *և իրենց հիացումը կը յայտնէին: Ռուսահայ
Դաշնակցական* Պրն. Լալայեանցը՝ *միշտ բարեկամ ա-
մուսնոյս, քանի՛ քանի՛ անգամներ առիթը չէր փախ-
ցներ, իր ազնիւ տիկնոջը հետ — որ նոր էր վերադար-
ձել Եւրոպայից — մեզ մօտ գալու և այդ օրերի նիւթ*
Հայկական խնդրի *վրայ խօսակցելու. իսկ* Գուշակեան

Սրբաղանը «Քաղաճական Մարգարէ» կը կոչէր ամուսնոյս։

Կիլիկիոյ ազատութեան համար Լէգէոնական կամաւորների թափած արիւնը, վատնուած դրամն ու կրած չարչարանքները արհամարհուելով Ֆրանսական կառավարութեան կողմից, մեր՝ ինչպէս նաեւ շա՜տ շա՜տ Հայերի Կիլիկիա կամ Հայաստան փոխադրութեան յոյսը ջուրն ընկնելով՝ մենք անորոշութեան մէջ ընկանք, մանաւանդ երեխայոց ապագայի, կրթութեան մասին ամուսինս հետեւեալ խորհրդածութիւններն էր անում՝ ինձ գրելով։

«Պատերազմը վերջացաւ. Նոր դռներ բացուելու վրայ են. հաւանական է որ ես Ամերիկայից դուրս գամ։ Մեր Դատը ուզում են սպաննել, ամէն բան աչքի առաջ առնելով՝ «Երիտասարդ Հայաստան»ի մէջ հրապարակային բողոք ուղղեցի։

«Լազօյից երկար նամակ առայ. Կեդրոնական Վարչութիւնը Կովկասի մէջ ձեռնարկել էր Ընդհ. Պատգամաւորական Ժողով գումարել, բայց չի յաջողուել։ Ասել են՝ որ «առանց Սապահի գործ չի երթալ, Կեդրոն գոյութիւն չի կարող ունենալ»։

«Եթէ մեր Դատը շուտ վճռուեց, այն ժամանակ «Հնչակ»ը կա՛մ Կովկաս կը փոխադրենք, կա՛մ Երկիր, երբ Հայաստանն իր անկախութիւնն ունենայ։ Եթէ Ռուսաստան կարգադրուի, մի օր էլ մեր տունը կ'երթանք։ Թիֆլիզի մէջ մերոնք «Նոր-Աշխարհ» պիտի հրատարակեն, հեռագրով թախանձում են որ Կովկաս գնամ. իսկ այս տեղ, Մասնաճիւղերը պահանջում են, որ չերթամ։

«... Զարմանալի են Կովկասի ընկերները. Լազօն շարունակ գրում է, որ «արի՛ և ինձ ազատի՛ր». բայց ես չեմ կարող երթալ. ո՞վ պիտի ապահովէ տունս...։

ԸՆԿԵՐ ԼԱԶՕ
Քրտական Այբուբէնի Հեղինակը

«Անցեալ գիշեր Ջութակի ձայն լսեցի, միտս ընկաւ բալաներիս նուագը, և ես ինձ չը կարողացայ զսպել, լացեցի: Կանատա, Չիֆակօ, մեծ մասամբ ընկերները Քղեցիներ են, որ 32 տարի առաջ, Քղի գըտնուած ժամանակս, իրենց հայրերը իրանց պատմած են եղել իմ մասին. հիմայ այդ որդիները տեսնում են այն մարդը, որ երբեմն իրենց գիւղերն է պտտել, գործի հրաւիրել, դրդել է իրենց հայրերին: Իրենք լսել են բոլոր քաշած նեղութիւններս այս երկրի մէջ, 12–14 տարի առաջ, երբ ահագին դժուարութեամբ Մասնաճիւղեր էի կազմակերպում. այժմ, դրա համար է՝ որ ուզում են իմ հին նեղութիւններս մոռցնել տալ և վըրաս գուրգուրալ: Մեր հակառակորդները իրենց ժողովների մէջ կ'ասեն եղել, որ «Հնչակեանները մարդապաշտներ են». տես' թէ հոգին, նախանձը ո՞ւր է տարել իրենց:

«Եթէ բալաներս չարութիւն կ'անեն, խնդրեմ, սիրելիս, աչք գոցիր, քանի ես բացակայ եմ: Մի քանի օր առաջ սաստիկ անձրեւի բռնուելով՝ մրսեցի և երկու-երեք օր հիւանդացայ: Սեբաստացի ընկերների տունը կը գնամ ու կը հանգստանամ. որդիական ամէն գուրգուրանք պակաս չեն անիր: Ճիշդ՝ որ իմ հայրենակիցներս են, որ Սապահի գլխով կ'երդուեն:

«Լազոյի նամակը թերթի մէջ դրեցի. դա մեծ հարուած եղաւ թշնամիներին, որ ոտերս են ուզում ծամել: Լազօն խիկարէս, հանդէպ ինձ՝ ամէնից անկեղծը դուրս եկաւ»:

Պոսթօնից.— «Անուշիկ Սապահգիւլս, քաղցրիկ բալա'ս, Թարգմանութիւնդ տպուեց «Երիտասարդ Հայաստան»ի մէջ. ամէնքն էլ ուրախացան. թէ' ընկերները և թէ' Հայ հասարակութիւնը — ապրի'ս բալաս. առաջ ուժ տո'ւր դասերիդ, Ջութակիդ և երբ աւելորդ ու ազատ ժամանակ ունենաս, Թարգմանի'ր դարձեալ:

Վարդս դեռ թող չը կարդայ, թող խաղայ և չարութիւն անի. ինչ որ կ՚անի, ձայն չը հանէք: Հրեշտակ Վարդս, դպրոց ես գնում, պարել ես սովորում, քաղցըր բալաս. քեզ «հեյադիտակ» պիտի բերեմ, ոսկէ մատանի, գեղեցիկ գրիչ, փողպատ, կօշիկ, ինչ որ ուզես: Աչքե՞րդ ցաւել են բալաս. սիրտս այրուեց. թող այդ հիւանդութիւնը ինձ գար, ո՛չ թէ քեզ, բալաս: «հայիկ»դ քեզ շա՛տ շա՛տ է կարօտել:

«Աննման բալաներս, աչքս դրանն է մնացել, պէտք է զգաք, որ այս օտար երկրի մէջ, ձեր նամակները անհուն մխիթարութիւն են ինձ համար, դրանք ինձ կորով են տալիս, որ այս դժուար գործերը տանեմ»:

Ուրիշ առթիւ Չիֆակոյից:

«Հիմայ ես աւելի եմ զգում պատասխանատւութիւնս՝ ընտանիքիս, զաւակներիս հանդէպ. և հապճեպով քայլ չպիտի առնեմ այժմ. ուստի տա՛ր միաժամանակ էլ՝ այդ ծանրութիւնը, տա՛ր Հայ Կնոջ քաջութեամբ. տա՛ր Հարազատ Մօր դիմացկունութեամբ, ինչպէս որ ցարդ տարել ես: Քանի որ պատերազմը վերջացաւ, հարկաւ պիտի մտածեմ երեխայոց ապագայի, ուսման մասին, եթէ դիւրութիւններ ստեղծուին: Քանի ողջ եմ և գրիչը ձեռքիս՝ դուք այլեւս կարօտութեան մէջ չէք մնալ. արդէն քաշածներդ բաւական եղան...:

«Գիշերուայ ժամի մէկն է. վաղը թերթի դուրս գալու օրն է. այսօր անընդհատ աշխատել եմ. հազիւ վերջացրի գրութիւններս, այժմ էլ այս նամակն եմ գրում, որ ինձ չը մեղադրես...: Ի՞նչ անեմ, սիրելիս, սեղանիս վրայ՝ աչքիս առջեւն են ձեր պատկերները. դրանով գոհանում եմ և անձնատուր լինում Գործին, որով մռայլութիւնը գալիս է. յանկարծ միտս է ընկնում, որ տունը նամակ չեմ գրել...: Հեռագրել ենք,

որ ժիրայրը գայ. Շահէնը Կիլիկիա անցած պիտի լի-
նի: Այս Շահէնն է, որ իսկական անկեղծ աշխատակի-
ցըս եղած է. ապագայ կը խոստանայ այդ տղան:

«Շարունակ աղխողորմ ճիչեր են արձակում ամէն
կողմերի ընկերները, դրամ են ուզում: Ընկերներից
շատերի ցանկութիւնն է՝ 35-ամեայ յոբելեանս տօնել՝
ինձ ապահովացնելու համար մի անգամ ընդ միշտ,
այդ ընկերները նոյնպէս ցանկանում են, որ դուք այս-
տեղ գաք. մնում է Պատգամաւորական ժողովի որոշ-
մանը: Ընկերները համոզուած են, որ եթէ ոտքս այս-
տեղից քաշեմ, ամէն բան կը փլչի և ո՛չ Կիլիկիան, ո՛չ
Պոլիսը և ո՛չ էլ Երեւանը դրամ չեն կարող ստանալ:

«Հրեշտակ բալաներս, սիրտս տրորւում է ձեր կա-
րօտովը, գիշերները յաճախ երազիս եմ տեսնում ձեզ
և լալիս: Երբեմն աճապարում եմ շուտ քնել, որպէս
զի շուտով երազեմ և ձեր կարօտն առնեմ...»:

Պրանդֆորտից.— «Անուշիկ բալաներս, այրուեցայ
ձեր կարօտով. գրեցէք ձեր աշխատութեանց մասին,
տեսնեմ. խելօք կը լինէք բալաներս և մայրիկին կը լը-
սէք. որըդ որ շատ նամակ գրի, նրան շատ պարգեւ
պիտի բերեմ. ամէնից աւելի Վարդս պիտի գրի, թէ
ոչ՝ ո՛չ ձի կարող է նստիլ, ո՛չ էլ էշի վրայ. չէ՞ որ
խոստացել եմ իրեն՝ թուր, սուր, տարճանակ, ձի, էշ,
կով, եղ, ոչխար, այծ, կառք, օթօմօպիլ բերելու...:
Անվերջ պաչիկներ բալաներիս:

«Սիրելի Բերուզս», ժողովը որոշեց, սպասի՛ր հե-
ռագրիս՝ Ամերիկա գալու պատրաստութեանց սկսելու
համար»:

Հակառակ որ՝ Ատլանտեան Ովկիանոսը աչքս շատ
էր վախեցրել, Ամերիկայից Ֆրանսա մեր՝ տարիներ
առաջ ուղեւորութեան ընթացքին և ամէն ցանկութիւն

մէջս մեացրել էր, կրկին կորելու այն, և սակայն, երեխայոցս՝ հօրը մօտ վազելու և Ամերիկան տեսնելու փափաքը ինձ էլ ուրախացրեց, որ չորս երկար տարիներ զաւակներիս անհայր մեծացնելուս վերջ, կրկին բախտը կ՚ունենանք միանալու և ծնողական բեռս մասամբ թեթևացնելու: Մանաւանդ որ, Դանիէլս էլ Փրանսայի Մօնպէլիէ Համալսարանը ուղարկած լինելով, առիթը պիտի ունենայի իրեն էլ տեսնելով՝ կարօտս առնելու: Եւ երբ, ամուսինս՝ մաս առ մաս, ինձ դրամ փոխադրեց, որպէս ճանապարհածախս, երեխայոցս հաւաքեցի և Գահիրէի ակնաբոյժ՝ Տօք. Մարգարեանին տարայ աչքերի քննութեան համար, բժիշկը հէնց որ մեր խումբը տեսաւ, «հասկցայ, Ամերիկա պիտի երթաք» ըսաւ և սկսաւ իր խնամքին: Ծիշդն ասած, որոշ չեմ կրնար ասել, որ նա ի՛նչքան օգտակար եղաւ, որովհետև, երեխայոց առողջ աչքերը ուկարացան. այնպէս որ՝ չա՛տ ուշացաւ մեր հեռացումը Եգիպտոսէն: Մի, երկու ամիս առաջ՝ տոմսակները պէտք էր գնել, լաւ տեղ ունենալու համար չոգենաւի մէջ, մանաւանդ որ բազմանդամ էինք: Ուստի, փոքրիկ Վարդիս հետս առած՝ մի, երկու անգամ Աղէքսանդրիա իջայ և վերջապէս յաջողեցայ հինգ անկողինով նաւասենեակ վարձել: Տոմսակները գնելուս վերջ, դարձայ Հէլիօբօլիս և իրեղէնները կապել տուեցի բարեկամ մարդկանց և ուղարկեցի Աղէքսանդրիա:

Օրը որոշուած, ամէն ինչ պատրաստ, Գահիրէի մեր բարեկամ ընտանիքի մօտ՝ սպասողական վիճակի մէջ էինք, երբ Պրն. Երամեան Աղէքսանդրիայից ինձ հեռագրեց, որ՝ մեր նաւը, իր որոշեալ օրէն երկու-երեք օր առաջ մեկնելու հրաման էր ստացել. ուստի, պէտք է փութամ Աղէքսանդրիա: Բայց Վարդս սաստիկ տաքութիւնով, հիւանդ անկողնի մէջ լինելուն՝ չը համարձակեցայ ճամբայ հանել. ու՝ կորսնցնելով

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄԵԱՆ
Վանեցի Աշուղուրկ Դաստիարակ

այդ նաւը, կրկին առայ երեխայոցս և լիջայ Աղէքսան-
դրիա, հոն ապրելու մի առ ժամանակ, մինչեւ յաջորդ
նաւու գալը. սակայն, տոմսակներս փոխելու դժուա-
րութիւնը ես անձամբ անկարող լինելով ստանձնել, իմ
պատուական բարեկամս Պրն. Հ. Երամեան, իր ան-
տես աչքերով, իր ազդեցութիւնը բանեցրեց պաշտօ-
նական մարդկանց վրայ, որոնք իր անձնական բարե-
կամներն էին, և վերջապէս յաջողեցրեց գալիք նաւի
համար տոմսակ կտրել տալ, առանց նիւթական վնաս
հասցնելու ինձ — որի համար շատ երախտապարտ եմ
իրեն:

Վերջապէս եկաւ նաւը, Պրն. Երամեանն էլ մեզ
ընկերացաւ մինչեւ նաւը և յուզուած, սրտաճմլիկ ողջ-
երթը մաղթեց մեզ, երեխայոց կուշտ ու կուռ համ-
բուրելով «հիմայ բոլորովին որբ մնացի» մրմնջելով:
Ինձ նուիրած էր իր սոյն պատկերը՝ սախպելով ինձ
պատկերին յետեւը գրել հետեւեալը — Սապահ-Գիւլ-
եան հիւրասէր և գերազնիւ ընտանիքին, յիշատակ ե-
բանտագէտ սիրոյ և անմոռաց բարեկամութեան:

Նոյն նաւի մէջ կը գտնուէր նաեւ, նոյնպէս Պրն.
Երամեանի հայրենակից ու աշակերտուհի՝ Օր. Նուարդ
Շաղոյեանը, մեր տանիքէց քահանայի դուստրը, Գա-
հիրէէն, որ՝ որբանալով հօրմէն ու մօրմէն, Ամերիկա
կը գար, փոքրիկ եղբօր հետ միասին, մեծ եղբայրների
մօտ ապրելու:

Ըստ սովորականին, նաւը մտած րոպէէս հիւան-
դացայ՝ մինչեւ Մարսէյլ դուրս եկանք: Հեռագրել էի
Դանիէլիս՝ նաւի անունն էլ, հասնելիք օրն էլ, սա-
կայն նա՝ յենուելով նաւային տեղեկատու բիւրոներից
քաղած տեղեկութեանց վրայ, որոնք մի օր ուշացրել
էին նաւու հասնիլը, ժամանակին հոն չէր գտնուեցաւ
մեզ օգնութեան հասնելով՝ ազատելու մի կարգ մաք-
սային ձեւականութիւններէ և ձանձրոյթներէ: Բաժնը-

ւելով Շաղօյեաններէ՝ մենք, դժուարաւ գտանք Մարսէյլի մէջ մեզ պատսպարող մի օթեւան — ա՛յնքան որ լիքն էին օթէլները:

Տեղաւորուելէ վերջ՝ առաջին գործս եղաւ Դանիէլիս հեռագրել և տեղեկացնել մեր օթեւանի ո՞ւր գտնուիլը, և սակայն նա՝ հրաչքով, եկաւ գտաւ մեզ...: Ծովու վրայ՝ Տիգրանիս աչքերը սկսան նեղել և կրկին խնամքի կարիք զգացուեց. Դանիէլս նրան տարաւ յայտնի մի ակնաբոյժի մօտ, որ մի ամիս խնամելէ վերջ՝ թոյլ տուեց մեկնումի. ու երբ պատրաստուում էինք շոգենաւ առնել, Սապահգիւլս ծանր (թիֆօյով) հիւանդացաւ. մէկ և կէս ամիս էլ նրան խնամելու համար մնացի օթէլին մէջ, որով՝ մեզ սահմանուած ամբողջ ճանապարհածախսը վատնեցինք:

Խեղճ ամուսինս, քանի՛ քանի՛ անգամներ, հեռագրով տեղեկութիւն կը հարցնէր Սապահգիւլիս վիճակին վրայ, մինչեւ որ բախտ ունեցայ իրեն հեռագրելու թէ՝ ամէն վտանգ անցել է. ու կրկին, նոր զոհողութեան ձեռնարկելով, ամուսինս ստիպուեց մեզ ուղարկել իր բոլոր խնայողութիւնը՝ «Պատասխանատուներ» գրքից մնացած և մենք, Դանիէլիս օգնութեամբ և բժիշկների հաւանութեամբ, Մարսէյլից ընկանք ճանապարհ՝ դէպի Պարիզ. ուր մառախլապատ օրերի հանդիպելով՝ և կրկին տկարանալով՝ իջեւանում փակուած սպասեցինք մի քանի օր եւս, մինչեւ Դանիէլս ամէն ինչ կարգադրելով՝ մեզ դրեց Հավրըի շոգեկառքը, որ միայն առաջին ու երկրորդ կարգի ճամբորդներս պիտի առաջնորդէր La France նաւը:

Եթէ Դանիէլս Բժշկական Համալսարանի քննութիւնը չունենար այդ օրերին, զինքը հետս պիտի բերէր Ամերիկա, սակայն անկարելի եղաւ և սիրտս կոտրուած՝ առանց իրեն առանք նաւն, և բաւական հանգիստ ճամբորդութիւն մը ունենալով — թէեւ ես միշտ

պառկած դրութեան մէջ — հասանք Ամերիկա: Ամու-
սինս, որ Չիքակօ կը գտնուէր և իմ հեռագիրն ստա-
ցել էր — ո՞ր նաւով և ե՞րբ պիտի հասնէինք Նիւ
Եօրք — բայց հիմնուած արտաքին սխալ տեղեկութեան
մը վրայ՝ կարծել է որ մեր նաւը երկուշաբթի պիտի
հասնէր Նիւ Եօրք. ու ինքը, շաբաթ օրը — մեր Նիւ
Եօրք հասած օրը — թողել էր Չիքակօն և ճանապարհ
ընկել դէպի Նիւ Եօրք, երկուշաբթի մեզ դիմաւորելու
դիտումով. սակայն, միաժամանակ, բարեբախտաբար,
խոհեմութիւնն էր ունեցել՝ Նիւ Եօրքի Ընկեր Վ. Պօ-
յաճեանին — նաւային գործակալ — հեռագրելու իմ հե-
ռագրիս բովանդակութիւնը, և նա՝ տեղեկանալով գոր-
ծակալութենէն, որ մեր նաւը շաբաթ օրը պիտի հաս-
նի Նիւ Եօրք, առաւօտից եկած է եղել նաւամատոյց,
մեզի օգնութեան հասնելու:

Օդը ցուրտ ու խոնաւ էր. մեր անուան սկզբնա-
տառի "Տ" լինելը մեր գոյքերի քննութիւնը ուշացրեց.
այնպէս որ շատ նեղուելէ և մրսելէ վերջ՝ գոյքերիս
քննութիւնը կատարել տալէ վերջ միայն՝ նկատեցի, որ
մէկը ինձ կը հարցնէ թէ ո՞վ եմ — երբ երկաթէ ցան-
կի մօտ սպասող ժողովրդի մօտէն կ'անցնէի — ու իմ
պատասխանը ստանալէ վերջ՝ սրտնեղութեամբ կը պատ-
մէ թէ՝ «Երիտասարդ Հայաստան» թերթը ժամերով
բարձր բռնած, հոն սպասած է՝ իմ ուշադրութիւնը
գրաւելու համար. մանաւանդ, մի քանի անգամ, տեղ-
ւոյն մէջ նօթեր, հեռագիրներ ուղարկած է իմ անու-
նով, սպասման վայրին մէջ, գտնելու համար իր
ներկայութիւնը, ևն. սակայն ո՛չ մէկ բան իմ ձեռքս
չը հասաւ և երկար սպասելէ և բոլոր գործերս ան-
ձամբ կարգադրելէ վերջ միայն իրեն հանդիպեցայ. և
առաջին խնդիրքս եղաւ իրեն, միջոց մը գտնէ երեխա-
յոցս մի տաք խմելիք խմցնելու, որովհետև ամբողջ
օրը սառած էին այդ մաքսատան մէջ, քամու դիմաց

սպասելով, մանաւանդ ապաքինման վիճակին մէջ եղող Սապահգիւլս:

Վերջապէս ընկերներ եկան ու մեզ ինքնաշարժերով առաջնորդեցին Նիւ Եորքի Հնչակեան ակումբը, որի ճակատին Հայերէն — Ս. Դ. Հնչակեան Ակումբ — վերտառութիւնը սիրտս հպարտացրեց...: Ակումբին մէջ հարիւրաւոր ընկերներ բարի գալուստ մաղթեցին մեզ. հոն էր Տիրայր Վրդ. Մարգարեան, որ մօրուսաւոր լինելով՝ Վարդս իր հօրը պատկերին հետ շփոթեց. եկաւ նաեւ վէթէրան Ընկեր Աղասին, և շա՛տ շատեր:

Ճաշարանէն բերուած Հայկական ուտելիքներով ընկերները մեզ կազդուրելէ վերջ՝ առաջնորդեցին ակումբի մօտ գտնուած մի օթեւան: Առաւօտեան Վարդս երբ տեսաւ հայրիկի դէմքը, ամաչելով դէմքը ծածկեց վերմակի տակ և ականջիս փսփսաց թէ՝ «այս մարդը ակումբին մէջի մա՞րդն է». բաւական ծիծաղեցինք և բաւական էլ նեղութիւն քաշեցինք, մինչեւ որ իրեն հաւատացրինք թէ՝ այս մարդը իր հայրն է...: Խեղճ երեխաս յանցաւոր չէր, որովհետեւ ամբողջ չորս տարի հայրիկի երես չէր տեսել...: Բայց ցաւով, նկատեցի, որ այդ չորս տարին ի՜նչքան փոխել, ծերացրել էր խեղճ մարդուն...:

Մի ամբողջ շաբաթ մնացինք Նիւ Եորք. ուր ծանօթացանք դեռ ուրիշ ընկերների և ընկերուհիներու. Ընկերուհի Գրիգորեանի տանը ճաշի հրաւիրուեցինք: Տեսայ նաեւ Ընկեր Ժիրայր Միրզախանեան, որ Ամերիկայէն Կովկաս պիտի վերադառնար. նա պատմեց թէ ի՜նչքան «Ընկեր Սապահը շատ կը մտատանջուէր իր աղջկան հիւանդութեամբ, որ՝ եթէ մի բան պատահէր կ'ըսէր իր աղջկան, ինքզինքը ծովը պիտի նետէր...»:

Ամուսինս հրապարակային ժողով սարքեց Նիւ Եոր-

քում և մի քանի նոր ընկերներ և ընկերուհիներ Հըն-չակեան մկրտելէ վերջ՝ ընկանք ճանապարհ դէպի Զի-ֆակօ: *Դեկտեմբեր* (1920) *ամիսն էր, փողոցները ձիւ-նապատ, հասանք* Սապահի ապրած սենեակը, *տան մը մէջ, ուր մի ուրիշ սենեակ եւս վարձելով՝ նեղ-ճար ապրեցանք, մինչեւ որ կարողացան... տուն վարձել մեզ համար:*

Մի օր այցելեցի «Երիտասարդ Հայաստան»*ի Խմ-բագրատունը, տեսայ Տպարանը, մեքենաները, գործող-ները, ևն.* — ամէն ինչ ինձ թուաց շա՛տ նախանձելի դրութեան մէջ *և սակայն... սողունի մը պատճառաւ կուսակցական յառաջընթացութիւնը խանգարման են-թարկուած էր...:*

Հազիւ մի տարուան տեղաւորուած մեր նոր տանը, Յունուար 18*ին* (1921), *վաղուցուայ խմորուած դրա-շարների դաւադրութիւնը՝ Տօք. Իգնատիոսեանի թե-լադրութեամբ, պայթեցրեց այն տխուր միջադէպը, ո-րը չ'արժէ մանրամասնել:*

Ամուսինս այդ օրը, սովորականէն ուշ ճաշի եկաւ տուն, բաւական յուզուած և տժգոյն. ճաշեցինք առանց մի խօսք փոխանակելու. Իր դէմքը կ'արտայայտէր խո-ժոռութիւն և բարկութիւն, զզուանք և յուսահատու-թիւն — կռահեցի թէ մի բան պատահած պիտի լինէր. մեղմիւ հարցրի իրեն. Նախ չուզեց խօսիլ, սակայն, տեսնելով որ ես էլ տխրեցի իր հետ միասին, մի քա-նի բառով միայն զիջեց խօսիլ... «Խմբագրատան մէջ անախորժ անցքեր տեղի ունեցան... զզուելի՛ էր, զըզ-ուելի՛...»:

Էլ ուրիշ ո՛չ մի բացատրութիւն:

Հետեւեալ օրն այցելութեան եկան Ընկերներ Զու-գազեան *և* Փիլիկեան, *Վարչական ժողովի համար: Գուշակեցի թէ՝ երէկուան* «անախորժ դէպքերը» *բա-*

ւական խոշոր անցքեր եղած ըլլալու են. սակայն շատ բան չի կարողացայ գիտնալ. քանի որ ամուսինս, ըստ իր բարի սովորութեան, ընկերների ներկայութեանը ինձ խնդրեց, որ հեռանամ իրենց սենեակէն, քանի որ «շատ կարեւոր խնդիրների մասին պիտի խօսէին»:

Ժամանակի ընթացքին, քիչ ու շատ ծանօթացայ այդ «անախորժ դէպքերի» *մանրամասնութեանց, ծանօթ ընկերների շնորհիւ և իսկապէս ամաչեցի: Յունուար 18ը ուրեմն, վերջ դրեց Սապահի Խմբագրապետութեան պաշտօնին ու ռոճիկին՝ ի Չիգակօ:*

Տպարանը գրաւել էին դաւադիր Տօքթորն ու իր գրաշարները՝ ոստիկանների օգնութեամբ:

Իսթ-Սէնթ-Լուիզի *ընկերները, գլխաւորութեամբ* Ընկերներ Աբօեանի և Մէարիֆեանի, *որ Շրջանին Գործադրի անդամներն էին, ամուսնոյս* թիկունք *հանդիսացան թէ' նիւթապէս և թէ' բարոյապէս, ու իրենց մօտ կանչեցին իրեն: Նա գնաց. և մի քանի շաբաթ վերջ՝ իրմէ հեռագիր ստացայ թէ՝* «Տիգրանը սպաննուե՞լ է, ճի՞շդ է» — *սարսափեցայ. Հեռագրի պարունակութիւնը ինձ երեւակայել տուեց ամուսնոյս հոգեկան, անմխիթար վիճակը և գուշակելով դաւադրութիւնը, շտապեցի հեռագրով անմիջապէս հերքել այդ կասկածը, զինքը ապահովցնելով երկար նամակաւ մը և օրուան մէջ անցած ու դարձածը իրեն նկարագրելով — որովհետեւ նոյն օրը, երեկոյեան, երկու* տիդէքթիֆներ *մեր տունը եկան և շատ կոշտ կերպով յայտնեցին ինձ թէ՝* «Սապահ-Գիւլեանը, որ Իսթ-Սէնթ Լուիզ կը մնայ, սպաննուած է...» — *Չը գիտէի ի՞նչ անել. ոտքերս ու ձեռքերս սկսան դողալ... բայց, ցերեկուայ ստացած հեռագիրս իրենց ցոյց տուեցի:*

Մարդիկը, իրենց ունեցած տեղեկութեանց հետ համեմատելով սոյն հեռագիրը և իրար հետ խորհրդակցելով, համոզուեցին որ «եղածը թիւրիմացութիւն

է, քանի որ, ըսին, Տիգրան Սապահ-Գիւլեանը ողջ է» — և թողլով մեզ բաւական մտատանջ դրութեան մէջ՝ մեկնեցան:

Նամակներով բացատրուեցանք ամուսնոյս հետ· ուր նկարագրուած էր այն հեռագրի մասին, որը Ձիքակոյէն ամուսինս կ'ըստանայ սա պարունակութեամբ թէ «Տիգրանը սպաննուեցաւ, շուտ հասիր — Բերուզ»: Բայց անգլիերէն հասցէն բոլորովին տարբեր գրերով գրուած էր, կ'ըսէ, քան թէ իմ իրեն սովորաբար գըրած նամակներինս· այս բանը կը նկատէ Ընկեր Արոյեան և կը ջանայ հանդարտեցնել ամուսնոյս· բայց ամուսինս դողդոջուն, կիսամեռ վիճակի մէջ՝ չէր ուզած նրան համոզուիլ, մինչեւ իմ նամակներիս հանդարտեցուցիչ բացատրութիւնները իրեն հասնիլը:

Ընկեր Արոյեանը ա՛յնքան կը զայրանայ սոյն կեղտոտ դաւէն, որ երբ ամուսինս տուն վերադառնալ կը ցանկայ, կը խնդրէ ամուսնէս, որ ծախքը ինքը կը հոգայ, եթէ հետապնդէ այդ չարագործը, որ ջանացել էր ամուսնոյս յանկարծամահ ընել, որպէս զի հնչակեան համակիրները, ամուսնոյս անկեղծ բարեկամները յուսահատ՝ գործը թողուն բացարձակապէս այդ կեղտոտների ձեռքը:

Ամուսինս տուն վերադարձաւ· երեխաները հարսանիթով պառկել էին և ապաքինման վրայ էին: Ինքը գնաց հեռագրատուն և պահանջեց այն ձեռագիրը, որի վրայ գրուած էր կեղծ հեռագիրը իմ անուամբս, այդ ձեռագիրը ճանչցաւ և իր մօտ ունեցած նամակի մը ձեռագրին հետ ճիշդ համեմատութիւնը ցոյց տուեց պաշտօնեային, որը նա էլ հաստատեց և իրեն էլ համոզեց, որ դատ բանայ և այդ չարագործը պատժէ· սակայն ամուսինս, բարեկամ-ընկերոջ մը խորհրդով, խուսափեցաւ հրապարակելէ խնդիրը և այդ ստոր արարածների հետ չափուելէ: Մանաւանդ որ՝ Նիւ Եոր-

քի ընկերները իրեն կ'ըսպասէին։ Ու ինքը գնաց Նիւ Եօրք և շրջակաները։

Մի քանի ամիս, այսպէս, անձնուէր ընկերների նիւթական օգնութեամբը ամուսինս մեզ կարողացաւ անօթի չը թողուլ և մտածեց տունը փոխադրել այլ տեղ, որպէս զի նոր դաւի մը եւս զոհը չը լինէինք այդ մարդ-հրէշների ձեռքին։

Երբ ամուսինս Թրօյ-Նիւ Եօրք կ'այցելէ, ընկերներից շատերը կը համոզեն իրեն, որ տունը հոն փոխադրէր, ուր կանացի աշխատանքներ էլ կան ապրուստի համար։ Եղել էին ընկերուհիներ, որ Գլութի շապիկի գործարանի օճիկները շինելով տուների տէր իսկ եղել են։ Խեղճ ամուսինս էլ հաւատացել էր, բայց մեզ տեղափոխելու դրամը չունէր, ի՞նչպէս անէր։ Ընկերուհի մը՝ Պ. անունով, ճանապարհածախսը ես կը հոգամ, կ'ըսէ և փոխ կուտայ իրեն պէտք եղած դրամը։ Եւ մենք կը պատրաստուինք նոր գաղթումի մը — կրկին, Ամերիկայի մէջ իսկ...։

Չիքակոյի տանս կահ-կարասինները նոր էին և գեղեցիկ — անշուշտ շաբաթավճարով — սակայն այդ բոլորը Թրօյ փոխադրելու համար ահագին ծախս պահանջուելուն՝ թողուցինք և բոլորը վերադարձուցինք տիրոջը, հակառակ ութը ամիսներ շաբաթավճարները վճարած լինելուս։

Ու ճամբորդեցինք և հասանք Թրօյ-Նիւ Եօրք։

Կոկիկ տուն մը, նոր կահ-կարասիներով՝ վարձըւեցաւ մեզ համար. կրկին նոր շաբաթավճարներ, որոնց վճարումը տեւեց երեք տարի։

Թրօյի Հնչակեան Մասնաճիւղը բաւական լաւ ընկերներ ունէր իր մէջ, որոնցմէ նորեկ Սասունցի Ընկեր Ղազարոսեանը մեզ ծանօթ էր Մարսէյլէն, ուր ի-

րար հանդիպած էինք։

Ղազարոսեան բաւական զարգացած մարդ էր և սի-
րուն թատրերգութիւններ կը յօրինէր։ Սա ոչ միայն մի
անկեղծ Հնչակեան դուրս եկաւ, այլ բառին բուն ի-
մաստովը՝ սրտակից ու անձնուէր բարեկամը եղաւ մեր
ընտանիքին՝ մինչեւ իր կեանքին վերջը···։

Ծերունի անդամ մը եւս կար, Հացագործեան, որ
սկզբում, ցաւակից և սրտակից ցոյց տուաւ իրան՝ ա-
մուսնոյս, և անոր առաջարկեց, որ մեր անդրանիկ զա-
ւակը — որ Ֆրանսայի Բժշկական Համալսարանը կը
գտնուէր, սակայն Զիքակոյի խմբագրատան տակնու-
վրայութեան պատճառաւ, դադրեցնել տուած էինք իր
ուսման շարունակութիւնը՝ որ իր համար հազիւ պա-
տառ հաց մը միայն ճարել կը փորձէր — կրնայ Ամե-
րիկա բերել տալ, մինչեւ իսկ բժշկական համալսարա-
նը կրնայ շարունակել տալ՝ իր սեպհական ծախքով···։

Ամուսինս հաւատացել էր· և վերին աստիճանի ըղ-
դացուած՝ այդ մարդու վեհանձն առաջարկներից, ըն-
դունել էր և դրամը ուղարկել Ֆրանսա, Դանիէլիս,
որ անմիջապէս ճանապարհ ընկնի դէպի Ամերիկա։
Դանիէլս էլ Մոնփէլիէէն (Ֆրանսա) անցել էր Պարիզ
և պաշտօնական թղթերի կարգադրութեան ձեռնարկել·
սակայն Ամերիկայէն պաշտօնական թղթեր չը լինելուն՝
սպասողական դրութեան մէջ, սկսել էր ծախսել ճանա-
պարհածախսը։ Թղթերը ամիսներով ուշացան և այս-
պարհածախսը։ Թղթերը ամիսներով ճանապարհածախսը պարապը դը-
տեղէն ուղարկուած ճանապարհածախսը՝ հայրը իրեն թելադրեց
նաց···։ Ուստի, ճարահատ՝ հայրը իրեն թելադրեց
յետ երթալ հոն, ուր որ կը գտնուէր առաջ, ուր գործ
մը փնտռելով գլուխը պահէր, մինչ ցնոր կարգադրու-
թիւն։

Մեղ չէի յաջողուեց Թրօյի շապիկի օձիկների գոր-
ծը — գործարանները փակուիլ սկսան, գործերի թու-

լութիւնը սոսկալի դարձաւ — *որով՝ ամիս մը փորձելէ վերջ՝ յուսահատ թողեցինք այդ գործը, մեր անվարժ մատները լաւ մը ցաւցնելէ վերջ...:*

Ամուսինս փորձեց տեղւոյն Հնչակեան ակումբին մէջ դասախօսութիւններ սարքել, փոքրիկ վճարումով, որը սակայն շատ երկար չի տեւեց:

Սապահգիւլլիս Ջուլթակը օգնութեան կանչելով՝ նուագահանդէս սարքեցինք տեղւոյն վրայ, որ բաւական յաջող դուրս եկաւ: Ամուսինս փորձեց Սապահգիւլլիս առնել և գաղութները դուրս գալ և նուագահանդէսներ սարքել: Ու այսպէս, մի կերպ կրցանք քաշքշել մեր կեանքը, մինչեւ որ Հնչակեան շարքերը զգալով Սապահի պակասը՝ խմբագրական և կուսակցական գործերի մէջ, *միաձայնութեամբ,* «Երիտասարդ Հայաստան»*ի խմբագրականները գրելը իրեն յանձնեցին. իր գրածները ես արտագրելէ վերջ կը ղրկուէին Զիքակօ:*

Չը գիտեմ ո՞րքան տեւեց այդ: Մէկ էլ՝ Հնչակեան շարքերը կրկին թերթը փոխադրեցին Պոսթօն. *և ամուսնոյս յանձնեցին* խմբագրի *պաշտօնը. սակայն, շրջանը կորսնցուցած էր իր նախկին եռանդն ու պարտաճանաչութիւնը. նիւթապէս շատ խեղճ վիճակի մէջ կը գտնուէր թերթն էլ, խմբագիրն էլ: Այնպէս որ եթէ Սապահի* անձնուէր և անձնուրաց *աշխատանքը չը լինէր, այդ թերթը կանոնաւոր դուրս չէր կրնար գալ: Ամուսինս գրեթէ ձրի կը գործէր...: Պէտք էր որ Դանիէլս Ամերիկա գար. և Ընկեր Վ. Պօյաճեանի նիւթական օգնութեամբ, Դանիէլս հասաւ Ամերիկա, Թրօյ-Նիւ Եօրք:*

Ամբողջ եօթը, ութը ամիսներ բարեկամ-ընկերների դիմուեցաւ, գործ փնտռուեցաւ իրեն յարմար, իր ստացած կրթութեան համապատասխան, բայց չի գըտնուեցաւ...:

Վերջապէս, խեղճ տղաս ստիպուեցաւ, Վահան
Քաջունիի — նա էլ բժշկական ուսանող — հետ ձեռք
ձեռքի տալ և երկաթուղիի վերաբերեալ սեւ գործերով
զբաղուիլ և իրենց տունը ապրեցնել. Դանիէլս կրցաւ
չարունակել մինչեւ այն օրը, որ գործարանին մէջ,
բոց մը երեսը վառեց··· ու ստիպուեցանք զինքը դադ-
րեցնել այդ վտանգաւոր գործէն:

Երբ ամուսինս երբեմն, երբեմն տուն կը վերադառ-
նար և իր անդրանիկ զաւկի այդ գործաւորական մրոտ
կեանքը կը տեսնէր, «ա՜խ» մը կը քաշէր սրտէն. և
ի՜նչ փայփայանքներով ու գուրգուրանքով մազերը կը
շոյէր··· «եկա՞ր, բալաս, անուշիկ մեռնի՜մ». ու երբ
արկածի օրը, Դանիէլիս քիթն ու բերանը սեւացած,
յօնքերն այրած տեսաւ, սկսաւ երեխայի նման լացել և
«ա՞յսպէս պիտի լինէիր դու, բալաս» մրմնջել···:

Թրոյում, երկիցս վարժուհու պաշտօնի կանչուե-
ցայ. որով տանս օրապահիկը կը ճարէի: Երբեմն էլ
ձեռագործ բանելով օգնութեան կը հասնէի Դանիէլիս,
որ մասնաճարի մօտ սկսած էր գործել: Սապահդիլուս
էլ, որպէս զի վկայական մը ունենայ, երկու տարի
Թրոյի միւլքիէ Քօնսէրվաթուարը յաճախեց և յաջո-
ղեցաւ աւարտել և ստանալ իր վկայականը: Ինքը փոր-
ձեց Ջութակի դասեր տալ. բայց, դժբախտաբար, Ըն-
կեր Ղազարոսեանի ընտանիքէն պատանի Պէքեարեան-
ները դաս կ'առնէին. իսկ տեղացի Հայ ժողովուրդը,
լաւ ճանաչելով իսկ աղջկանս կարողութիւնը, չը քա-
ջալերեցին իրեն, այլ շարունակեցին իրենց զաւակնե-
րը Քօնսէրվաթուար ուղարկել կրկնակի գնով միմիայն
կէս ժամու համար: Փոքրիկն Պետրոս Տէր-Պետրոսեան,
որ այսօր մեծ անուն է հանել, աղջկանս աշա-
կերտած է, իր շատ փոքր հասակէն:

Թրոյի չէզոք և տարբեր կուսակցութեանց ժողո-
վուրդը մի տեսակ նախապաշարումով էր լցուած, կար-

ծես, հանդէպ Սապահ-Գիւլեան անուան և անոր ընտանիքին…, չը գիտցայ թէ ի՞նչու։

Թրօյի մեր երկրորդ տունը, տաճկին յարկի վրայ գտնուելով՝ ըստ բժիշկներու, մեր առողջութեան խանգարման պատճառ դարձաւ։ Չէի կրնար տեղափոխուիլ, քանի որ ամուսինս ինձ դրամ չէր ուղարկեր Պոսթօնից… նամակով «մեղք են, խեղճ տղերքը չունի՞ն» կը պատգամէր ինձ։

Մի օր, պատահեցաւ, որ ես էլ Պոսթօն գնացի և բաց աչքերովս տեսայ, որ իր սենեակը խցիկ մըն էր միայն, և սեղանին վրայ ահագին դէզերով թերթեր ու թղթեր, գրքեր ու գրութիւններ էին լցուած. տեղեկացայ որ մինչեւ ուշ գիշերներ կ'աշխատի ու կը գրէ եղեր՝ առանց կանոնաւոր սնունդ մը ստանալու։ Իր կերածն եղած էր «հաքըլ պէրի փայ» իսկ խմածը՝ ամերիկեան սուրճ։

Սակայն, երկար չի տեւեց և իր սննդի պակասութիւնն ու յոգնաբեկ կեանքը տուեց իր անախորժ հետեւանքը — ուղեղի յոգնութիւն և մարմնի տկարութիւն — մինչեւ անգամ չէր կարողացել հասարակ նամակ մը իսկ գրել փորձել…։

Ուստրի և Ուայթնսվիլի — Մասաչուսէթց — Հընչակեան ընկերները վազել էին և առել զինքը ու փոխադրել հոգածու ընկերոջ մը ընտանիքի մօտ, ուր մի ամիս անդադար խնամուել էր և կազդուրուել։ Երբ տուն վերադարձաւ, որ մի քանի օր էլ մեզ մօտ մնար, հանգստանար, ներքին ցեցերը — Նիւ Եօրքէն — սկսել էին սուտ լուրեր տարածել, որ «Սապահը սուտ հիւանդ կը ձեւանայ…»։

Այդ բաւական չէր, ծերունի Հայագործեանին միտքը թունաւորողներ էին գտնուած, որ իր ծախսած դըրամները պէտք է պահանջէ Սապահէն, ի հարկին, թող

դատարան դիմէ և կ՚ըստանայ պահանջը։ Սակայն, մարդը ոչինչ չահեցաւ, քանի որ դատարանը տեղեկացաւ ամէն մանրամասնութեանց և մեր նիւթական կացութեան մասին...։

Դաշնակցական գործիչ մը, այդ օրերին, շահագործել էր Հնչակեան գործիչի մը պատահած սոյն դէպքը և հրապարակել էր իր կուսակցութեան թերթով, ի մըխիթարութիւն հակառակորդ բանակի...։

Խեղճ Հացագործեանը երկար չապրեց. իսկ իր ազնիւ կինը լուր ուղարկեց ինձ, որ ինքը ո՛և է դրամական հարց չունի մեզ հետ. ընդհակառակն ուրախ է՝ որ իր ամուսինը օգտակարութիւն մը ցոյց տուած է Սապահ–Գիւլեանի նման անձի մը, մինչդեռ ուրիշներ կողոպտած էին խեղճ ծերունուն, բարեկամ-ընկեր անուան տակ...։

Ամուսինս ապաքինելէ վերջ՝ կրկին Պոսթոն մեկնեցաւ, իր գործին գլուխը կանգնելու։ Նազարբէկն ալ բաժին ունէր Խմբագրական գործին մէջ. սակայն երկար չը տեւեց, որովհետեւ իր գոյնը շուտով դուրս տուեց և Հնչակեան շարքերից դուրս հանուեցաւ։ Ահա այդ ժամանակ աւելի գնահատուեցաւ Սապահի արժանիքը՝ իր ամէն կողմերով։

Հնչակեան Ամերիկայի Շրջանը պահանջ էր դրել Ցունաստանի մէջ գումարելու Ութերորդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողով — Պատգամաւորներ ընտրըուել էին Ամուսինս և Մոլեանը։ Այդ օրերին, ես հիւանդանոցը կը գտնուէի, սակայն լուր չը տուի ամուսնոյս, որպէս զի կուսակցական գործերը չը կաղան։ Եւ արդէն վստահ լինելով՝ որ ամուսինս մեզ չի տեսած չի մեկնելու, սպասեցի, որ ինքնաբերաբար տուն գայ։

Բժիշկների խորհրդով՝ ես պարտաւորուած էի օդափոխութեան գնալ. և որոշեցի՝ ամուսնոյս Համա-

կիր և նրան բուժող Հնչակեան Ուայթնսվիլի ընտանիքների մօտ փնտռել իմ էլ փրկութիւնս և երկու օրէն պիտի մեկնէի, երբ ամուսինս եկաւ տուն և իմ վիճակիս ի տես, ահարեկ՝ բաւական նեղուեցաւ, որ ի՞նչու իրեն տուն չեմ կանչել. պատճառը պարզեցի, բայց գոհ չի մնաց. և թեւէս բռնած, ու իր գաւազանը ձեռքիս տուած, գնացինք միասին վերջին անգամ բժիշկիս տեսնելու և իր վերջին թելադրանքներն ստանալու. խեղճ ամուսինս այդ տեղ, բժշկին այնպէս կը պաղատէր, որ՝ «ինչ որ, մարդկայնօրէն, գիտականօրէն կարելի է անել, կինս կատարելապէս բժշկելու համար, չի խնայէք». և, հետեւեալ օրը՝ Վարդիս առած՝ մեկնեցայ, տուն-տեղ թողած ամուսնոյս և զաւակներիս հոգատարութեան:

Ամուսինս խոստացաւ, արտասահման մեկնելէ առաջ, գալ Ուայթնսվիլ մեզ տեսնել վերջին անգամ, բայց չեկա՜ւ — վերին աստիճանի ընկճելով ու յուսահատեցնելով զիս: Միայն նամակ ինձ էր գրել՝ քաջալերել, մի նամակ էլ՝ ինձ հիւրասիրող ընկերներին, որ ինձ լաւ հոգ տանին...: Ու... նա գնաց դէպի Յունաստան...: Տան և երեխայոցս հանդէպ, Թրոյ, չատ ճշդապահ գտնուել էր, ամէն մի երկու օրն անգամ, ամէն մի տեղէ՝ նամակ գրած էր իրենց ու միշտ յորդորներով, խրատականներով քաջալերած էր նրանց:

Ես բաւական կազդուրուելով, վերադարձայ Թրոյ, մեր տունը. ուրկից իմացնելով ամուսնոյս իմ ապաքինումը, ու տուն վերադարձը, իր նամակներին կըսպասէի, որոնք սկզբում չա՛տ ու չա՛տ ուշանալէ վերջ վերջապէս երեւցան...: Աթէնքից գրած իր առաջին նամակի՝ 9 Դեկտեմբեր, 1924 թուակիր՝ պարունակութեան կարեւոր մասերը միայն պիտի տամ հոս:

Սիրելի Բերուզս,

... Պարտազանցութիւնս հանդէպ քեզ՝ ծայրայե-



Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ
Նիւ Եօրքի Հնչակեան Ակումբին մէջ

ղութեան հասաւ, գլխեմ, արժանի եմ ամէն տեսակ
կշտամբանքի. սակայն միշտ տատանողական էր վիճա-
կըս և իրերը, մտքերի շփոթութիւնը՝ անստոյգ:

Պարիզ հասնելս առաջ՝ Անդրկովկասեան Դաշնակ-
ցութեան Բերլինի Ընդհանուր Ներկայացուցիչը՝ Փի-
րումեանը խնդրել էր Ընկեր Ա. Պատմագրեանից, որ
մի քանի օր իրեն սպասեմ, մինչև որ Բերլինից դառ-
նայ և տեսակցութիւն ունենանք. սակայն ուշացաւ և
կրկին, թէ՛ հեռագրով և թէ՛ տելեֆոնով խնդրեց ինձ
սպասել. տասներկու օր սպասելս վերջ՝ Փիրումեանը
և Ա. Երզնկեանը — Երկրագործական Կոմիսար — ե-
կան. վերջինս Ներսիսեան դպրոցից աւարտած Լօրեցի
է, Փիրումեանը՝ Ղարաբաղցի:

Անսահման յարգանքով ընդունեցին ինձ, որդիա-
կան ակնածանք և սրտալիր մեծարանք. խօսեցինք ե-
րեք ժամ, հնից, նորից, անցեալից, դէմքերից, դէպ-
քերից — իրարուց չէինք կշտանում — կուսակցական
տեսակէտով ներկայացրի անհրաժեշտութիւնը՝ համա-
ցողութեան գալու իրար հետ: Փիրումեանն ասաց —
«Երրորդ Միջազգայինի տուած որոշումը՝ Սոց. Դէմ.
Հնչակեան Կուսակցութեան առթիւ՝ կարող ենք, նրա
այդ տակտիկան քսանուչորս ժամուայ մէջ փոխել տալ»:
Երբ հարցրի, որ Հայաստանի Կառավարութիւնը և Կոմ-
մունիստ Կուսակցութիւնը ճանաչե՛ն մեր Կուսակցու-
թիւնը՝ որպէս իրենց ներկայացուցիչն ու շարունակու-
թիւնը Հայաստանից դուրս՝ արտասահմանի մէջ — մի-
աձայն պատասխանեցին, որ դրա համար յարաբերու-
թեան մէջ պիտի մտնել, բանակցութիւններ վարել՝
ուղղակի Հայաստանի Կառավարութեան և Կոմմունիստ
Կուսակցութեան հետ. և յետոյ Ընկեր Երզնկեանը յուզ-
ուած՝ ասաց. «Քառասուն տարի է, Հայաստանի համար
ես աշխատում, այդ Հայաստանը հիմայ քեզ է սպա-

սում, ի՞նչու չես եկել մինչեւ ցարդ, ի՞նչու չես գալիս. սպասում ենք քեզ, պիտի գաս...»:

Հոգւով մխիթարուեցի: Ինչպէս երեւում է, Հայ Կոմմունիստները երկու մասի են բաժանւում. ոմանք ուզում են, *ամէն գնով*, մեզ հետ յարմարուիլ, ոմանք էլ՝ — *Դաշնակցականներից և Հնչակեաններից դարձածները* — սաստիկ հակառակ են:

ՍՏԵՓԱՆԴ

«Աթէնքի Ազգ. Վարչութիւնը հացկերոյթ տուեց Տաւիլերտեանին, *ինձ էլ հրաւիրել և պատուոյ տեղն էին տուել: Խօսեցի, լաւ դաս տուեցի՝ ում որ հարկաւոր էր... այնպէս որ՝ ականջս հասաւ սա պէս, թէ՝ ես ի՞նչու բաւականանում եմ միայն խօսելով ու քննադատելով և չեմ գնում Երկիր՝ գործելու, պաշտօն առնելու ևն. ևն.:*

«... Ութերորդ Պատգամաւորական Ժողովը որոշեց որ պատուիրակութիւն երթայ Հայաստան. սակայն ինտրիգ *չը մնաց, որ չի բանեցնեն Մորլեան ու Քարլեան: Ես գրել եմ Ամերիկայի մի քանի ընկերներին, նրանց նամակներին կ'ըսպասեմ, որ յայտնի լինի իմ կա՛մ երթալս և կամ վերադարձս:*

«Ամերիկայի Մասնաճիւղերի գիտակցութեամբ, այդտեղ եղած ժամանակս, օրակարգ էինք կազմել և արձանագրութիւնների, ստացուած պաշտօնական թղթերի հիմամբ զեկուցումներ պիտի տրուէին Ժողովին: Հազիւ Ժողովը բացուած՝ երեւցաւ որ Մորլեան և Քարլեան մեր միւս պատգամաւորներին այնպէս էին հասկացրել, համոզել, որ «եթէ Սապահ չը լինի Ամերիկայի մէջ, տասը հազար ընկերներ կ'ունենանք». խեղճ ընկերները բաւական նախապաշարուել էին սկզբում, սակայն իմ պատասխանները և փաստերը, ըստ մեր

կազմած արժանագրութիւններին՝ երբ լսեցին, նրանց դիմակը պատռուեց և համոզուեցին իմ դէմ եղած դաւադրանքի մասին:

«... Նաւ առնելէ առաջ, Նիւ Եօրքում, մեզ տրուել էին երկու տոմսակ և երեք հարիւր տոլար. գանձապահը եղաւ Մորլեանը: Ես միշտ հիւրասիրւում էի Պարիզում Արաբկիրցիներից, ծանօթներից, այնպէս որ տասներկու օրուան մէջ՝ չնչին մի գումար էր ծախսըուել իմ նախաճաշիկներիս վրայ. սակայն, երբ հասանք Աթէնք, հազիւ կարողացանք մի շաբաթ ապրել, օթէլում, և սկսանք պարտք վերցնել, քանի որ «դրամ չը կայ» ասում էր Մորլեանը: Ու հեռագրեցինք Տօլտուրեանին — Ուայթսվիլ, Ամերիկա — որ դրամ ուղարկի, եկաւ երկու հարիւր տոլարը Մորլեանի անունով, սակայն նա փոխանակ մեր մէջ բաժնելու — ես Գօքինիա էի գնացել — յանկարծ չքացաւ: Ուրեմն, երկու ամսից աւելի է, որ ես ապրում եմ տասնէն տասներկու տօլարով. ցերեկը, դուրսը՝ կերածս մածուն ու հաց է. սկսել եմ պարտքեր առնել: Եթէ դրամը տրամադրուի, Հայաստան կ'երթամ, իսկ եթէ ոչ՝ վերադառնալու տոմսակ մը թող դրկեն:

«Բալաներիս և քո դրութիւնը սիրտս ճմլում է. ամէն բան մոռանալ և ա՛յնքան ստորնութեան ենթարկո՛ւիլ, դաւադրութեան առարկայ լինի՛լ «ընկեր» կոչուածների կողմից — դա աւելի քան ցաւալի է»:

Դեկտեմբեր 18, 1924.— «Ռուսաց այստեղի Դեսպանը շատ լաւ տրամադրուած է ինձ հանդէպ. ցանկանում է, որ օր առաջ մեկնիմ Հայաստան, ինկատի ունենալով այն օգտակարութիւնը, որ կարող եմ տալ Հայ Պետութեան: Եւ սակայն դեռ դրամ չեկաւ. ստոր Քարեանը այս ու այն կողմ լուր է տարածած եղել, որ «հազար տոլար էլ որ տաք, Սապահը չի երթալ Հայաստան». ընկերները կատաղել են, փնտռում են իրեն,

չեն գտնում, երեւի սա էլ չճացած կը լինի յանկարծ՝ Մորլեանի նման։ Սրա ի՛նչ ստոր լինելը հետզհետէ է երեւան գալիս...: Քսան կախաղաններից յետոյ, Հայ Մտաւորականների ջարդուած ատենները, Քարեան եղել է թրքական պետական պաշտօնեայ...: Այս տեղի Գործադիրը աշխատում է նրա հետքերը գտնել։

«Որոշ է, որ իմ միախային համակիր ընկերները Ամերիկայի մէջ՝ իրական դեր ունեին կատարելիք, որ չը թողնեն Գործը զոհուի այս ստորների դաւադրութիւններին։ Խեղճ գաղթականներն իսկ սպասում են իմ մեկնմանս, վստահ լինելով՝ որ եթէ Հայաստան երթամ, հազարներով պիտի կարողանամ հոն փոխադրել և ազատել իրենց՝ այս վիճակէն։ Յունաստանի պէս թանգ երկիր չը կայ. Հայերին շատ բիրտ կերպով տեղահանում են. Ամերիկայի չունը այս երկրի մարդից լաւ է. թուրքիայից տարբերութիւն չունի ամէն տեսակէտով։

«Այսպէս ուրեմն, սպասում եմ. եթէ երթալու միջոց տա՛ն, լա՛ւ. իսկ եթէ ոչ՝ խիղճս հանդարտ կը լինի, որ կամքէս անկախ չը կարողացայ։ Արդեօք Բոստոնից կամ Մասնաճիւղերից քեզ դրամ ուղարկո՞ւմ են»։

Դեկտեմբեր 25, 1924.— «Դեռ ո՛և է նամակ չեմ ստացել Ամերիկայից, անորոշ դրութիւնս տակաւին շարունակւում է. երէկ կրկին գրեցի Ամերիկա ընկերներին, կրկնելով որ կա՛մ Հայաստան երթալու ճանապարհածախսը — չորս հարիւր տոլար Պոլսոյ վրայով — ուղարկեն, կա՛մ երկու հարիւր տոլար՝ վերադարձիս համար։

«Երկու օր առաջ, Աթէնքի զանազան արուարձաններում ապրող Պրուսացիներ *ևն.*, եկան մեր ակումբը լացան, պաղատեցին, որ իրենց տէր-տիրականութիւն

Գօգինեայի Մասնաճիւղի Ընկերներ 1924ին Նկարուած 1. Արսէն Բիւզէլեան, 2. Զաքարիա Այվազեան, 3. Արամ Գէօզչեան, 4. Սարգիս Կոստանեան, 5. Արթին Մեսրովբեան

անեմ․ խոստացան տուն գլուխ՝ հարիւր տրախմի — եր-
կու հարիւր տուն են — որ երթամ Հայաստան և իրենց
փոխադրուելու մասին աշխատիմ․ դեռ վերջնական պա-
տասխան մը չը առեցի, սպասողականի մէջ եմ։ Աղ-
գային Կեդրոնական Վարչութիւնն էլ ուզում է համա-
գաղութային հանգանակութիւն բանալ և ինձ յատկաց-
նել՝ Հայաստան երթալու համար․ սակայն Կուսակցու-
թեանս համար շատ մեծ հարուած կը լինէր, իմ այդ
միջոցներով՝ մեկնումս։

«Գօֆինիայի դպրոցական երեխաները, ամէն օր,
շուրջս կը հաւաքուին․ ուր որ տեսնեն, «Պարո՛ն, Պա-
րո՛ն, մեզ Հայաստան պիտի տանի՞ս, Հայաստան պի-
տի երթա՞նք․․․» կը պոռան։ Խեղճ երեխայքը, ոտա-
բոպիկ, կիսամերկ՝ երբ իրենց հարցնում եմ, ո՞ւր է
Հայաստանը, բալաներս «է՛հ ծովի ա՛ն կողմն է» ա-
սում են քաջաբար․․․»։

Յունուար 14, 1925․— «Այս հինգերորդ ամիսն է՝
որ հեռացել եմ Ամերիկայից և տակաւին ո՛չ մէկ պա-
տասխան ունիմ, թէև բոլորին էլ գրել եմ մի քանի
նամակներ։

«․․․ «Գաղթականի Տարաք» ունեցանք, մի քանի
թաղերի մէջ խօսեցի․ հսկայ բազմութիւն կար․ նպա-
տակն էր՝ որ գաղթականներին դիւրութիւն տրուի Հա-
յաստան փոխադրուելու․ Հայաստան պատուիրակ ու-
ղարկուի (ինձ աչքի առաջ ունին) և իրենց յարաբե-
րական (Պետութեան հետ) գործերը կատարելու հա-
մար՝ փաստաբաններ վարձեն — Հնչակեան, Դաշնակ-
ցական, չէզոք՝ սրանք միատեղ են․ Ռամկավարները
հակառակ են և անէ տուն ընկնելով՝ հակապրոպագան-
տա են անում։ Հեռաւոր թաղերէն երբ լսէ ժողովուր-
դը՝ որ պիտի խօսիմ, կը լցուի։ Այս տեղ էլ, ժողո-
վրդի մէջ կռիւ-խռովութիւն պատահելիս՝ ինձ են դա-
լիս․․․»։

Յունուար 19.— «*Աչքս դրանն է մնացել. հոգեկան հանգստութիւն չ’ունիմ. սպասում եմ ու սպասում. և նամակ չը կա՛յ. մնացել եմ հոգեկան ամենասոսկալի դառնութիւնների մէջ: Բաւականին ժամանակ է՝ որ Թերթ էլ չի գալիս այս տեղ:*

«*Այս հեռացումս* ինձ շատ սուղի նստեց *թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս. և* սա կը լինի վերջինը»:

Յունուար 26.— «*Մնացել եմ երերուն և անստոյգ դրութեան մէջ, ի՞նչ անելիքս, ի՞նչ գիրք բռնելիքս, ո՞ւր երթալիքս չը գիտեմ. ո՛չ գիտեմ թէ Հայաստան պիտի երթամ, ոչ էլ գիտեմ թէ՝ պիտի վերադառնամ. ո՛չ այս կայ, ո՛չ այն. ո՛չ գնալուս համար դրամ կայ, ո՛չ էլ վերադառնալուս. թէ ի՞նչ պիտի անել, ես էլ չը գիտեմ:*

«*Թուրք Թերթերը, առանց անունս տալու, ենթադրում են՝ որ* Քէմալի դէմ գործ եմ պատրաստում...: *Քիւրտերի ընդհանուր ներկայացուցիչը* — Մէվլան զատէ Րէշիտ — *մօտս եկաւ, տեսնուեցինք: Բաւականին* փախստական չէրքէզներ *կան այստեղ*»:

«*Եթէ այս շաբաթ էլ նամակ չ’ըստանամ, սիրտս կը ճայթի...*»:

Յունուար 28.— «*Այսօր առաւօտեան նամակդ առայ. համբուրեցի, գգուեցի, տասնեակ անգամներ կարդացի, ու եկայ* Աթէնք Express Co.*ին հարցնելու — դեռ ո՛չ մի տեղից ո՛չ դրամ կայ, ո՛չ էլ նամակ. ո՛չ Ընկեր Վ. Պօյաճեանից, որին շատ եմ գրել, ո՛չ էլ ուրիշներից:*

«*Ես* պաշարուած *եմ* լրտեսական (*Թրքական*) ցանցով. լսել եմ որ Հայաստան պիտի երթամ. մատնութիւն կայ: *Դարդանէլով անցած բոլոր հաւերը ամենախիստ քննութեան են ենթարկւում: Միջազգային ներկայ իրաւունքով, Թուրքերը կարող են ինձ դուրս*

Հանել և նախկին վճիռը (101 տարուայ) գործադրել։
Ուրեմն ես պէտի երթամ ուրիշ գծով։ Նիւ Եօրքի,
Ուայթ-Նսվիլի և այլ այն ընկերները, որոնք իմ սիրե-
լիներս էին, նրանք մէն մինակ կարող էին ինձ միջոց
տալ Հայաստան երթալու, ես իրենց ամէն բան գրել
եմ, և նրանք փոխանակ իմ գրածներիս հետեւելու,
Մորլեան-Քարեան խմբակին դաւադրութեան զոհ կ'եր-
թան — ես ի՞նչ անեմ։

«Վաղը աւելի կը գրեմ, այսօր գինովնալու չափ
ուրախ եմ. չորս հազար Հայ իմացաւ, որ տնից նա-
մակ եմ առել. ամէնքը աչքալուսանք են տալիս. ըն-
կերները հեռուից պոռալ սկսան «նամա՛կ, նամա՛կ...։

«Այսպէս, Բերուզս, առիւծի պէս տա՛ր դառնու-
թեան բաժակը, քո պատմական քաջութեամբ. եթէ
Հայաստան չերթամ, կը գամ — հաւատացի՞ր, Ամերի-
կայի մէջ ապրիլ՝ որպէս շուն աւելի լաւ է, քան Յու-
նաստանի մէջ՝ որպէս ջէնտըլմէն...»։

Յունուար 29.— «... Գիշերս շատ մտածեցի, քը-
նել չը կարողացայ. ես ամէն բան զոհեցի որի՞ և ի՞ն-
չու համար, ի՞նչու եկայ և այս վիճակին հասայ...։
Կայ մի մթնոլորտ, որ թոյնով ինձ ուզում է խեղդել։
Հարկաւ, հասարակ ընկերները «ժպիտով» քեզ ասած
կը լինին, որ «Սապահը արդէն Հայաստան է գնացել».
իրաւունք ունին այդ ընկերները, ես էլ այդ անկեղծ
ընկերներին համար է, որ ամէն զոհողութիւն յանձն
առի, թողեցի տունս և մտայ անստուգութեան մէջ.
բայց ի՞նչ անեմ, որ դաւադրութիւններ են սարքում
և այդ անկեղծ ընկերները զոհ են դառնում այնպիսի-
ների, որոնք իրենց կեանքում մի մասնանիւղ իսկ չեն
կրցած կազմել։ Ո՞ւր են այն ընկերները, որոնք ինձ
ասում էին թէ՝ «գնա՛, յետեւդ կանգնած ենք. տան
մասին բնաւ հոգ չանես»։ Ինչո՞ւ հոգ չ'ունեցան երե-
խաներիս մասին, չը տեսա՞ն քո հիւանդագին վիճակը։

Տախվէրդեանը այստեղ երեսիս ասաց. «քո աշակերտները ո՛ւր, դու՝ ո՛ւր. նրանց դիրքը ո՛ւր, քոնդ՝ ո՛ւր»: Ես ամէն բան տարայ, ուզեցի միայն այն՝ ինչ որ եմ: Բոլոր ընկերներին էլ գրութիւնս պարզած եմ և նկարագրած ամէն ինչ, մանրամասնօրէն և Հայաստան գնալու անհրաժեշտութիւնս չեշտած — սակայն դեռ ո՛չ մի պատասխան:

«Իրաւունք չունի՞ն մեր հակառակորդները կասկածելու իմ վրայ՝ թէ «եթէ Հայաստան պիտի երթայ, ապա ինչո՞ւ չի գնում և կամ ինչո՞ւ չի վերադառնում». տեսնում են, որ ես գաղթականների հետ, նրանց տանն եմ ապրում և ո՛չ թէ օթէլների մէջ — ինչպէս միւսները արեցին՝ հանգիստ կեանք վարելով: Այստեղ շատ լաւ տեսնում է Ցունաստանի Ազգային Կեդրոնական Վարչութիւնը, որ իրենց համար շատ օգտակար եղայ, ամենաչփոթ խնդիրների առթիւ ի՛նչ լուծումներ բերեցի — հրապարակային ժողովներ միշտ կը սարքեմ արդէն: Միակ խնդիրքս է Բերուզ, որ այս օրերիս մէջ սրտով-հոգով արիանաս, ինքնավստահ լինիս, կուրծք տաս, երբ նամարտների առաջ ենք:

«Միշտ ասել եմ, «Աստուծու պահած գառը գայլը չի ուտիլ» — ես ո՛չ ոքի չարիք չեմ արել. բայց ամէնքը գայլ են դարձել իմ դէմ...»:

Փետրուար 5.— «Երէկ նորից գրեցի Վ.-ին, հանգամանօրէն ամէն ինչ պարզելով. ասելով որ մինչեւ ցարդ և ո՛չ մի տեղից դրամ եմ ստացել: Երեւում է, որ դաւադրական ցանցերը բաւականին խորունկ են և տարածուն, որովհետեւ հէնց իմ բարեկամ-ընկեր կարծածներս չը հասկացան, թոյլ շարժուեցին և պատճառ դարձան քայքայման:

Քարեան, Բնակունի, Քիւպէլեան — սրանք Հ. Արամեանցի աջ թեւերն են եղած և անբաժան, միասին

դաւադրած, ձեռնարկներ են կատարած 1913ից ի վեր:
Եւ այսօր, նրանք իրարուց չեն կարող բաժանուիլ,
ա՛յնքան սերտ կապերով իրարու են կապուած. եթէ
բաժանուին էլ, դա երեւութական պիտի լինի, մինչեւ
որ կարողանան կիսատ մնացած նպատակնուն հասնիլ»:

փետրուար 10.— «Երէկ գնացել էի Աթէնք, ուշ
ատեն վերադարձայ, տղաքը ասացին որ ապահովագըր-
ուած նամակ բերեց ցրուիչը. ինձ փնտռել են չորս
կողմ, բայց չեն գտել. կարծել են որ դրամը եկել է և
ուրախ էին բոլորը: Անհանգիստ քուն ունեցայ, ես էլ
մի րոպէ հաւատացի, որ դրամն է եկել: Այսօր իջայ
Պիրէ, ուր է մեր փոստատունը, ստացայ քո նամակը
ապահովագրուած: Երէկ American Expressին էր գը-
նացել, ասացին «բան չը կայ»: Եւ այսօր փետրուա-
րի 10ըն է:

«Ես վստահ գիտէի, որ կուսակցութիւնը կարող էր
և հող ունէր ապրելու, եթէ ժամանակին ինձ միջոց
տրուէր Հայաստան երթալու: Ամերիկա եղած ժամա-
նակս այդ ասացի. ահա չորս-հինգ ամիս է, որ նա-
մակ նամակի վրայ եմ գրում և չեմ կարողանում դա-
ւադիրների ցանկը խորտակել: Առաջին դաւադիրները՝
Բնակունի, Բիւպէլեան, Մորլեան, Նազարբէկ — նը-
րանք բոլորն էլ համամիտ են ինձ խորտակելու՝ ի՛նչ
գնով էլ որ լինի: Մողուն Քարեանն էլ ուզեց այդ հան-
գամանքից օգտուիլ, ներքուստ թելադրել — Բնակու-
նիին գրելով — որ ինձ դրամ չ'ուղարկեն, այլ Պարիզ
ուղարկեն, որպէս զի այդպիսով արգելք լինին իմ եր-
թալուս: Սրանք կ'ուզեն կուսակցութիւնը մեռցնել՝
«միայն թէ Սապահի ձեռքով չազատուի...«:

Պիրէ, փետրուար 12.— «Զանազան երկրներից
տասնեակ նաւեր են գալիս օրական. այսօր կայ Ամե-
րիկայից եկած մի նաւ. կարծես թէ սրտիս հետը խօ-
սող մի ծիծեռնակ լինի: Ցաւալի է, այստեղ, կան բեռ-

նակիր հայ կիներ և աղջիկներ, որոնք բեռան ծանրութեան տակ հազիւ հազ իրենց ոտքերն են առաջ գըցում...: Երբեմն թեթեւ պտոյտ կ՚անեմ նաւահանգստի երկայնքին դէպի Լիպազմա (Հայ ուրիշ մի գաղթավայր) և ապա կը վերադառնամ իմ սրճարանս, կամ գրելու և կամ խորասուզուելու իմ ովկիանոս-մըտածումներիս մէջ: Զարմանա՛լի աշխարհ, ո՛ւրտեղից ո՛ւր...: Կեանքը կորցրել է իր հրապոյրը, ապրում եմ միայն յիշատակներիս, մտածումներիս ոլորտների մէջ. մի՛շտ երազ, մի՛շտ երեւակայութեան թռիչք: Զարմանում եմ՝ թէ ի՛նչպէս դիմացայ այս չարքաշ կեանքին. ուր ժպիտի նշոյլ անգամ չը կայ ինձ համար — ցեխ, քամի, ցուրտ և մենակութի՛ւն — քայլում եմ քայլում և մէկ էլ՝ տեսնում եմ, որ վերադարձել եմ Գօքինիա՝ ընկերներիս մօտ, որոնք իրենց տանջանքի գործերից վերադարձել են: Իննին-տասին կը պառկիմ, մի քանի ժամ քնելուց յետոյ՝ էլ քուն չեմ ունենայ մինչեւ լուսաբաց:

«Ընկեր Վ. Պ.ին դու էլ գրիր, որ տոմսակ պիտի ուղարկի՞ ինձ վերադառնալու: Հոգիս սաստիկ նեղւում է այլեւս»:

Փետրուար 14.— «Գիշերը անձրեւը բոլորիս էլ արթուն պահեց. խրճիթի յետեւի պատը ծակուեց և ջուրը հեղեղի նման ներս թափուեց. ո՞ւր երթալ... առաստաղից էլ կաթում էր, պատից էլ...: Վերջապէս լուսացրինք: Ես էլ հագնուեցի, վազեցի սրճարան. ուր մնացի մի քանի ժամ: Արտեմիւսն էլ եկաւ, լաւ զբաղեցրեց ինձ Թիփլիզցիների կեանքից պատմելով. վերջապէս սիրտը բաց Կովկասցի է, անկեղծ ու սիրտը լեզուին վրայ...: Պատմեց իրենց Կովկասեան կռիւների մասին, մեր տղայոց կեանքից են. են.: Երբեմն Աթէնք կ՚երթամ, ուր գրադարան կայ, և իմ գաղթականի կեանքս կանցնեմ...:

Գլխին խաչանիշ կրողը Հնչակեան խմբերի հրամանատար և կազմակերպիչ Յ. Գասպարեանն է (Արտէմիւս) իր ընկերներով

«Երէկ տեղի ունեցաւ Ցունաստանի Հնչակեան Մասնաճիւղերի Շրջ. Պատգամաւորական Ժողովը. պատգամաւորների խօսքերից երեւեց թէ՝ ի՛նչ դաւադրութիւններ է սարքուել, որ եկած դրամները վատնուեն և ես անկարող լինիմ կա՛մ Հայաստան երթալ և կա՛մ վերադառնալ: Ահագին աղմուկ կայ. Քարեանը և իր ընկերները պատրաստւում են շրջաբերականներ հանել և «Հնչակ» դուրս բերել. երեւի Ամերիկայից դրամ են ստացել: Պիտի աշխատեմ ես վերադառնալ. յաւիտենականապէս չի կարելի սպասել. մանաւանդ որ՝ նիւթապէս էլ շատ եմ նեղւում և այստեղ կրկնակի սուղ է քան Ֆրանսա և Ամերիկա:

«Նորից գնացի American Expressին, Աթէնք, և ո՛չ մի հեռագիր կամ նամակ, ո՛չ մի տեղից:

«Այստեղի Գործադիրը Նիւ Եօրքից նամակ առաւ, որ Նազարբէկ, Sof. Բաղտասարեան, Բնակունի, Քիւպէլեան, Մօրլեան ծածուկ, դաւադրական ժողով են կազմել Բնակունիի տան մէջ՝ նոր երկպառակութիւններ յառաջ բերելու Հնչակեան Կուսակցութեան մէջ»:

Փետրուար 14.— «Երկու օր առաջ նամակ առայ՝ որ Ս. Փիրումեանը և Ա. Երզնկեանը արդէն Մոսկուա են հասած: Խեղճ նամակագիր Ընկերը կարծում է, թէ Մոսկուայում դրամ կայ, և ինձ իմաց է տալիս, որ Մոսկուա Թուչիմ և կանխապէս մեր խօսածին համաձայն՝ Երրորդ Միջազգայինի տակտիկան և որոշումը մեր Կուսակցութեան նկատմամբ՝ փոխենք. որովհետեւ Ս. Փիրումեանը ասաւ Պարիզ, որ «քսանուչորս ժամուայ ընթացքում տակտիկան կը փոխուի»: Ես ո՞ր մէկի դէմ պիտի խօսիմ, ո՞ր մէկին խօսք հասկացնեմ, երբ թշնամիներ այս Կուսակցութիւնը քանդելու են աշխատում, գիտակցաբա՞ր թէ անգիտակցաբար:

«Մի՛ վշտացիր, որ քո նամակին չեն պատասխա–

նած․ «էշն ի՞նչ գիտէ նուշը»․․․։ Պէտք չէ մ՛հատիս, գլուխդ բա՛րձր պահիր․ ամէնքի դիմակը պատռուեց․․․ և ես բա՛րձր կանգնած եմ․ այդ բարձրութիւնս տեսնում են նո՛յն իսկ թշնամիներս․․․»։

Մարտ 5․— «Թէեւ փետրուարի 5ին Իստ Սէնթ-Լուիզից Ընկեր Մէարիֆեանը 384 տոլար է հեռագրած եղել ինձ, բայց ես այդ դրամը ստացայ Մարտի 8ին․ թէեւ ամէն երկու-երեք օրը մի անգամ գնում էի Ա-թէնք և Expressի պաշտօնեաներին հարցնում, բայց նրանք ամէն անգամ ասում էին՝ որ ո՛չ նամակ կայ, ո՛չ էլ հեռագիր։ Նոյն իսկ Մարտի 6ին երբ առայ Ընկեր Մէարիֆի նամակը, գրուած Փետրուար 4ին, այդ օրը, դարձեալ ասացին, որ չը կայ։ Նամակը ցոյց տուեցի բարկութեամբ և երկար փնտռտուքից յետոյ՝ յաջողեցան երեւան հանել, արդարացնել ջանալով իրենց՝ որ հասցէս ցրուիչը չի գտել․․․։

«Վիզէի գործը իրենց վրայ առել էին՝ այս տեղի Կոմմունիստ Կուսակցութեան Ներկայացուցիչները, ուստի գնացի հիւպատոսարան, տեսայ որ՝ քարտուղարը (իրէայ) կը ճգճգէ, «պաշտօնական գրութիւն չեմ ընտացել, երկու օր յետոյ եկ» յետոյ թէ՝ «Տաիվէրդ-եանին պիտի գրել» (մինչդեռ նա Երեւան էր մեկնել) ևն․ ևն․ — բարկացայ, դուրս եկայ և ուղարկեցի Ցոյն Կոմմունիստ Կուսակցութեան Ներկայացուցիչին՝ (Հայ) բացատրութիւն պահանջել․ պատասխանուած էր որ բացառութիւն չեն կարող կազմել, ևն․ ևն․։ Երեւում է՝ որ չար գրպարտութիւններ, դաւադրութիւններ էին կատարուած իմ երթալուս դէմ այս տեղ էլ․․․։ Տուն վերադարձայ, գրեցի ռուսերէն մի ընդարձակ յայտարարութիւն՝ ուղղուած դեսպան Ուստինովին, բացատրելով ո՛վ լինելս, ի՛նչ հանգամանքով Հայաստան երթալս, պարզելով, որ ես աւելի՛ Մոսկուայի Երրորդ Միջազգայինի հետ գործ պիտի ունենայի, որքան որ

Թիֆլիզի և Երևանի Կոմմունիստ Կուսակցութիւնների· *աւելացրել էր, որ տասը* հազար *Հայ գաղթականների ներկայացուցիչն էլ պիտի լինեմ, ըստ իրենց ցանկութեան — յայտարարութիւնս* Ուստինովին *ներկայացընողները մանրամասն բացատրել էին ամէն ինչ և կըտրուկ պահանջ դրել, աւելացնելով, որ* «Ազգը միայն Սապահ-Գիւլեանին կը հաւատայ»· *դեսպանը զարմացած՝ անմիջապէս ժողովի է կանչել հիւպատոսին, քարտուղարներին և որոշել են ժողովի մէջ՝ յայտարարութեանս հիմունքները և դրուած պահանջները* ռադիոյով հաղորդել Մոսկուա՝ Կեդրոնական Կառավարութեան և Երրորդ Միջազգայինի Գործադիր Կոմիտէին: *Երեք օրից յետոյ պատասխանը պիտի ստանամ: Եթէ* Մոսկուա *երթամ և* Ռախովսկուն Մոսկուա *գտնեմ — որ* Ռումանացի *իմ ընկեր-բարեկամս է և* Ռուսաստանի երրորդ *մարդը — ապա վստահ եմ, որ ամէն ինչ ուզածիս պէս կարող կը լինեմ կարգադրել և բոլորի բերանը փակել, մանաւանդ Հայ Հակառակորդ մեծամասնականների:*

«Թաւրիզից *հեռագիր էին տուել բոլոր յայտնի Հայ ազգայիններին, ինչպէս և ինձ՝ որ դիմում կատարուի* Մոսկուա *տասը հազար հայերին* (Յունաստանի և Սիւրիայի) *փոխադրելու: Երէկ երեկոյ մեծ ժողով ունեցանք* Աթէնքի *Հայ եկեղեցու մէջ, որոշեցինք հեռագիր տալ* Մոսկուա՝ Կեդրոնական Կառավարութեան և Երեւան: *Վերջապէս նամակ են գրել ինձ ընկերներ Վ.* Փո*յաճեանը, Ջրվէժը և Մէարիֆեանը, տեղեկութիւններ տուել՝ այդ տեղի անցուդարձերից:* Բալաներիս *կարօտովը ուղղակի այրւում եմ: Գրիր բոլորիդ առողջութեան մասին»:*

Ապրիլ 4·— «*Դեսպանատան քաղաքական գործերի վարիչը՝* Նեւսկի *անունով* (ռուս) *յայտնել էր, որ՝ հեռագրի պատասխանը թէեւ ուշանում է, բայց ինքը*

վստահ է, որ «հաստատական պատասխան պիտի գայ. և արդէն Սապահ-Գիւլեան անունը Մոսկուայում լաւ ծանօթ է»: Եթէ դրական պատասխան ստացուի, հարիւրին հարիւր՝ միասին յաջողութեամբ պիտի պսակուի...։

«Գումարւում է, յառաջիկայ Կիրակի, Հին-Յունաստանի Հայ Ազգային Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը, որ շատ կենսական խնդիրներ ունի կարգադրելիք՝ թէ՛ որբերի, և թէ՛ տեղափոխութեան ևն. ևն.: Այսօր հեռագիր եկաւ Միտիլլիէն՝ ինձ և Դաշնակցական Լաղեանին («Նոր Օր»ի խմբագիր) ընտրել են Պատգամաւոր այդ ժողովին»։

Ապրիլ 6.— «Դեսպան՝ Ընկեր Ուստինովը ստացաւ պատասխանը, որ եկել է ուղղակի Երրորդ Միջազգայինի Գործադիր Մարմնի կողմից՝ ասելով որ «թոյլ տան ինձ գնալու ուղղակի Մոսկուա»: Ուրեմն, իմ յայտարարութեան հիմունքները քննութեան առնելով՝ համաձայնել են, որ ես անձամբ ներկայանամ և պաշտպանեմ իմ դրած թէզերս՝ մեր Կուսակցութեան նկատմամբ: Այլևս հարցը կիսով չափ պարզուած է — պիտի մեկնիմ Ռուս Սովիետական նաւով՝ Պոլսի վրայով. Դեսպանը ապահովացրեց ինձ, որ Սովիետական նաւով երթալով՝ ո՛չ մի վտանգ կարող է սպառնալ. ուստի, ես էլ այդ ուղին ընտրեցի, քանի որ ցամաքի ճամբով դրամը չի բաւականանայ։

«Երբ ողջամբ հասնիմ Մոսկուա, Երրորդ Միջազգայինի առաջին անգամ տուած որոշումները վերլուծելուց յետոյ՝ մեր իրականութեան անհամապատասխան լինելը պիտի փաստեմ և առաջարկեմ լուծում՝ ըստ մեր հայեցակէտերի: Պիտի խօսիմ յիսուներկու ազգերի ներկայացուցիչների առաջ, և ես մէն մենակ եմ, յոյսս դրած միայն ինձ վրայ։

«Իմ հոգւոյս ցաւոտ կէտն է Տաճկա-Հայաստան.

Մոսկուայի բարձրագոյն պետական հաստատութիւն-
ների և վերին պետական անձանց հետ երկար տեսակ-
ցութիւն պիտի ունենամ, այդ խնդրի ամբողջ *ստատը*,
բոլոր միտումները ու հոսանքները լաւ ուսումնասիրե-
լու և ճանաչելու համար. այդ մասին մասնաւոր ջանք
պիտի թափեմ:

«Երբ Մոսկուայից *կամ ուրիշ վայրերից նամակ-
ներ ստանաս, տուած պատասխանդ արա՛ չա՛տ զգոյշ,
որովհետեւ արտասահմանից եկող բոլոր նամակները
բացւում, կարդացւում են* Չեկայի *կողմից. աչքի ա-
ռաջ ունեցիր, որ ամէն բառ հակառակ կարող է մեկ-
նուիլ...»*:

*«Հակառակը խորհինք.— Մեռա՛յ, չը կա-
րողացա՛յ տունն գալ. եւ չը տեսնուեցի՛նք...:
Հարկաւ ինձ հալալ կանես՝ եթէ քեզ դառնու-
թիւններ տուեր եմ. կ'ապրիս զաւակներիդ հետ.
նրանց բախտը կը տեսնիս՝ որքան որ կարող
ես: Կեանքս տուեցի մի Գործի. երբէք չը հար-
ցըրի թէ արդեօք այդ Գործը պիտի սատար
լինի՞ կենքս և զաւակներիս գոյութեան պահ-
պանութեանը կամ նրանց բարօրութեանն ու
երջանկութեանը: Ձեզ թողեցի անապահով,
բախտի անօրինութեան խաղալիք: Հարկաւ սա
մի կսկիծ է սրտիս. բայց ընդգրկած ասպա-
րէզս ուրիշ ելք չէր ունենալ, քան այն՝ ուր հա-
սայ ես և ընտանիքս: Զաւակներս կարող են
աղքատ լինել, բայց ապրել ազնիւ, իրենց պատ-
ւով, պատուաբեր կենցաղով, ձգտելով յարգե-
լու և յարգած պահելու իրենց անունը: Վեր-
ջապես էլ ի՛նչ ասեմ: Կը լինես, կը մնաս հայր-*

մայր· շունչովդ ստեղծող պատմական մի մթնոլորտ՝ շարունակութիւնը մեր ընտանիքի կազմութեան: Եթէ ճակատագիրը այլեւս մեզ իրարու չը մօտեցնի, ապա եղի՛ր քաջ, մնա՛ ազնիւ, ինչպէս որ եղած ես մինչեւ ցարդ: Իսկ եթէ նորից տեսնուեցինք, այս տողերը կը մընան յիշատակ· ինչպէս որ համանման վայրկեաններ ունեցած ենք՝ մեր մինչ այսօրեան կեանքի տեւողութեան ընթացքում: ... — Եթէ, դիցուք, անկարող եղայ իմ բաղձացած եզրակացութեանս հասնիլ Կուսակցութեանս եւ Տաճկա-Հայաստանի ազատագրութեան մասին, կեանքը գէթ կը վկայի, որ վերջին ճիգս այդ մասին թափեցի, հակառակ ծերութեանս այս օրերին:

«Այսպէս, ուրեմն, սիրելի Բերուզս, մնա՛ս բարեաւ, մնացածը կը մնայ ճակատագրին աւելի՝ քան մեզ· մնա՛ս բարեաւ իմ յաւերժական սիրով, մնա՛ս բարեաւ մինչեւ վերջին շունչս քեզ չը մոռանալով, քեզ միշտ վերյիշելով, աչքիս առաջը ունենալով...»:

Պիրէոն, Ապրիլ 29.— «Այսօր իմ վերածննդեան օրըս է. «որին որ մի կտոր հաց էինք տուել, առաջնիս եկաւ» ասում է ժողովրդական առածը: Քե՞զ խնայուեց կեանքս, թէ՞ բալաներիս — այդ չը գիտեմ. բայց հարցն է՝ որ այդ կեանքը դեռ շարունակւում է: Ես վաղուց է՝ որ թքել եմ կեանքի վրայ. բայց չէի ուզիլ մեռնել թշնամիիս ձեռքին՝ կարճատեսօրէն, նրան մասնաւոր առաւելութիւններ տալով այն կեան-

քի համար, որին հետապնդել է նա տարիներից ի վեր՝ որպէս անվեհեր և յարատեւ մի թշնամու։

«Պատմութիւնը այս է։ Սովիետական Հանրապետութիւնների Աթէնքի Դեսպան՝ Ընկեր Ուստինովը և Հիւպատոս՝ Ընկեր Մաշիցկին ամէն ջանք թափեցին, որ ես Մոսկուա մեկնիմ։ Նրանք գործեցին որպէս Ընկերներ, համոզուած լինելով, որ Մոսկուա երթալս շատ օգտակար պիտի լինէր Սոցիալիստական–Միջազգային տեսակէտից։ Ուստի նրանք՝ իրենց հաշուին՝ հեռագիր հեռագրի վրայ տուեցին և դրական պատասխանը բերին, որ երթամ և ներկայանամ Կոմինտերնին — Երրորդ Միջազգայինին։ Գնալս մի քանի օրով ուշացաւ, որովհետեւ այստեղ, Յունաստանի Ազգային Պատգամաւորական ժողովը տեղի պիտի ունենար և հակառակորդները միտք ունէին տապալել ներկայ Առաջնորդը և Ընկեր Յ. Սուքիասեանը, որ գործավարն է և Ազգային ժողովի փոխ–Նախագահը։ Մնացի և ազդեցութիւն ունեցայ տեղական գործերը կարգադրելու Խորհրդային Հայաստանի և մեր Կուսակցական շահի տեսակէտից։ Թէեւ ժողովը դեռ չի վերջացած, բայց գլխաւոր հարցերը լուծուած են՝ ի շահ մեր պաշտպանած թէզերին։

«Դեսպան Ուստինովը իր ուսումնասիրութեան համար՝ թէ ո՞ր գծով պիտի երթայի, երկու օր ժամանակ էր ուզել և Մաշիցկու հետ ձեռնարկել այդ խնդրին. և որովհետեւ Ջիչերին նաւը եկել է, ներկայացայ անցագիրս առնելու համար, սակայն նրանք պատմեցին հետեւեալը — թէ՛ Հիւպատոսը և թէ՛ Դեսպանը կանչել են Ջիչերին նաւի Նաւապետին և պահանջ դրել, որ իմ անունս ճանապարհորդների ցանկի մէջ չը մտնի, որովհետեւ եթէ նաւերը Պոլիս են հասնում, նոր դաշնագրերի համաձայն՝ տաճիկ ոստիկանութիւնը նաւ է մտնում՝ ճանապարհորդների անուա-

նացանկը և պասպորտները առնում է ու նաւի մեկնելուց մէկ ժամ առաջ յանձնում, երբ կասկածելի անձեր չի գտնում։ Նաւապետին պահանջ են դրել նաեւ՝ որ ինձ հագցնեն նաւաստիի զգեստ՝ չճանաչուելու համար։

Եւ սակայն, Ուստինով և Մաշինցկին հակա-լըրտեսական տեղեկութիւնները հաւաքելով, տեսել են որ լրտեսական ցանցը սոսկալի է․ ինձ հետեւում են Թուրքերը ո՛ւր որ ես եմ գնում և պատրաստ կեցել են, որ ոտքս նաւ դնելուս պէս՝ հեռագրեր տային Պոլիս՝ որ Թուրքերը գային ու դուրս քաշէին ինձ նաւից։ Այսպէս, այսօր, Հիւպատոսը տխրութեամբ՝ պասպորտս յետ տուեց Պոլսոյ վրայով մեկնումս անկարելի գտնելով․ Թէեւ վիզէի համար 380 Ֆրանք էի վճարել։ Որոշեցի՝ որ երթամ Իտալիայի, Աւստրիայի, Չեխօ-Սլօվաքիայի և Լեհաստանի վրայով — եթէ այս գիծն էլ չեղաւ, ապա՝ ստիպուած պիտի լինիմ երթալ նախ Պարիզ, ապա Բերլին և ուղիղ այնտեղով՝ Մոսկուա։

«Երէկ, այս երրորդ հեռագիրն է՝ որ եկել է Ուստինովին —

«Անհամբեր սպասում ենք Ընկեր Սապահ-Գիւլեանին»։

«Հէնց այս րոպէիս, Պիրէոնի սրճարանի մէջ, երբ այս նամակն եմ գրում և Արտեմիսը կողքիս է նըստած, դիմացս՝ եւրոպացու տարազով և գծագրութեամբ մէկ թուրք և մէկ յոյն լրտես ինձ են դիտում։ Եթէ մեկնիմ, պոչէս կը կախուին։

«Ոչինչ այնքան դժուար չէ, որքան պատմական Թշնամու ձեռքից ընդունած մահը․․։

«Բայց այսօր վերածնեցայ»։

Պիրէոն, Մայիս 7․— Բուլղարիայով, Ռումանիայով, Սերբիայով Թոյլ չը տուեցին Ռուսաստան մըտնել․ պասպորտս վիզէ չարեցին։ Երկար գնալ-գալուց,

աշխատելուց յետոյ՝ առայ Իտալական, Աւստրիական, Չեխօ-Սլօվակեան, Լեհական վիզէներ: Ուրեմն Պիրէից կը մտնեմ Ադրիական ծով և կ'երթամ մինչեւ Տրիեստ. Տրիեստից կ'անցնիմ Վիենա. Վիենայից Պրագա (Սեւ չիկ ջութակահարի երկիրը). Պրագայից էլ Վարշաւա, ուրտեղից էլ կը մտնեմ Ռուսաստան: Ո՛չ մի երկրի մէջ կանգնելու իրաւունք չունիմ՝ առանց ոստիկանական յատուկ թոյլտուութեան, էն էլ մի քանի ժամուայ համար: Շատ տեղեր, վագոնիս մէջ, ոստիկաններ պիտի նստին՝ ինձ ուղեկցելու, որ մի գուցէ վայր իջնեմ: Շատ բան պիտի լինի, եթէ բանտ էլ չը տանեն: Այս բոլոր ծայրագոյն խստութիւնները արդիւնք են Բուլղարական վերջին անցքերին:

«Բուրժուական աշխարհը իր կործանման օրերի մէջ՝ օրհասական արջի կռիւ է մղում:

«Վարշաւա կարո՞ղ եմ մի քանի ժամ մնալ, վիզէս տուողին հարցրի — ի՞նչու, ի՞նչ գործ պիտի ունենաս — դիւանհարի պէս հարցրեց Հիւպատոսը — պիտի ուզէի ձեր Նախագահ Գրաբսկուն տեսնել. որովհետեւ նա իմ համալսարանական ընկերս է, պատասխանեցի: Հիւպատոսը ուղղակի էշ կտրեց — այն ժամանակ պատկերդ տուր հիմակուանից, ասաց. ես էլ տուեցի:

«Այսպէս, այս դժոխային պայմանների տակ՝ ահագին տարածութիւն պիտի կտրեմ, սպասում եմ Լը-լոյտի Շոգենաւերին: Գրի՛ր ընկերներին, որ դրամ պատրաստեն. մէկ տոլարը հարիւրի արժէք կարող է ունենալ՝ Ազգային և կուսակցական տեսակէտէ. և ես չատ դրամ չունիմ մօտս...: Իմ հասցէս՝

STEPHAN SAPAH-GULIAN
Poste Generale, Poste Restante
Moscou-Union des R. S. S.

«... Սիրտս կսկծում է, որ առանց տունը նախա-

պէս ապահովելու՝ այսպէս ուղեգիծ բռնեցի — ինչ էլ լինի, կենդանի մնամ, թէ՝ մեռնիմ, ապրիմ՝ թէ վտանգուիմ, «Աստծու պահած գառը գայլը չի ուտիլ»: Ջիգերդ հաւաքի՛ր, սիրելի Բերուզս, շունչովդ տաքացրու քալաճներիս, որ իմ բացակայութիւնս զգալի չը լինի:

«Ճիշդ Ոդիսեւսի կեանքը ունեցայ: Յունական այս հերոսն էլ իր ծերութեան օրերը վտարանդութեան մէջ մաշեց, թէեւ վերջը հանդիպեց իր օջախին: Երանի՛ մէկ էլ ձեզ տեսնէի...: Հոգւով, սրտով, երեւակայութեամբ ձեզ հետ եմ միշտ...:»

Մայիս 12.— «Յունիսի 4ին սահմանը պիտի անցնէի, եկաւ ճանապարհածախսի խնդիրը: Ահռելի բան եղաւ: Թէեւ երրորդ կարգով պիտի մեկնէի, սակայն հաշիւ արեցինք, որ չի բաւում ունեցածս. քանի որ պարտք էլ ունիմ այստեղ և անհրաժեշտ կարիքներ էլ: Ահա՛ մի ողբերգական դրութիւն, որի առաջ խելքս կորչում է, գլուխս ճայթում է, ուղղակի խելագարութեան մէջ եմ: Ի՞նչ պիտի անել — այստեղ ամէն հնարաւորութիւն փորձում ենք, Ընկեր Սէֆէրեանի հետ — որին կը ճանաչես Եգիպտոսից: Եգիպտոս նամակ գրեցինք, որ հինգ-վեց օրից մեզ հեռագրով օգնութեան հասնին, տեսնե՛նք:

«Ես երբ չորս հարիւր տոլարը ուղել էի, աչքի առաջ ունէի Պոլսի ճանապարհը, այս արդելքների մասին մեզնից ոչ մէկը տեղեկութիւն ունէր: եթէ դրական պատասխան գայ Եգիպտոսից, այն ժամանակ կ՚երթամ անպայման, ի՛նչ դժուարութիւն և թշուառութիւն էլ որ ինձ պատահելու լինի — արդէն ո՛չ քուն ունիմ, ո՛չ հանգիստ. խռովեա՛լ դրութիւն: Անցեալ գիշեր, երազիս տեսայ, խաղում էի ծոռակի մը հետ, միջից յանկարծ սոսկալի հոսանքով բոցեր արձակուեցին: Սիրտս ա՛յնքան բարձրացել էր մեր Երկիրը տեսնելու

համար, որ հողում թաղում էի: Խե՜ղճ ընկերները զո-հեցին, ո՜րքան պիտի հիասթափուէին, երբ երթալ չը կարողանալու դժբախտութիւնը պատահի...:

«Շատ կոտրուած սրտով եմ գրում այս նամակս. մխիթարող ո՛չ ոք ունիմ, բայց միայն մտատանջու-թիւն, անդոհական երազներ. դարձել եմ կմախք: Երբ Շահվէրդեանը այստեղ էր, ասաց՝ որ այստեղ մի՛ մը-նայ, յայտարարութիւն գրի՛ր, քեզ ուղարկեմ. բայց ես Կուսակցական թասիբ համարեցի ուրիշի վրայ չը ծանրանալ և իմ Կուսակցութեան ոյժով երթալ:

«Դժբախտութիւնը, ձախորդութիւնը երբ գալիս է, գալիս է մի քանի տեղով և չակնկալուած կողմերից»:

Մայիս 14. — «Այսօր երկինքը մթագնած, փայլա-տակումներ, կայծակ, որոտում — ճիշդ իմ հոգիս է, իմ սիրտս էլ այդ պատկերն ունի: Գլուխս վրաս չի կանգնում. անդադար ծխում եմ ու ծխում. ժամերը, րոպէները տարիներ են թւում. մի քիչ հանդարտւում եմ, երբ հրջապատւում եմ ընկերներով, նրանք աշխա-տում են ինձ ուրախ տրամադրութեան մէջ դնել՝ բայց դա անկարելի է լինում: Սիրտս կտրատւում է, գլու-խըս մթագնում և յաճախ արտասւում եմ, ես էլ չը գիտեմ՝ թէ ինչո՛ւ. ինքս ինձ հաշիւ տալ չեմ կարո-ղանում: Զը զարմանաս, եթէ խոստովանի՛մ, ասե՛մ, որ շատ անգամ ինքնասպանութիւն իսկ մտովս անց-նում է. թէև շուտ արթնանում եմ ու մտածում՝ որ այդ կերպ էլ խնդիրը չի վճռուիլ:

«Երէկ, յուզուած տանես, գնացի ոստիկանատուն՝ ուզեցի որ դուրս գալս նշանակեն պասպորտիս վրայ — մտածում էի ուղղակի գլուխս վեր առնել և նաւ նստիլ դէպի Տրիեստ-Վիեննա, փոյթ չէ՝ թէ ճանապարհին մեռայի. բայց՝ բարեբախտաբա՞ր թէ՝ դժբախտաբար, պաշտօնատունը փակ գտայ: Զարհուրելի հոգեկան

տաղնապների մէջ եմ. Ընկեր Սուքիասեանը՝ որ մի չափ խոհեմ, պաղարիւն երիտասարդ է, ողի ի բռին հակառակ է, որ ես այսպիսի վիճակի մէջ եմ դնում ինքզինքս. է՛, տեսնե՛նք։ Հարկաւ, մեղաւորը ե՛ս եմ. ես եթէ ամէն բանից՝ առաջուց տեղեկութիւն ունեցած լինէի, այս դժբախտութեան չէի ենթարկուիլ։ Արտասահման գնացող, Ամերիկայից, ընկերներ ունեցանք, որոնց հազարներ տրուեցան՝ հազիւ իրենց կարիքներին բաւարարող, ե՞ս ի՛նչպէս պիտի կարողանայի 3-400 տոլարով բաւականանալ..., քանի որ՝ Նիւ Եորքից մինչեւ Համբուրգ 80–100 տոլար է. 15 տոլար էլ՝ այնտեղից մինչեւ Բերլին. իսկ Բերլինից մինչեւ Մոսկուա՝ անընդհատ գնացք կայ։ Ասել է թէ՝ մօտաւորապէս, 200 տոլարով, Նիւ Եորքից Մոսկուա կարելի է հասնիլ։ Երբ, Արեւելեան Եւրոպայի համար յաճախ գրում էր, լրագրերում, թէ մէկ տեղից միւսը երթալու համար՝ շաբաթներ, երբեմն ամիսներ են պէտք — գաղափար չունէինք — պատերազմը ամէն բան քար ու քանդ է արել. ճանապարհները դժուարացրել և յաճախ անանցանելի է դարձրել։ Արդէն իմ երեսին ասացին, որ «ծերերի համար չէ երրորդ կարգով մեկնիլը», բայց ես կարեւորութիւն չը տուեցի։ Հաղորդակցութեան տեսակէտով՝ ո՛ւր Միացեալ Նահանգները..., նա կը մնայ եզակի՝ աշխարհիս վրայ։

«Տեսնենք երեք-չորս օրից յետոյ ի՛նչ դուրս կը գայ։ Եթէ երթալս չը լինի՝ անկարելիութեան մէջ գտնուիմ, ընդարձակ տեղեկագիր կ'ուղարկեմ Մոսկուա, յապաղում կը փաստեմ և Դեսպանի ձեռքով կ'ուղարկեմ։ Հայաստան էլ զանազան անձնաւորութիւններին — Ա. Երզնկեանին եւն. — կը գրեմ։

«Սիրտս զառնացել է, ուրիշ ի՞նչ անեմ, եթէ ոչ նստիլ՝ քեզ գրել, որ մի քանի րոպէ սիրտս բացուի...։ Որ ասում են՝ թէ ծերունիները երեխաներ են — ճիշդ

է, այս տարիքիս մէջ, կարծես, ո՛չ կամք է մնացել, ո՛չ էլ առողջութիւն:

«Թրակիայի հայերին նորից նեղում են»:

Մայիս 19.— «Եգիպտոսից դեռ լուր չկայ, չի նամակ՝ որ վեց օր է անցել: Սոցիալիստ Հանրապետական Միութիւնների Աթէնքի ընդհանուր Հիւպատոսն՝ Ընկեր Մաշիցկին այստեղից մեկնեցաւ Հռովմ, ապա Զուիցերիա, Գերմանիա և Ռուսաստան՝ Մոսկուա Խորհուրդների ժողովին ներկայ լինելու: Այդ գիծը մօտ վեց հարիւր (600) տոլար կ'արժենայ: Նա հետը տարաւ նա՛եւ իմ թղթերը:

«Ջեկայի լիազօր անդամ՝ Ընկեր Նևսկին էլ մեկնեց Մոսկուա՝ Կ. Պոլսի վրայով: Արդէն գրել եմ քեզ, որ այդ գծով երթալս՝ ինքը թէ Դեսպանը Ուստինով և թէ Կոնսուլը՝ Մաշիցկին, ինչպէս և Նևսկին՝ ԱՆԿԱՐԵԼԻ համարեցին, նոյն իսկ ամէն տեսակ հնարիմացութիւններ խորհելուց յետոյ: Այս երկուսն էլ պիտի տեսնեն Երրորդ Միջազգայինի Գործադիր Մարմնին — Կոմինտէրն — և նրանց առեն՝ որ ես պատրաստւում էի մեկնելու...: Բայց ի՞նչ անել — ես դեռ սպասողական դիրքի մէջ եմ, գլուխս ցաւերով լիքը:

«Փողոցները հայ երեխաներով լիքն են: Կին չը կայ, որ մի քանի զաւակ չ'ունենայ. սոսկալի էլ աշխատասէր են. նոյնը և Յոյները: Էրիկը ցեխն է պատրաստում, կինը քարերը վերցնելով՝ պատ է հիւսում, տուն շինում: Ջարաչար կ'աշխատեն, բայց հէնց որ երեկոյ եղաւ՝ փողոցները մի մի պարասրահի կը փոխուին. երգել, պոռալ, պարել — կարծես թէ ո՛չ դարտ ունին, ո՛չ ցաւ. աշխարհը իրենցն է: Սա Արեւելք է:

«Առ առաւելն մէկ շաբաթից հարցը կը վճռուի: Խոնաւութիւնը ազդեց և ձախ ազդրս, գլուխս ուղղակի քարացել է. ոտքերս սոսկալի ցաւում են, ծունկերս

քաշել հաղիւ եմ կարողանում. համբերե՛նք, տեսնե՛նք»։

Մայիս 22.— «Եգիպտոսից ո՛չ մի պատասխան. մինչեւ յառաջիկայ երկուշաբթի էլ կը սպասեմ, ու յետոյ կըսկսեմ վերադառնալուս գործողութիւններին։ Հայաստանից վերադարձող մէկ բժիշկ եկաւ. նա վերադարձել է Թիֆլիզ–Բագու–Մոսկուա–Բեռլին–Պարիզ–Յունաստան՝ Իտալիայի վրայով, իր ասելով՝ միակ գործնական ճանապարհը այդ է։

«Գիտեմ, որ վերադառնա՛մ, մեծ յուսախաբութիւն պիտի տիրէ, վարկաբեկումներ պիտի լինին... չա՛ր լեզուները պիտի խօսին, զրպարտեն, հազար ու մի մեղադրանքներ պիտի թափեն — բայց իրողութիւնը մընում է իրողութիւն։

«Անօրինակ հոգեկան տագնապներ ունեցայ. գուցէ սա էր լաւը։ Արեցի՝ ինչ որ կարող էի, նախատեսեցի այնքան, որքան կարող էի։ Բայց խոչընդոտները իրարու վրայ բարդուեցան և ժայռ դարձան, առաջս կըտրեցին...։

«Այսօր աչքերս ցոյց տուեցի. թէեւ տարափոխիկ հիւանդութիւն չունիմ, որ պատճառ դառնայ պասպորտիս վիզէն չառնելու, բայց բաւականին լուրջ գտան՝ քրոնիկ հիւանդութեան նշաններով, որ վատ հետեւանքներ կարող են բերել։ Եթէ երկուշաբթի պատասխան չառայ, պասպորտս վիզէ պիտի անել տամ՝ յետ դառնալու Ամերիկա — որով 2000 ֆրանկի վիզէները պիտի կորչին։ Ուրեմն, երկու-երեք օրից կըստանամ՝ վերջնական և վճռական նամակս, որ այստեղից կը լինի վերջինը։

«Հայաստան երթալու գաղափարից յետ չեմ կանգնիլ։ Ինչպէս գրել էի, կը գրեմ նաեւ Մոսկուա՝ Երրորդ Միջազգայինին և կ՚ասեմ, որ գալս յետաձգեցի յարգելի պատճառներով։ Այս փորձը ինձ հերիք եղաւ.

այլեւս առանց ընտանիքիս հեռու տեղ ոտք չեմ կոխի, ինչ էլ որ լինի։ Ամէն բան կորցրած չեմ. ո՛չինչ աչքիս չի երեւում. հոգեկան տանջանքս, դէթ տնային, եթէ վերջ գտնէր, այդ էլ մի թեթեւութիւն կը լինէր։ Առաջ ա՛յնքան թոյլ կամք չ՚ունէի, քար էի, հիմայ դրանք անցա՛ն։ Ես հանգիստ եմ առայժմ, որքան որ հոգեպէս տանջուող մի կմախք կարող է հանգիստ լինել...»։

Մայիս 26. — *«Կարծում եմ, որ նամակներիցս ձանձրացար. ինչ էլ լինի, այս* վերջին *նամակս է* Յունաստանից։ Գալիս եմ տուն։

«Թէ՛ Մոսկուա՝ Կոմինտերնին *եւ թէ՛* Հայաստան, Թիֆլիզ՝ *ընկերներին եւ պաշտօնական անձնաւորութեանց գրեցի, որ գալս* յետաձգեցի...։ *Անշուշտ, գիտեմ թէ Ամերիկայի ընկերները պիտի վշտանան, բայց արեցի այն՝ ինչ որ մարդկայնօրէն կարելի էր։ Այս տեղի Վարիչը՝ որ բոլոր գործերից տեղեակ է, մանրամասնօրէն կը գրի այդ տեղի ընկերներին — յետաձգումին էլ ի՛ր առաւելութիւնները պիտի ունենայ՝ Կուսակցական եւ Հասարակական տեսակէտից։ Իմ առողջութիւնս էլ շատ վտանգուած է. չափազանց թոյլ՝ տկար եմ. ոտքերս հազիւ եմ ձգում, աչքերս էլ լաւ չեն։ Ես ճանապարհ եմ ընկնում* Պիրէից *ուղղակի* Նիւ Եօրք, *յունական գծով, յոյն շոգենաւով՝ որի անունն է* Edison։ *Նաւը Յունիսի* 2*ին ճանապարհ պիտի ընկնի. հազիւ թէ* Նիւ Եօրք *հասնի* 16-17 *օրից, նայելով եղանակին։ Նաւը շատ խոշոր չէ. ես ստիպուեցայ երրորդ կարգ առնել, դրամս չպիտի բաւէր, եթէ երկրորդ կարգ առնէի։ Գուցէ ովկիանոսի վրայ մնալով՝ մի փոքր կազդուրուիմ, եթէ է՛լ աւելի չը գէշանամ։*

«Կուսակցական գաղափարաբանութիւնը զտուեց, 8րդ Պատգամաւորական ժողովը կայացաւ — սա էլ մի

դրական գործ էր: Եթէ կենդանի մնամ, կ'աշխատիմ կեանքս արժեցնել:

«Յունաստանից՝ Պիրէից, Քօքինիայից — ուր ապրեցայ ութը ամիս, զարմանում եմ թէ ես այս կեանքին ի՛նչպէս դիմացայ, ի՛նչպէս կենդանի մնացի ու չը մեռայ...: Ուղարկում եմ իմ վերջին բարեւներս, սիրազեղ համբոյրներս՝ ձեզ մէկ էլ տեսնելու յուսով»:

Վերեւի նամակների ընթերցումը, կարծեմ թէ, բաւական լոյս պիտի սփռէ ընթերցողիս մտայնութեան վրայ և խղճահարեցնէ ա՛յն բարեկամ ու ոչ-բարեկամներին, ա՛յն ընկեր ու ոչ-ընկերների սիրտը, որոնք ամուսնոյս Յունաստանից դարձին՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար խաչը հանեցին զինքը և աջ ու ձախ մեղադրեցին նրա Հայաստան չը գնալը վերադրելով չկամութեան:

Ներքին դաւադրութեանց չարին ու սահմանը ե՛ւս աւելի կը որոշուի, երբ՝ այստեղ, յայտնեմ թէ՝ քըննութիւն կատարուեցաւ Ընկեր Մէարիֆեանի հեռագըրած դրամը ի՛ր ժամանակին ամուսնոյս չըստանալուն մասին և երեւան եկաւ, որ Նիւ Եօրքի մէջ՝ Մէարիֆեանի կեղծ ստորագրութեամբ, հեռագրատունէն, մի քանի անգամ, յետաձգուել խնդրուած է այդ 400 տոլարի Յունաստան առաքումը... առանց գիտութեանը Ընկեր Մէարիֆեանի: Ահա՛ թէ ո՞ւր էր հասած դաւադրութիւնը: Եւ, հակառակ ամուսնոյս այդ ծայրայեղ համբերութեան ու սպասումին, ուրիշ ո՛չ մի տեղէ դրամ է հասցուած իրեն, թէեւ ա՛յնքան նամակներով իր վիճակին մասին տեղեկութիւններ էր տուած, մի քանի անգամներ, իր մօտիկ ընկերներին ու մասնաճիւղերին: Ընդհակառակը զոհուել են մինչեւ իսկ այնպիսիներ, որ անկեղծ ու պարզամիտ Հնչակեան ընկեր-

1· Գէորգ Մաշոյեան, 2· Պարսամ Դաւիթեան, 3· Յովսէփ Մշեցի,
4· Մինաս Նալչաճեան, 5· Հայկ Գումրուեան

ներին համոզած են, թէ Սապահին Յունաստան ուղարկուած էր պէտք եղած դրամը՝ Հայաստան գնալու համար, սակայն ինքն է որ չի ուզած երթալ...։ Անխի՛ղճ արարածներ։

Վերջապէս Edison նաւը կը հասնի Նիւ Եօրք, և ամուսինս Էլիզ-Այլընտ կ'առաջնորդուի, ուր՝ պաշտօնեան քննութիւն կատարելով՝ կազմը շատ թոյլ, աչքերը տկար կը գտնեն և կ'որոշեն իրեն յետ ուղարկել. բայց, բարեբախտաբար ըստ նախօրօք կարգադրութեան, կը հասնի իրեն ծանօթ Հայ թարգմանը և կ'ազատէ իրեն։ Խեղճ Սապահը այդ օրը ո՛րքան էր ահաբեկուել յետ ուղարկուելու մղձաւանջից, որ Էլիզ-Այլընտից դուրս եկած ժամանակին փառք էր տուել Աստուծոյ և՝ կ'ըլ յետևը չէր դարձել, որ մի՛ գուցէ կրկին փորձանքի հանդիպէր. և՝ ուղիղ, Թրօյի երկաթուղին առնելով՝ տուն էր շտապել, փոխանակ Նիւ Եօրքի մէջ ժամանակ անցընելու։

Սապահը դեղնած, բոլոր ատամները թափուած, տկար՝ տուն հասաւ. բայց աստիճանաբար, ընտանեկան խնամքի տակ, իր երեխայոց մօտ գտնուելով, քիչ ու շատ կազդուրուեց նա։ Երբ առաւօտեան կը նախաճաշէինք, «ա՛խ, ի՞նչ կը տայի սա մի բաժակ սուրճին համար, եթէ Յունաստան ձեռքս ընկնէր» կ'ասէր, «ա՛խ»ը կը քաշէի մի բաժակ կաթին» կը պատմէր ու կը կրկնէր, «կը զարմանամ, որ ես կենդանի մնացի. որ միտս կը բերեմ Յունաստանի մէջ անցկացրած կեանքըս, հրաշք կը սեպեմ իմ ողջ մնալս»։

Սապահը, թէև խիղճը հանդարտ, սակայն սրտէն զարնուած էր. և, յաճախ, «ափսո՛ս» կը բացագանչէր, երբ կը լսէր Կուսակցութեան գլխին թառածների անխիղճ ու չհախնդիր վերաբերմունքը՝ Կուսակցութեան գոյքերի վերաբերմամբ. յաճախ արտասուք կը թափէր, կը փրփրէր, ինքնինքը կ'ուտէր, որպէս թէ իր

զաւակները լինէին այդ Կուսակցական շէնքերը, մեքենաները, գոյքերը...:

Գիշեր-ցերեկ, համբիշը ձեռքին, տան մէջ կ՚երթար ու կուգար ու «վա՜խ, վա՜խ» հառաչելով, մտատանջ, ցաւատանջ ապրելով, բոլորովին իր առողջութիւնը քայքայելու վրայ էր, երբ խնդրեցի իրեն, որ սկսի մի քիչ գրական աշխատանքով պարապիլ, կա՛մ իր կենսագրականը գրել, կա՛մ «Փոքր-Հայքի Յիշատակներ»ի երկրորդ մասը շարունակել: Համոզուեցաւ, բարեբախտաբար, և սկսաւ Փոքր-Հայքի Յիշատակներ»ը շարունակել:

Իսկ գիշերներն էլ, առաջնակարգ փիլիսոփաների մեծահատոր գրքերը կը բերէր Ամերիկեան գրադարանէն և ուշի ուշով կը կարդար: Անգլիերէն կամ Ֆրանսերէն այդ գրքերի մէջ հազիւ կը պատահէին մի, երկու բառեր, որոնց նշանակութիւնը թէև գիտէր, սակայն առոյ չէր գոհանար և բառերը կ՚ընդգծէր, որպէս զի, բառարանի մէջ անգլիերէնէ Ֆրանսերէն, կամ Ֆրանսերէնէ անգլիերէն բուն բառը գտնէր. և մանկան մը նման, ամենամեծ համբերութեամբ, փոքրիկ թղթի վրայ նշանակելով՝ գոց կը սորվէր այդ բառերը ու յետոյ միայն գրքի մէջի ընդգծուածները կը ջնջէր, երբ յետ պիտի վերադարձնէր գրքերը:

Զարմացած մնացած էի, իր՝ մի՛շտ սովորելու, մի՛շտ յառաջդիմելու ձգտումին վրայ՝ այդ տարիքին մէջ — և կարդացածների ա՜յնքան խորը ուսումնասիրելու, մարսելու համբերատարութեանը վրայ: Այդ ընթերցումների մէջ մեծ մխիթարութիւն կը գտնէր. մանաւանդ այդ Փիլիսոփայ-Հեղինակների կեանքը, կրած հալածանքները, չքաւորութիւնը, «զարմանալիօրէն համանման» կը գտնէր իր կեանքի վերջին օրերին:

Այդ բոլորի հետ, ժամանակ և տրամադրութիւն էլ

կը գտնէր՝ Վարդիս Հայերէն Լեզու, Հայոց Պատմութիւն աւանդելու։ Արդէն իր ամբողջ ամուսնական կեանքին մէջ, բոլոր երեխաներիս հետ էլ ինքը պարապած է թէ՛ Հայերէն և թէ՛ օտար լեզուներով, երբ տունը գտնուէր. իսկ բացակայութեանը՝ ես։

Թրոյի Հնչակեան ընկերներէն կը խնդրէր որ՝ իրեն համար ձեռք ձգէին «Խորհրդային Հայաստան» թերթը. առանձին սփոփանք կը գտնէր այդ թերթերէն։

Բայց յանկարծ սկսաւ աչքերը տկարանալ. և «կայծեր» կ'երեւային աչքերին. մի ամբողջ շաբաթ մտաւոր աշխատանք կատարել չը կարողացաւ։ Մասնագէտ ակնաբոյժի մօտ տարայ զինքը, որ բացարձակ հանգիստ պատուիրեց. և առանձին լուրջ ոչինչ չը կայ, ասաց. և եղածը յոգնածութեան վերագրեց։ Շուտով բաւական լաւ զգալէ վերջ, նոր մարդ մը դարձաւ։ Այլեւս հաշտուած կը զգար իր ներկայ կեանքին հետ. կուսակցական ծանր պատասխանատուութենէ, չարքաշ կեանքէ հեռի՝ հասարակական մաշեցուցիչ մտատանջութիւններէ ազատ՝ նոր գիտցաւ, կարծես, ընտանեկան խաղաղ կեանքի յարգը. նոյն իսկ, զուարթ ժամեր էլ ունեցաւ. կատակել, երգել՝ մանաւանդ երբ ինձ տկար կամ մտատանջ տեսնէր։ Օրական երկու-երեք սիկառ ծխելը իր հաճոյքներէն մին էր. մեծ ախորժակ ունէր, լաւ կ'ուտէր, կը խմէր. միայն անբնական, անյագ ծարաւ մը ունէր։ Հոգին կը հրճուէր, որ իր «բալաները մեծացել են և տուն էլ են պահում»։ Փա՛ռք կուտար Աստուծոյ և կ'ըսէր թէ՝ «օտարին միննէթին պէտք չունիմ այլեւս...» և կ'օրհնէր նրանց։

Իր հօտառութիւնը՝ երիտասարդ հասակին, բանտին մէջ, կորցրած լինելով, այժմ միայն քթի նեղութիւն կ'ըզգար — կրկին մասնագէտի մօտ տարայ, որը յայտնեց թէ՝ մշտական խնամքի պէտք ունի, դեղեր

տուեց, իսկ հոտառութեան մասին էլ՝ «անբուժելի» *յայտարարեց։*

Մեր բնակած տունը՝ առաջին յարկի վրայ՝ անյարմար կը նկատուէր և ես յաճախ կը հիւանդանայի — Թրօյի *մեր բժիշկը* Տօֆթօր Հատիտեան *խորհուրդ տուեց մեզ տունը փոխել անպայման. և որովհետև զաւակներիս ցանկութիւնն էր* Նիւ Եօրք *փոխադրուել, ապառողական վիճակ մը ունեցանք և երկար ապանելու դատապարտուեցանք։ Երբ բժիշկը ինձ խնամելու կ'այցելէր, յայտնեցի իրեն՝* ամուսնոյս տարօրինակ ծարաւը, *պատմելով իրեն, որ* օրական հինգ-տասը բաժակ թան, ջուր, սուրճ չէր բաւեր իր ծարաւը յագեցնելու: *Բժիշկը ուզեց քննել մէզը. և քննելով գտաւ, որ ամուսինս շաքարախտ ունի...։ Թելադրեց շաքար կամ շաքար պարունակող ո'և է բան չը գործածել, չ'ուտել կամ չի խմել. և... առաջին շաբաթէն իսկ՝ տարբերութիւնը զգալի եղաւ. և ամուսինս բժշկուելու վրայ էր այդ ախտից էլ։*

Մեր տան մշտական միակ այցելուն, անկեղծ բարեկամ՝ Ընկեր Մ. Ղազարոսեանն *էր* (Սասունցի) *որ՝ պաշտելու չափ կը սիրէր ու կը յարգէր ամուսնոյս. և, մեզ այցելած օրերին, կը խնդրէր երբեմն ամուսնոյս, որ իր անցեալ կեանքէն մի քիչ պատմէր... և երբ, ամուսնոյս տրամադրութիւնը տեղը կը լինէր, կը պատմէր բաներ, որոնք նորութիւններ էին ընկերոջ համար։ Մի անգամ էլ, պատմեց իր* փախստական օրերին Երուսաղէմ *ընդունուելու պարագան, ո՜րքան* եռանդով և ոգեւորութեամբ, *որ չէիր ասիլ թէ՝ դիմացինդ տկար կամ ծեր Սապահն էր։*

Բայց, յաճախ էլ, ո՜րչափ խորասուզուած կը լինէր իր խոհերի մէջ, որ մէկ բառ իսկ չէր փոխանակէր այցելուին հետ. և, «դուք խօսեցէք, ես լսում եմ»

կ'ասէր ու համրիչը ձեռքին, սենեակին մէջ, վեր ու վայր ման կը գար, առանց յոգնելու կամ ձանձրանալու: Եւ այդ ժամանակ, իր դէմքը ա՛յնպիսի արտայայտութիւններ կ'ըստանար — նայելով անշուշտ իր մտածմունքներին — որ Ընկեր Ղազարոսեանը կատակով ինձ կ'ասէր, որ «պատկերահան գործիք մը լինէր այս տեղ և Ընկեր Սապահի պատկերը քաշէի»: Եւ, յիրաւի, անգիտակցաբար, կամ առանց իսկ նշմարելու, որ իրեն կը դիտենք, դէմքը մէկ կը խոժոռէր, մէկ՝ կը ծիծաղէր...: Երբեմն, իրեն նկատողութիւն եմ արած, որ դէթ, տանը հիւր եղած ժամանակին, այդպիսի լռութիւն և դիրք չը պահէ, սակայն խեղճ ամուսինս «ի՞նչ անեմ, մելանխօլի (մելամաղձութիւն) է գալիս վրաս, ձեռքս չէ» կ'ասէր տխրութեամբ:

Բայց եթէ խօսակցութեան նիւթը լինէր քաղաքական կամ կուսակցական, մարդը կը փոխուէր և կը խօսէր... մեծ ոգեւորութեամբ:

Ինքը բաւական առողջ ու զուարթ էր թէեւ, սակայն իմ տկարութիւնը իրեն կը մտատանջէր. երբ բժիշկը ինձ թելադրեց օդափոխութիւն, ամուսինս անմիջապէս իրար անցաւ և «հա՛ Վ.-ի ագարակը կ'երթաս, ես իրեն կը գրեմ» ասաւ: Բայց ես էլ պայման դրեցի, որ մինչեւ «Փոքր-Հայք»ը չը վերջացնենք, չեմ մեկնիլ:

Եւ այդպիսով, երկուքս էլ լուրջ աշխատանք թափեցինք և գիրքը վերջացաւ...:

Վերեւ յիշածս Սասունցի մեր Ընկերը, մի օր, մի քանի շաբաթուայ հիւանդութիւնից յետոյ՝ մեռնելու վրայ է եղած, սակայն իրեն շրջապատող — ընտանիք, զաւակ — անձերին խնդրած է Սապահին տեսնել — Պէքեարեան պատանիները եկան ու ամուսնոյս անմիջապէս առաջնորդեցին մահամերձի մօտ, որը ամուսնոյս տես-

նելուն պէս, կեանք է առած ու նրա վզովը փաթաթուելով՝ «եկո՛ւր, անբիծ ճակատդ համբուրե՛մ, Ընկեր Սապահ» *մրմնջել է ու մի քանի րոպէից յետոյ, առանձին առանձին հրաժեշտ առնելով իր տան անդամներից, աչքերը փակել է առ յաւէտ...: Մաքո՛ւր և անկեղծ Հնչակեան բարեկամի մը կորուստը մեր վրայ շատ վատ ազդեց։ Եւ ես ու ամուսինս է՛լ ուրիշ նիւթ չ'ունեցանք խօսելու, եթէ ո՛չ* Ընկեր Ղազարոսեանը:

Նրա յուղարկաւորութեանը, ամուսինս եկեղեցւոյ մէջ դամբանական խօսեց և վեր առաւ նրա՝ Սասունցիի *մաքուր* հայրենասիրական *գործերը* — իր քաջ արաբագէտ լինելու հանգամանքով՝ որբեր ազատելու անխոնջ աշխատանքները և նրա չափազանց համեստ, պարկեշտ և անխարդախ Կուսակցական գործունէութիւնը Հալէպի մէջ...:

Ամբողջ ժողովուրդը, զինքը մօտէն ճանչցող բոլոր բարեկամները երեխայի մը պէս կը հեծկլտային,

Ամուսինս յուզումէն և խօսելէն յոգնած կը դողար ու կը հեւար...: Հասարակութեան առաջ, ամուսնոյս վերջին խօսիլն եղաւ այդ դամբանականը:

Մեր բնակարանին բաւականին մօտիկ էր գետակը, ուր կը գնար ամուսինս, երեկոյեան դէմ, «ծովն ու բնութիւնը» *դիտելու և վայելելու։ Ինձ էլ կ'ըստիպէր, ու երբեմն միասին կը գնայինք։ Ամուսինս կը պաշտէր բնութեան տեսարանները և կը յիշէր իր հայրենական* «տունն ու այգին և իր սո՛ւրբ ծնողները» *ու կը վերանա՛ր։*

Վերջապէս, Ընկեր Վահանից *ամուսնոյս նամակի պատասխան-հրաւէրն եկաւ, քաջալերուած ամուսնոյս ստիպումներէն, ճանապարհ ընկայ դէպի նրա ագարակը —* Թրօյի *կայարանին ինձ ընկերացան ամուսինս ու Տիգրանս — երկու մեծերս արդէն* Նիւ Եօրք *գնացած*

էին մեր փոխադրութեան մասին մտածելու: Ամուսինս, զուարթ կերպարանք ցոյց տալով, ինծի կը քաջալերէր «Քեզ տեսնեմ, Բերուզ, հա՛, քաջ եղիր և մինչեւ չը կազդուրուիս, անտառը չը թողնե՛ս հա՛...»:

Անտառը հասնելէս վերջ՝ շարունակ կը թղթակցէինք իրար հետ: Վահանին էլ, ինծնից գաղտնի, նամակ էր գրել և խնդրել՝ որ ինծի շատ լաւ հոգ տանին ու առողջացնելէ վերջ միայն յետ ուղարկեն...: «Դո՛ւ Վահան ջան, դո՛ւ պիտի փրկես Բերուզին...»: Այս էր եղել իր աղաչանքը...: Եւ, որպէս զի չի նեղուիմ իրենց մասին, իր գոհունակ ու քաջալերական նամակները անդադար ինծի կը հասցնէր, ուր որ լինէի: Եւ սակայն մայրական և ամուսնական պարտականութիւններս երեսի վրայ թողած լինելուս տանջանքը՝ ինծի կը տրորէր, ինչքան էլ որ՝ ինծի հրջապատող Պօյաճեան Ընտանիքը՝ իր կարելին կ'անէր ինծի հանգիստ և անդորր պահելու ջանալով: Անտառ գնալուց առաջ՝ մի շաբաթով մնացի Ընկեր Ա. Տէպաղեանենց տանը՝ ուսկից իմ գրած նամակիս պատասխանը ուղարկեց ամուսինս, հետեւեալը:

Թրօյ, Յունիս 4.— «Ես շատ հանգիստ եմ, իմ կերակրիս վրայ յատուկ ուշադրութիւն է դարձնում Նանասախս: Այլեւս այս տանը չի կարելի մնալ, բացարձակապէս հիւանդութեան բոյն է. բոլորիս էլ տկարութիւնը այս տնից է — եթէ մեր փոխադրութիւնը Նիւ Եօրք յաջողուի, լաւ. իսկ եթէ ոչ՝ անպատճառ պէտք է տունը փոխենք օր առաջ: Ուրախ եմ, որ Ընկեր և Ընկերուհի Տէպաղեաններին գտել ես իմ սածիս նըման. մէկը միւսից աւելի գերազանց ընկեր-բարեկամներ են: Իմ յատուկ բարեւներս իրենց կը տաս, որոնց երբէք չեմ մոռանալ իրենց ազնիւ զգացմունքների համար»:

Իսկ անտառը ստացայ հետեւեալ տողերը:

Յունիս 14.— «Կիրակի գնացի Ընկեր Սրապեանենց տունը, ընկերոջը գտայ շատ հիւանդ. սրտի բաբախումը սաստկացել է. ախորժակը բոլորովին կորուել է. ջուրի պէս քրտինք է թափում անդադար: Երէկ փոխադրեցին հիւանդանոց:

«Ուրախ եմ, որ հաղդ պակասել է, քեզ պաղ օդի վարժեցրու, որ այդ խժուկն էլ կորուի: Երկու օրը մի անգամ քեզ կը գրեմ: Ընկեր Վահանին, իր եղբօրը անմոռաց բարեւներս. Տիկնոջն էլ յատուկ ողջոյններս և քաջալերականներս...: Երեխային համբոյրներս: Անե՛մ, Բերո՛ւզ, տանը մէջ տեղդ երեւում է՝ մանաւանդ ինձ համար. ստուերիդ հետը կը խօսիմ, յոյզերի մէջ կը թաղուիմ: Ծերութիւնը միակ սանձողն է՝ երիտասարդութեան ժամանակի սանձակոծութեան: Յոյս ունիմ, որ այս օրերն էլ կ՚անցնին: Օրերը լաւ եղած ատեն՝ կամուրջն եմ գնում: Կերակուրներս շատ թեթեւ են. դոհ եմ: Վարդս այս գիշեր փախաւ Հայերէն դասից... ես էլ մոռացայ կանչել. ուրախ է, ամէն օր կը հարցնի թէ՝ Մայրիկից նամակ եկա՞ւ: Դպրոցից յետոյ թերթ է ծախում Վարդը և իր սինեմայի դրամը հանում: Գիտե՞ս, Բերուզ, է՛լ սիգար չեմ ծխում, փայփ ունիմ և թիւթիւն եմ ծխում, շատ աժան է և թեթեւ...»:

Յունիս 16.— «Այս րոպէիս ստացայ նամակդ, որին անձկանօք սպասում էի. կարծեցի թէ՝ դու էլ Նիւ Եօրք գնալով՝ նամակ չգրելու հիւանդութիւնից բռնըւեցիր...: Ես շատ լաւ եմ. մի քանի օր զգուշացայ դուրս գնալուց, օդերը անձրեւոտ և մառախլապատ լինելուն համար: Տիգրանը լաւ է, աշխատեց գործ գտնել, բայց դեռ չը յաջողեցաւ: Վարդիս վրայ, բոլորիս էլ վրայ լաւ խնամք տարւում է, մխիթար մա՛: Այս բոլորի մէջ՝ ամէնից առաջ, մեզ պէտք է քո առողջութիւնդ և կազդուրումդ. առաջ այդ մասին մը-

տածիր. արեւոտ օրերին միշտ դուրս, բաց օդին մնա՛, վերջապէս քեզ հոգ տանելու ամէն միջոց ձեռք ա՛ռ: Տան մասին ո՛չ մի անհանգստութիւն չ'ունենաս. միայն թէ շատ յաճախ նամակ գրիր եւ օրը օրին առողջութեանդ մասին տեղեկութիւն տո՛ւր: *Ընկեր Վահանին իմ սրտագին եւ յատուկ բարեւներս տուր. իր ընկերասիրութիւնը կը մնայ ինձ անմոռանալի եւ օրինակելի: Փոքրիկ հրեշտակին անո՛ւշ անո՛ւշ պաչիկներ»:*

Յունիս 18.— «*Տիգրանը դեռ գործ չունի. Վարդս իր խնայած դրամները տան պէտքերին է յատկացրած եղել* — շա՛տ ապրի բալաս, որ ընտանեկան ա՛յդքան գիտակցութիւն ունի հէնց հիմակուանից: *Նանասին ամենայն* ժրաջանութեամբ եւ հոգատարութեամբ *տան գործերը կատարում է իր ժամանակին, առանց որ եւ է դժգոհութեան պատճառ տալու: Ջրվէժէն նամակ առայ:* Պարոն Երամեանի *նամակը ներփակ քեզ եմ ուղարկում: Դանիէլից եւ Սապահգիւլից ո՛չ մի լուր ունիմ, երեւի՝ դեռ ո՛չ մի գործ չեն գտել...:*

Ամէն բանից առաջ՝ քո առողջութիւնդ ինձ պէտք է. նեղ օրերը կուգան ու կ'անցնին: *Քեզ գրել էի, որ անցեալ Շաբաթ օր* Ընկեր Սրապենց *գնացի* — երեքշաբթի խեղճ մարդը մեռել է: *Այսօր տունը գնացի. Տիկնոջը կսկիծը, ողբը շատ սուր է, ես էլ շատ լացայ: Եկեղեցու մէջ դամբանական կը խօսիմ»* (*):

Յունիս 22.— «*Ուրախ եմ, որ անտառ մտնելէդ ի վեր շատ մեծ տարբերութիւն կըզգաս. հոգեկան ապահովութիւն կ'ունենամ այն օրը, երբ կը կարդամ թէ բոլորովին առողջացել ես. էլ սրտմաշուկ չեմ լինիլ, երբ արմատական բուժումդ կը լսեմ: էլ չը պիտի ծը-*

(*) Տկարութեանը պատճառաւ չէր կրցած գնալ յուղարկաւորութեան:

խեմ, թէեւ մի քանի սիգար դարակիս մէջ ունիմ: Այս տարիքիս մէջ ծխելը ինձ շա՜տ է ազդում, մասնաւորապէս ջղերիս, կրծքիս, ոտքերիս վրայ: Այժմ աւելի հանգիստ եմ: Թէեւ ծխելը դառնութիւններ մոռացնել է տալիս՝ ոյժ է բերում, խթան լինում, բայց յետոյ վնասում է, իմ այս նիհարնալուս գլխաւոր պատճառը ծխելը եղաւ. երանի՜ առաջ դադարեցրած լինէի:

Շա՜տ խիստ ու առատ խուլս *ունեցայ*, այս քանի օրը մի քիչ պաղել եմ. առանց վերարկուի գետափը ման եկայ, երբ Սրապեանի տնից դուրս եկայ ընկնը-ւած, անզգալաբար մրսել եմ: *Յաճախ անկողինն եմ մնում, այս շաբաթ յոյս ունիմ, որ դուրս կը գնամ պտոյտի: Ախորժակս լաւ է: Վաղը Վարդը մեկնում է* քէմփ: *Այնպէս որ՝ իմ մասին հարկ չկայ նեղուիս՝ բնա՛ւ անգամ:* Տաքարախտիս *մասին էլ՝ ամէն զգուշութիւն անում եմ»:*

Յուլիս 26.— «*Ես բաւական լաւ եմ, երբեմն երբեմն պտոյտի եմ դուրս գալիս,* է՛լ այս տեղ չը գաս, *մնա՛ այդտեղ, որ մեր այդ կողմ փոխադրութեան յաջողութեան վրայ անձամբ հսկես: Իմ մասին մի՛ հոգար. նախ քո առողջութիւնդ վերականգնուրիր և երկրորդ՝ տան խնդիրը կարգադրի՛ր»:*

Սոյն մի քանի նամակները երբէք չէին կարող ինձ գուշակել տալ՝ որ ամուսինս լրջօրէն հիւանդ է եղել և անբուժելի ցաւով էլ վարակուած՝ *իր անզգոյշ պաղառութեան և մանաւանդ՝ իր ժամանակին բժիշկին այցելութիւնը արհամարհելուն պատճառաւ — հէնց իր հիւանդանալուն առաջին օրերին, աւելորդ համարած է բժշկի ներկայութիւնը և հակառակած՝ երեխայոց առաջարկին, մինչեւ որ՝ Տիգրանը Հայրիկէն գաղտնի կը բերէ բժիշկը, որ՝* շատ լուրջ կը գտնէ *ամուսնոյս վիճակը և* «բանը բանէն անցնելէ վերջ կանչուած եմ» *կ'ասէ: Այդ ժամանակ էր, որ շտապեցինք, ժամ ա-*

ռաջ կարգադրել մեր փոխադրութեան գործը, որը արդէն բաւական ուշացել էր՝ անտէր մամոնային պատճառաւ։ Եւ վերջապէս, ամուսնէս մի նամակ էլ ստանալէ վերջ, ուր՝ միայն այս անգամ էր յայտնել, թէ ինքը «օրէ օր կը մաշուի ու բան չէր ասած» ինձ, Դանիէլս գնաց և տունը փոխադրեց Նիւ Ծըրզի, Ընկեր Արսէն Տէպաղեանենց տան մօտ, տուն վարձեցի, ինչու որ ամուսինս այդպէս էր ցանկացել։

Ընկեր Արսէնի տանը մէկ-երկու օր եւս հիւրասիրուեցինք, մինչեւ մեր տունը կարգի դրի և ամէնից առաջ արեւոտ ննջարան մը պատրաստեցի ամուսնոյս համար, որի վտիտ կերպարանքը սարսափ ազդեց ինձ և ո՛վ որ տեսաւ, նրան չի ճանաչեց։ ա՛յնքան որ կերպարանափոխ էր եղել խեղճը···։

Եւ իսկապէս, ի՛նչ անձնազոհութիւն, ո՛րպիսի տիպար հայրական, ամուսնական նուիրաբերութիւն, որ՝ իր ա՛յդքան լուրջ և հիւանդագին վիճակը ծածկել ջանացած էր ինձնից, որպէս զի ես՝ անտառը չը թողնեմ ու հեռանամ՝ իմ ապաքինումս կիսատ թողած···։

Երբ ամուսինս ախորժակով կ՚ուտէր իրեն համար պատրաստուած կերակուրներս, սիրտ առայ՝ որ պիտի կարողանամ կազդուրել իրեն, քանի որ թէ՛ տունը փոխուեցաւ, թէ՛ վայրը, ու անպայման օդափոխութիւնը իր վրայ լաւ պիտի ազդէր ու բուժուէր։

Իրաւ էլ, բժշկական հոգատարութիւն, ընտանեկան լուրջ հոգածութիւն և մաքուր օդ ու հանգիստ՝ արեւոտ սենեակի մէջ — բաւական մեծ կազդոյր բերեցին իր նիհարած մարմնոյն և հետզհետէ ի վիճակի եղաւ դուրս ելնել պտոյտի համար, երբեմն օրական երկու անգամ։ Ընկերները, գլխաւորաբար Արսէնն ու Զրվէժը, ամէն օր կը գային իրեն տեսնելու և բարոյապէս

մխիթարելու. իսկ փոքրիկն Վերժին Տէպաղեան՝ «Ընտեր Սապան» ասելով, հետը կը խօսէր, հարց կը տար, ու երբեմն էլ ամուսնոյս ձեռքի համրիչին հետ կը սիրէր խաղալ։ Այսպէս լաւ գնում էինք, մինչեւ որ մի օր, ամուսինս պտոյտից ուշ վերադարձաւ տուն՝ արեւամուտէն վերջ — տեսայ զինքը պարտասած, յոգնած. «այսօր չափազանցութեան տարայ» ասելով՝ ինքն իրեն կը յանդիմանէր, որ շա՛տ էր քայլել, ժամերով, մինչեւ անտառի խորքերը...։ Բայց ի՞նչու այդքան քալել, երբ հարցրի իրեն, «ոտերիս ուժն էի փորձում» պատասխանեց։ Այդ «փորձը» աղիտաբեր եղաւ իրեն. որովհետեւ հետեւեալ օրն իսկ ընկաւ անկողին, թէ՛ հազը սաստկացաւ, թէ՛ ջերմ ունեցաւ, և թէ՛ արեան թքնում սկսաւ, ինչ որ՝ բնաւ տեղի ունեցած չէր մինչ այդ օրը։ Դրանից յետոյ էր՝ որ գիտցուեցաւ թէ շաքարախտը լուրջ բարդութիւն մըն էր բերած, որ դըժուա՜ր թէ բուժուէր՝ մանաւանդ տաք տանը մէջ փակուա՜ծ։ Ուստի, մեր հայ բժիշկ՝ Տօք. Թաքարեանի, Ընկերներ Արսէնի, Զրվէժի և զաւակներիս թափած ջանքերով հազիւ յաջողուեցաւ գտնել մի յայտնի հիւանդանոց, Մօնխս-Թաունի մէջ, բաւական խոշոր վճարումով, որի մասին արդէն Ընկեր Արսէնի գլխաւորութեամբ բիւտջէ կազմուեց Նիւ Եօրքի շրջանի ընկերների միջեւ, և ամուսինս փոխադրուեցաւ Մօնխս-Թաունի հիւանդանոցը։ Մեկնելէ առաջ, մեր տան մէջ, մեր խմբանկարը հանեց Զրվէժը, այդ օրը խեղճ ամուսինս 102 աստիճան ջերմութիւն ունէր։

Մօնխս-Թաունի հիւանդանոցէն — ուր մասնաւոր սենեակ, տէլէֆօն և ամէն յարմարութիւն ունէր՝ շաբաթական մի նամակ կ'ըստանայի իրմէ՝ իմ երեք նամակներիս փոխարէն։ Հիւանդանոցը շա՛տ հեռու վայր մը գտնուելով և գնալ-գալը մեծածախս լինելով, քիչ անգամ կրցան տղաքը և ընկերները իրեն այցելել։

Մօսիս — Թառունի Հիւանդանոցը փոխադրուելէ մի քանի րոպէ առաջ, տանը քաշուած մեր վերջին խմբանկարը

Ահա՛ իր նամակներից մի քանի տողեր՝ յիշատակի համար:

*«... Լաւ եղաւ, որ Կիրակի չեկաք, անպիտան եղանակ էր և բաւականին նեղութիւն պիտի քաշէիք: Երեկոյեան յանկարծ Զրվէժն եկաւ և մի «*Նոր Աշխարհ» *բերեց հետը. բոլորին էլ կարօտը առայ և երկար ժամանակ լեզուիս արմատը բացուեց, թէեւ բժշկի օգնականը դիտողութիւն արաց խնդալով, որ շատ չը խօսիմ:* Վերջապէս մի քանի երջանիկ ժամեր ունեցայ: *Գալիֆօրնիայից եկող մի հիւանդապահուհի գիտնալով իմ Հայ լինելս, ինձ ծաղիկներ էր բերել հիւանդանոցի պարտէզից. այդ ծաղիկները տուեցի* Ընկեր Զրվէժին, *որ ամէն մէկին մի հատ, մի Թերթիկ տայ, որպէս իմ սիրտս...:*

Ախորժակս շատ լաւ է. բազմատեսակ կերակուրներ են տալիս. Insouline*-ի ներարկումը շարունակում են օրական երեք անգամ: Շաբաթը երկու անգամ արիւն են հանում հին բաղադրութիւնը ջնջելու, նորը բերելու համար:*

«... Անցեալ շաբաթ այսօր գրեցի քեզ: Հետեւեալ օրը ստամոքսս անհանգիստ էր. ախորժակս ընկաւ, ընթրիք չը կարողացայ առնել, միայն մի բաժակ կաթ խմեցի և թէյ առայ: Այսպէս մի քանի օր տեւեց: Լրագիր ձեռքս առնել չեմ կարողանում, անմիջապէս ազդւում եմ. նոյն իսկ փոքրիկ մի նամակ գրելը մէկ-երկու ժամ յոգնեցնում է ուղեղս. գրելուց յետոյ պիտի պառկիմ, մի քիչ նիրհեմ, որ անցնի. ամբողջ օր ու գիշեր՝ արթուն մտածի՛ր, պառկի՛ր, — *տանո՛ւմ* եմ, քաշո՛ւմ եմ, տեսնենք ո՛ւր կը հասնի...»:

«... 1927 Նոր Տարի, Սիրելի Բերուզս, քեզ և բոլոր բալաներիս մաղթում եմ երկար և երջանիկ օրեր ու տարիներ:

«Քրիստմըսին ձեր ուղարկած քարտերը շատ ուրախացրին ինձ: Քեզ գրել էի, կարծեմ, թէ երկար ժամանակից ի վեր քննում, խուզարկում էին թէ՝ արդեօք արեանս մէջ շաքար կա՞յ. երկար աշխատանքից յետոյ՝ վերջապէս, պաշտօնապէս, ասացին, որ այո՛, գտան. բայց շատ չէ. և դրա համար էլ սկսեցին insoulineի աստիճանը բարձրացնել. օրը երեք անգամ կը ներարկեն: Անցեալ շաբաթ չորս անգամ արիւն առան, ինչ որ ինձ բաւականին յոգնեցրեց: Ծանրութիւնս 130 է. կարող է պատահիլ իջեցնեն, որ արեանս շաքարը շուտով պարտութեան մատնեն: Հազս շարունակւում է, թէեւ թեթեւցած:

«... Այսօր առաւօտեան այցելութեանը, Տօքթօր Շառփը մի առանձին ուրախութեամբ յայտնեց, որ արիւնս "113" է և "excellent". հիւանդապահուհիներս ասում են, որ արեան մաքրութեան ամենալաւ աստիճանն է: Արդէն ասում են թէ՝ շաքար չկայ այժմ մարմնոյս մէջ: Բժշկապետ՝ Allenից խնդրեցի, որ ինձ թոյլ տայ վար իջնելու և անտառը պտտելու. թոյլ չը տուեց, ասաց՝ որ դեռ մէկ-երկու շաբաթ պիտի սպասել, որ ջերմութեանս աստիճանը միշտ նոյնը լինի:

«Հազս ցերեկները քիչ է, շատանում է այն օրերը, երբ ցրտի կամ քամու պատճառով, սենեակից դուրս չեմ գնում. ընդհակառակը մեծապէս պակասում է այն օրերին, երբ լաւ եղանակ է լինում և կարողանում եմ դուրս գալ, տանիքը պտտելու: Ախորժակս լաւ է, ծանրութիւնս էլ հետզհետէ աւելանում է՝ հակառակ կամքիս:

«Անվերջ բարեւներս Ընկեր Արսէնին և Տիկնոջը, համբոյրներս «Հռետոր» Վերժինին»:

«... Ստամոքսի խանգարման հետ սկսեց սաստիկ հազ, ինչ որ ինձ բաւականին նեղեց թէ՛ ցերեկ և թէ՛

գիշեր. Հայի հետ տաքութիւն եկաւ, որ երեք օր տեւեց. և Շաբաթ օրուանից իջաւ, կորաւ՝ գնաց և կանոնաւոր վիճակի մէջ մտայ: Հազս էլ երէկ մի փոքր մեղմացաւ. յոյս ունիմ որ շուտով, առաջուան վիճակի մէջ կը մտնի: *Բժշկապետը ասաց, որ հազը արդիւնք է* պաղառութեան. *Ինչ և է, այդ օրերը շարունակ, տաք սենեակս մնացի, երբեմն բազկաթոռի վրայ նստած, երբեմն անկողնում: Սոսկալի ցուրտ արաց այս քանի օրը. բայց այսօր շատ լաւ է, թէև արեւ չը կայ և ամէն կողմ ձիւնով և սառոյցով ծածկուած է:* Վերջապէս միօրինակ կեանքս շարունակւում է, ուղտի պոչի պէս ո՛չ երկարում է, ո՛չ էլ կարճանում. *թէև* ուղիղը՝ երբեմն երկարում է, երբեմն՝ կարճանում»:

Ուրիշ առթիւ:

«... Ինձ համար մասնաւոր «սուփ» *են պատրաստում հիմայ. դալէս ի վեր՝ առաջին անգամն է, որ տալիս են: Երէկ երեկոյեան պահուն՝* Ընկեր Արսէնը և Ընկեր Վահան Զուգասզեանը *տելեֆոնով խօսեցին:* Ընկեր Վահանը *ասաց, որ եթէ հոգեկառք գտնի, պիտի գայ քովս. երեւի չը գտաւ. թէև ես էլ ասացի, որ կայարանից մինչեւ հիւանդանոցը ճանապարհները վատ են. ուստի թող նեղութիւն չը քաշի գալու: Ասաց՝ որ* «բոլորս կողքիդ ենք կանգնել. շուտով շրջաբերական կ'ուղարկեմ». *չը գիտեմ ի՛նչ պիտի լինի բովանդակութիւնը, խոստացաւ նամակ գրել:*

«Վարդս, անուշիկ և քաղցրիկ բալաս, հոգիս ցընծաց, երբ նամակդ կարդացի: Այո՛, բալաս, աշխատիր, ուրախ եմ որ յառաջադէմ ես եղել. Ջանա՛ շարունակել: Ուրախ եմ նաեւ, որ Հայերէնդ շարունակում ես մայրիկիդ հետ: Ջութակ սովորելդ շատ օգտակար է, բալաս, ուրախ եմ, անուշիկդ մեռնիմ»:

«... Գլխաւոր բժիշկը ամբողջ մարմինս քննեց,

վտանգաւոր բան չը գտաւ: Շաբաթը երկու անգամ արիւն են հանում. գլխաւոր հիւանդապահուհին ասաց, որ ձեռքէս գայ՝ ամէն օր պիտի արիւն հանեմ, որ ունեցած հին արիւնդ և նրա մէջ եղող բաղադրութիւնները ջնջեմ: Insoulineը դեռ օրը երեք անգամ կանոնաւորապէս շարունակում են. խեղճ աջ թևս ծակոտիկներով ծածկուած է:

«Ախորժակս լաւ է, բազմատեսակ կերակուր են տալիս և բոլորն էլ ուտում եմ: Օրը երկու-երեք անգամ բժշկական այցելութիւն եմ ընդունում: Արմատական բժշկութիւնը շաքարախտի՝ dietով են ուզում բժշկել: Շաբաթը մէկ անգամ բաղնիք կը տան: Գերմանացի մի հաւատարիմ հիւանդապահ ունիմ, որի հետ ֆրանսերէն կը խօսինք, շատ է յարգում ու սիրում ինձ, մանաւանդ այն օրից, երբ իր ազգի պատմութենէն իրեն արեցի, խօսեցի:

«Այս գիշեր բնաւ չը քրտնեցայ: Երբեմն գիշերները չորս անգամ շապիկ կը փոխեմ»:

«... Քո նամակդ չըստացած՝ Դանիէլս էր հեռախօսել Նիւ Եօրքից, պատասխանեցի իրեն: Երէկ գըլխաւոր հիւանդապահուհին բերեց ընդհանուր այն մատեանը, որի մէջ իւրաքանչիւր հիւանդի օրական կեանքի բոլոր երևոյթները արձանագրւում են: Այստեղ տեսայ, որ իմ շաքարախտի դիմաց գրուած է O — այսինքն շաքար բնաւ չը կայ — ինչ ասել կուզի, որ շատ ուրախացայ, այնքան՝ որ քեզ հեռագրով պիտի իմացնէի: Այսպէս, ուրեմն շաքարախտից բուժուած եմ: Դրա հետ միասին, ներարկումները շարունակւում են: Հազիս թափը շատ կոտրուել է — հազի դէմ, օրական, օղիի բաժակի կիսով՝ մի դեղնօրակ խմելիք են տալիս, որ շատ լաւ ազդում է: Սոսկալի կերպով կերցնում են. օրական երեք անգամ, հինգ-եօթը տեսակ կերակուր, սուրճ՝ քրիմով: Պահանջում են լաւ ուտել: Ե-

ըէկ ճաշին կէս հաւ բերեցին. սկսել եմ ջուր խմել։ Տաքութեանս աստիճանը առաւօտեան 37–38 է. կէսօրից յետոյ՝ 39 (ֆրանսական աստիճանով)։ Բազկերակըս հիմայ աւելի արագ է զարկում. Կշիռքս մէկ կը ցածացնեն, մէկ՝ կը բարձրացնեն, ուտել տալով կամ չը կերցնելով։

«Սրտագին համբոյրներս՝ իմ աննման՝ Ընկեր Արսէնին։ Անմոռաց բարեւներս Տիկին Եօժէնին։ Անվերջ պաչիկներս Վերժինին։ Բոլոր հարցնողաց տո՛ւր բարեւներս. մանաւանդ ազնիւ բժիշկին»։

Երբ որ եկաւ գարունը, ամուսինս շատ լաւ կազդուրուել էր. բժիշկը հրաման տուել էր հիւանդանոցից դուրս գալու, պայմանաւ որ՝ կերակուրների չափն ու սիստեմը նոյնութեամբ պիտի շարունակուէր, insouline ներարկումը նոյնպէս պիտի գործադրուէր, և որ գըլխաւորն է՝ լեռնային, մաքուր օդով տեղ մը պէտք էր երթար՝ քաղաքի տաքէն ու փոշիէն հեռու։

Ամուսինս, թէեւ ա՛յդքան հանգիստ հիւանդանոցի մէջ, մասնաւոր սենեակով և հոգատար ձեռքերի մէջ էր, սակայն՝ վրայէ վրայ սկսեց իր ձանձրոյթը, բողոքը զգացնել ինձ և հինգ ու կէս ամիս այդտեղ կազդուրուելէ վերջ՝ Արսէնն ու Ջրվէժը գնացին տուն բերեցին իրեն — ուրախութիւնը անսահման էր՝ երբ տուն եկաւ. սակայն նշմարեցի, որ շնչառութիւնը արագ էր և հազը չէր անցած։ Երբ մի քիչ նստելէ վերջ՝ ընկերները մեկնելու եղան, ամուսինս անհուն գորովանքով ձեռքը անոնց մեկնեց և ասաց. «Է՜հ, ի՞նչ անեմ, ընկերնե՛ր, շա՜տ ապրիք, բոլոր ընկերներին բարեւ. դուք որ չը լինէիք, ես կը մեռնէի, կեանքս ձեզ կը պարտիմ...»։

Ու կրկին, մեր տունը լցուեց ուրախութեամբ, հրճուանքով. երջանիկ էր ամուսինս էլ, երբ զաւակ-

ների, ընտանիքի մօտ այրել սկսեց նորից։ Խնամքը, հիւանդանոցի սխտէմը նոյնութեամբ, ես շարունակեցի. օրական երկու-երեք անգամ insoulineի ներարկում կ՚ընէի և զանազան բանջարեղէններից և պտուղներից՝ որոշեալ չափով և քանակութեամբ սնունդ՝ օրական կը պատրաստէի. մի փոքր սրուակ cream (սեր) անհրաժեշտ էր իր սուրճի կամ թէյի հետ։ Վերջապէս, ցերեկները կ՚երթար, ման կը գար մօտիկ փարքում, երբեմն ես էլ կ՚ընկերանայի իրեն, կամ՝ յետոյ կը գնայի մօտը և ժամանակին տուն կը վերադառնայինք։ Այսպէս մի Կիրակի օր, Ընկերներ Արսէնի ու Զրվէժի հետ փարքէն դէպի մեր տունը վերադարձին, ամուսինս ցոյց տուեց մեր տան մօտ օֆիս ունեցող մի մեռելաբարձի, որը՝ մի օր՝ ամուսնոյս հետ խօսքի էր բռնըւել մեր փողոցը։ Մարդը ամուսնոյս հարցրել է՝ թէ «այս տաք օրերին ի՞նչու ես վերարկու հագնում»․ ամուսինս էլ պատասխանել է՝ որ «չի մրսելու համար, որովհետեւ հիւանդութիւնից նոր եմ ապաքինել»․ մարդը խնդացել է, ու կրկին իր գիտողութիւնը շարունակելով՝ «այն ատեն, ձմե՞ռը ի՞նչ պիտի անես» հարցրել է, «է՛հ, այն ժամանակ էլ կը տանես կը թաղես ինձ» պատասխանել է ամուսինս բոլորովին անտարբեր։ «Ա՛խր ի՞նչ անեմ, մարդը խօսք չէր հասկանում»․ ասաց խնդալով։ Բայց Արսէնն ու Զրվէժը այնչափ կը ծիծաղէին՝ մարելու աստիճան, որը մինչեւ մեր տունը շարունակուեց... երկա՛ր ատեն։

Երեկոյները, յաճախ, բարեկամ-բարեկամուհիներ, մի, երկու ընկերներ իրենց ընտանիքներով կ՚այցելէին մեզ և «աչքալուսանք» կը մաղթէին։ Սապահը նուագը կը պաշտէր, մանաւանդ ջութակը․ երբեմն Սապահգիւլս կը նուագէր, հօրը խնդրանօք, սիրած երգերէն՝ «Հեռաւոր երկիր», «Մայր Արաքսի» և «Անտունին»․ զուարճալի խօսակցութիւններով մթնոլորտը զուարթ

կը պահուէր. ինքն ալ շատ կը սիրէր պատմել, ուսուցանել, հետաքրքիր խրատութիւններ ու անցքեր վերյիշել, հոգը չէր թէ կրնար յոգնիլ, շունչը սպառել...:

Մի օր, երբ ամուսինս պառկած իր անկողնին վրայ կը հանգստանար, ճաշէն վերջ, Արսէնի աղջիկը՝ Վերժին Տէպաղեանը մօտը կ'երթայ և կ'ըսկսի իր սովորական հարցուփորձերը, որոնց մէջ սիրով պատասխանած է ինքը. բայց, երբ Վերժինը իրեն կը հարցնէ, թէ «Ընկեր Սապահ, քու ակռաներդ ո՞ւր են», ամուսինս ալ պատասխանել է՝ «բալա՛ս, ընկե՛լ են, ընկե՛լ». Վերժինը կարծելով թէ գետին են ընկած այդ ատամները, կ'ըսկսի անկողնի տակն ու վրան փնտռել, ու յուսահատ «չի կա՛յ Ընկեր Սապահ» կ'ըսէ, ու խեղճ ամուսինս խնդալէն կը մարի. Վերժինը ա՛յնքան բարի էր սրտով, որ փափաք էր յայտնել իր ատամները փոքրիկ մատներովը քաշել ու Ընկեր Սապահին շնորհել, որ անատամ չի մնայ Ընկեր Սապահը...:

Այսպէս, ամիսները անցնում էին քիչ ու շատ ուրախ, հանգիստ, բայց իր հազն ու շնչի արգելութիւնը կը շարունակուէր. շատ փորձեցինք գինքը համոզել, որ՝ այդ տաք ամռանը տանը չի մնայ, այլ՝ ինչպէս Մօռիս-Թաունի բժիշկն էր թելադրած, օդասուն ամառային վայր մը երթալ. բայց նա մնաց անյողդողդ, թերեւս ստիպէինք գինքը, եթէ նիւթական ապահովութիւն լինէր...:

Մի քանի անգամ իրմէն խնդրեցի, որ օրական մի քառորդ ժամ — այդ չափ ժամանակուան միայն հրաման ունէր — գէթ, ինձ թելադրէր իր կենսագրականը և ես գրէի, բայց նա մերժեց, չուզեց՝ առարկելով որ մի քառորդ ժամը ի՞նչ կը բաւէր իրեն՝ վերյիշումներ ընելու, խորհելու, ջանքեր ի գործ դնելու, երբ այդ բոլորը գինքը պիտի յոգնէին և «դեռ թող մնայ, Բերուզ, մի քիչ էլ կազդուրուեմ, յետո՛յ» ասաց:

Անշուշտ չէի կարող կրկին տեսնել իրեն...։

Մօխս-Թ'աունի *հիւանդանոցի անց ու դարձերէն ինձ պատմեց՝ թէ ի՛նչպէս մի անգամ շատ ծանր հիւանդացել է, ձայնը քաշուել և արիւն թքել. սակայն, անմիջապէս բժիշկը սառոյցի պարկով առաջքն առած է.* «այդ մի քանի օրերը — *կը պատմէր* — հիւանդապահուհիները դուռս բաց էին թողած, ու միշտ գաղտագողի կը գային, ինձ մտիկ կը տային, Տէ՛ր Աստուած, լսորհեցի, արդեօք պիտի մեռնի՞մ, ի՞նչ է — բայց Գերմանացի հիւանդապահս օրհնե՛ալ մարդ էր ու ինձ շա՛տ լաւ հոգ կը տանէր ու սիրտ կը տար։ Եւ լաւացա՛յ... ու փորձեցի մի օր երգել, ձայնս դըժբախտաբար չէր հասնում և մաքուր դուրս չէր գալիս։ Այժմ փորձե՞մ, տեսնե՛մ»․ *ու սկսաւ, մեծ ոգեւորութեամբ, ձեռքով չափ էլ տալով՝ երգել.* «Փախէ՛ք Ամպեր Շաւարշանէն...»․ *ու ինքը իր երգին ու ձայնին հաւանելով՝* «սքանչելի՛ է» *աղաղակեց մանկական ուրախութեամբ, համեմատելով անշուշտ հիւանդանոցի մէջ երգելու փորձին։*

Նունիրըն Սիթիի *Սօց․ Դէմ․ Հնչակեան Մասնաճիւղը, իր ապաքինման առթիւ, իրեն ի պատիւ խնջոյք սարքեց. եղան ջութակ, երգ, արտասանութիւն և կեր ու խում. անշուշտ ինքը ոչինչ չը կերաւ, սակայն իր վրայ շատ լաւ տպաւորութիւն թողեցին ընկերների տեսութիւնը, զուարթ մթնոլորտը ևն․, որոնց կարօտը կը քաշէր երկա՛ր ատենէ ի վեր։*

Ամառը խիստ տաք եղաւ. ամուսինս սկսաւ աւելի շատ տանը մնալ, քան թէ դուրսը՝ տաքերին ենթարկուիլ, որը սաստիկ նեղել սկսաւ իրեն. երբեմն բալկօնը, *հանգիստ աթոռի վրայ կը նստէր, երբեմն անկողնին վրայ կ'երկարէր, սակայն առողջութիւնը ըսկըսաւ յետ յետ երթալ, հազը աւելի սկսեց իրեն նեղել և թուլացնել մարմինը։*

Այդ օրերին էր, երբ Նիւ Եօրքի Հնչակեան Մասնաճիւղն էլ նրա ապաքինման առթիւ, խնջոյք մը սարքեց իր ակումբի մէջ. շատ մեծ հոգատարութեամբ ընկեր Արսէնը ինքնաշարժով փոխադրեց մեզ Նիւ Եօրքի Հնչակեան ակումբը, ուր տարիներէ ի վեր ամուսինս ոտք չէր կոխած...: Այդ օրուան, այդ ժամին կ'ըսպասէր խեղճը, որ կրկին բախտ ունենար վերատեսնելու իր սիրելի ակումբն ու սիրելի ընկերների տեսութիւնը վայելել — հոն գտնուեցան ընկեր կոչուածներ էլ, որ իր մօտն իսկ չեկան... — վայր մը՝ ուր տարիներ շարունակ սիրտ, լեզու, միտք էր մաշած Սոց. Դէմ. Հնչակեան Կուսակցութեան գաղափարաբանութիւնը ուսուցանելու և պարզաբանելու իր ջանքերին մէջ: Այդ օրերին, մեր տան մէջ երբ իր փոքր Թոյլ վիճակը տեսայ, իրեն խնդրեցի, որ չ'երթանք մինչեւ Նիւ Եօրք, սակայն չի համաձայնեց. «լա՛ւ եմ, կ'երթա՛նք». պատասխանեց. երկար մնաս, պիտի յոգնիս, ասացի: «Շա՛տ լաւ, ասաց. երկար չենք մնար»: Բայց հոն որ գնացինք, ընկերները և համակիրները, խուռն բազմութեամբ սկսան «հուրէ՛»ները, ծափահարութիւնները, որոնք կարծես իրեն նոր կեանք և նոր ոյժ տուեցին. այն գիշերուայ տաքուկ մթնոլորտը, երգերը, ջութակ և զանազան խաղեր՝ զինքը հոն գամեցին: Պատուելի Բարունակ Իսկէնտէրեանը, որ հին ծանօթ մ'էր իրեն, խօսեց ակումբի ժողովրդին՝ փառաբանելով Հնչակեան Կուսակցութիւնը և իր Լիտըրը՝ Սապահը՝ որ Պոլսոյ շրջակայ վայրերի մէջ ի՛նչպիսի «ովսաննա»ներով էր ընդունուել ու պատուըւել, և Թուրքերին խօսած նրա ճառերին Թրքերէնի Թարգմանող ու բացատրող անձը՝ ինքը, Պատուելին էր եղած Թրքական Սահմանադրութենէն վերջ: Պատուելին՝ որ ամուսնոյս յաղթանդամ ու առողջ ժամանակն էր, որ ճանչցած էր, այդ երեկոյին անճանաչելի կը գտնէր երբեմնի այդ խոշոր մարդուն:

Ընկեր Մանուէլեանը բաւական խնդացրեց մեզ՝ երբ իր սովորութեան համեմատ, ելաւ և Հնչակեան կամ այլ գործիչ-հրապարակախօսների ձայնը ու ձեւերը կապկեց և, մինչեւ իսկ չի քաշուեցաւ ամուսնոյս էլ ձեւերը կատարել ու զուարթ մթնոլորտ ստեղծել։ Երեք-չորս ժամ հոն մնալէ վերջ, տուն կը վերադառնայինք, թեւը մտնելով քանի մը քայլ առնելէ վերջ՝ տեսայ որ յանկարծ թուլացաւ և անկարող զգաց քալելու, այնպէս որ, դժուարաւ զինքը քաշքշելով հասանք նաւը։ Տուն որ հասանք, անխօս, լուռ և տխուր մնաց երկար ատեն...։

Արդեօք ի՞նչ մտածումների և հոգեկան յոյզերի մէջ էր ընկած...։

Ինչ և է, օգնեցի իրեն՝ հանուեցնելով և դժուարաւ անկողինը դնելով։ Հետեւեալ օրը, նոյնպէս, մի քիչ թոյլ կ'զգար և, կարծես, խոկմունքի մէջ էր, երբ Տիկին Ա. Տէպաղեանն ու վերժինը եկան մեզի. ամուսինս բազկաթոռի վրայ նստած էր, ուրախացաւ երեխային տեսնելով և իր համբոյրը նրա ձեռքը տուեց. ես և տիկինը խոհանոցում զբաղուած էինք, վերժինը վազեց մօտս «մեծ Մամա՛, Ընկեր Սապահը քեզ կ'ուզէ». վազեցի, տեսայ որ՝ հազի նոպա մը սկսած՝ արիւն է հոսում քթիցը, բերնիցը։ Զը գիտէի, ի՞նչ անէի, շըւարեցի, ոտս ձեռս դող ընկաւ. շուտով անկողին դրեցի ու մէջքի վրայ պառկեցրած՝ սառոյցով լի տոպրակը դրեցի կրծքին, որ ուժգին կը հեւար և ինքն էլ վախեցած կերեւար — բան չկա՛յ, հիմայ բժշկին լուր կը տամ, ասացի, ու մի կերպ լուր ուղարկեցինք Տօքթօր Թաքարեանին, որի մինչեւ գալ-հասնիլը բաւական հանդարտել էր ամուսինս թէեւ, սակայն արեան թքնումը կը շարունակուէր. բժիշկը անմիջապէս ներարկում արաւ՝ յետոյ օր ընդ մէջ, շարունակեց ներարկումը մինչեւ որ դադարեց ամէն ինչ և հանդստա-

ցաւ մի առ ժամանակ. սակայն, այդ դէպքից յետոյ՝ նա դարձաւ մի կատարեալ հիւանդ, երբեմն ոտի վրայ, տան մէջ, և յաճախ՝ պառկած. խնամքը կը շարունակուէր — դեղ, ներարկում, կանոնաւոր սնունդ՝ կը մատակարարուէր շարունակաբար — բայց ապաքինումը չէր գար, ընդհակառակը ե՛ւս աւելի անկողնին կը գամուէր...։

Իրեն ուրախ պահելու համար՝ այցելութիւններ, երգ, նուագ երբեմն կը շարունակուէին. երբ Օր. Լուիզ Գասպարեանը կը գար, երգել կը տայինք իրեն ամուսնոյս սիրած երգերը, որ շատ լաւ կ'աղէին և հոգեկան սփոփանք կը պարգևէին իրեն. մի անգամ, երբ իր անկողնին մօտն էի կանգնած, Լուիզը «Սիրուհիս»ը երգում էր հիւրանոցում, «Արմենակը — Տահմուրատեան — կ'երգէ այդ երգը» ասելով՝ յուզուեց...։ Ազատ բոպէներին՝ մօտը կը գնայի, կը խօսէինք, ձեռքերը, ոտերը մաժել — շփել — կը տար, ոտերի այրուածք զգալուն՝ ջրախառն քացախով օծել կը սիրէր։ Ախորժակը վատ չէր, սակայն, հէնց որ կը նստէր ուտելու, կ'ըսկսէր հազը, որ շատ կ'անհանգստացնէր իրեն ու անապարանօք ուտելով՝ ձախ կողմին կ'ընկնէր բարձերի վրայ ու կը հանգստանէր։

Առանց քնաբեր դեղի, գիշերները չէր կարող քնել։ առանց դեղի աղիքները չէին գործեր. առանց insoulineի ներարկման՝ մարմինը կ'ուռէր։ Սոսկալի կեանք մըն էր տարածը. և սակայն, մի՛շտ լաւատես, մի՛շտ յուսալից էր. իր մէն մի ըմպած, կուլ տուած դեղերից կեանք կ'ըսպասէր և ամենայն համբերութեամբ, անտրտունջ կը տանէր իր այդ տանջանքները, ինհարկէ, անուշ խօսքեր էլ, քաջալերական ու գուրգուրոտ բաներ էլ նուիրելով ինձ և երբեմն էլ՝ երեխայոց։ Յաճախ ձեռքերս կը համբուրէր՝ փոխան շնորհակալութեան...։

Այդ օրերին Արսէնը իրեն մի մեծ հոգեկան հըրճուանք շնորհեց, «Բառեր ու Եզրեր» գրքին հրատարակութեան յանձնելու աւետիսը տալով իրեն։ Ամուսինս շատ ոգեւորուած՝ խոստացաւ մի յառաջաբան պատրաստել. և մի օր, 102 աստիճան ջերմութիւնը իր վրայ՝ փափաքեցաւ թուղթ ու մատիտ առնեմ ու մօտը նստիմ. և թելադրեց ինձ այդ գրքի յառաջաբանը, որը տպուեցաւ գրքին մէջ. «թէեւ կ'ուզէի մի փոքըր էլ երկարել, բայց չը պիտի կարողանամ» ասաց դառնութեամբ։

Նիւ Եօրք գումարուելիք Պատգամաւորական Ժողովի մը առթիւ՝ իրեն այցելութեան եկան Ընկերներ Վ. Զուգասզեան և Ա. Ամիրխանեան. և հարցեր տալով ամուսնոյս, այդ վիճակին մէջ իսկ, գոհացուցիչ լուսաբանութիւններ ստացան...։ Նրանք շատ ցաւեցան իր վիճակին ի տես. և լաւագոյն վիճակի մը հասցնելու, հիւանդանոց փոխադրելու անհրաժեշտութիւնը ինձ զգացրին։ Ես էլ, տեսնելով հետզհետէ իր վիճակի դէպի լաւը չի դառնալը, ես էլ համամիտ էի այդ գաղափարին, մանաւանդ երբ՝ ընկերների և այլոց կատարած պրպտումներէն կ'երեւէր, որ մասնաւոր խընամքներով աւելի օգտակար պիտի լինէր հիւանդանոցը. մանաւանդ եղել են դէպքեր, որ անմիջապէս կասեցուցած են հիւանդութեան յառաջխաղացքը, եղել են, մինչեւ իսկ հրաշագործ միջոցներ։

Ուստի, այդ ուղղութեամբ շատ աշխատուեցաւ, սակայն ամիսներ տեւեց, մինչեւ որ մեր բժիշկը յաջողեցաւ սանիթարիումը ընդունիլ տալ։ Եւ որովհետեւ ազատ անկողին չը կար հոն, մէկ ամսի չափ փոխադրուեցաւ Եունիըն Սիթիի — Հըտսըն Քաունթիի — հիւանդանոցը, ուր եղան վիրաբուժական փորձեր՝ իր թիկունքին վրայ, Ք. ճառագայթներ առնուեցան, բայց ինձմէ գաղտնի մնացին հետեւանքները այդ բոլորին։

Սակայն յոյսս մեծ էր, որովհետեւ բարելաւում մը նշմարեցի իր վրայ: Տեղը մօտ լինելով՝ ամէնքս էլ, ամէն օր, այցելութեան կը գնայինք իր մօտ, ինչ որ մեծ սփոփանք մըն էր իրեն համար։ Այնպէս որ, խեղճ ամուսինս գրեթէ ակամայ փոխադրուեցաւ միւս սանիթարիումը, որ բաւական հեռու կը գտնուէր մեզմէ:

Ես համոզուած էի, որ եթէ մի քիչ աւելի շուտ կարելի լինէր հիւանդանոցի փոխադրութիւնը, նա կը լաւանար, թէեւ հիւանդանոց փոխադրուելու միտքը ո՛չ միայն ամուսնոյս, այլ և մեզ և ուրիշների վրայ էլ ծանր կը ճնշէր…:

Սանիթարիումը երկու օր միայն որոշած էր այցելութեան։ Զրվէժը Զորեքշաբթի օրերը կ'այցելէր, մենք էլ՝ Կիրակիները։

Սոյն հիւանդանոցի մէջ աւելի լաւ օրեր ունեցաւ ամուսինս. որովհետեւ հիւանդապահուհիները փորձել էին իրեն մաքուր օդի, արեւի ենթարկել. սակայն, շատ թոյլ լինելով՝ չէր կարողացել առանց օգնութեան քայլ անել. ինչ որ շատ վատ էր ազդել իրեն:

Բժիշկները, հիւանդապահուհիները յանձնարարուած էին իրեն լաւ հոգ տանիլ, բացատրելով հիւանդի ինքնութիւնը, մեծ ակնածութիւն ու յարգանք կը վայելէր ամուսինս:

Մեծ յոյս ունէի, որ ձմեռն անցնելէ վերջ՝ նա պիտի բուժուէր…: Մանաւանդ, երբ լուր եկաւ, որ բժիշկները յայտնել էին թէ շաքարախտը բոլորովին անհետացած էր, արմատախիլ էր եղած. մնում էր հազը, որը կարելի էր խնամել, քանի որ՝ դարմանումի դեղերը և սնունդը չէր խաչաձեւուեր շաքարախտի ներկայութենէն, որովհետեւ շաքարախտի դարմանումը բոլորովին խոտոր կը համեմատէր հազի դարմանման:

Զատկին, 1928, Վարդիս հետ գնացի մօտը. Վարդիս ներս չընդունեցին, միայն ես մնացի մօտը: Բաւական հարցեր տուեց — Հայաստանի, ընկերների, երեխայոց, բարեկամների ևն. ևն. մասին — որոնց գոհացուցիչ պատասխանները ստանալով՝ ուրախացաւ: Օրերը տաքանալ սկսելուն՝ իրեն քաջալերեցի և մեծ յոյսեր տուեցի լաւ օրերի հեռանկարով...:

Հրաժեշտ առած միջոցիս, սկսաւ օրհնութիւններ տալ ինձ... «Աստուած արեւշատութի՛ւն պարգեւէ քեզ, բալա՛ս և կարողութիւն տայ. երթա՛ս բարեւ և բարեւի՛ր բոլորին» մրմնջաց:

Անցաւ մի քանի օր: «Երիտասարդ Հայաստան»ը բացառիկ թիւ մը պիտի հրատարակէր. Զրվէժը իր այցելութեան օրը ամուսնէս խոստում է ստացել, որ ինքը մի բան պիտի թելադրէր «բացառիկ»ի համար. «թող Բերուզն էլ գայ հետդ» ասած էր իրեն: Ու այդ օրը միասին գնացինք, թուղթ ու մատիտ առած:

Մօտեցանք անկողնին, որ քնած էր բերանաբաց. չուզեցի զարթեցնել. մի կողմ քաշուեցի ու սպասեցի, որ ինքնաբերաբար արթննար. սակայն, այդ րոպէին, մի հիւանդապահուհի, առանց իմ հաւանութեան, ձայն տուեց իրեն. խեղճ ամուսինս մէկ աչքը բաց, միւսը փակ, ձեռքով արաւ, որ նստեմ մօտը: Ըստ սովորականին՝ իր կերածին, խմածին, առողջութեան մասին հարցեր տուեցի. սրտնեղութեամբ պատասխանեց թէ «բան չեմ կերել». ի՞նչու, հարցրի, զարմանքով. «ա՛խր թթւում է» ասաց. «առաւօտեան օթմիլ կերայ, շատ քաղցր էր, չը մարսեցի՛» գանգատուեց: Եւ իրօք, մեր գնացած րոպէից սկսած՝ յայտնի էր թէ անմարսողութիւն ունէր, անհանգիստ էր ստամոքսը:

Նորից սկսաւ իր սովորական հարցերը տալ. «Հայաստանից ի՞նչ լուր, այսինչը նամակ գրե՞լ է, այն-

ինչը յետ գնացե՞լ է, երեխաները ի՞նչպէս են, Արսէնը
ո՞ւր է, որ երկար ատենէ ի վեր չի երեւացել» են.։
Բոլոր հարցերին պատասխանելէ վերջ՝ յիշեցրի իրեն
ի՛նչ բանի համար գալերնիս. և տեսնեմ, ասացի, ի՞նչ
նոր-նոր բաներ պիտի թելադրես, որ գրեմ։ «Նոր բան
չը կայ, ասաց, մեր Լոնտոն գտնուած ժամանակի հըր-
դեհը պիտի թելադրեմ. ուրիշ ոչինչ»: Օ՛, ասացի, եթէ
այդ է, ես գիտեմ, ասա՛, թելադրի՛ր այնպիսի մի բան,
որը ինձ անծանօթ է, ասացի։ Բայց ինքը սրտնեղ կեր-
պով «դրա ժամանակը չէ՛, պէտք չէ՛» ասաց ու դըժ-
գոհ կերպով մը, Զրվէժին թելադրեց Լոնտոնի հրդե-
հը, որը, արդէն աշխատութեանս սկիզբները գրել եմ,
նոյնութեամբ։

Ինձ հարցրեց միայն թէ՝ «մի՞տդ է Peckham Ryeը
ի՞նչպէս կը գրուի, դու աւելացրո՛ւ, ասաց, ինչ որ
հարկաւոր է»: Լաւ, ասացի ու վերջացաւ։

Այդ օրը նշմարեցի, որ մէկ աչքը միշտ փակ կը
մնար. ու ինքն էլ քնելու տրամադիր էր. հարցրի ի-
րեն, թէ ա՞չքը կը ցաւէր, քո՞ւնը կը գա՞ր — ո՛չ, պա-
տասխանեց։

Մեր վերադարձի ժամանակը հասած էր: Իրեն
հարցրի թէ՝ ո՛և է բանի պէտք ունի՞ — ո՛չ, ըսաւ.
«Կիրակի օրը Դանիէլի հետ երկու թաշկինակ և ածիլ-
ուելու դրամ ուղարկիր» ըսաւ. և երբ ես անմիջապէս
դրամը ուզեցի տալ, ըսաւ որ «պէտքը չէ՛, դեռ ու-
նիմ մինչեւ Կիրակիի համար» և չառաւ։

Մենք մեր հրաժեշտն առանք. ու իր վերջին բառն
եղաւ, "good by" կուտ պա՛յ... որ մինչեւ այժմս էլ
կարծես կ'արձագանգէ ականջիս մէջ...։

Ինչքան որ այդ օրը ամուսինս առանձին, ծանր
վիճակ մը չէր ներկայացներ մեր այդ օրուայ ընթաց-
քին, սակայն սիրտս չա՛տ տրորուեց. յուսահատուր,

ընկճուած Թողեցի իրեն ու եկայ տուն...........
Ապրիլ 25ին էր։

Դա վերջինն էր եղած։

Ապրիլ 28ին, Շաբաթ կէսօրին, պաշտօնական հագուստով մէկը բերաւ ամուսնոյս մահագոյժը, որ բոլորովին անսպասելի և անհաւատալի թուաց ինձ...։

Ինչպէս երևի, ո՛չ ինքն էր զգացած, ո՛չ ալ հիւանդապահուհիներն գուշակած, որ իր վերջին օրերն էին. որովհետեւ, մենք բարկացած՝ բացատրութիւն էինք պահանջած հիւանդանոցէն, որ ի՞նչու մեզի չէին իմաց տուած իր վերջին րոպէները — պատասխանել էին թէ՝ իրենց համար ալ անակընկալ մահ մըն էր, *քանի որ Շաբաթ առաւօտն իսկ, հիւանդապահուհիի օգնութեամբ նախաճաշած ալ էր ամուսինս։*

Ու, այսպէս փոխադարձաբար, զրկուած մնացինք իր վերջին ցանկութիւններէն կամ թելադրանքներէն, որոնք գուցէ մի նորութիւն պարունակէին...։

Եւ, 1928, Ապրիլ 28ը եղաւ մեր սուգի օրը...։

Սոց. Դեմ. Հնչակեան Կուսակցութեան Նիւ Եորքի Ակումբին մէջ, 1928, Մայիս 6ին

Յուղարկաւորութեան թափօրը կանգ կ՚առնէ 30րդ. եկեղեցւոյ առջեւ

ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

●

Սոյն կենսագրականով կուտանք կարգ մը անձնական տպաւորութիւններ և մէջբերումներ՝ Ստեփան Սապահ-Գիւլեանի մահուան ձգած ճնշիչ տպաւորութեան առթիւ՝ բոլոր այն թերթերէն, որոնք մեր ձեռքը հասած են. ուր՝ ընթերցողը պիտի կրնայ անգամ մը եւս տեսնել ողբացեալը իր հարազատութեան մէջ:

Պիտի խնդրենք ներողութիւն նաեւ մեր շատ մը ընկերներէն, բարեկամներէն, Հնչակեան Մասնաճիւղերէն ու այն կազմակերպութիւններէն, որոնք մամուլով, նամակով ու հեռագրով իրենց խոր վշտակցութիւնը բերին, և որոնց սփոփարար արժէքը մեծագինս գնահատելով հանդերձ, կը ցաւինք որ կենսագրականի նիւթական արգելքներէ յառաջացած նեղ սահմաններուն հետեւանքով, հատիկ հատիկ թուելու հնարաւորութիւն չունեցանք:

ՀԵՌԱԳԻՐ

ԲՈԼՈՐ ՀՆՉԱԿԵԱՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ

●

Գրչի Տիտան Ս. Սապահ–Գիւլեանը Անմահացաւ

Սոց. Դեմ. Հնչ. Կուսակցութեան

Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ԱՌՋԵՒ

●

«Հանճարները չեն մեռնիր»

Ընկեր Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ մեռա՜ծ...

Գաղափարի Տիտանը այլեւս չկայ...։

Հայ Ժողովուրդը՝ ընդհանրապէս, Հայ Աշխատաւորութիւնն ու Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը՝ մասնաւորապէս, ահաւոր կորուստի մը առջեւ կը գտնուին այսօր։

Հայ ազգային ու քաղաքական դժնդակ կեանքի հորիզոնէն ասուպի մը նման կ'անյայտանայ մեծ միտք մը, հազուագիւտ հանճար մը, բեղուն գրիչ մը և հասարակական ու կուսակցական անձնուէր գործիչ մը և բացառիկ հեղինակութիւն մը։

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնն ու «Երիտասարդ Հայաստան»ի Խմբագրութիւնը՝ խոր վիշտով համակուած, այսօր դառնօրէն կ'ողբան իրենց վեթերան Ընկերոջ և հիմնադիր-խմբագրապետին ողբատխուր մահն ու անդարմանելի կորուստը։

Աւելի քան յիսուն տարիներու բեղմնաւոր կեանքի մը թելը խզուած է...։ ԱՅԼԵՒՍ ՉԿԱՅ ԸՆԿԵՐ Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ. մահուան անգութ գերանդին հընձեց անոր ալ կեանքը՝ յանձնելով զայն պատմութեան ու թողլով միայն յիշատակ մը՝ ապագայ սերունդներու համար։

Ընկեր Ս. Սապահ-Գիւլեան իր մահով՝ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ է հասած. չէ՞ որ հանճարները ու տաղանդները չեն մեռնիր, և յաւիտենականութիւնն են իրենց ծնունդ և սնունդ տուող համայնքին, միջավայրին ու մարդկութեան, և որով նա չի պատկանիր միայն Սոց.

Դէմ. Հնչակեան Կուսակցութեան, այլ նաեւ ամբողջ Հայ ժողովուրդին, որուն ծոցէն ծնաւ, որուն արդար դատին լուծման, և անկորնչելի՝ բայց գլացուած իրաւանց վերստացման համար երկա՛ր տարիներ իր կեանքի գնով իսկ, գրեց, խօսեցաւ և պայքարեցաւ:

Ընկեր Ս. Սապահ-Գիւլեան մեծ էր մտքով, ինչու որ՝ առողջ դատողութեամբ նա կրցաւ Հայ Ազատագրութեան ուղիղ ճանապարհը տեսնել, առաջնորդուիլ գաղափարական վեհ խոհականներով, մարմին տալ անոնց, և անոնցմով ներշնչուած՝ առաջնորդել ժողովրդական մասսան:

Ընկեր Ս. Սապահ-Գիւլեան անդարձ բաժնուած է մեզմէ. իր անկենդան դիակը հիւր է մեզի քանի մը օր եւս, և որ հողին պիտի յանձնենք յառաջիկայ Կիրակի — Մայիս 6ին:

Մենք կը հաւատանք թէ՝ մեզ հետ նաեւ գաղութահայ ժողովուրդը՝ արժանաւոր թաղումով մը, պիտի փութայ իր վերջին յարգանքի բաժինը բերելու այս ՄԵԾ ՄԱՐԴՈՒՆ՝ ազգային ու կուսակցական գործիչին, յաւէտ անմոռանալի և անմահ Ընկեր Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ:

ՅԱՐԳԱ՛ՆՔ ԻՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ:

Սգակիր՝
ԽՄԲ. «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»ի

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄՈԶՈՒՄ

Ընկեր Սապահ-Գիւլեան ո՛չ միայն Հնչակեան Կուսակցութեան՝ այլ և բովանդակ Հայ իրականութեան մէջ՝ դեռ երկա՛ր տարիներ պիտի մնայ եզակի, անգե-

բազանցելի դէմք մը՝ որպէս խոր ընկերաբան, տնտեսագէտ, որպէս հռետոր, որպէս ուժեղ հրապարակագիր, և, մանաւանդ, մտքի պայծառատեսութեամբ օժտուած անձնաւորութիւն մը:

Ինչ որ գրած է տասնեակ տարիներ առաջ, օրինակ, Կապիտալիստական պետութեանց հոգեբանութեան, Սոցիալիզմի տիրապետութեան, Իթթիհատի անկման, Ազգերու Լիկայի, Հայաստանի ապագայի, նոյն իսկ Երրորդ Միջազգայինի որոշումներու մասին, այսօր տառացիօրէն իրականութիւն են։ Ա՛յնքան թարմ և այժմէական են քաղաքական դէմքերու և դէպքերու շուրջ Մարքսիստական ուղղութեամբ ըրած, կատարած վերլուծումները, որ կարծէք այսօր գրուած ըլլան...։

ՍԻՐՎԱՐԴ

ԱՆՎԵՐԱՊԱՀՕՐԷՆ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԵՆՔ

Մեր անցեալ կեանքի քաղաքական ու հասարակական գործունէութեան բազմերանգ պատմութիւնը ուղիղ և հարազատ պահելու համար — որուն պէտքը պիտի ունենայ ապագայ Հայ Պատմագիրը — կ'ուզենք այս տեղ անվերապահօրէն արձանագրել այն փաստը, թէ Կովկասի ոչ-ռուսագէտ Հայ երիտասարդութիւնը Սոցիալիստականօրէն դաստիարակելու դժուարին աշխատանքի մեծագոյն մասը կատարուած է Ս. Սապահ-Գիւլեանի խմբագրած «Հնչակ»ով։ Հանգուցեալ Սապահ-Գիւլեանը մեծ մարդ մըն էր և մեր ապագայ պատմութեան մէջ՝ այդ անունով յիշուելու արժանի։ Հետեւեալ տողերը Սապահ-Գիւլեանին կը վերաբերին։

«խորհրդային նորագոյն կարգերը ո՛չ թէ համաշխարհային են, այլ և՝ տիեզերական են ու անսասան»:

ՍԵՐԹԼԵԱՆ

«Մշակ», Քալիֆօրնիա

ՍԱՊԱՀ–ԳԻՒԼԵԱՆԸ

Հայու արիւնով, հայու արտով տաք,
Անապատ ակ մ'է ա'ն յոյսի, լոյսի.
Որ խորհուրդներով անմեռ, անյատակ,
Կը դիտէ հեռո՛ւն... կեցած մեկուսի...:

Հայ ուղե՛ղն է ան վառ, մեծակորով,
Անխոնջ, անձնահանջ պաշտպանն հարազատ.
Հայկական դատի, որ պինդ հաւատքով,
Կ'ըսէ «պիտի ըլլայ Հայաստանն ազատ»:

Աններող ոգի՛ն է ան ծառացող,
Բռնութեան ու բիրտ կեղեքումի դէմ.
Փո՛յթ չէ՝ մութ ուժեր զայն հալածեն թող,
Ան նոյնն է կամքով մ'երկաթէ, վսեմ:

Հայ արծի՛ւն է ան բարձրէն սաւառնող,
Որուն սրատես աչքերուն դիմաց.
Չը կայ բացակայ մի անկիւն, մի հող,
Ապագան՝ կանխաւ միշտ կուտայ իմաց:

Անկաշառ զինուո՛րն է մշտաթափառ,
Պարտականութեան նամբէն սրբազան.
Վեթերանն է ան, կեցցէ՛ շատ երկար.
Սապահ–Գիւլեանն է՝ աղէ՛կ նանչցէք զայն...:

«Քնար» Երգարան — ՎԱՀԱՆ ՉՈՒԳԱՍԶԵԱՆ

ԵՐԿՈՒ ԿՂԵՐԱԿԱՆԱՑ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

●

ՅԱՐԳԵԼԻ ՏԻԿԻՆ ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

*Ողբացեալին հետ յաճախ տեսակցելու պատեհութիւններ ունէինք առտու, իրիկուն, քանի որ ինք Հալ-*քիէն — կղզի — *կը մեկնէր Կ. Պոլիս գնալու և ես՝ Գը-*նալըէն *կ'ընկերանայի իրեն. մինչեւ ցարդ կը հիանամ իր* մեծանձնութեանը *վրայ: Ինքն արդէն հմուտ* Փիլի-սոփայ, *կատարեալ* փիլիսոփայօրէն *կը դիտէր կեանքի ամէն պատահարներ և իրադարձութիւններ. Փող չահելու կամ աւելցնելու երբէ՛ք հետամուտ եղած չէր: Իր դատողութիւնները* կուռ, ոգեւորիչ, սահուն և տրամաբանական էին *ու ոչ թէ՝ ոմանց խօսածներուն նման սնամէջ ճոռոմաբանութիւններ և անիմաստ բացագանչութիւններ: Երբ զաւակներէդ մկրտութեան համար իր ունեցած փութկոտութեան վրայ զարմանք յայտնեցի, պատասխանն էր.* «Տէր Հայր, կը յարգեմ Հայ եկեղեցին և բոլոր Հայկական ինքնուրոյն աւանդութիւնները»:

Փարիզ *ՎԱՀԱՆ Ա. ՔԱՀԱՆԱՅ ԽՈՅԵԱՆ*

ԱԶՆԻՒ ՏԻԿԻՆ ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

Կը ցաւիմ որ կը գտնուին մեր մէջ մարդիկ, որք իրենց հակառակորդի կենդանութեան ժամանակ՝ դէմ կենալու անկարող ըլլալով, մեռնելէն վերջ, երբ իրենց հակառակորդը այլեւս անկարող է ինքզինքն պաշտպանելու, զրպարտութեամբ և անարգալից խօսքերով կը ջանան, վատաբար, վրէժխնդիր ըլլալ:

Երբ քառասուն տարի յառաջ ձեր բարեյիշատակ ամուսնոյն հետ ծանօթացայ, նա Երուսաղէմի Հայ քաղաքացիներու դպրոցի վերատեսուչն էր և իր մանկավարժական հմտութեամբն մեծապէս բարեփոխեց՝ այդ դրեթէ անկեալ վիճակի մէջ գտնուող կրթարանը և աշակերտաց արտակարգ սէր և եռանդ ներշնչեց դէպ ի ուսումն։ Միեւնոյն ատեն ժառանգաւորաց վարժարանին մէջ — յորում և ես ուսուցիչ էի, այժմեան Կիլիկիոյ Սահակ Կաթողիկոսի, Մամբրէ Եպիսկոպոսի, Մարկոս Նաթանեանի և այլոց հետ — ինչ ինչ դասեր կ'աւանդէր — կարծեմ Ազգային Պատմութեան։ Այն ատենները Երուսաղէմի Վանքին մէջ՝ պէտք եղածէն շատ աւելի «պնակ լուացողներ» կային. սակայն հանդուցեալ Սապահ-Գիւլեանի հմտութիւնը և մանկավարժական ու գիտական կարողութիւնը ունեցողներու թիւը կարի սահմանափակ էր։ Արդեօք Սապահ-Գիւլեանի յետ մահուան քննադատողները կրնա՞ն ուրանալ, որ հանգուցեալի երկար տարիներու ընթացքում քարոզած սօցիալիստական գաղափարներն այսօր ամբողջ Ռուսիոյ և մեր խորհրդային Հայաստանի կառավարութեան հիմունքը կը կազմեն։

Յարգանաց ողջունիւ, մնամ, աղօթարար՝

Քալիֆորնիա ԹԷՈԴՈՐՈՍ ՔՀՅ. Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԻՄ ԱՅՑԸ
ՍԱՊԱՀ-ՄՈՒՐԱՏ-ԱՋԸԳՊԱՇԵԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ

●

Սապա՛հ, Մուրա՛տ, Աչըգպա՛շ... ...: Ի՛նչ մեծ դէմքեր և ի՛նչ նուիրական անուններ Հնչակեան Կու-

սակցութեան ընտրանի լիտրների փառայեղ բանակում: Արեամբ ոսկեզօծուած Հնչակեան Կուսակցութեան չքնա՛ղ և սրբազա՛ն մի երրորդութիւն:

... Յիշենք, որ 1905 Թուի մեր Ընդհանուր Պատգամաւորական Ժողովում Խան-Նազարբէկ Կեդրոնը, իրեն համախոհ եղողների և յարողների հետ, բարեբախտաբար՝ բարոյապէս ու գաղափարապէս պարտըւեց, ջախջախուեց ու փշուր-փշուր եղաւ: Այդ Կեդրոնը, շուրջ երկու տասնեակ տարիներ Կուսակցութիւնն ու ազատատենչ տաճկահայութիւնը արեան ու հալածանքների միջից անցընելէ յետոյ, վերջին պահուն՝ ամենայն սառնասրտութեամբ լքում էր Տաճկահայ Դատը և ընդգրկում միայն սոցիալիստական գործունէութիւն՝ Ռ. Ս. Դ. Բ. Կուսակցութեան հետ Կովկասում:

... Մեր Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը, Կուսակցական այդ տիրագոյն Մարմինը եկաւ և տիրաբար ժխտեց Խան-Նազարբէկեան գաղափարական մոլար վարդապետութիւնը և Սապահ-Մուրատ-Աչըգպաշ ուխտանուէր Կեդրոնին յանձնեց բարձրագոյն ղեկավարութիւնը Կուսակցութեան, որն իր Ծրագրում՝ իբրև գլխաւոր հիմնաքար, կամ մօտաւոր նպատակ՝ ունէր Տաճկահայ Դատը, կամ Տաճկահայ բայց ժողովրդի ազատագրումը՝ Սուլթանական բռնապետութիւնից: Այդ մասնաւոր նպատակի իրագործումից յետոյ միայն՝ քաղաքականապէս ազատագրեալ Հայրենիքում, Կուսակցութիւնը պիտի ձեռնամուխ լինէր Սոցիալիստական կարգերի աստիճանական ներմուծման, ըստ պահանջման տեղի և ժամանակի:

Ահա՛, Կուսակցութեան համար կենաց և մահու այդ օրհասական ու սուրբ րոպէներին հանդէս է գալիս՝ Գրչի Տիտան — սա իմ որակումն է եղել — Սապահի գլխաւորութեամբ գործող Կեդրոնը:

Կուսակցութիւնը ապրում էր նո՛ր կեանք, նո՛ր թափ և նո՛ր ոգեւորութիւն: Խանդավառուած էին երէկի շուարման մատնուած մեր շարքայիններից շա՛տ շատերը: Յոյսի և յոյզի աննախընթաց օրեր էին՝ Խան-Նազարբէգի խարխլած կուսակցութեան մէջ՝ Սապահ-Մուրատ-Աշըգպաշ հեղինակաւոր Կեդրոնը, որ փրկեց Կուսակցութիւնը Տաճկահայ Դատի լքում-ուրացումից: Իսկ Իրանի — Ատրպատականի շրջանը փըրկեցի ես՝ համախոհ Ընկերներ Ռափայել Մովսիսեանի, Առաքել Պատմագրեանի և Ալէքսան Տէր Կարապետեանի եռանդուն գործակցութեամբ: Թաւրիզի Լիլաւա թաղամասի մի փառաւոր և այցեհարուստ տնում՝ սեփականութիւն հաւատարիմ Ընկեր Գրիգոր Բաքսեանի, ամառային մի գիշեր հաւաքուած էինք աւելի քան 85 ընկեր-ընկերուհիներ և պանծացնում էինք Ազգային Դատ հետապնդող Հնչակեան Կուսակցութիւնը՝ իր մեծանուն Կեդրոնով: Ընկերական այդ տաքուկ մթնոլորտում արտասանուած ճառերը, առաջարկուած կենացները Սապահի հրանուտ գրուածների ընթերցումը, Մուրատի փախուստ-ազատումը և Փարիզ-Կեդրոն հասնելը ևն. ևն., ներկաներին հասցրել էին ընդհանուր էնտուզիազմի:

Այդ եռ ու զեռի օրերին Սապահի Կեդրոնից ինձ հրահանգ եկաւ, որ 1906ի ամրան մեկնիմ Փարիզ՝ Ամերիկա ճանապարհուելու, որպէս Կեդրոնի լիազօր և «Երիտասարդ Հայաստան»ի էլ Խմբագիր: Տեսչութիւնը այն դպրոցի, ուր պաշտօնավարում էի ես, ոչ մի կերպ չի թոյլատրեց իմ հեռացումը Թաւրիզից: Սակայն Սապահեան Կեդրոնը, իր հարկադրական նամակներով ժամօրոշեց որ անպայման, 1907ի գարնանը Կովկասով փութամ Փարիզ: Սապահը ինձ ուղղած անձնական մի նամակով յանձնարարում էր, Արաքսն անցնելիս՝ Գողթանից սկսած մինչեւ Թիֆլիզ, իմ ճամբի

1· Մաթէոս Գրիգորեան, 2· Արծրունի, 3· Ռափայէլ Մուշեղեան
4· Ա· Պատմագրեան, 5· Ալէքս· Տ· Վարդանեան, 6· Միրզա Մելիք

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

վրայ մի առ մի այցելեմ մեր Մասնաճիւղերը և կամ անհատ ընկերներին: Նա ցանկութիւն էր յայտնել, որ անպայման անցնեմ Նախիջեւանից մի ժամով հեռու գտնուող իր հայրենի գիւղը՝ իր ծննդավայր Ջահուկը, տեսնելու իր ազգականներից ո՞վքեր են մնացել և մընո՞ւմ է արդեօք իր Հայրենի տունը և այդ բոլորի մասին տեղեկագրել իրեն:

Մի հաճելի և պատմական ճամբորդութիւն եղաւ Թիֆլիզի վրայով իմ Կեդրոն մեկնիլը:

Ես Թաւրիզը թողեցի 1907 թուի Մայիս 31ին: Շատերն ինձ երանի էին տալիս, որ շուտով տեսնելու եմ հոյակապ գլուխ Սապահին, Սասնոյ Հերոս Մուրատին, Յեղափոխութեան մարմնացում մեր հնաւուրց Աշըգպաշին:

... Վերջապէս հասայ Ջահուկ, որը գեղեցիկ դիրքով, մի թեթեւ բարձրաւանդակի վրայ, փոքր լեռներով շրջապատուած, մի մեծ գիւղ է: Հարց ու փորձով հասայ մեր անման Ստեփան Սապահ-Գիւլեանի տունը: Եկաւ բարձրահասակ մի մարդ, նոյնպէս Ստեփան անունով և յայտնեց որ ինքը մեր Սապահի քեռին է: Երբ յայտնեցի, որ Սապահի կողմից եկել եմ տեսնելու նրա տունը և իմանալու ո՞վքեր կան իրենց տնեցիներից և ազգականներից· մարդը քիչ մնաց կարօտից ու յոյզից ինձ լիզէր, երբ Սապահի անունը և նրա պատգամը լսեց: Տասնեւհինգ-քսան քայլ այն կողմն առաջնորդեց ինձ· ցոյց տուեց կիսակործան մի տուն, առաջը խաղողի այգի· այգու և կիսաւեր տան առջեւ մի սիրուն ու փոքրիկ ծաղկանոց: Արտասուելով ասաց· «ահա իմ քոյր Սապահ-Գիւլի տղայ Ստեփանի տունը: Հայ-թրքական կռիւներին թուրքերը եկել և նամարդ կերպով քանդել են: Մենք սկզբում թալանուեցինք ու յաղթուեցինք, որովհետեւ թուրքերը բանը առաջուց իմանալով եկել և ահա այս ամուր

ու քարաշէն եկեղեցին գրաւել ու մեզ շատ նեղում էին: Երեք օրից յետոյ տեղի մեր կռուող տղերքը իրար գալով՝ քուրքերի *մէրը լացուցին*։ Էլ ի՞նչ ասեմ, բերդանման այս *ժամը* յետ խլեցինք քուրքերից և բոլորին սարեր ու ձորերը թափեցինք։ Էդ օրերին, ահա՛, իմ Ստեփանիս տունը քուրքերը քանդել ու փչացրել էին նրա սիրուն գրադարանը։ Մօտ երեսուն տարի է՝ Ստեփանը մի *սեւ* օր հեռացել է մեզանից։ Երբեմն-երբեմն մի նամակ կ'ըստանայինք, բայց նրա *մէրը՝ Սապահգիւլ*, չը դիմանալով նրա կարօտին մեռաւ. հայրն աւելի վաղ էր մեռել, *Ստեփա՛նս, Ստեփա՛նս* ասելով։ Ես էլ ահա, մի կերպ պահում եմ *Ստեփանիս* սիրած *բաղն* ու *բաղչէն*։ Երանի՜ աչքերիդ, որ գնալու ու տեսնելու ես նրան»։

Սիրակարօտ քեռուն վստահացրի, որ իր բաջօղլին — քրոջ որդին — *շատ լաւ է, Փարիզ է, Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնի ղեկավար դէմքը և Հայութեան է՛ն յայտնի մարդկանցից մէկը։ Եթէ ձեզ համար կորածի պէս է,* Ազգի Ազատութեան *համար մի* Մեծ Առաջնորդ է նա։ *Հազարաւորներ նրա կրակոտ գրուածները կարդալով՝ վառւում են ազատութեան անմար կրակով։*

— Էհ, փա՛ռք Աստուծոյ, *ասաց նա*։ Հէնց փոքր հասակից մեր Ստեփանը շնորհքի տէր էր երեւում. Աստուած տայ, դրանից է՛լ աւելի մեծ մարդ լինի։ Մօտը որ հասնիս, ասա՛, որ շուտ–շուտ նամակ գրի, չը մոռնայ քեռուն։

Սիւրպրիզ *անելու համար մեր* Սապահին, *քաղեցի նրա այգուց խաղողի մի երկու տերեւ, բազմաթիւ ծաղիկների թերթեր և դրանք մի նամակի մէջ ծրարելով՝* Նախիջեւանից *փոստով ուղարկեցի* Սապահին, *որ դըրանցով հոտոտի և՛ Հայրենի օդն ու ջուրը, ծառն ու ծաղիկը։ Եւ, իրօք, ղրկածներս ստանալով՝ շատ ար–*

տառապել էր հայրենազուրկ Սապահը: Մեծ տօն էր եղել իր համար այն օրը, որ ստացել էր իր քաղցր ծըննդավայր պարտէզի նմոյշները, որոնք և պահել էր մինչեւ իմ Փարիզ հասնելը:

Ես իմ երազած և համաշխարհային կեդրոն Փարիզ քաղաքը հասնում եմ գիշերուայ ժամի ճիշդ տասներկուքին: Կառապանը ինձ առաջնորդում է Հնչակեան Կեդրոնի շէնքի առաջ. բաղխում է դուռը. ֆօնսիէռժը — դռնապան — բացում է հսկայ ապարթըմանի դարպասը. կառապանը ուսին առնելով իմ մեծ ճամպրուկը՝ առաջնորդում է ընդարձակ ու կանանչազարդ բակով դէպի մի վերնայարկ և կիսամթանը բաղխում մի դուռ՝ Mr. Sapah ձայնելով:

Սիրտս թունդ է լինում: Ուրեմն հեռաւոր Պարսկաստանից եկել և հասե՛լ եմ Կուսակցութեան Մեծագոյն Դէմքի և Հայ Յեղափոխական կախարդիչ, փիլիսոփայ, ընկերարան Գրողի տան շէմքը:

Qui est la? — ո՞վ է — հարցնում է ներսից Ընկեր Սապահը: Բարբառուն սրտով պատասխանում եմ.

— Ես եմ, Ալէքսանդր Կամսարականը, հասայ վերջապէս, բացէ՛ք:

Բերկրանքից իրեն կորցրած, «վա՜հ, դո՞ւ ես Ալէքսան, հարցնում է Ընկեր Սապահը և հէնց գիշերային շորերով բացում է դուռը ու փաթաթւում վզովս: Հասնում է նա՛եւ Ընկերուհի Նանասի Սապահ-Գիւլեանը: Մի ակնթարթում, մեր ձայնից վեր են թռչում փոքրիկ Դանիէլը, և սեւ սաթի պէս սեւ մազերով, սեւ աչք յօնքերով պզտիկ ու սիրուն աղջիկը, որի անունը տարաբախտաբար մոռացել եմ:

— Երկար սպասեցինք քեզ, ալէքսան, կայարանում — ասում է Մեծ Մարդն ինձ — Աշըրգպաշի հետ. ուշա-

ցար, մենք էլ վեց ժամ ապարդիւն սպասելուց յետոյ, տրտում ու երկմիտ եկանք տուն: Տանն էլ երկար խօսում էինք քո մասին, մի՛ գուցէ քեզ մի փորձանք է պատահել. և հէնց նոր քնել էինք, որ եկար. ո՛րքան ուրախ ենք:

Բացատրում եմ պայուսակիս կորսնցնելուս և ուշանալուս մասին և հանգստանում են ամէնքը: Սապահը Ընկերուհի Սապահ-Գիւլեանին ասաց թէյ պատրաստի: Ես լուացուեցի, մաքրուեցի: Հարցների տարափ էր, որ թափում էր գլխիս Ընկեր Սապահը՝ Կովկասի մեր ընկերների և կազմակերպութեանց, ինչպէս նաև Պարսկաստանի: Ապա անցաւ իր ծննդավայրի պարտէզից իրեն ղրկած յիշատակ ծաղիկների, բոյսերի ու տերեւների խնդրին: Յայտնեց իր ուրախութիւնն ու շնորհակալութիւնը, որ դրանցով առել էր իր Հայրենիքի կարօտը:

— Բիւր բիւրեր են, ասաց, որ զրկուել են իրենց քաղցր Հայրենիքի տեսքից, որ փախել են տաճկական խաթաղանից: Պէտք է ուժեղացնենք «Հայ Յեղափոխութեան հարուածող բազուկը, ազատագրելու երկրի մեր տառապող և պանդխտութեան մէջ կորչող ժողովուրդին: Դու՛, Ալէքսան և քեզ նմաններն են որ այդ բազուկը պիտի զօրացնէք, մինչեւ գոնէ հասնինք մեր մօտակայ նպատակին:

Ընկեր Սապահը լուր ուղարկեց Ընկեր Աչըգպաշին, որ անմիջապէս եկաւ և ողջագուրուեցինք: Նա էլ անսահման ուրախ էր գալուս. որովհետեւ Ամերիկայի հսկայ մեր շրջանը վաղուց անգործի՝ ինձ էր սպասում, Ընկեր Եղիկեանի հեռանալուց յետոյ:

Ընկեր Մուրատը, որ ապրում էր հէնց նոյն բակին մէջ, չի կարողացաւ գալ՝ հիւանդանոցը գործողութեան ենթարկուած լինելուն համար: Եկաւ իր քոյրը՝ Ընկերուհի Հայկանոյշը: Հարազատ շրջանում լու-

սացրինք գիշերը: Ընկեր Աչըգպաշը *առաւօտուն տա-
րաւ ինձ մօտակայ* Հօթէլ Նիսը:

Ճաշում, ընթրում էի գլխաւորապէս՝ Ընկեր Սա-
պահենց *մօտ. Թէեւ երբեմն երբեմն էլ՝* Ընկեր Աչըգ-
պաշը *տանում էր տուն՝ իր ազգականին, որ միշտ կը
հարցնէր թէ՝ ի՞նչ կը սիրէի, որ ան եփէր:*

*Այսպէս, տարիների իմ երազը արդէն իրականացել
էր: Ես արդէն այցի էի եկել չքնաղ երրորդութեան՝*
Սապահ-Մուրատ-Աչըգպաշ *մեծանուն կեդրոնը, որ ա-
մենայնիւ հետապնդում էր* դատերից արդարագոյնը,
Տաճկահայ Դատը:

Մաչէդի-Սօլէյման
Խուզիստան, Իրան

Ա. ՏԷՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԸՆԿԵՐ Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ
ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

•

*«Տաղանդաւոր Հրապարակագիր, Հռչակաւոր Ընկե-
րաբան-Տնտեսագէտ, Առաջնակարգ Բեմբասաց և Սօց.
Դէմ. Հնչակեան Կուսակցութեան ամենայայտնի Տե-
սաբանը ծնած է* Կովկասիոյ *մէջ, աւարտած է* Թիֆ-
լիզի Ներսիսեան *Վարժարանն ու ապա* Փարիզի Բա-
ղաքական Գիտութեանց *Համալսարանի փայլուն ըն-
թացաւարտն հանդիսացած: Երկար ատեն ուսուցչա-
կան պաշտօն վարած է* Ռուսաստանի, Հայաստանի և
Պուլկարիոյ *մէջ: Այլ և այլ թերթերու մէջ գրած է
շատ մը պատմական, քաղաքական և տնտեսական
հմտալից յօդուածներ: Երեք տարի խմբագրած է* Ա-
մերիկայի «Երիտասարդ Հայաստան» *թերթը և տա-*

րիներէ ի վեր Սոց. Դէմ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Օրկանին «Հնչակ»*ի Խմբագրապետն է:* Օսմանեան *Սահմանադրութենէն վերջ Տաճկաստան եկաւ և երբեմն* «Նոր-Աշխարհ» *թերթին գլուխն անցաւ: Առանձին գիրքերով լոյս տեսած են կարգ մը թարգմանութիւններն ու ինքնագիր գրքոյկներն որոնք են.* «Եւրոպայի Քաղաքական Դրութիւնը Պերլինի Վեհաժողովից Յետոյ», «Երիտասարդ Թուրքիա և Հայերը», «Հերթեր և իր Քաղաքական Հայեացքները», «Սոցիալիզմ և Հայրենիք», «Կապիտալիստ Դասակարգը», «Գործաւոր Դասակարգը» *եւ այլն: Ընկեր Սապահ-Գիւլեան հմուտ միտք մ'է և վերին աստիճանի ուժեղ ու տրամաբանող լեզու ունի: Ձեռագիր վիճակի մէջ կը մնայ իր հոյակապ մէկ գործը,* «Արեւելեան Խնդրոյ Պատմութիւնը»: *Կ. Պոլիս և գաւառները խօսած է ազդու և հմտալից ճառեր հաղուագիւտ ու դիւրամատչելի պերճախօսութեամբ:»*

«Պատմ. Հայ Լեզուի և Բանահիւսութիւն» — *Գ. ՕՁԱՆԵԱՆ*

Ան չկայ այլեւս, մենք կ'ողբանք զԱյն: Վերի պարբերութիւններէն յետոյ, որոնք սեղմ գիծերով Անոր մեծութիւնը կ'ամփոփեն, Ընկեր Սապահ-Գիւլեան *դեռ տարիներ ապրեցաւ միշտ նոյն ուղիին վրայ մնալով. գրեց, խօսեցաւ, համոզեց, հմայեց ու սպառեցաւ մարդկային լայն մտածումներու հաւատքէն ոգեւորուած, համոզուած հաւատաւորը մնաց իր սկզբունքներուն և իր տեսակէտներուն, որոնք շատ հեղ անողոք դարձան իր դէմ ու ժլատօրէն զլացան իրեն հոգեկան հրճուանքներ, իր տքնութիւնները փոխարինող: Ինք բախտին ետեւէն չի վազեց բնաւ, ու բախտը իրմէ յաւէտ երես դարձուց, զի Ան չուզեց պահ մը իր կերտած գործին մեծութիւնն ու վայելչութիւնը հեռուէն դի-*

տել, այլ միշտ անոր մօտ, անոր մէջ մնաց ու անոր մէջ մեռաւ։

Ընկեր Ս. Սապահ-Գիւլեանի *ամբողջական կեանքը գրել, գրել պիտի ըլլար Սոց. Դէմ. Հնչակեան Կուսակցութեան ամբողջ պատմութիւնը, և այդ պատմութիւնը մէկ օրէն միւսը չի կրնար գրուիլ և մանաւանդ անոր՝ որ առաւելապէս իբրեւ ապագայի մարդ ապրեցաւ։ Այսպէս ուրեմն երկխղածօրէն կը մօտենանք անոր կատարած դերերուն։*

Կուսակցութիւնները ձեւակերպող վարդապետական սկզբունքները իրեն համար տարտամ կէտեր չէին բովանդակեր, Ան իրերը կը վերլուծէր խոր հայեցողութեան մը լոյսին տակ ու անոնց եզրակացութիւնները կը պարտադրէր էն դժուարահաճ մտքերու։ Կուսակցական միտք մ'եղաւ ան, ո՛չ այն կուսակցական մտքերէն, որոնք ուղեղէն մը միայն կը ճանչնան, անընական խստամբերութեամբ մը կը մերժեն գիտնալ կամ նոյն իսկ չեն գիտեր թէ կեանքը իր Աջն *ու* Ձախն *ալ ունի միանգամայն անբաժանելի յօդակցութեամբ մը։ Ան, որպէս* Նոր Գաղափարի, *ընկերային հիմնական բարեշրջումը բանաձեւող* նորագոյն վարդապետութեան Առաքեալը *կ'ըմբռնէր թէ՝ հինը՝ վաղնջականը կը մեռնի, բայց չի մոռցուիր, և իբրեւ տարերային ույժ հարկաւոր է* նոր *գաղափարներու դաշտերը արգասաւորելու։ Այսպէս, Ան եղաւ որ, առաջին անգամ Սոց. Դէմ. Հնչակեան Կուսակցութեան* հեռաւոր *ու* մերձաւոր նը*պատակները իմի ձուլեց, գնելով որոշ յօդուած մը* ծրագրին *մէջ, ուր Սոց. Դէմ. Հնչակեան Կուսակցութիւնը պարտաւոր կ'ըլլար նաեւ* իր Ընկերվարական մտածողութիւնը պատշաճեցնելու Ազգային Պատմա-Անհատական Գոյութիւնը պահպանելու ձգտող հակումներուն։ *Պատմական այսպիսի օղակաւորում մը* Ընկեր Սապահ-Գիւլեանի *միտքը միայն կրնար գործել,*

այն միտքը, որ կրնար հզօր փաստերով հրապարակ գալ, ըստ հարկին վիճիլ, ու տեսութիւններով հաստատել: Արդարեւ, Հնչակեան Կուսակցութեան մէջ այս սկզբունքային կարեւոր եղելութեան բարեփոխումին շուրջ իր և իր Սօցիալ Դէմօկրատ ընկերներուն միջեւ խզում առաջ չեկաւ, ու մենք ինչպէս տեսանք, Տաճկաստանի Առաջին Պատգամաւորական Ժողովին մէջ, անոնցմէ կարեւոր ընկերներ, թէ՛ իբրեւ Պատգամաւորներ և թէ՛ իբրեւ խորհրդականներ իրենց մասնակցութիւնը բերին բոլոր վիճաբանութեանց ու կարծիքներու փոխանակումին: Ընկեր Սապահ-Գիւլեան կը մնար այդ՝ սկզբունքային տեսակէտով գոյութիւն առած երկու հատուածներուն միջեւ յօդակցութիւն հաստատող հեղինակաւոր ոյժը: Ընկեր Սապահ-Գիւլեանի ուղղութեան՝ պիտի հետեւէր տարիներ յետոյ, Խորհրդային Ռուսիա, իր բաղկացուցիչ Ազգերու Պատմա-Անհատական Գոյութիւնը ճանչնալով:

Իբրեւ մտաւորական ոյժ, Ան մեծութիւն մըն է մեզի համար, իր գործերուն հետ, միաժամանակ, ինչպէս վերը յիշուեցաւ, ունեցաւ գրաւոր աշխատութիւններ ալ, որոնցմէ, աւա՛ղ վերջինն ու նորագոյնը կ'ըլլայ իր «Բառերի ու Եզրերի Բացատրութիւններ» անունով խնամեալ աշխատութիւնը: Իր գրաւոր աշխատութիւններուն նկարագիրը կը բղխի իր ընդգրկած ընկերային վարդապետութեան սկզբունքներէն միայն, ու կը տարածուին առաւելապէս քաղաքական մարդերու մէջ: Այս կերպով, Ան, Հայ արդի գրականութեան մէջ կ'աւելցնէ բոլորովին ինքնուրոյն, բոլորովին թարմ էջ մը, որուն արժէքը աստիճանաբար պիտի հասկցուի, քանի Հայ հասարակական կեանքը դէպի օրուան քաղաքակրթութիւնն առաջանայ:

Ընկեր Ս. Սապահ-Գիւլեանի դերը ուրեմն, Հայ կեանքի մէջ, եղած է մեծ ու բազմակողմանի: Անոր

մահը կ'արձանագրենք, հետեւաբար, իբրեւ կորուստ մը՝ որ այլեւս չի դարմանուիր:

Կը խոնարհէինք, իր կենդանութեան ատեն, իր առջեւ, լսելու համար ընկերային հարցերու մասին իր բանաձեւումները, այսօր թախծութեամբ կը խոնարհինք իր հողակոյտին վրայ հեկեկանքով, լսելու իր վերջին սրտայոյզ խօսքը. «Հոգիս ձեզի հետ է...»:

Գահիրէ, Եգիպտոս — ԽՄԲ. «ԼՈՒՍԱՐՁԱԿ»ի

ՄԵՌԱ՛Ւ ՍԱՊԱՀ, ԲԱՅՑ Կ'ԱՊՐԻ ՍԱՊԱՀԻԶՄԸ

Կ'ԱՊՐԻ ՀՆՉԱԿԻԶՄԸ

•

Քանքարաւոր Հրապարակագիր, տաղանդաւոր Բեմբասաց, տրլիրուն, յեղափոխական Մարքսիստ, հանճարեղ Տեսաբան, կարկառուն Քաղաքատնտեսագէտ, Ընկերաբան, Հասարակական, Կուսակցական Հոյակապ Գործիչ Ընկեր Սապահ-Գիւլեանի կենազրաւման բօթը՝ հեռագրուած Ամերիկայէն՝ անբացատրելի յուզումի սարսուռ մը պտտցուց Հալէպի Սօցիալ Դէմոկրատ Հնչակեան շրջանակի մէջ:

Կորուստը Ընկեր Այգ Վարդի, որ անվիճելի արժէք մըն էր համահայկական, համապրոլետարական աստիճանացոյցով, կը մնայ անդարմանելի մտաւոր ապագայի մէջ, որովհետեւ տասնեակ, յիսնեակ տարիներ բաւական պիտի ՀԸԼԼային հասունացնելու նոր Սա-

պահ մը՝ այնքան շեշտուած իմացականութեամբ և բազմակողմանի պատրաստութեամբ։

Բայց պէտք չէ յուսահատիլ երբեք նոյն իսկ այս գերագոյն րոպէին, ընդհակառակը պէտք սեղմել շարքերը աւելի քան եռանդագին շարունակելու համար գաղափարական խոյանքը՝ Հնչակի գոռ ղօղանջէն թափահարուած։

Արժանաւոր յարգանքը մեզմէ անվերադարձօրէն բաժնուած մտաւորական տիտանի յիշատակին, պէտք ըլլար հնաւուրց մեծ Կուսակցութեան զինուորեալ փաղանգներու անդասալիք վճռականութեամբ ընթանալ, տարաբախտ Ընկերոջ, ինչպէս նաև միւս նահատակ վեթերան գաղափարակից համհարզներու անխոնջ բազուկներով յարդարուած ճանապարհէն, հնչեցնելով մէկ կարգախօս ռազմագոռ ու հրաշունչ. մեռա՛ւ Սապա՛հ, բայց կ՚ապրի Սապահիզմը, կ՚ապրի Հնչակիզմը։

Արդ, ծնկադրած խոնարհելով յանուն բազմահարիւր ընկերներու, բոլոր երկիրներու Սոցիալ Դէմոկրատ Հնչակեան բազմահազար զինուորներու հետ, անոր նուիրական դամբանին առաջ, այս խորհրդաւոր պահուն բոլորս, բոլորս, Անդրանիկ Յեղափոխական Կուսակցութեան դրօշակակիրներս, վերանորոգե՛նք մեր կարմիր ուխտը՝ յաւէտ հաւատարիմ մնալու մեր կարմիր դրօշակին՝ բոսորաներկուած վերջին երկու յեղափոխական սերունդներու և ռահվիրաներու արիւնով։

Պատուոյ խօսք տա՛նք, Ընկերնե՛ր, անգամ մը ևս այս հանդիսաւոր մօմէնտին, Հայկական Հարցի Մեծագոյն Ախոյեանի տապանին առաջ, թէ մենք պէտք չէ դադրինք պայքարելէ միացեալ ամբողջական, անկախ Սոցիալիստ Հայաստանի երազին կենսագործման համար ի սպաս դնելով մեր մարտական բոլոր ուժերը։

Այն ատեն ահա, Աշխատաւորական Դատի Առաք-

եալը *անխռով ու անվրդով պիտի ննջէ իր հանգստարանին մէջ։*

Յարգա՛նք, բիւ՛ր յարգանք իր անթառամ մշտադալար յիշատակին։

Ս. Դ. ՀՆՉ. ԿՈՒՍ. ՀԱԼԷՊԻ Մ-ՃԻՒՂԻ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(ԿՆԻՔ)

Ի ՅԱՐԳԱՆՍ Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

●

ՆԱՄԱԿ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի
ՅԱՐԳԵԼԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սիրելի Ընկերներ,

Ես նախ «Նոր-Երկիր»*ից և ապա* «Երիտասարդ Հայաստան»*ից իմացայ մեր վեթերան Ընկեր Ս. Սապահ-Գիւլեանի անակնկալ մահուան ցնցող գոյժը։ Այդ ցաւի հարուածը այնքան խորն է ու շշմեցնող, որ դեռ ցարդ ես, կարծես, չեմ ուշաբերուել նրա կօշմարային տպաւորութիւնից։ Ահա՛ այդ է պատճառը, որ ես իմ վշտակցութեան ձայնը այսքան ուշ եմ բերում խառնելու ազնիւ Ընկերուհի այրիացեալ Տիկին Բերուզի, սրա որբերի, և այն բազմահարիւր անդաւաճան Հնչակեան Ընկերների սրտամորմոք հառաչներին, որոնք ի խորոց սրտի և դառնօրէն ողբում են մեր* Աւագ Ընկերոջ, Մեծ Մարդու, համոզուած Հայ Յեղափոխականի ու միակ Հայ «Դիդրօ»*ի անփոխարինելի կորուստը։*

Բազմիցս ես նրան իմ խմբագրած Թաւրիզի *Հըն-չակեան* «Զանգ» *շաբաթաթերթում անուանել եմ* Գրչի Տիտան, Հնչակեան մեծագոյն Մարքսիստ-Տեսաբան, հզօր Հռետոր, էնցիկլոպէտիկան միտք, լաւագոյն Հայ, գրչի անզուգական Վարպետ, դիւանագիտական հանճարով օժտուած Հրապարակախօս, Հնչակեանութեան սիւն ու մարմնացում *և չեմ սխալուել, որովհետեւ նրա անսպասելի մահուան առթիւ սգաւոր ընկերներից և գաղափարապէս մեզնից բաժան կուսակցական մարմիններից առատօրէն ստացուած անկեղծ և խորին ցաւակցութեան ջերմ արտայայտութիւնները եկան ուժգինս փաստելու, որ անդարձօրէն մեզանից հեռացած մեր* Աւագ Ընկերը *ըստ ամենայնի արժանի էր այդ և դրանցից է՛լ աւելի բարձր գնահատութեանց ու որակումների։*

Անզուգական Շէյքսպիրն *ասում է.* «բոլոր նրանք, որոնք ապրում են, պիտի մեռնին, անցնելով բնութիւնից դէպի յաւիտենականութիւն»: (Համլէտ): *Եւ, իրօք, որ մեծատաղանդ Ընկեր Սապահը, Հայ Յեղափոխութեան այդ տեսանող, մարգարէական միտքը, ծեր ու երիտասարդ* «յեղափոխական» *Թուրքերին լաւապէս ճանաչող այդ խորաքննին ու հոյակապ դէմքը մեռաւ և բնութիւնից անցաւ դէպի յաւիտենականութիւն։*

Մենք՝ է՛լ չենք տեսնի նրան։ Մենք ընդմիշտ որբացանք մեծ Վարպետի և Մարքսիզմի անմրցակից տեսաբանի կարող առաջնորդութիւնից: *Նրա մահկանացուն յաւիտեանս անէացաւ մեր միջից։ Մեր մէջ մնաց ու կը մնայ այդ անընկրկող Հայ Յեղափոխականի, ուխտապահ Հնչակեանի,* կրիստալ *Հայի, ներհուն Մարքսիստ-Տեսաբանի ջինջ ու անարատ յիշատակը, որ զօրավիգ ու ռահվիրայ կը լինի մեզ բոլորիս՝ անյողդողդ կերպով առաջ տանելու անբիծ դրօշը Հնչակեան Կուսակցութեան* — էմբլէման *Հայ ժողովրդի ամ-*

բողջական և վերջնական ազատագրութեան — որի ուժեղացման, ծաւալման և անպարտելիութեան համար նա ամբողջ քառասուն տարի իր բոլոր եռանդով՝ գրչով, կենդանի խօսքով և բեմով հզօր պայքար մղեց և ի վերջոյ այդ ճանապարհին զոհ բերեց իր առողջութիւնն ու թանկագին կեանքը:

Դէպի՛ յաւիտենականութիւն և անհունութիւն սըլացած Աւա՛գ Ընկեր, մենք արթուն պահակ ենք քո արժանապէս առաջնորդած Հնչակեան Կուսակցութեան կողքին, որ առաջինը Յեղափոխութեան և Ազատութեան սթափեցնող խօսքը որոտաց հայկական ռայա մասսաների ահաբեկ հոգիներում, որ առաջինը լուսաւորեց բազմաբիւր և խաւարամած հայ աշխատաւորների մթագնած ուղեղները Մարքսիզմի փրկարար լու-սով:

Այո՛, ընկերները և քո պաշտած ու պահպանած Կուսակցութիւնը, որ ընդ միշտ որբացան քեզնից և բոլոր այն ազնիւ հոգիները, որ օտար բանակներից են և նոյնպէս գերգնահատում են քո միտքը, յեղափոխական մեծ գործը և քո գործադրած անսպառ աշխատանքը, ու հասկանալիօրէն ողբում են քո անփոխարինելի կորուստը՝ հայ անմխիթար իրականութեան համար, ես, սակայն, այլ եւս ողբի խօսք չունիմ քեզ համար: Չունիմ, որովհետեւ քո մահուամբ դու հարիւրաւոր ցաւագդած շրթունքներից անկեղծ շեշտերով մեծութեան և անմահութեան գրուատիքներ լսեցիր ու խլեցիր ու շատ արժանաւոր գլուխներ խոնարհեցրիր քո շիրմի առջեւ, որ պիտի հանգչէր բիբլիական փառահեղ Արարատի սարերում ու Մայր Արաքսի ղալարագեղ ափերում և կամ քո Հայրենի՝ այժմ աւերակ՝ Ջահուկ (Ջահրի) գիւղի գեղագրական բլուրներին:

Ես թոթով լեզուովս և թոյլ գրչովս տարփողում եմ քո անմահութիւնը:

Քո անմահութիւնը և քո մահուան առթիւ ամէն կողմերից արձագանգող խորունկ ցաւի ու գնահատական արտայայտութիւնները քո փառքն են կազմում։

Եւ ե՛ս, բոլոր Հնչակեան ընկերները, Քսան Կախաղաններ տուած քո նահատակ Կուսակցութիւնը այժմ հրճւում, պանծում ու հպարտանում ենք քո անմահութեամբ ու քո անթառամ փառքով, որ փառքն է միաժամանակ Հայ մտքի, Հայ մարտական տարրի, Հայ յեղափոխութեան և Հայ հոգիները լուսաւորող Հայ մամուլի։

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՏԷՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՍԱՊԱՀ ՄԵՌԱ՛Ծ

Կարկո՛ւտ մեր գլխին...։

Դեռ ձեռքս էր «Երիտասարդ Հայաստան»ի վերջին թիւը, ուր խումբ մը ընկերներ այցելութիւն տուած անոր՝ իրենց տպաւորութիւնները հրատարակութեան կուտային առ ի գիտութիւն ընկերներու՝ յուսադրիչ, սփոփարար էր այն։ Ընկերոջ առողջական վիճակը հետըզհետէ դէպի լաւը կը դառնար։

Աւա՛ղ սակայն, այսօր իրականութիւնը եկաւ բոլորովին հակառակը ըսելու։ Մեր անման Սապահը չը կայ այլեւս...։

Հեռագիր մը արդէն բերած է անոր մահուան գոյժը. Սապահ մեռա՛ծ...։

Կարկո՛ւտ մեր գլխին։

Դողալ կ'ըսկսիմ, թերթերը ձեռքէս վար կ'իյնան, աչքերս մթագնած, արցունքի ինքնահոս կաթիլներ

դէմքէս ի վար կ՚իջնան։ Ինքզինքս կորսնցուցած՝ դէպի երկինք կը բարձրանայ նայուածքս։ Նայուածք անէծքի և զայրոյթի, անադորրոյն Աստուած, անողոք ճակատագիր, ի՞նչու, ի՞նչու այդչափ շուտ բաժնեցիք զայն մեզմէ, առիք մեր ձեռքէն։

Այսօր աւելի քան երբէք անհրաժեշտ էր որ որոտի մը նման հնչէր անոր ձայնը։ Այսօր աւելի քան երբէք՝ Հնչակեան ընկերներս պէտք ունէինք անոր կազդուրիչ, ոգեւորող խօսքերը լսելու, այսօր աւելի քան երբէք՝ Հնչակեան Կուսակցութիւնը պէտք ունէր անոր գործակցութեանը, իր շարքերու խտացումին, պնդացումին, դէպի նոր գործունէութիւն իր յառաջադրած քայլերուն մէջ առաջնորդողի դերը ստանձնելու համար։

Աւա՜ղ, ճակատագիրը փետրազուրկ ըրաւ մեզ, առաւ մեր ձեռքէն մեր ոյժերու ամէնէն զօրաւորը, ամէնէն ազդեցիկը։

Ո՞վ չէր լսած Սապահի ձայնը, ո՞վ չէ լսած անոր հուժկու, իմաստալից խօսքերը։ Հայ բեմի Հռետորներէն ամէնէն կարեւոր դէմքերէն էր այն՝ եթէ ոչ միակը։ Տաճկաստան, Եգիպտոս, Ամերիկա՝ ուր որ գնացած է այն, իր հետ վերցուցած է ժողովրդային հիացման ամբողջական թափ մը։

Սապահ մեռա՞ծ. չէ՛. ան յաւիտենապէս պիտի ապրի մեր հետ, մեզ մօտ, իր մարմինը թէեւ բաժնուած մենէ, բայց հոգին կը մնայ, ան որպէս խորան իր յատուկ տեղը գրաւած է արդէն մեր սրտերուն խորքը և բնակութիւն հաստատած հոն։

Չէ՛, մեռած չէ այն մեզ համար, ցորչափ անոր գաղափարները, ցանած սերմերը ուռճացած կարգասաւորուին, ու վստահ եմ թէ՝ այս պահուս, աշխարհիս չորս ծագերուն մէջ ցրուած բոլոր ընկերներ խոնարհելով

անոր շիրմին առջեւ՝ պէտք նորոգեն իրենց ուխտը, մինչեւ իրենց կեանքի վերջը գնալու այն ուղիէն, շարունակելու այն ճամբան, որը ցոյց տուին մեզ Սապահները, Մուրատները, Աչըգպաշները։

ՍԻՍՈՒԱՆ

ՉԷ՛, ՉԷ ՄԵՌԱԾ ՍԱՊԱՀ

ՀԱՆՃԱՐՆԵՐԸ ՄԱՀ ՉԵՆ ՃԱՆՉՆԱՐ

●

Ըսին, գուժեցին թէ՝ միանգամ ընդ միշտ լռած է Սապահ։

Անհաւատալի՛, անակնունելի՛ բօթ։

Չէ՛, ամենեւին կարելի չէ՛ հաշտուիլ Գաղափարի Տիտանի մահուան չարաշուք գաղափարին հետ։

Նա անմահ է։

Հանճարները չեն մեռնիր. ուրեմն Սապահ չէ Մեռած։

Որովհետեւ հանճար մըն էր ան, հանճար մը հազուագիւտ, որպիսին ժամանակը այնքան ժլատ, ընկերութիւնը այնքան աղքատ՝ դարերու ընթացքին հազիւ կարող են հասցնել։

Հանճար մըն էր Սապահ, այո՛, հանճար մը ամենախոշոր ձիրքերով օժտուած։

Սապահ ժուռնալիստ, օրագրող մը չէր, օրագրող մը հասարակ՝ որուն նմոյշներով հարուստ է հայկական կեանքը. հրապարակագիր մըն էր ան՝ գերազանցօրէն զօրաւոր գրիչով օժտուած։

Սապահ բանախօս մը չէր, տափակ բանախօս մը, թիփ մը՝ որուն կը հանդիպինք յաճախ Հայ իրականութիւններու մէջ, այլ հռետոր մըն էր, տրիբուն մը անմրցելի։

Միտքը շտեմարան մըն էր անսպառ, գանձ մը անհատնում՝ որ հսկայ ատաղձ կը մատակարարէր իր գրչին ու լեզուին։ Ունկնդիրներ և ընթերցողներ անյագ հետաքրքրութեամբ կը լսէին ու կը կարդային զինք։ Ան կալվանիզէ կ՚ընէր լսարան մը՝ ամբողջ ժամեր ու ժամեր շարունակ, առանց տաղտուկի ամենադոյզն տպաւորութիւն մը թողելու իր ունկնդիրներուն վրայ։

Բնութիւնը այնքան ագահ ուրիշներու նկատմամբ, առատաձեռն էր եղած Սապահին։

Ան հեղինակութիւն մըն էր անվիճելի, իմացական բոլոր ոլորտներու մէջ։

Իր մէջ էր անձնաւորուած և՛ հասարակագէտը, և՛ քաղաքա-դիւանագէտը, և՛ պատմա-փիլիսոփան, և՛ Մարքսիստ թէօրիսիէնը։

Հասարակական գործիչ մըն էր՝ ո՛չ նման արհեստով գործիչներու, որոնք երամակ կը կազմեն և որոնք իրենց անչուք հասակը կը պտտցնեն մեր մէջ, այլ գործիչ մը կոչումով ու արժանիքով։

Սորպոնի Համալսարանը չէր, որ մեզի տուած էր Սապահ մը Յեղափոխական կառուցուածքով, այլ Սիւնեաց Աշխարհը, կովկասը՝ Հայրենիքը արիարանց դիւցազուններու։

Հայկական Յեղափոխութիւնն էր, որ զայն դարձուցեր էր ագիտատոր մը հոյակապ, պրոպականտիստ մը անզուգական։

Մարքսեան դպրոցն էր՝ որ Սապահի մէջ ձեռակերտած էր Վարդապետը Սօցիալիզմի:

Մինչ իր աշակերտակիցները որպէս կաշառուած հոգիներ անցած էին կապիտալի ճամբարին մէջ, ինք երիտասարդութեան օրերէն ի վեր կառչած կը մնար պրօլետարիատի սրբազան դատին՝ նետուելով աշխատանքի բանակետղին մէջ:

Հայ աշխատաւորութիւնը, գիտակից աշխատաւորութիւնը չի կրնար մոռնալ այն հսկայ ծառայութիւնը զոր մատոյց այս հսկան, գաղափարի հսկան՝ իր ազգային-դասակարգային դատին բոլորանուէր տրամադրութեամբ:

Չկայ, գոյութիւն չունի Հայկական Աշխարհ մը, Մայր Երկրի ամբողջ տարածութեան վրայ, որ տեսած, լսած, ճանչցած, ծափահարած, ծափողջունած չլինի այս Առաքեալը, Սօցիալիստ Առաքեալը:

Տաճկաստան, Պարսկաստան, Ռուսաստան, Յունաստան, Ռումանիա, Ամերիկա, վերջապէս բոլոր այն երկիրները՝ ուր տարածուած, սփռուած էր Հնչակեան վեթխարի ցանցը բազմահարիւր Մասնաճիւղերով, եղած են իր «թեմ»երը:

Սօցիալ Դէմօկրատ ողջ մամուլը՝ յանձին «Հնչակ»ի, «Երիտասարդ Հայաստան»ի, «Նոր Աշխարհ»ի, «Գաղափար»ի, «Կայծ»ի և այլ տասնեակ թերթերու, տարիներով չեփորահարած է իր պատգամները՝ ծագաց ի ծագս աշխարհի:

Սերունդներ են դաստիարակուած Սապահի շունչին ներքեւ, հազարաւորներ կարմիր կնունքի աւազանին մէջ են մտած իր ձեռքով, շատ մը Գործիչ-Կազմակերպիչներ, ստուար թուով շարքային ընկերներ անոր կը պարտին իրենց բեմի մարդու, ժողովականի

շնորհքը։ Ամերիկայի շրջանը մասնաւորապէս կը կրէ անոր ազդեցութեան խոր դրոշմը։

Մեր Սոցիալիստական աղքատ գրականութիւնը Սապահի արտադրութիւններով է՝ որ ճոխացած, հարստացած է։

Կարելի չէ մատնանշել Յեղափոխական Գոնկրէս մը, համագումար մը իննուսունական Թուականներէն ասդին, ուր Սապահ իր հեղինակաւոր ձայնը ունեցած չըլլայ։

Քէօսթէնճէի Պատգամաւորական Ժողովի ներացուցած և քուէարկած որոշումները Իթթիհատի դէմ, որոնք նոր դարձակէտ մը, անկիւնադարձ մը ստեղծելու կոչուած էին Մերձաւոր Արեւելքի մէջ, իր բանաձեւած որոշումներն էին՝ խորհրդակցութեամբ անմահին Փարամազի։

Ան էր հոգին՝ Երիտասարդ Թուրքիոյ, Իթթիհատական սակաւապետութեանց դէմ մղուած մահացու պայքարին։

Ան էր Յեղափոխական Ընդհանուր Զօրաշարժի ազդանշանը տուողը բոլոր ճակատներուն վրայ, աշխարհադղորդ կապիտալիզմի օրերուն։

Երբ Կովկասը կենաց և մահու օրհասական կռիւը կը մղէր, երբ Հայկական ոյժերով Հայկական բարձրաւանդակը դրաւելու հարցն էր տրուած, Սապահի ստեղծտորեան գոռ ձայնն էր՝ որ կը շարժէր գաղութահայութիւնը արեւելեան և արեւմտեան կիսագունտերու մէջ և բազմահազար երիտասարդներ՝ որպէս կամաւոր զինուոր՝ յառաջ կը սուրային, դէպի յառաջ, դէպի պարտականութեան դաշտը, դէպի պատուոյ կըրկէսը, ամեհի Թափահարումով և անշղթայելի խոյանքով։

Կիլիկիան՝ Կիլիկեան *Հայութիւնը կարո՞ղ է աչքէ հեռացնել նուիրական դիմաստուերը այս* Մեծ Գործիչին, *որ ահագին* էներժի *սպառեց իր* ազատագրութեան *համար, որ ճամբու դրաւ նոր ուխտապահներու գակիչներ, փաղանգներ վերակառուցելու համար* Տաւրոսեան Տունը:

Ո՛չ, հազար անգամ ո՛չ։

Ո՛չ Կիլիկիան, *ո՛չ* Տանկահայաստանը, *ո՛չ* Ռուսահայաստանը *կրնան հովին յանձնել* Սապահի *յիշատակը սրբանուէր:*

Սապահ պիտի չմեռնի, Սապահ մեռած չէ՛:

Հանճարները մահ չեն ճանչնար:

Այնքան ատեն որ կան ու կ'ապրին Հայն ու Հայաստանը, Սօցիալիստ Հայաստանը, որուն ճարտարագէտներէն ու ճարտարապետներէն մին եղաւ, պիտի վերապրի այս Մեծ Հայը, Մեծ Հայաստանցին:

Այնքա՛ն ատեն՝ որ կը բաբախէ Ցեղին Սիրտը, *հո՛ն՝ այդ աննիւթական պանդէոնին մէջ, պիտի վառուած մնայ ջահ մը մշտալոյս,* Սապահի, *այդ* Մեծ Մարդու, Մեծ Յեղափոխականի *ի պատիւ:*

Չէ՛, չէ մեռած Սապահ, *որքան չէ մեռած Հայ Աշխատաւորութիւնը:*

Չէ՛, չէ մեռած Սապահ, *որքան չէ մահացած իր Կուսակցութիւնը, Հնչակեան Կուսակցութիւնը, աւանգարտը Հայկական Սօցիալ Դէմօկրատիայի, դրօշակիրը Յեղափոխական Մարքսիզմի:*

ԶԱՆԳՈՒՆԻ

ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

Եունիըն Սիթիի (Նիւ Ճըրզի) Սոց. Դեմ. Հնչակեան Կուսակցութեան Տիկնանց «Նազենի» Մասնաճիւղի նախաձեռնութեամբ կառուցուած է սոյն Յուշարձանը և հանդիսաւորապէս տօնակատարուած՝ 1937, *Մայիս* 2 *թուականին։*

Հ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՇԻՐՄԱՔԱՐԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԲԱՑՈՒՄԸ

ՅԱՐԳԱՆՔԻ ԽՕՍՔ ՄԸ

Ընկերնե՛ր,

Այս շիրմաքարը, որուն հանդիսաւոր բացումը կը կատարենք այսօր, մեծութեան մը խորհրդանշանն է, մեծութիւն մը՝ որուն հսկայութիւնը եւ թողուցած բացը ոչ միայն ամէն տարի, ամիս կամ շաբաթ, այլ ամէն օր ուժգնօրէն զգալի է Հնչակեան մեծ ընտանիքին համար:

Այս շիրիմին մէջ հանգչող, անխռով ննջող մեծութիւնը, խոստովանի՛նք ընկերներ, որ երէկ, կենդանութեան օրերուն, լրիւ ըմբռնած, հասկցած եւ գնահատած չէինք: Անոր արժէքը, անփոխարինելի կորուստը այսօր է որ խորապէս կըզգանք, կը գիտակցինք, երբ մանաւանդ թողուցած բացը լեցնելու յոյսը իր աղօտացած ձեւերուն մէջ իսկ՝ տակաւին աննշմարելի է ու թերեւս երկա՛ր, շատ երկար տարիներ այդպէս ալ մնայ...:

Այս դժբախտ պարագան մի՞թէ չի գար հաստատելու իմաստասէրին այն խօսքը, թէ՝ ճշմարիտ մեծութիւնները, գեղեցկութիւնները հեռուէն պիտի դիտել, անոնց կորուստէն վերջ կարելի է գիտակցիլ անոնց իսկական արժանիքին:

Ընկերնե՛ր, ըսուած է՝ որ աշխարհը թատերաբեմ մըն է, որու դերակատարն է ողջ մարդկութիւնը:

Ամէն ծնող, անող եւ մեծցող էակ այդ թատերաբեմին վրայ դեր ունի կատարելիք մարդկութեան երջանկութեան ի նպաստ՝ համաձայն իր հասկացողութեան եւ ունեցած տաղանդին:

— Ինչպէ՞ս կատարեց ընկեր Սապահը իր դերը, ըսել կուզեմ ի՞նչ տուաւ իր ազգին եւ համայն երջանկութեան մարդկութեան ի նպաստ:

Մարդիկ կան որ իրենց ունեցածէն, նիւթական հարստութենէն փշուրներ կը նետեն իրենց ազգին եւ մարդկութեան: Մարդիկ ալ կան, որ իրենց ամբողջ ունեցածը — միտք, տաղանդ, գրիչ — եւ էն թանկագինը՝ կեանքը կը նուիրեն: Ընկեր Սապահը այս վերջիններէն եղաւ, բնութեան իրեն պարգեւած գանձին — մտքին ու գրչին — ամբողջութիւնը նուիրեց իր ազգին ու տառապող մարդկութեան, այսպիսով ճոխացը-

նեղով մեծութիւններու այն երկար շարքը, որ ունի Հնչակեան Կուսակցութիւնը:

Ընկեր Սապահը համեստ ծնունդով մը աշխարհ — թատերաբեմ եկաւ, ապրեցաւ շատ համեստ կեանք մը, գրեթէ իր անձը եւ իրենները մոռացաւ, բայց իր ունեցած անվիճելի տաղանդը, հռետորական ձիրքը, տիտան գրիչը ամբողջութեամբ նուիրեց իր շատ սիրած ազգին եւ տառապող մարդկութեան ու դարձաւ հայութեան փառքը կազմող մեծութիւններէն մին:

Ահա՛ թէ ինչո՞ւ համար Անիկա մեզ՝ Հնչակեաններուս եւ արժէքները գնահատել գիտցող մաքուր հոգիներու համար՝ ճշմարիտ մեծութիւն մըն է՝ խիստ պատուաբեր իր ընտանիքին, իր կուսակցութեան, իր ազգին եւ մարդկութեան:

Ընկերնե՛ր,

Այս շիրմաքարը պէտք չէ միայն խորհրդանիշն ըլլայ ընկեր Սապահի մեծութեան, այլ եւ թո՛ղ ըլլայ նոր տապանակ ուխտի մը բոլորիս համար, որպէսզի միշտ յիշենք զայն ու հաւատարմօրէն եւ անձնուիրութեամբ, սիրով ու համերաշխ ոգիով շարունակենք քալել այն ուղին, զոր գծած են Հնչակեան Կուսակցութեան փառքը կազմող անմահները...:

Ընկերնե՛ր, այս հանդիսաւոր պահին, որ կը

հաւատանք թէ մեր վրայ, եթերին մէջ կը սաւառնին ընկեր Սապահի եւ իր նման բոլոր մեծութիւններու հոգիները, եկէ՛ք այս շիրմաքարին վրայ գլխահակ ուխտե՛նք աւելի ուժգնօրէն ծառայելու հայութեան եւ տառապող մարդկութեան:

Եւ ասիկա պիտի ըլլայ մեծագոյն յարգանքը ընկեր Սապահին եւ բոլոր անոնց՝ որոնք ինկան նոյն նպատակին համար եւ նոյն դրօշին տակ:

Յարգա՛նք այդ բոլորին:

«Երիտասարդ Հայաստան» *ՍԻՐՎԱՐԴ*

ՎԵՐՋ

ՎՐԻՊԱԿ

Յարգելի ընթերցողներէն կը խնդրուի ներողամիտ գտնուիլ հետեւեալ վրիպակներուն համար, որոնք՝ հակառակ մեր ջանքերուն ու խիստ բծախնդրութեանց՝ սպրդած են կրկնակ սրբագրութենէ վերջ։

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
11	11 վերէն վար	*Վարժապետը*	Վարժարանը
19	11 վերէն վար	*պառկ՛ր*	պառկի՛ր
26	29 վերէն վար	*չեք*	չենք
38	29 վերէն վար	*գեշերով*	գիշերով
45	1 վերէն վար	*եւրոպա՝*	Եւրոպա՝
45	22 վերէն վար	*օըը*	օրը
48	16 վերէն վար	*նախապաշարեալ*	նախապաշարեալ
51	28 վերէն վար	*կը կլինէր*	կը լինէր
54	14 վերէն վար	*վարյկեան*	վայրկեան
69	12 վերէն վար	*հեռագիր*	հեռագիր
85	15 վերէն վար	*ժողովուրդէն*	ժողովուրդէն
170	18 վերէն վար	*նամակ*	մի նամակ
176	32 վերէն վար	*տիրականութիւն*	տիրականութիւն
180	30 վերէն վար	*նաւերը*	նաւերը
229	9 վերէն վար	Օր․ Լու–ւիզ	Օր․ Լուիզ
259	10 վերէն վար	ՀՆՁԱԿԻՉՄԸԻ	ՀՆՁԱԿԻՉՄԸ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Սոյն Կենսագրականի հրատարակիչ Յանձնախմբի Ընկերներուս և իմ կողմանէ՝ խորին շնորհակալութիւն կը յայտնեմ հետեւեալ ազնիւ Պարոններուն —

ՆՇԱՆ ՇԱՀԻՆԵԱՆ
ՃԷՅՄՍ ՋԱՆԳԱԼԵԱՆ
ՀՄԱՅԵԱԿ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
ՆՇԱՆ ՔԻՋԻՐԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ
ՃԱՆ ՄԻԼԸՐ
ԱՐՄԷՆ ԲԻՆԱՃԵԱՆ

Որոնք գրքիս պատկերներուն գըծերը անձնուիրաբար պատրաստեցին, ու զարդարեցին անոր էջերը:

ԲԵՐՈՒՋ ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

A II/75626

630

Գին՝ $1.25